ԱՌԹԱՆԱԿ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Զորացի՛ր
երաշտի
ժամանակ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Հանրաճանաչ «Սատանայի խայծը» գրքի հեղինակ

ՀԱՂԹԱՆԱԿ
ԱՆԱՊԱՏՈՒՄ

Զորայի՛ր
Երաշտի ժամանակ

2009

ՅԱՆԿ

Նախաբան 5
Ներածություն 7

ՄԱՍ 1 ԱՆԱՊԱՏ

Գլուխ 1 Անապատի ժամանակը 11
Գլուխ 2 Ինչ է անապատը 19

ՄԱՍ 2 ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Գլուխ 3 Փորձությունների ժամանակը 29
Գլուխ 4 Օրինակ մեզ համար 39

ՄԱՍ 3 ՄԱՔՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Գլուխ 5 Աստծո բարձրագույն ուղին 51
Գլուխ 6 Ճշմարիտ մարգարեություն 55
Գլուխ 7 Տերը գալիս է Իր Տաճար 63
Գլուխ 8 Մաքրող կրակը 73
Գլուխ 9 Մաքրել կամ ոչնչացնել 83
Գլուխ 10 Ամբարիշտների դատը 93
Գլուխ 11 Մաքրման միջոցները 105

ՄԱՍ 4 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Գլուխ 12 Պատրաստեք Տիրոջ ճանապարհը 125
Գլուխ 13 Պատրաստվել փոփոխությանը 141
Գլուխ 14 Հակառակվել փոփոխությանը 155

ՄԱՍ 5 ՀԱՂԹԱՆԱԿ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Գլուխ 15 Հայտնության վայրը 167
Գլուխ 16 Ջրհորից քաշել 177
Գլուխ 17 Հաղթանակ անապատում 185

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր աշխատել են այս նախագծի վրա, աջակցել են մեզ իրենց աղոթքներով եւ ֆինանսապես՝ գրքի ընծայումը իրականացնելու համար. Սթիվին եւ Սեմին՝ իրենց մշտական աջակցության եւ տեխնիկական օգնության համար, Սքոթին՝ իր իմաստուն խորհուրդների համար, Էմիին եւ Անեփին՝ իրենց տաղանդների համար:

Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել իմ կնոջը՝ Լիզային, այս գրքի խմբագրման ընթացքում ինձ անդադար ոգեւորելու եւ ինքնամոռաց աշխատանքի համար: Սակայն առավել կարեւորն այն է, որ նա հիասքանչ բարեպաշտ կին է: Առանձնահատուկ շնորհակալություն իմ երեք որդիներին, որ զոհեցին իրենց ժամանակը, որպեսզի այս գիրքը ավարտին հասցվի:

Եվ ամենակարեւորը, երախտագիտությունս եմ հայտնում իմ Տեր Հիսուսին՝ Իր շնորհքի եւ այս նախագծի աշխատանքի մեջ Իր օգնության համար, ինչպես նաեւ Սուրբ Հոգուն, որ հավատարմորեն առաջնորդում էր ինձ այս աշխատանքը կատարելիս:

ՆԱԽԱԲԱՆ

Ջոն Բիվերը մարգարեական ուղերձ ունի մեր ժամանակների համար, ուղերձ Աստծուց, որը հիմնված է Աստծո Խոսքի վրա: Յոթ տարի անցկացնելով «անապատում», փնտրելով Աստծուն եւ ուսումնասիրելով Նրա Խոսքը՝ ինձ հետաքրքիր էր, թե արդյոք բարգավաճման ուսմունքով եւ «Ես ցանկացած գնով պետք է երջանիկ լինեմ» փիլիսոփայական խոսքերով հագեցած մեր օրերում կլինի՞ ինչ-որ մեկը, ով կընդունի այն խոսքը, որ Աստված սովորեցնում էր ինձ: Հետո իմ ձեռքն ընկավ Ջոն Բիվերի «Հաղթանակ անապատում» գիրքը: Երբ բանտախցում սկսեցի կարդալ այն, ցնցվեցի, որովհետեւ այդ գրքում այն ուղերձն էր, որը հայտնել էր ինձ Սուրբ Հոգին: Ջոնը հռչակում է, որ հիմա այն ժամանակն է, որ Աստծուն չորոնենք խոստմունքների համար, այլ ճանաչելու համար, թե Ով է Նա, Ով է խոստմունք տվողը:

«Հաղթանակ անապատում» գիրքը կարդալուց հետո՝ կարճ ժամանակ անց, ձեռք բերեցի Ջոն Բիվերի մյուս գիրքը՝ «Կանչողի ձայնը»: Կարդալով այդ մարգարեական գիրքը՝ ես զգացի, որ պետք է հանդիպեմ հեղինակին՝ պարզապես համոզվելու համար, որ նա իրական մարդ է: Արդյո՞ք կարող էր Աստված վստահել այդ անհապաղ, հավիտենական, վերջին օրերին պատրաստող այդքան կարեւոր ուղերձը երիտասարդ մի քարոզչի: Իմանալով Ջոնի աստվածաբանական կրթության մասին՝ ես պարզապես ուզում էի համոզվել՝ արդյոք նա հավատում է այն ամենին, ինչ գրում է (Ես հարցազրույց էի ունեցել հազարավոր հեղինակների հետ, եւ նրանցից շատերը չգիտեին, իսկ ոմանք էլ չէին հավատում այն ամենին, ինչ գրում էին... Նրանք պարզապես գրելու պարգեւ ունեին): Ես խնդրեցի Ջոնին այցելել ինձ բանտում, եւ նա եկավ: Երբ Ջոնը ներս մտավ իմ բանտախուց, ես արդեն գիտեի, որ այդ մարդը Աստծուց է ուղարկված

եւ այդ ժամանակվա «կանչողի ձայնն էր»: Երբ մենք կիսվում էինք հայտնություններով, ես լալիս էի: Պարզվեց, որ Ջոնը իրական էր:

«Հաղթանակ անապատում» եւ «Կանչողի ձայնը» այսօրվա համար երկու ամենակարեւոր գրքերից են, որոնցում Եկեղեցու գոյատեւման բանալիներն են: Ես այդ գրքերն ուղարկեցի իմ հարյուրավոր ընկերներին եւ եկեղեցու ավագներին: Դրանք անպայման պետք է կարդացվեն նրանց կողմից, ովքեր ուզում են ծառայել եւ հնազանդվել Քրիստոսին եւ լինել վերջին օրերի հոգիների հունձքի մշակները: Միգուցե դուք զարմացած եք, թե այսօր ինչու են շատ քրիստոնյաներ եւ քրիստոնեական եկեղեցիների ավագներ անառակ որդու նման խոզանոցում: Անառակ որդին ասաց իր հորը՝ «Տո՛ւր ինձ... », եւ նրա վերջը հեռավոր երկիրն էր, անապատը, խոզանոցը: Ջոն Բիվերը սովորեցնում է մեզ՝ ինչպես վերադառնալ Հայրական տուն:

Ջիմ Բեկեր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս գիրքը անապատի մասին է՝ տեղի կամ ժամանակահատվածի, որի միջով յուրաքանչյուր քրիստոնյա պետք է անցնի, եթե ուզում է մոտենալ Աստծուն: Դա ոչ թե հրաշքներ եւ նշաններ փնտրելու, այլ Աստծո սիրտը որնելու ժամանակ է, որն էլ բնավորություն եւ ուժ է ձեւավորում հավատացյալի մեջ: Սա նախապատրաստման ժամանակ է, ժամանակ, որը կարող է շատ հիասթափություններ բերել, առանց խոստումների տեսիլքի: Ես հույս ունեմ, որ այս գիրքը կոգեւորի ձեզ՝ հետեւելու Նրան, Ով Միակն է, որ կարող է բավարարել:

Ես չեմ պնդում, որ սա մի սպառիչ եւ ամբողջական հետազոտություն է: Շատ ավելի բան կա, որ կարելի է գրել, բայց սա իմ սրտից է գալիս: Այս գրքով ցանկանում եմ ներկայացնել ձեզ այս թեման, իսկ հետո թույլ տվեք, որ Սուրբ Հոգին անձնապես բացի դա ձեզ: Ես մտածված կերպով իմ կյանքից մանրամասն օրինակներ չեմ բերել, որպեսզի դուք դրանք չկիրառեք ձեր կյանքում, քանի որ յուրաքանչյուրիս անապատը բաղկացած է տարբեր հանգամանքներից:

Երբ ես անապատ ընկա, շփոթվածություն, բարկություն, վախ, կասկած, միայնակություն, հիասթափություն եւ կապաղություն էի զգում: Ինչ եմ անում ես այստեղ: Սա իմ կանգառը չէ: Բայց եւ այնպես ես խոնարհվեցի եւ Տիրոջից խնդրեցի փոխել իմ սիրտը, մաքրել իմ ձգտումները, ազատել ինձ իմ յուրաքանչյուր ծածուկ մեղքից, կատարելագործել այս անոթը եւ հեռացնել այն ամենը, որ խանգարում է իմ մեջ Նրա փառքի հայտնվելուն: Բայց ես նույնիսկ չէի էլ պատկերացնում, թե ինչ կերպով Տերը կսկսի իրականացնել այդ ընթացքն իմ կյանքում: Այս գրքում ես խոսում եմ այն մասին, թե ինչպես եմ ինքս, ինչպես նաեւ շատերը անցել անապատով: Ես դեռեւս կատարյալ չեմ եւ դեռեւս չեմ իրագործել այն ամենը, որ Աստված պատրաստել է ինձ համար, բայց ես աղոթում եմ, որ այս գրքի ուղերձը ոգեւորի ձեզ եւ զորություն տա առաջ շարժվելու՝ Աստ-

ծո մեջ ձեր կոչմանը հասնելու համար:

Եթե դուք հասկանաք, թե ձեր կյանքում որտեղ եք գտնվում, այն ձեր կյանքը կդարձնի բարգավաճող: Այդ ժամանակ դուք կարող եք տեսնել Աստծո ձեռքը նույնիսկ այն դեպքում, երբ չեք զգում Նրա հպումը: Ժամանակն է եկել, որ ձեր սերն Աստծո հանդեպ ավելի շատանա, քան այն բանի սպասումը, թե ինչ կարող է անել Նա ինձ համար: Որպեսզի դուք կարողանաք ասել. «Տեր, ի՞նչ ես Դու ուզում ինձանից»:

ՄԱՍ 1

ԱՆԱՊԱՏ

ԳԼՈՒԽ 1

ԱՆԱՊԱՏԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Հիասթափության մեջ դուք հիշում եք այն օրերը, երբ ձեզ բավական էր շշնջալ Նրա անունը, եւ հենց նույն պահին զգում էիք Նրա ներկայությունը, բայց այժմ՝ լռության մեջ, դուք ուզում եք բացականչել. «Աստվա՛ծ իմ, որտե՞ղ ես Դու»:

«Ահա գնում եմ դեպի արեւելք, եւ Նա չկա, եւ դեպի արեւմուտք, եւ Նրան չեմ նշմարում: Դեպի հյուսիս՝ իր գործողությունում, եւ չեմ գիտում. հարավում է ծածկվում, եւ ես Նրան չեմ տեսնում»:

Հոբ 23.8,9

Արդյո՞ք կանչում եք Աստծուն ձեր սրտում: Դուք վաղուց ցանկանում եք լսել Նրա ձայնը, բայց ձեր կանչին պատասխան չկա: Դուք աղոթում եք, բայց ձեր աղոթքները անպատասխան են մնում: Չհասկանալով հիշում եք այն ժամանակը, երբ բավական էր միայն շշնջալ Նրա անունը, եւ հենց նույն պահին զգում էիք Նրա ներկայությունը, բայց հիմա լռության մեջ դուք ուզում եք բացականչել. «Աստվա՛ծ իմ, որտե՞ղ ես Դու»: Ինչպես Հոբը, դուք որոնում եք Նրան ամենուր, բայց չեք կարողանում գտնել Նրան կամ տեսնել Նրա շարժը ձեր կյանքում:

Բարի՛ գալուստ անապատ: Իմացեք, որ դուք այստեղ մենակ չեք, դուք լավ ընկերակցության մեջ եք:

Դուք անցնում եք այնտեղով, որտեղով անցավ Մովսեսը... Մովսեսը, որ մեծացավ փարավոնի պալատում՝ որպես արքայազն: Մովսեսը, որ ուներ տեսիլք իր ժողովրդին սրրկության լծից ազա-

փագրելու համար, Մովսեսը, որ 40 տարի ոչխար արածեցրեց անապատում:

Դուք գտնվում եք Հովսեփի կողքին... Հովսեփի, որ իր հոր ամենասիրելի որդին էր, Հովսեփի, որ երազներ էր տեսնում այն մասին, որ ինքը առաջնորդ կդառնա, Հովսեփի, որին զուրը նետեցին իր հարազատ եղբայրները, վաճառեցին ստրկության, իսկ հետո բանտարկեցին:

Դուք նստած եք Հոբի կողքին... Հոբի, որին Աստվածաշունչը անվանում է «արեւելքի որդիներից ամենահայտնին» (Հոբ 1.3): Նույն Հոբի, որ կորցրեց ամեն ինչ՝ ունեցվածքը, երեխաներին, առողջությունը եւ իր կնոջ աջակցությունը...

Եվ, որ ամենակարեւորն է, ձեր կողքով քայլում է Աստծո Որդին՝ Հիսուսը, Ով այն բանից հետո, երբ Հայր Աստված ու Սուրբ Հոգին ամբողջ ժողովրդի առջեւ վկայեցին, որ Նա իրոք Աստծո Որդին է, գնաց անապատ, որպեսզի դեմառդեմ հանդիպի խավարի ուժերին:

Անապատով անցնողների ցուցակը կարելի է դեռ շարունակել, քանի որ անապատը կարեւոր եւ անհրաժեշտ ժամանակ է Աստծո յուրաքանչյուր զավակի կյանքում: Մենք կուզենայինք ինչ-որ կերպ շրջանցել այն: Մենք որոնում ենք կարճ ճանապարհներ կամ հնարավորություններ, որ շրջանցենք անապատը, սակայն դա անհնար է: Այդ ճանապարհը փանում է դեպի խոստացված երկիր, եւ դուք չեք կարող հայտնվել այնտեղ՝ չանցնելով անապատի միջով: Մեզ անհրաժեշտ է հասկանալ այդ յուրահատուկ ժամանակի կարեւորությունն ու նշանակությունը, եթե ցանկանում ենք հասնել խոստացված երկիր:

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Եվ Իսաքարի որդիներից, որ ժամանակի գիտությունը ունեին եւ հասկանում էին, թե Իսրայելն ինչ պետք է անի, նրանց երկու հարյուր գլխավորները եւ նրանց բոլոր եղբայրները նրանց հետ համաձայն էին»:

Ա Մնաց. 12.32

Քանի որ Իսաքարի որդիները հասկանում էին Աստծո ժամանակները, նրանք գիտեին՝ ինչ պետք է անի Իսրայելը: Հոգու մեջ ժամանակները եւ ժամանակաշրջանները հասկացող մարդիկ գիտեն, թե Աստված ինչ է ուզում անել, եւ իմաստուն են վարվում: Եվ հակառակը, ովքեր չեն հասկանում Աստծո ժամանակները եւ ժամանակաշրջանները, չգիտեն՝ ինչ է Նա ուզում անել իրենց կյանքում, եւ իմաստուն չեն վարվում: Հիսուսն այս մասին ասում է Ղուկասի Ավետարանում.

> ***«Երբ տեսնում եք արեւմուտքից ամպ դուրս գալիս, շուտով ասում եք, թե անձրեւ կգա, եւ այնպես է լինում: Եվ հարավային քամին փչելիս ասում եք, թե շոգ կլինի, եւ այնպես է լինում: Կեղծավորնե՛ր, երկրի եւ երկնքի երեսը գիտեք փորձել, բայց ինչպե՞ս եք այս ժամանակը փորձում»:***
>
> ***Ղուկ. 12.54-56***

Արդյո՞ք կարող է հողագործը բերք հավաքել ցանքի ժամանակ: Ակնհայտ է, որ ոչ: Եթե նա չցանի ցանքի ժամանակ, չի հնձի հունձքի ժամանակ: Ցանքի ժամանակի ճիշտ ընտրությունը որոշիչ դեր է խաղում բերքի համար: Եթե հողագործը շատ շուտ կամ շատ ուշ ցանի, ապա հունձքի ժամանակ քիչ բերք կլինի: Սերմերը չեն կարողանա ճիշտ սնունդ ստանալ ճիշտ աճի համար: Անձրեւը եւ շոգը, ձյունն ու ցուրտը ավելի շուտ կսկսվեն, քան սերմերը կհասունանան: Որպեսզի գյուղացին լավ բերք ստանա, նրան անհրաժեշտ է իմանալ ցանքի ժամանակը: Այսօր եկեղեցին գտնվում է սպասվող բերքահավաքին պատրաստվելու ընթացքի մեջ: Եթե մենք ցանկանում ենք լիությամբ ընդունել այն ամենը, ինչ Աստված ունի մեզ համար էտման եւ աճման այս ընթացքում, ապա անհրաժեշտ է իմանալ ժամանակները: Մենք աղաղակում ենք հունձքի համար, բայց բերքահավաքի ժամանակը դեռ չի հասել: Հիմա էտման եւ պատվաստման ժամանակն է:

Հիսուսն ուղղում էր շատերին, քանի որ նրանք փնտրում էին սխալ բաներ սխալ ժամանակին:

«Ամեն բանի ժամանակ կա, եւ ժամանակ՝ երկնքի տակի բոլոր ձեռնարկության»:

Ժող. 3.1

Այս գրքում ես ուզում եմ կիսվել կոնկրետ ժամանակաշրջանի ըմբռնման մասին, որը կենսական կարեւոր դեր է խաղում մեր կյանքում: Դա անապատի ժամանակաշրջանն է, էտելու եւ պատվաստելու ժամանակը: Այս ժամանակաշրջանի հիմնական նպատակն է նախապատրաստումը:

Անապատը վատ ժամանակ չէ նրանց համար, ովքեր հնազանդ են Աստծուն: Այն հիանալի նպատակներ է հետապնդում. մարզել եւ պատրաստել մեզ Աստծո Հոգու նոր շարժի համար: Չհասկանալով այս ընթացքի ամբողջ դրական նշանակությունը՝ շատերն այդ ժամանակ իմաստուն չեն վարվում: Եթե դուք չեք հասկանում, թե ինչու Աստված թույլ տվեց ձեզ ընկնել որոշակի իրադրությունների մեջ, այսպես կոչված անապատ, եւ փորձում եք փախչել այդ ընթացքից կամ արագացնել այն, այդ կերպ, առանց գիտակցելու, դուք ավելի եք երկարացնում անապատում մնալու ձեր ժամանակը: Եթե չեք հասկանում այն ժամանակը եւ վայրը, ուր Աստված տարել է ձեզ, ապա դա կարող է տանել ավելի մեծ դժվարությունների, հիասթափության եւ նույնիսկ պարտության: Այդպես եղավ Իսրայելի որդիների հետ: Անապատում մնալու ժամանակի անհրաժեշտությունը չհասկանալը բերեց նրան, որ մի ողջ սերունդ չմտավ խոստացված երկիր: Աստված նրանց տարավ անապատ փորձության եւ մարզման համար, որպեսզի նրանք Աստծո համար ստեղծված ուժեղ զինվորներ դառնան: Բայց դրա փոխարեն Իսրայելի ժողովուրդը սխալմամբ որոշեց, որ Աստված իրենց անապատ է ուղարկել պատժելու համար, այդ պատճառով էլ նրանք մշտապես տրտնջում, բողոքում եւ կրքերին էին տրվում: Երբ անապատից դուրս գալու, թշնամու դեմ կռվելու եւ խոստացված երկիրը գրավելու ժամանակը եկավ, տեղի տվեցին վախը, համընդհանուր տրտունջն ու դժգոհությունը: Նրանց առջեւ ընտրություն էր Աստծո խոստումների, Նրա հնարավորություն-

ների եւ մարդկային հասկացողության ու անկարողության միջեւ: Արդյունքում նրանք կապարեցին իրենց ընտրությունը եւ մարդուն ավելի շատ հավատացին, քան Աստծուն: Նրանք որոշեցին, որ չեն կարող գրավել Աստծո կողմից իրենց ժառանգություն տրված երկիրը, որտեղ կաթ ու մեղր էր բխում, եւ այդ ժամանակ Աստված ասաց. «Լա՛վ, թող լինի ձեր հավատքի պես»:

«Եվ այն ամենն օրինակի համար էր նրանց հանդիպում, բայց մեզ խրատի համար գրվեց... »:

Ա Կորնթ. 10.11

Աստծո էության եւ Նրա բնավորության հանդեպ անվստահությունը պատճառ հանդիսացավ նրանց սխալ քայլերի համար: Արդյունքում՝ այն, ինչ որ պետք է դառնար ժամանակավոր փորձություն, դարձավ տեւական:

Ովքեր հասկանում են, թե ինչ է նշանակում ժամանակն անապատում, ուրախությամբ կմտնեն այնտեղ՝ իմանալով, որ մյուս կողմում իրենց սպասում է «խոստացված երկիրը»: Երբ հստակ գիտեք՝ ինչի եք ձգտում, անկախ իրավիճակներից լցվում եք ուրախությամբ, որն էլ ուժ է տալիս ձեզ անցնել մինչեւ վերջ, որպեսզի « ...կատարյալ եւ ամբողջ լինեք եւ ոչ մի բանի պակասություն չունենաք» (Հակոբ. 1.4): Աստված գործածության համար պիտանի անոթներ է պատրաստում՝ Իր Հոգու նոր շարժի համար:

ԱՆԱՊԱՏԸ ՊԱՏԺՎԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՉԷ

Այս գրքում կխոսենք այն մասին, թե ինչ է անապատը, եւ ինչ չէ անապատը: Կդիտարկենք նրա դերը, օգուտը եւ դատը: Սուրբ Հոգին դրդեց ինձ կիսվել սրա մասին: Եվ ես աղոթում եմ, որ օրինակների, մեջբերումների եւ խրախուսանքների խոսքերի մեջ դուք կարողանաք հասկանալ՝ իմաստուն կերպով ինչպես անցնել անապատ կոչվող ժամանակահատվածը:

Եկեք սկսենք Հիսուսի օրինակից, քանի որ Նա փորձությունը հա-

ջող անցավ անապատում:

Ղուկասի 3.22-ում ասվում է, թե ինչպես Սուրբ Հոգին աղավնու պես իջավ Հիսուսի վրա, եւ երկնքից ձայն եղավ, որ ասում էր. «Դու ես Իմ սիրելի Որդին, Ես Քեզ հավանեցի»: Աստված ոչ միայն ողջ ժողովրդին հայտարարեց, որ Հիսուսն Իր Որդին է, այլեւ ասաց բոլորին, որ հավանում է Նրան: Բայց անմիջապես դրանից հետո կարդում ենք. «Հիսուսը Սուրբ Հոգով լցված... Հոգով տարվեց անապատ» (Ղուկ. 4.1): Այդ իրադարձությունից պարզ երեւում է, որ Հիսուսն անապատ չտարվեց այն պատճառով, որ Հայր Աստված հավանություն չտվեց Նրա վարքին կամ պատժեց Նրան ինչ-որ մեղքի համար: Շատ կարեւոր է նշել սա հենց գրքի սկզբում: Մեզ շատ անհրաժեշտ է, որ դա հաստատված լինի մեր սրտերում:

Երկրորդ՝ մենք պետք է նաեւ հստակ հասկանանք, որ Աստված մեզ չի տանում անապատ, որպեսզի հանձնի սատանայի ձեռքը: Նա երբեք չի մոռանում մեզ: Խոստացված երկիր մտնելուց առաջ Աստված դիմում է նոր սերնդին՝ Եգիպտոսից դուրս եկածների երեխաներին, հետեւյալ խոսքերով. «Եվ հիշիր այն բոլոր ճանապարհը, որ քո Եհովա Աստվածը այս քառասուն տարում քեզ ման ածեց անապատի մեջ... » (Երկր. օր. 8.2): Մի՛ մոլորվեք. Տերը մեր կյանքում չի դադարեցնում Իր գործը այն պատճառով, որ մենք անապատում ենք: Նա մեզ դրա միջով է տանում: Առանց Նրա մենք երբեք չենք կարողանա անել դա: Առավել եւս դա այն տեղը չէ, ուր Աստված մեզ ժամանակավորապես լքել է, մինչեւ Ինքը նորից ցանկանա մեզ օգտագործել: Մեզ սիրող երկնային Հայրը այդ կերպ չի վարվում: Ընդհակառակը, դա այն ժամանակն ու վայրն է, որտեղ Նա զորավոր կերպով է գործում: Արդյո՞ք լսել եք այս արտահայտությունը. «Ծառերի պատճառով անտառը չի երեւում»: Անապատում էլ նույնն է կատարվում: Երբ դուք անապատում եք, դժվար է տեսնել Աստծո շարժը:

Երրորդ՝ մենք պետք է լավ յուրացնենք. անապատը պարտության վայր չէ, գոնե նրանց համար, ովքեր հնազանդվում են Աստծուն: Հի-

սուսը թուլացել էր սովից, Նրա կողքին կենդանի շունչ չկար, ում Նա կկարողանար վստահել, ով կկարողանար ոգեւորել Նրան: Հիսուսն անապատում քառասուն օր դժվարություններ էր կրում՝ չտեսնելով Աստծո գերբնական արտահայտումները: Այդ ժամանակ սատանան անապատում հարձակում էր գործում Նրա վրա, իսկ Հիսուսը հաղթում էր նրան Տիրոջ Խոսքով: Անապատը այն վայրը չէ, որտեղ Աստծո զավակները պարտություն են կրում: «Շնորհակալություն Աստծուն, որ ամեն ժամանակ մեզ հաղթող է անում Քրիստոսում...» (Բ Կորնթ. 2.14):

Երբ Իսրայելի ժողովուրդը քայլում էր անապատով, ստիպված էր պայքար մղել այդ վայրերում բնակվող ուրիշ ցեղերի դեմ: Տերը Իսրայելին հրամայել էր պայքարել: Իսրայելի ժողովուրդը հաղթեց ամորհացիներին (Թվոց 21.21-25), մադիանացիներին (Թվոց 31.1-11) եւ Բասանի ժողովրդին (Թվոց 21.33-35): Եթե Տերն ուզեր, որ իսրայելացիները պարտվեին, չէր հրամայի նրանց պաշտպանվել: Չնայած որ Աստծո նպատակը Իր ժողովրդի պարտությունը չէր, Եգիպտոսից ելածների մեծամասնությունը մահացավ՝ չմտնելով խոստացված երկիր: Աստված դա՛ չէր ուզում նրանց համար: Այն, ինչ պատահեց, Նրան չհնազանդվելու տխուր արդյունքն էր:

Ես հույս ունեմ, որ դուք ձեր սրտում ընդունեցիք, որ Աստված մեզ անապատ չի բերում այն պատճառով, որ հավանություն չի տալիս մեր գործողություններին կամ ինչ-որ պատճառով պատժում է մեզ: Անապատը այն վայրը չէ, որտեղ Աստված մեզ լքում եւ մոռանում է: Անապատը կլինի հաղթության վայր, երբ մենք հավատանք եւ հնազանդվենք Աստծուն:

ԳԼՈՒԽ 2

ԻՆՉ Է ԱՆԱՊԱՏԸ

Հասել է այն պահը, որ պետք է զարգանա մեր բնավորությունը: Դա կատարվում է անապատում...

Ա նախորդ գլխում մենք սահմանեցինք, թե ինչ չէ անապատը: Այս գլխում մենք կդիտարկենք, թե ինչ է կատարվում անապատում: Այս ընթացքում շատ հավատացյալներ գտնվում են ինքնադատապարտման մեջ: Նրանք գտնում են, որ սխալ են թույլ տվել կամ ինչ-որ բանով չեն գոհացրել Աստծուն: Բայց նրանք ուղղակի չեն հասկանում անապատի նպատակն ու նշանակությունը: Աստվածաշնչում եւ ողջ պատմության մեջ Աստծո տղամարդիկ եւ կանայք անցել են անապատով, որը նախապատրաստման ժամանակ է եղել Աստծո մեջ իրենց ունեցած ճակատագրի համար: *Եվ, այսպիսով, անապատը այն վայրը չէ, որտեղ Աստված մեզ լքում է, այլ այն, որտեղ Աստված նախապատրաստում է եւ մարզում:*

Այս գրքի սկզբում ես ցանկանում եմ հիշեցնել, որ Հին ուխտի իրադարձությունները Նոր ուխտի օրինակն ու խորհրդապատկերն են հանդիսանում: Ես Հին ուխտից օրինակներ եւ մարգարեություններ կօգտագործեմ, որպեսզի ցույց տամ, թե ինչ է անապատը:

Միայն մեր սովորածի մեջ միացնելով օրենքն ու մարգարեներին՝ մենք կկարողանանք ամբողջությամբ հասկանալ, թե Աստված ինչպես է շարժվում եւ գործում Իր Եկեղեցում: Հիսուսը Մաթեւոսի Ավետարանում ասում է. «Մի՛ կարծեք, թե Ես եկա օրենքը կամ մարգարեները քանդելու, Ես չեկա քանդելու, այլ կատարելու» (Մաթ. 5.17): Սուրբ Հոգին մեզ համար բացում է Գրվածքները՝ կենդանաց-

նելով Հին ուխտի գաղտնիքները, որ ծածկված են Քրիստոսում: Կարդալով Հին ուխտը՝ դուք կարող եք տեսնել ճշմարտություններ, որոնք օրինակ են հանդիսանում մեզ համար Նոր ուխտում: Կորնթացիների առաջին ուղերձում ասվում է.

«Եվ այն ամենն օրինակի համար էր նրանց հանդիպում, բայց մեզ խրատի համար գրվեց... »:

Ա Կորնթ. 10.11

Այլ խոսքով՝ Աստված ուզում է, որ մենք դաս քաղենք նախահայրերի եւ մարգարեների կյանքից: Թեպետ Հին կտակարանի շատ մարգարեություններ պատմության ընթացքում արդեն կատարվել են, միեւնույնն է, դրանք այսօր վերաբերում են նաեւ մեր ժամանակներին: Մեկը մյուսին չի բացառում:

«ԱՆԱՊԱՏ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Եկեք Հին կտակարանից՝ Հոբի գրքից, անապատի նկարագրման մի օրինակ բերենք:

«Ահա գնում եմ դեպի արեւելք, եւ Նա չկա, եւ դեպի արեւմուտք, եւ Նրան չեմ նշմարում: Դեպի հյուսիս՝ իր գործողությունում, եւ չեմ գիտում: Հարավում է ծածկվում, եւ ես Նրան չեմ տեսնում: Սակայն Նա գիտի իմ ճանապարհը: Ինձ փորձելիս ես ոսկու նման դուրս կգամ»:

Հոբ 23.8-10

Սա անապատի դասական նկարագրությունն է: Հոբն իր կյանքում փնտրում էր Աստծո ներկայությունն ու շարժը: Բայց որքան շատ էր նա որոնում, այնքան անհասանելի էր թվում Աստված: Բայց եւ այնպես, Աստված այդ ժամանակ գործում էր հոգուտ Հոբի եւ հաստատ գիտեր, թե ինչ էր կատարվում նրա կյանքում: Այդպիսով՝ չնայած մենք երբեմն չենք զգում Աստծո ներկայությունը եւ չենք տեսնում Նրա շարժը, դա չի նշանակում, որ Նա չկա, կամ Նա չի գործում մեր կյանքում:

Երբ առաջին անգամ դուք ընդունեցիք Տեր Հիսուսին եւ լցվեցիք

Սուրբ Հոգով, Աստծո ներկայությունը հիանալիորեն իրական էր ձեզ համար: Դուք կարող էիք կանչել Նրա անունը, եւ Նա անմիջապես պատասխանում էր: Երբ աղոթում էիք, գիտեիք, որ Նա ձեր կողքին է: Նրա ընտանիքում լինելով նորածին՝ դուք ավելի շատ ուշադրության էիք արժանանում, ինչպես յուրաքանչյուր նորածին իր ընտանիքում:

Նորածինները մշտական ուշադրություն են պահանջում: Նրանց հարկավոր է կերակրել, հագցնել, լողացնել: Նրանք ոչինչ չեն կարող ինքնուրույն անել եւ ամեն ինչում կախված են ուրիշներից: Բայց երբ երեխաները մեծանում են, նրանց հարկավոր է թույլ տալ սովորել եւ դառնալ ավելի ինքնուրույն: Երբ մեր ավագ որդին սկսեց սովորել ինքնուրույն ուտել, նա հուսահատվում էր, քանի որ չէր կարողանում կերակուրն այնպես արագ դնել բերանը, ինչպես դա անում էր իր մայրը: Այժմ նա դժվարությամբ պայքարում էր սպանալ այն, ինչը նախկինում այնքան հեշտ ու արագ էր տրվում իրեն: Շատ անգամ մեզ ավելի հեշտ կլիներ, որ շարունակեինք կերակրել նրան, քան թե թույլ տայինք նրան անել դա ինքնուրույն: Բայց եթե մենք ընտրեինք «հեշտ» տարբերակը, ապա դա շատ կխանգարեր մեր երեխային՝ աճել այդ ոլորտում: Երեխայի մեծանալու հետ զուգահեռ ծնողներն ավելի քիչ են օգնում նրան՝ խրախուսելով կատարել ինքնուրույն քայլեր, իսկ դա օգնում է նրան աճել եւ զարգանալ:

Աստված մեզ հետ վարվում է նույն ձեւով, որպեսզի մենք կարողանանք զարգանալ եւ դառնալ հոգեւոր հասուն: Երբ մենք վերստին ենք ծնվում եւ լցվում ենք Սուրբ Հոգով, դա մի ժամանակաշրջան է, երբ մենք ուղղակի նորածիններ ենք, եւ Աստված մի որոշ ժամանակ պատասխանում է մեր ամեն մի կանչին: Բայց որպեսզի մենք աճենք եւ սովորենք, Նա թույլ է տալիս մեզ անցնել մի ժամանակահատված, երբ Ինքը չի պատասխանում մեր յուրաքանչյուր աղաղակին հենց նույն րոպեին:

Հետո սկսվում է մի ժամանակ, երբ պետք է ձեւավորվի մեր բնա-

վորությունը: Եվ դա կատարվում է անապատում... անապատում, որտեղ թվում է, թե Աստված այնքան հեռու է, շատ կիլոմետրեր հեռու, իսկ Նրա խոսքումները՝ առավել եւս, թեպետ իրականում բավական է ձեռքդ երկարես... քանի որ Նա խոսքացել է. « ...չեմ թողնի քեզ եւ երեսից չեմ գցի» (Եբր. 13.5):

Դա այն ժամանակն է, երբ թվում է, որ դուք գնում եք մի ուղղությամբ, որը լիովին հակառակ է ձեր երազանքներին եւ Աստծո խոսքումներին: Դուք ոչ մի աճ կամ շարժ չեք տեսնում: Միանգամայն հնարավոր է՝ դուք մտածում եք, որ ընդհանրապես ետ եք գլորվում: Թվում է, որ Նրա ներկայությունն ավելի շուտ պակասում է, քան ավելանում:Հնարավոր է, որ դուք նույնիսկ զգում եք, որ Նա ձեզ չի նկատում եւ չի սիրում:

ՀԱՆԱՊԱՋՕՐՅԱ ՀԱՅԸ

Այդ ժամանակ Աստված ձեզ ոչ թե «առատություն», այլ ամեն օրվա համար հաց է տալիս: Սա այն ժամանակն է, երբ սպանում եք այն, ինչ անհրաժեշտ է ձեզ, եւ ոչ թե այն, ինչ դուք եք ցանկանում: Սա ժամանակահատված է, երբ դուք շփվում եք նրանց հետ, ովքեր ձեզ պետք են, եւ ոչ թե նրանց, ում հետ դուք եք ցանկանում շփվել: Անապատում Աստված գիտի, թե հոգեւոր ինչի կարիք ունեք, եւ դա կարող է լինել ոչ այն, ինչ դուք եք անհրաժեշտ համարում ձեզ համար: Ամերիկայում մենք դա անվանում ենք պակասություն եւ ասում ենք. «Կարիքն առաջանում է սատանայից»: Բայց խնդիրն այն է, որ կարիքների եւ ցանկությունների մեր սահմանումը տարբերվում է այս հասկացողության իսկական նշանակությունից: Մենք մեր ցանկություններն անվանում ենք կարիքներ, թեպետ դա այդպես չէ:

Ամերիկյան եկեղեցուն դեռ պետք է գիտակցել, թե ինչ նկատի ուներ Պողոսը, երբ գրում էր փիլիպեցիներին.

«Ոչ թե կարոտության պատճառով եմ ասում, որովհետեւ սովորեցի ինչի մեջ որ կամ, նրանով բավական լինել: Գիտեմ պակասու-

թյուն քաշել եւ ավելությունով լինելն էլ. ամեն բանի մեջ ամենին լավ տեղեկացած եմ՝ կշտանալն էլ, սովածանալն էլ, ավելությունով ունենալն էլ, պակասություն քաշելն էլ: Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով»:

Փիլիպ. 4.11-13

Պողոսը սովորել էր գոհ լինել եւ՛ դժվար ժամանակ, եւ՛ առատության մեջ՝ իրեն զորացնող Քրիստոսով: Ամերիկյան եկեղեցում մենք սովոր չենք ո՛չ մեկին, ո՛չ մյուսին: Ցավոք, հարստության եւ առատության մեջ ապրողները նույնքան դժգոհ են կյանքից, որքան պակասության մեջ ապրողները:

Եթե մենք չունենք այն ամենը, ինչ, թվում է, պետք է ունենայինք, մենք դա կոչում ենք «կարիք»: Մարդկանց հավատքի եւ նրանց հոգեւոր վիճակի մասին մենք դատում ենք նրանով, թե ինչ ունեն, բնավորությանը նայելու փոխարեն, որ ավելի կարեւոր է: Իսրայելի ժողովուրդը Եգիպտոսից դուրս եկավ եգիպտացիներից հավաքած մեծ հարստությամբ՝ ոսկե եւ արծաթե զարդերով, հրաշալի հագուստներով: Նրանք թանկագին մետաղներն օգտագործեցին անապատում կուռք սարքելու համար, վառ հագուստներ հագան եւ սկսեցին պարել դրա շուրջը: Այն, որ նրանք շատ հարստություն ունեին, չորոշեց նրանց բարեպաշտությունը, այլ ընդհակառակը: Միայն Եգիպտոսից դուրս եկածներից երկուսը ունեին այնպիսի բնավորություն, որը թույլ տվեց մտնել եւ տիրել խոստացված երկիրը: Միայն Հեսուն եւ Քաղեբը մտան, որովհետեւ նրանք ուրիշ հոգի ունեին. նրանք անմնացորդ հետեւեցին Աստծուն (Թվոց 14.24): Արժեքների մեր համակարգը աղավաղվում է, եթե մենք մարդկանց գնահատում ենք ըստ նրանց ունեցվածքի եւ ոչ թե ըստ նրանց էության:

Մյուս կողմից, եթե, օրինակ, ես ավագի դիրք ունեմ կամ ազդեցություն ունեցող քրիստոնյա եմ, դա չի նշանակում, որ Տերն ինձ իրավունք է տվել անել այն, ինչ ցանկանում եմ: Առնում եմ այն ամենն, ինչ ուզում եմ՝ ծախսելով փողերն իմ ցանկությունների վրա, կամ օգտագործում եմ իմ ազդեցությունը իմ շահերի համար: Իրա-

կանում ֆինանսական օրինությունը եւ ավելի մեծ իշխանությունը պետք է բերեն ավելի շատ կախվածություն Աստծուց՝ Նրա նպատակների եւ Նրա առաջնորդության համար:

Իշխանության դիրքում գտնվելով՝ չեմ կարող իմ դիրքը եւ հեղինակությունը օգտագործել իմ ծրագրերն իրականացնելու համար: Ես չեմ կարող Աստծո ժողովրդին օգտագործել իմ ցանկություններն իրագործելու համար: Պողոսը, չնայած որ իշխանություն ուներ եկեղեցիներից ստանալ ֆինանսական աջակցություն նրանցում հոգեւորները սերմելու միջոցով, հետեւյալն է ասում. «Եթե մենք ձեզանում հոգեւորները սերմեցինք, մեծ բա՞ն է, որ ձեզանից մարմնավորները հնձենք: Եթե ուրիշները ձեզ վրա այդ իշխանությունը վայելում են, ո՞չ առավել եւս մենք, բայց մենք այս իշխանությունը չբանեցրինք, այլ ամեն բանի համբերում ենք, որ արգելք չդնենք Քրիստոսի Ավետարանին» (Ա Կորնթ. 9.11,12): Պողոսի համար ավելի կարեւոր էր Ավետարանի հռչակումը, քան այն, ինչ օրենքով իրեն էր պատկանում:

Փիլիպեցիների 4.17-ում Պողոսն ասում է իրենց զոհաբերության մասին. «Ոչ թե տուրք եմ ուզում, այլ պտուղն եմ ուզում, որ ավելանա ձեր հաշվին»: Նրան ավելի մտահոգում էր մարդկանց վիճակը, ովքեր տալիս էին, եւ ոչ անձնական շահը կամ ծառայությունը:

Ոմանք ճիշտ չեն օգտագործում օծությունը: Նրանք օգտագործում են այն ամբոխ հավաքելու եւ ծառայություն կառուցելու համար: Նրանց դրդապատճառը հեղինակություն ձեռք բերելն է կամ շատ զոհաբերություններ հավաքելը: Ինչ էլ որ լինի, եթե կենտրոնում Աստված չէ, կգա կործանումը: Աստծո սիրտը Իր ժողովրդի հետ է, ոչ թե այն ծառայողի, որը ղեկավարվում է եսասիրական դրդապատճառներով: Այդ պատճառով Պողոսը մեզ զգուշացնում է.

«Ոչ մի բան չլինի գրգռումով եւ ոչ էլ սնապարծությունով, այլ խոնարհությունով թող մեկը մյուսին իր անձից ավելի լավ համարի: Միայն ձեր անձերի բաներին մտիկ չտաք, այլ ամեն մեկն իր ընկերի

բաներին էլ: Ձեր ամեն մեկը թող այն մտածի, որ էլ Քրիստոս Հիսուսումն էր»:

Փիլիպ. 2.3-5

Այսպիսի վերաբերմունք ուներ Հիսուսը Իր ծառայության մեջ: Նա եսասիրական դրդապատճառներ չուներ: Նա Իր վրա վերցրեց մեր մեղքերը, տկարությունները եւ մահը ընդունեց (համարելով մեր բարեկեցությունն ավելի կարեւոր, քան Իրենը), չնայած որ Ինքն անմեղ էր: Նրա կյանքի եւ ծառայության նպատակը ոչ թե ինքնապահովումն էր, այլ մարդկանց ծառայելը: Ինքն Իրեն ուրանալով՝ Նա մեզ բոլորիս տվեց ամենակատարյալ պարգեւը՝ հավիտենական կյանքը:

Բնավորության այսպիսի հասունությունը մեզանում դաստիարակվում է Աստծով, երբ մենք անապատում ենք: Անապատն այն վայրն է, որտեղ մեր մեջ սկսում են աճել Հոգու պտուղները: Լցված Նրան ճանաչելու անհագ ցանկությամբ՝ մենք փափագում ենք քայլել Նրա ճանապարհներով: Պողոսի նպատակը մեծ ծառայություն կառուցելը չէր, այլ Տեր Հիսուսին անձամբ ճանաչելը, եւ ամենից վեր Նրան հաճելի լինելու ձգտումն էր:

Անապատը անջուր տեղ է: Այնտեղ կարող է լինել հոգեւոր, ֆինանսական, սոցիալական կամ ֆիզիկական երաշտ: Անապատում Աստված մեզ «ամեն օրվա հաց» է տալիս եւ ոչ թե առատություն: Այդ ժամանակ Աստված հոգում է մեր բոլոր կարիքները, բայց ոչ միշտ է կատարում մեր բոլոր ցանկությունները: Անապատի նպատակը մեզ մաքրելն է: Մենք փափագում ենք ճանաչել Նրա սիրտը եւ ոչ թե որոնել նյութական առատություն: Եվ հետո առատության ժամանակ մենք չենք մոռանա, որ հենց Տերը՝ մեր Աստվածը, Նա է, Ով տալիս է առատություն, որպեսզի կատարի Իր ուխտը (Երկր. օր. 8.2-18):

ՄԱՍ 2

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

ԳԼՈՒԽ 3

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Նույնիսկ հիմա մենք հաճախ Հիսուսին որոնում ենք սխալ մղումներից ելնելով: Ինքներս դա չհասկանալով՝ մենք օգտագործում ենք Նրան: Նա մեզ համար դառնում է ընդամենը մեր կարիքների լրացման աղբյուր:

« ...Քո Եհովա Աստվածը այս քառասուն տարում քեզ ման ածեց անապատի մեջ, որ քեզ խոնարհեցնի, քեզ փորձելու եւ սրտիդ միջինը իմանալու համար... »:

Երկր. օր. 8.2

Պատկերացրեք այսպիսի իրավիճակ. դուք իսրայելացի եք եւ հենց նոր եք ստացել ազատություն ցման ստրկությունից: Դեռեւս վերջերս ստիպված էիք ճաշակել հետպանդման վախը, ունենալ յուրահատուկ վերապրումներ՝ ծովի ահարկու եւ սպառնացող ջրերի երկու պատերի միջով անցնելիս, եւ մյուս ափ դուրս գալ չոր ու անվնաս: Հայտնվելով մյուս ափին՝ դուք շրջվում եւ ականատես եք լինում, թե ինչպես են հենց այդ նույն պատերը, որոնք պաշտպանում էին ձեզ, փակվում՝ իրենց տակ թողնելով ձեր թշնամիներին: Դուք ուրախ պար եք բռնում՝ տոնելով Աստծո հաղթանակը եւ ձեր ազատագրումը: Դուք ձեզ հաղթող եք զգում՝ վստահ լինելով, որ Աստված ձեր կողմից է: Հավատում եք, որ այլեւս չեք կասկածի ամենազորեղ եւ հավատարիմ ԱՍՏԾՈՒՆ:

Բայց ահա տեսարանը փոխվում է. մի քանի օր անց դուք հոգնում եք, խմել եք ուզում, շոգում եք: Դուք չհասաք «խոստացված» երկիր, ընդհակառակը, աննպատակ թափառում եք անապատում,

որը լիքն է օձերով ու կարիճներով: Եվ հիմա դուք այլեւս չեք պարում եւ երգերով չեք փառաբանում Աստծուն, որ Նա ծովի անդունդում խորտակեց ձեր թշնամիներին եւ նրանց փայլատակող կառքերը, այլ տրտնջում եք նրա դեմ, ով առաջնորդեց ձեզ՝ ասելով. «Ինչո՞ւ դու մեզ դուրս հանեցիր Եգիպտոսից: Որպեսզի մենք, մեր երեխաները եւ մեր անասունները ծարավից մեռնե՞նք անապատում»:

Իսկ հիմա մի պահ մտածեք: Մի՞թե կարծում եք, որ Աստված Իր զորեղ ձեռքով ազատեց ձեզ ուժեղ թշնամուց, որպեսզի գցի անապատ՝ շփոթվածության եւ լռության մեջ աննպատակ շրջելու համար: Մի՞թե դա էր Նրա ծրագիրը:

Ինչպես Տերը դուրս բերեց Իսրայելի ժողովրդին Եգիպտոսից եւ տարավ նրան անապատով, այդպես էլ ձեզ է տանում: Սատանան չի առաջնորդում ձեզ, այլ Աստված: Եվ կա նպատակ այդ անջուր ժամանակների համար: Աստված նախ եւ առաջ խոնարհեցնում է մեզ, իսկ հետո՝ փորձում: Նա այդ անում է, որպեսզի մենք հասկանանք, թե իրականում ինչ կա մեր սրտում:

Ինչպե՞ս է Նա խոնարհեցնում: «Եվ քեզ խոնարհեցրեց եւ սոված պահեց եւ մանանա ուտեցրեց... » (Երկր. օր. 8.3): Աստված Իսրայելին խոնարհեցրեց՝ թույլ տալով սով: Բայց Իր Խոսքում Նա միանգամից ասում է, որ կերակրեց մանանայով: Հակասական է հնչում: Ինչպե՞ս կարող էր Նա սովածացնել եւ դրա հետ մեկտեղ կերակրել մանանայով:

Մանանան ամենահիանալի կերակուրն է, որ կարելի է հանդիպել: Դա հրեշտակների կերակուրն է: Եղիան քառասուն օրվա ընթացքում սնվում էր օրական երկու հացով եւ կուշտ էր: Իսկ իսրայելացիները առատապես ունեին այն: Ամեն առավոտ նրանք երկնքից թարմ մանանա էին ստանում: Այն օրվանից, երբ Աստված սկսեց նրանց մանանա տալ, մինչեւ կմտնեին խոստացված երկիր, նրանք երբեք բաց չթողեցին ո՛չ նախաճաշ, ո՛չ ճաշ, ո՛չ ընթրիք:

Ապա ինչո՞ւ է Աստված ասում. «Ես նրանց սովածացրի»: Ի՞նչ սովի մասին է Նա խոսում: Որպեսզի հասկանանք դա, եկեք դիտար-

կենք, թե ինչ վիճակում էին գտնվում իսրայելացինելը: Պատկերացրեք, որ դուք նախաճաշին սպանում եք մեկ հաց, ընթրիքին նույնպես ունենում եք մեկ հաց, դուք չունեք ընկույզի կամ ուրիշ յուղ, չունեք ժելե, միս, երշիկ, ձուկ, միայն հաց: Այստեղ չի խոսվում մի քանի օրվա կամ շաբաթվա մասին, այլ քառասուն տարի այսպիսի դիետայով ապրելու մասին:

Երբ ես երիտասարդական ծառայության հովիվ էի, մենք մեզ հետ Տրինիդադ ութօրյա միսիոներական ճանապարհորդության տարանք 56 երիտասարդի: Տրինիդադի եկեղեցին մեզ համար կերակուր էր պատրաստել: Նրանք շատ ուշադիր էին մեր նկատմամբ, բայց ամեն օր մենք հավ էինք ուտում: Ամեն օր նրանք հավով տարբեր կերակրատեսակներ էին պատրաստում եւ այն մատուցում էին բրնձի եւ բանջարեղենի հետ, բայց հավը մնում էր հավ, ինչքան էլ այն տարբեր եղանակներով պատրաստեին:

Ութ օր շարունակ հավ ուտելուց հետո մենք շատ էինք ուզում ուրիշ բան ուտել: Երբ տուն վերադարձանք, մեր խմբի երիտասարդներից մեկը իր մորը հարցրեց՝ ի՞նչ կա ընթրիքին: Նա պատասխանեց՝ հավ: Այդ ժամանակ երիտասարդը սկսեց աղաչել իր մորը, որ իրեն տանի համբուրգեր ուտելու:

Մենք տրտնջացինք ընդամենը ութ օր հետո: Կարո՞ղ եք պատկերացնել. քառասուն տարի այդպիսի սնունդ: Ոչ թե չորս, այլ քառասուն տարի: Այժմ հասկանալի՞ է, թե ինչպես էր Աստված տանջում նրանց սովից: Նա չէր տալիս նրանց այն, ինչ ուզում էր նրանց մարմինը: Աստված նրանց տալիս էր միայն այն, ինչի կարիքն ուներ նրանց մարմինը:

Ուրիշ ինչի՞ կարիք կարող էին նրանք ունենալ: Մենք զարմանում ենք, որ նրանց հագուստներն ու կոշիկները քառասուն տարվա ընթացքում չէին մաշվում: Միայն պատկերացրեք, թե նրանց քառասուն տարվա հագուստներն ինչ հնաոճ տեսք ունեին: Դուք կցանկանայի՞ք կրել միեւնույն հագուստը քառասուն տարի: Քառասուն տարվա ընթացքում՝ ո՛չ մի նոր հագուստ, ո՛չ մի հանրախանութ, ո՛չ մի գնում,

նույն կոշիկներն ու պարագաները, ո՛չ մի նոր բան:

Նրանք ամեն բան ունեին, ինչ որ իրենց անհրաժեշտ էր շոգից եւ ցրտից պաշտպանվելու համար, եւ ոչ թե այն, ինչ իրենք էին ցանկանում:

Ուրիշ ինչի՞ սով ունեին: Քառասուն տարի օրեցօր նրանք տեսնում էին միեւնույն բնապատկերը: Ամեն օր նույն կակտուսները, չորացած հողը, ոչ մի առվակ, ոչ մի անտառ, ոչ մի հիասքանչ լիճ... միայն անապատ:

Այս լույսի ներքո եկեք քննարկենք հետեւյալ խոսքը.

> *«Եվ քեզ խոնարհեցրեց եւ սոված պահեց եւ մանանա ուտեցրեց... որ քեզ իմացնի, թե ոչ միայն հացով կապրի մարդ, այլ Տիրոջ բերանից դուրս եկած ամեն խոսքով»:*
>
> *Երկր. օր. 8.3*

Ի՞նչ արեց Աստված: Նա նրանց մեջ սով առաջացրեց՝ վերացնելով այն ամենը, ինչը կբավարարեր նրանց մարմնի ցանկությունները, եւ ապահովեց նրանց միայն կյանքի համար անհրաժեշտ բաներով:

Նա առաջացրեց այս սովը, որպեսզի փորձեր նրանց:

Այդ ի՞նչ փորձություն էր: Աստված ուզում էր տեսնել՝ նրանք Իր կարիքը կզգա՞ն, թե՞ միայն այն ամենի, ինչ թողել են ետեւում, որ տեսնի՝ արդյո՞ք կսկսեն որոնել Իրեն, թե՞ միայն այն, ինչ փափագում են նրանց մարմինները, որ ստուգի՝ արդյո՞ք կփափագեն արդարություն, թե՞ կորոնեն հարմարավետություն եւ հաճույքներ:

Ահա թե ինչ պատասխանեցին նրանք.

> *«Եվ նրանց միջի խառնիճաղանջ բազմությունը շատ ցանկացան եւ Իսրայելի որդիներն էլ դարձյալ լաց եղան եւ ասացին. «Ո՞վ միս կտա մեզ ուտելու: Մենք հիշում ենք Եգիպտոսի մեջ մեր ձրի կերած ձկները, վարունգները, սեխերը, պրասները, սոխերը եւ սխտորները: Եվ հիմա մեր անձը չորացել է. ամենեւին մի բան չկա, միայն այդ մանանայի վրա են մեր աչքերը»»:*
>
> *Թվոց 11.4-6*

Նրանք հիշեցին այն ամենը, ինչ թողել էին Եգիպտոսում (աշխարհի համակարգի օրինակը): Չնայած Եգիպտոսում ստրուկ էին, բայց այժմ այդ կյանքը նրանց համար գերադասելի էր չոր վայրից, ուր Աստված էր բերել նրանց:

Նրանք սկսեցին բողոքել եւ տրտնջալ՝ պահանջելով միս: Աստված լսեց նրանց ձայնը.

> ***«Եվ կերան (լորի միս) եւ խիստ կշտացան, եւ իրենց ցանկությունը տվեց նրանց: Իրենց ցանկությունից չէին դադարել. դեռ իրենց կերակուրը բերաններում էր»: «Եվ Նա նրանց տվեց իրենց ուզածը եւ վատուժություն (խոց) ուղարկեց նրանց անձերին»:***
>
> ***Սաղմ. 78.29,30,106.15***

Նրանք ստացան իրենց ուզածը, բայց թանկ վճարեցին դրա դիմաց: Այդ մսի հետ հոգեւոր խղճուկ վիճակ եկավ: Եվ այդ վիճակից նրանք թուլացան ու չկարողացան դիմանալ դժվար իրավիճակներին, չկարողացան անցնել Աստծո փորձություններով եւ ի վերջո նրանք այդպես էլ չմտան ԽՈՍՏԱՑՎԱԾ ԵՐԿԻՐ:

Մեղքն այն չէր, որ նրանք միս էին խնդրում, այլ այն, ինչ թաքնված էր դրա ետեւում. նրանց սրտի դժգոհությունն Աստծուց եւ Նրա առաջնորդության մեթոդը, ինչպես նաեւ՝ անցյալ վերադառնալու նրանց ուժգին ցանկությունը, որը նրանց թվում էր հաճելի, չնայած նրանք ստրկության մեջ էին:

Մեր օրերում Աստված Իր եկեղեցուն մտցրել է անապատ: Հոգեւոր առումով Ամերիկան անջուր եւ չորացած երկիր է: Մեր փորձության ժամը մոտ է: Աստված կրկին ուզում է տեսնել՝ Իր ժողովուրդը կորոնի՞ Իր երեսը եւ Իր ձեռքը: Նրա երեսը նշանակում է Նրա բնավորությունը եւ էությունը, որն էլ խոսում է Նրա՝ մարդու հետ փոխհարաբերությունների մասին: Նրա ձեռքը ցույց է տալիս Իր հոգատարությունն ու ուժը: Եթե դուք որոնում եք միայն Նրա ձեռքը, միգուցե չճանաչեք Նրա երեսը: Բայց ճանաչելով Նրա երեսը՝ դուք միշտ կճանաչեք Նրա ձեռքը:

Փարիսեցիները չճանաչեցին Աստծո երեսը Հիսուսի անձի մեջ: Նրանք միայն սպասում էին, որ Աստծո ձեռքն իրենց ազատություն բերի հռոմեական լծից: Եկեք չնմանվենք նրանց:

Եթե մենք որոնենք Աստծուն ամբողջ սրտով, եթե սիրենք Նրան, հնազանդվենք եւ փնտրենք Նրա երեսը, ապա նույնիսկ այս «չոր ժամանակ» Նա կբարձրացնի Իր ավետաբերներին: Նրանք կբարձրանան ինչպես Հեսուն եւ կվերցնեն «խոստմունքի երկիրը»՝ մասնակցելով ազգերի հունձքին:

Այսօր Աստված բարձրացնում է «Հեսուի սերնդին», բայց ինչպես նրա ժամանակներում, այսպիսի բանակը պետք է մարզման ընթացք անցնի անապատում: Այս չոր ժամանակներում «մաղվում են» բոլոր տրտնջացողները, դժգոհները եւ ապստամբները, ինչպես մաղվում է ցորենը եւ առանձնացվում թեփից:

Նրանք, ովքեր խոստումներից շահ են որոնում եւ ոչ թե հենց Խոստացողին, թուլանում են անապատի անջրդի վայրերում: Մի բան է՝ որոնել Տիրոջը միայն նրա համար, որ Նա կարող է ինչ-որ բան տալ ձեզ կամ անել ձեզ համար, եւ միանգամայն այլ բան է՝ որոնել Նրան այնպիսին, ինչպիսին Նա կա: Առաջին դեպքում հետապնդվում է միայն անձնական շահը, դրդապատճառը, եսասիրությունը: Այսպիսի մոտիվներով լավագույն դեպքում սրտում կարող են աճել միայն ոչ հասուն փոխհարաբերություններ Տիրոջ հետ: Բայց երբ փափագում ենք պարզապես ճանաչել Տիրոջը եւ իմանալ, թե Ով է Աստված, մեզ մոտ կսկսվեն ստեղծվել ամուր եւ առողջ փոխհարաբերություններ:

ԴՐԴԱՊԱՏՃԱՌ ՏԻՐՈՋԸ ՈՐՈՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Հետեւյալ օրը այն ժողովուրդը... տեսնելով, որ Հիսուսն այնտեղ չէ, եւ ոչ էլ Նրա աշակերտները, իրենք էլ նավերը մտան եւ եկան Կափառնայում՝ Հիսուսին որոնելով: Եվ երբ Նրան ծովի այն կողմում գտան, ասացին Նրան. «Ռաբբի՛, ե՞րբ եկար այստեղ»: Հիսուսը պատասխանեց նրանց եւ ասաց. «Ճշ-

մարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, դուք Ինձ որոնում եք ոչ թե նրա համար, որ նշաններ տեսաք, այլ որ հացից կերաք եւ կշտացաք»:

Հովհ. 6.22-26

Բազմությունը որոնում էր Հիսուսին: Երբ վերջապես գտան Նրան, Նա ասաց, որ դրա պատճառն այն չէ, որ նրանք հրաշքներ տեսան, այլ այն, որ կերան ու կշտացան:

Այսպիսով՝ ի՞նչ են անում հրաշքները: Դրանք ուղեցույց են կամ տեղեկություն են տալիս: Հիսուսը գիտեր, որ նրանք Իրեն են փնտրում ոչ թե հրաշքների եւ նշանների համար, որոնք Իրեն ցույց են տալիս որպես Մեսիայի, այլ միայն նրա համար, որ իրենց ստամոքսները լցվեին:

Մեր օրերում մենք հաճախ որոնում ենք Հիսուսին սխալ պատճառներով: Մենք փնտրում ենք Նրան միայն որեւէ շահ եւ օրհնություն ստանալու նպատակով՝ սիրուց դրդված հետեւելու փոխարեն: Ոչ միշտ հասկանալով դա, մենք ինքներս օգտագործում ենք Նրան մեր նպատակների համար:

Ձեր կյանքում կա՞ն ծանոթներ, ովքեր զանգում են ձեզ միայն այն ժամանակ, երբ իրենց ինչ-որ բան է հարկավոր: Կամ, ավելի վատ, երբեւէ պատահե՞լ է ընկերանալ մեկի հետ, իսկ հետո իմանալ, որ նա ձեր ընկերն է ուզել դառնալ միայն ձեզանից օգուտ քաղելու համար: Միգուցե նրան գրավել էին ձեր ազդեցությունը, փողերը, նյութական բարիքները կամ դիրքը: Դա ձեր նկատմամբ անկեղծ հետաքրքրություն եւ սեր չի եղել, այլ որոշ ժամանակ ձեզ օգտագործել են իրենց նպատակներն իրականացնելու համար: Եթե դուք այսպիսի փորձ ունեցել եք, ապա, հավանաբար, գիտեք, թե ինչ է նշանակում օգտագործված լինել:

Այսպիսի եսասիրական փոխհարաբերությունները նվաստացնում են ինչպես հասարակությանը, այնպես էլ եկեղեցին: Այսպիսի մտածելակերպի պատճառով բաժանումների թիվն անընդհատ աճում է: Նույնիսկ եկեղեցում ամուսնությունները լինում են եսասիրական

մղումներով:

Մարդկանց դժվար է հասկանալ, որ ամուսնությունը սիրո ուխտ է եւ ոչ թե պայմանագիր: Մարդիկ ամուսնանում են, որովհետեւ իրենց զուգընկերը կարող է ինչ-որ բան անել իրենց համար: Եվ երբ այդ զուգընկերը չի արդարացնում իրենց սպասելիքները, սկսում են որոնել ուրիշին՝ միանգամայն չանհանգստանալով, որ Աստծո աչքերում ուխտն ավելի ուժեղ է եւ ավելի ամուր, քան որեւէ պայմանագիր:

Եկեղեցում շատերը դժգոհ են, նրանց սերը սառել է: Ոմանք եւ են նահանջում, ոմանք էլ հեռանում են հավատքից: Նրանք Տիրոջը ծառայում են, որովհետեւ Նա կարող է ինչ-որ բան անել իրենց համար՝ չունենալով Նրա հանդեպ սեր՝ որպես Անձ: Այդ պատճառով էլ քանի դեռ Աստված կատարում է նրանց ցանկությունները, նրանք երջանիկ են եւ հիանում են Նրա գործերով, բայց երբ Տերը նրանց անապատ է տանում, այնտեղ բացահայտվում է նրանց սրտի դրդապատճառը: Ամեն անգամ, երբ ուշադրության կենտրոնում իրենք չեն լինում, ամիջապես դժգոհություն է սկսվում:

Մենք մեկ անգամ եւս կարող ենք դիտարկել Իսրայելի ժողովրդի օրինակը: Երբ Տերը նրանց ազատեց փարավոնի ձեռքից, ժողովուրդն ուրախացավ:

> ***«Եվ Ահարոնի քույր Մարիամ մարգարեուհին թմբուկը ձեռքն առավ, եւ բոլոր կանայք թմբուկներով եւ պարերով նրա ետեւից դուրս եկան: Եվ Մարիամը պատասխանեց նրանց. «Երգեք Եհովային, որովհետեւ փառքով փառավորված է: Ձին ու ձիավորը ծովը գցեց»»:***
>
> ***Ելից 15.20,21***

Նրանք հիացած էին Տիրոջ մեծությամբ ու հրաշագործ զորությամբ: Նրանց սրտերը լցված էին հիացմունքով, որովհետեւ Նա ազատեց իրենց: Բայց ընդամենը երեք օր անց Սուրի անապատում նրանք հանդիպեցին դառը ջրերի, եւ սկսվեց տրտունջը:

«Եվ ժողովուրդը տրտնջաց Մովսեսի դեմ ասելով. « ...Ի՞նչ

խմենք»» (Ելից 15.24): Մի՞թե այդ նույն Աստվածը, որ կիսեց ծովը, չէր կարող դառը ջրերը դարձնել քաղցր: Արդյո՞ք Մովսեսը այն նույն առաջնորդը չէր, որին երեք օր առաջ մեծարում էին որպես հերոսի: Աստված, իրոք, դառը ջրերը դարձրեց քաղցր: Հետո՝ մի քանի օր անց, նրանք բողոքեցին ուտելիքի համար: Նրանք տրտնջացին ասելով. «Մինչեւ Աստծո մեզ ազատելը մենք ավելի լավ էինք ապրում»:

> ***«Եվ Իսրայելի որդիների բոլոր ժողովքը անապատում Մովսեսի եւ Ահարոնի դեմ տրտունջ արեցին: Եվ Իսրայելի որդիներն ասացին նրանց. «Երանի թե Եհովայի ձեռքով մեռած լինեինք Եգիպտոսի երկրում, երբ մսի կաթսաների մոտ նստած էինք եւ կուշտ հաց էինք ուտում...»»***
>
> ***Ելից 16.2,3***

Ուշադրություն դարձրեք, որ նրանք իրենց դժգոհությունն էին հայտնում Մովսեսի եւ Ահարոնի դեմ, բայց այդ նույն գլխի 8-րդ խոսքում Մովսեսը բացում է ճշմարիտ պատճառը. « ...Ձեր տրտունջը մեր դեմ չի, այլ Եհովայի դեմ» (Ելից 16.8):

Չոր ժամանակ, երբ դժգոհություն է սկսվում, մարդիկ հիմնականում սկսում են մեղադրել իրենց կառավարությանը, ընտանիքին կամ ընկերներին: Մեզանից շատերը (վախից) երբեք ոչինչ չեն ասի Աստծո դեմ: Ինչո՞ւ էին նրանք դուրս եկել Մովսեսի ու Ահարոնի դեմ (իսկ այդպիսով էլ՝ Տիրոջ դեմ): Որովհետեւ Աստված հուսախաբ էր արել նրանց:

Այսօր Աստված կշռում է Ամերիկայի եկեղեցու սիրտը: Առաջին հերթին եկեք սկսենք որոնել Նրան, որպեսզի մեր սրտերը սոված չմնան:

Անապատը բացահայտում է մեր սրտի դրդապատճառները: Այն առանձնացնում է եսասիրությունը ես-ի ուրացումից: Խնդրի՛ր Սուրբ Հոգուն, որպեսզի Նա դասակարգի եւ կշռադատի քո սրտի դրդապատճառները՝ առանձնացնելով նրանք, որոնք քեզ եւ կպահեն առաջ գնալուց, որից հետո դու կդառնաս իմաստուն ծառա, կփնտրես այն բաները, որոնք օգտակար են Աստծո հետ փոխհարաբերու-

թյան համար՝ իմանալով, որ մնացած բաները կհետևեն քեզ որպես Աստծո հետ փոխհարաբերության ճիշտ արդյունք:

ԳԼՈՒԽ 4

ՕՐԻՆԱԿ ՄԵՋ ՀԱՄԱՐ

Մենք փանջվում ենք չկատարած երդումների եւ խոստումների ծանր բեռի տակ եւ այնքան ենք թուլացել, որ արդեն հազիվ ենք կարողանում աղոթքի ձայն բարձրացնել:

«Չեմ կամենում, եղբայրնե՛ր, որ չգիտենաք, թե մեր հայրերն ամենն էլ ամպի տակ էին, եւ ամենը ծովի միջով անցան: Եվ ամենը Մովսեսով մկրտվեցին ամպում եւ ծովում: Եվ ամենն էլ նույն հոգեւոր կերակուրը կերան: Եվ ամենն էլ նույն հոգեւոր խմելիքը խմեցին, որովհետեւ այն հոգեւոր վեմից էին խմում, որ գնում էր նրանց հետ, եւ այն վեմը Քրիստոսն էր»:

Ա Կորնթ. 10.1-4

Պողոսն ընդգծում է, որ նրանք բոլորն էլ, լինելով Աբրահամի սերունդ, *ուխտի* որդիներ էին եւ ոչ թե հեթանոսներ: Բոլորն էլ, շարժվելով Աստծո պաշտպանության ամպի ներքո, մկրտվեցին Մովսեսով, որը Քրիստոսի՝ մեզ Ազատագրողի խորհրդապատկերն էր: Եվ բոլորն էլ ընդունեցին Քրիստոսի հոգեւոր ուտելիքն ու խմելիքը: Սրանից մեզ պարզ է դառնում, որ խոսքը գնում է մի ժողովրդի մասին, որը Նոր ուխտի քրիստոնյաների խորհրդապատկերն է հանդիսանում: Պողոսը հինգ անգամ շեշտում է «ամենքն էլ» բառերը, որպեսզի ընդգծի «Այստեղ մենք չենք խոսում որեւէ հեթանոսի մասին...» արտահայտությունը: Ապա նա ասում է.

«Բայց Աստված նրանցից շատերին չհավանեց, որովհետեւ անապատում փռված ընկան: Եվ սրանք մեզ օրինակի համար եղան... »:

Ա Կորնթ. 10.5,6

Ինչպե՞ս նրանք անհաճո եղան Աստծուն:

1. Չար բաներ էին ցանկանում:
2. Խոնարհվում էին կուռքերին:
3. Անբարոյական սեռական կապերի մեջ էին:
4. Փորձում էին Տիրոջը:
5. Բողոքում էին Տիրոջ դեմ:

Այս թվարկումից հետո Պողոսը շարունակում է. «Եվ այն ամենն օրինակի համար էր նրանց հանդիպում, բայց մեզ խրատի համար գրվեց... » (Ա Կորնթ. 10.11):

Եթե դա գրված է մեր խրատի համար, նշանակում է՝ մենք դա պետք է հասկանանք: Մեղքի հինգ ոլորտները հիմնախնդրի ուղղակի ավելի խոր արտահայտումն էին (կամ վատ պտուղը): Եբրայեցիների ուղերձի հեղինակը նույնն է նկարագրում եւ բացատրություն է տալիս անհնազանդության այդ հինգ գործողություններին:

«Դրա համար զզվեցի այն ազգից եւ ասացի՝ միշտ մոլորվում են սրտով, եւ նրանք չճանաչեցին Իմ ճանապարհները»:

Եբր. 3.10

Պղծությունը նրանց սրտերում էր եւ արտահայտվում էր նրանց գործերում: Եթե ձեր սիրտը ուղիղ է, անխուսափելիորեն այդպիսին էլ կլինեն ձեր արարքները: Առանց ուղիղ սրտի դուք չեք կարողանա հասնել Նրա կոչմանը: Ձեր կենտրոնացումը պետք է լինի Աստծուն ճանաչելու բարձր կոչմանը հասնելը: Սխալ կենտրոնացումը կհանգեցնի սխալ արդյունքների:

Պողոսն ասում է. «Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա. ետեւի բաները մոռանալով դեպի առաջի լինողներն եմ ձգտում: Հետեւում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչման մրցանակին Քրիստոս Հիսուսում»:

Փիլիպ. 3.13,14

Որպեսզի մեր կյանքում հասնենք Աստծո վերին կոչմանը, առաջին հերթին պետք է ընդունենք այն փաստը, որ մենք դեռ չենք հա-

սել դրան, որ կատարյալ չենք եւ պետք է շարունակենք փոխվել ու աճել:

Մեզանից շատերն իրենց կյանքում հասել են այն հարմար վայրը, որտեղ մենք ուղղակի փորձում ենք «պահել» եւ ոչ թե «պայքարել առաջ գնալու համար»: Այդպիսի մարդիկ սահմանում են իրենց սեփական չափանիշները՝ համեմատելով իրենց ուրիշների հետ կամ այն բանի հետ, ինչը համարում են ընդունելի: Այդ ժամանակ նրանք դադարում են որոնել Աստծուն այնպիսին, ինչպիսին Նա կա, եւ սկսում են շահ հետապնդել: Նրանք շեղվում են նշանակետից եւ սկսում մոլորվել իրենց սրտով: Նրանք կարող են ցանկանալ եկեղեցում հասնել որոշակի հարգանքի կամ դիրքի, կամ, միգուցե, ձգտում են ավելի մեծ հարմարավետության կամ համբավի: Արդյունքում՝ նրանք շեշտը կդնեն ոչ թե Աստծո, այլ իրենց վրա:

Իսրայելի ժողովուրդը չէր ձգտում ճանաչել Աստծուն: Այդ պատճառով նրանք չէին կարող ճանաչել Նրա ուղիները: Նրանք հիացած էին Աստծո հզոր ուժով եւ հրաշքներով, իսկ ո՞վ չէր հիանա նրանց փոխարեն: Նրանք ուրախանում էին ամեն մի գերբնական հրաշքով, քանի որ դա օգուտ էր իրենց: Նրանք կենտրոնացած էին իրենց վրա: Ամեն անգամ, երբ Աստծո գերբնական ուժը չէր արտահայտվում, նրանք շեղվում էին: Երբ Մովսեսը լեռան վրա էր, նրանք այդ ժամանակ զվարճանում էին: Իսրայելի ժողովուրդը գոհանում էր միայն փրկության օգուտներով: Նրանք չէին փափագում դրանից ավելի ճանաչել Աստծուն, չէին ձգտում անձնական փոխհարաբերություններ ունենալ Նրա հետ:

Մի անգամ Աստված ասաց Մովսեսին, որ իջնի եւ ասի ժողովրդին, որ սրբացնեն իրենց, որովհետեւ Նա պիտի գար Սինա լեռ՝ խոսելու նրանց հետ այնպես, ինչպես որ խոսում էր Մովսեսի հետ: Բայց երբ այդ օրը եկավ, եւ Տերն Իրեն հայտնեց ծխով եւ ամպրոպով, ժողովուրդը փախավ.

«Եվ բոլոր ժողովուրդը տեսնում էին որոտումները եւ կայծակները եւ փողի ձայնը եւ սարի ծխելը: Եվ ժողովուրդը տե-

սավ եւ եկ քաշվեց ու հեռու կանգնեց: Եվ ասաց Մովսեսին. «Դու խոսիր մեզ հետ, եւ մենք կլսենք, բայց Աստված թող չխոսի մեզ հետ, որ չմեռնենք»»:

Ելից 20.18,19

Նրանք աղաչում էին Մովսեսին. «Դու խոսիր Աստծո հետ մեր փոխարեն եւ ասա մեզ՝ ինչ Նա կասի, իսկ մենք դա կանենք... »:

Այստեղ էլ նրանք ցույց տվեցին իրենց շահամոլությունը առանց Աստծո հետ փոխհարաբերություն ունենալու: Նրանք լավ մտադրություններ ունեին եւ ցանկանում էին կատարել Աստծո Խոսքը, բայց առանց Նրա հետ փոխհարաբերության դա հնարավոր չէր: Ինչպե՞ս կարող եք հավատարիմ մնալ մեկին, ում չգիտեք եւ նրա հետ ժամանակ չեք անցկացնում: Նրանք փոխհարաբերության փոխարեն ցանկանում էին ստանալ մի բանաձեւ, որով կարող էին գործել, դրա համար էլ Աստված տվեց նրանց տասը պատվիրանները: Բայց սերնդեսերունդ ակնհայտ էր դառնում, որ նրանցից ոչ ոք չէր կարող պահել այդ պատվիրանները: Աստված գիտեր, որ նրանք չեն կարողանա պահել քարե տախտակների վրա գրված օրենքները, բայց գոնե ինչ-որ կերպ Նա կկարողանար փոխել նրանց քարե սրտերն Իր օրենքներով:

Իսկ հիմա եկեք նայենք այսօրվա եկեղեցուն: Մեզանից քանի՞սն են բարի մտադրություններով փորձում պահել Աստծո օրենքը: Մենք տանջվում ենք չկատարած երդումների եւ խոստումների ծանր լծի տակ եւ այնքան ենք թուլացել, որ արդեն հազիվ ենք կարողանում աղոթքի մեջ ձայն բարձրացնել: Մենք նայում ենք ծառայողներին, մեր ընկերներին՝ հույս ունենալով, որ նրանք կորոնեն Տիրոջը մեր փոխարեն եւ կասեն, թե ինչ է Նա ասում:

Իսրայելի ժողովրդի պես մենք փորձում ենք կատարել Տիրոջ պատվիրանները՝ չցանկանալով անձնական փոխհարաբերություններ ունենալ Նրա հետ: Մենք մոլորված ենք մեր սրտերում: Հովհաննեսի 14.21-ում Հիսուսն ասում է.

«Նա, որ Իմ պատվիրաններն ունի եւ նրանց պահում է,

նա է Ինձ սիրողը, եւ Ինձ սիրողը Իմ Հորից կսիրվի, ու Ես կսիրեմ նրան եւ Ինձ կհայտնեմ նրան»:

Հաճախ, կարդալով Սուրբ գրքից այս հատվածը, ես մտածում էի, թե Տերն այստեղ ինձ ասում է. «Ջո՛ն, եթե դու կատարում ես Իմ պատվիրանները, նշանակում է՝ դու սիրում ես Ինձ»: Հետո Տերն ինձ ասաց, որ այդ խոսքը եւս մեկ անգամ կարդամ: Ես հնազանդվեցի եւ նորից կարդացի: Նա ասաց. «Դու ընդհանրապես չհասկացար, թե ինչ էի Ես ուզում ասել: Եվս մեկ անգամ կարդա»: Այդպես շարունակվեց, մինչեւ ես գրեթե տասն անգամ կարդացի այդ խոսքը: Վերջապես ես ասացի. «Տե՛ր, ների՛ր ինձ իմ տգիտության համար, բացի՛ր ինչ ես ուզում դրանով ասել ինձ»: Աստված պատասխանեց. «Ջո՛ն, Ես չեմ ասել, որ երբ կատարես Իմ պատվիրանները, դու կապացուցես քո սերն Իմ հանդեպ: Ես միշտ էլ գիտեմ՝ սիրում ես դու Ինձ, թե ոչ: Ես ասացի, որ եթե մարդը սիրի Ինձ ամբողջությամբ, նա ի վիճակի կլինի կատարել Իմ պատվիրանները»: Դա փոխհարաբերություն է եւ ոչ թե օրենք: Իսկ ես մինչ այդ դրան նայում էի որպես օրենք: Բայց Տերը բացեց ինձ փոխհարաբերության կարեւորությունը: Հնարավոր չէ ճանաչել Աստծուն կանոններով ու օրենքներով: Նրան հնարավոր չէ գտնել մեթոդներով: Ամենակարող Սուրբ Աստծուն հնարավոր չէ բանաձեւի վերածել: Բայց շատ քրիստոնյաների մոտ պատկերացումը հենց այսպիսին է: Տիրոջ հետ իրենց փոխհարաբերությունները նրանք փոխարինում են բժշկության յոթ քայլերով, փրկության չորս աստիճաններով, բարգավաճման եւ Սուրբ Հոգով մկրտվելու մասին հինգ աստվածաշնչյան խոսքերով: Նրանք պատկերացնում են, որ Աստծուն կարելի է դնել խոստումների իրենց տուփի մեջ եւ Նրան դուրս հանել այնտեղից այն ժամանակ, երբ դրա կարիքը կլինի: Եվ դրանից հետո դեռ զարմանում են, թե ինչու մինչեւ հիմա մեղքը գոյություն ունի իրենց կյանքում: Ինչո՞ւ է նրանց համար դժվար թվում կատարել Նրա պատվիրանները: Որովհետեւ նրանք մոլորված են իրենց սրտերում:

Եկեք դա օրինակով տեսնենք, որպեսզի ավելի պարզ լինի: Դուք

երբեւէ սիրահարվե՞լ եք:

Ես մինչեւ ականջներս սիրահարված էի իմ ապագա կնոջը՝ Լիզային, երբ դեռ նշանված էի նրա հետ: Ես անընդհատ նրա մասին էի մտածում եւ հնարավոր ու անհնարին ամեն բան անում էի, որ նրա հետ երկար ժամանակ անցկացնեի: Ինչով էլ որ ես զբաղված լինեի, եթե նրան որեւէ բան էր հարկավոր, ես նույն պահին նստում էի մեքենաս եւ հասցնում նրան իր ուզածը: Անհրաժեշտություն չկար ինձ ստիպելու, որպեսզի ես նրա մասին խոսեի ուրիշների մոտ... Ես հիացմունքով էի պատմում նրա մասին բոլոր նրանց, ովքեր ցանկություն ունեին ինձ լսելու:

Ինձ համար յուրահատուկ հաճույք էր Լիզայի համար անել այն ամենը, ինչ նա ուզում էր, քանի որ ես նրան շատ էի սիրում: Ես այդպես չէի վարվում, որ նրան ապացուցեմ իմ սերը. ինձ հաճելի էր կատարել նրա ցանկությունները, քանի որ ես նրան սիրում էի: Մեր ամուսնությունից մի քանի տարի հետո ես սկսեցի հետաքրքրվել այլ բաներով, օրինակ՝ ծառայությամբ: Այդ ժամանակ ինձ համար ձանձրալի էր նրա համար ինչ-որ բան անել: Չհասկանալով մեր փոխհարաբերությունների ողջ կարեւորությունը՝ ես այլեւս իմ մտքերում շատ տեղ չէի հատկացնում Լիզային: Ես սկսեցի նրան նվերներ տալ միայն պարտավորություններից ելնելով՝ Ծննդյան տոներին, տարեդարձներին. նույնիսկ դա էր դժվարությամբ ստացվում: Մեր ամուսնության մեջ խնդիրներ առաջացան: Մեր առաջին սերը մարում էր: Քանի որ այլեւս այդքան ուժեղ սիրահարված չէինք միմյանց, ինձ համար դժվար էր նրա համար որեւէ բան անելը: Այդ ժամանակ Տերն իմ հայացքը ուղղեց իմ սրտին եւ ցույց տվեց, թե ինչ եսասերն եմ ես դարձել: Իր շնորհքով Նա կրկին մեր սիրո կրակը բորբոքեց եւ բժշկեց մեր ամուսնությունը:

Այս լույսի ներքո դուք կարող եք հասկանալ, թե ինչու Հիսուսն ասաց.

«Բայց քո դեմ այս ունեմ, որ քո առաջին սերը թողել ես: Արդ հիշի՛ր, թե որտեղից վայր ընկար, եւ զղջա ու առաջի

գործերն արա, ապա թե ոչ կգամ շուտով քեզ մոտ եւ քո ճրագակալը կշարժեմ իր տեղից, եթե չապաշխարես»:

Հայտն. 2.4,5

Մյուս կողմից Մովսեսը տարբերվում էր Իսրայելի զավակներից: Նրան բավական չէր հեռվից խոնարհվել Աստծուն: Երբ նա տեսնում էր Աստծո ներկայության արտահայտումը, նա ձգտում էր այնտեղ: Ելից 20.21-ում ասված է. «Եվ ժողովուրդը հեռվում կանգնեց, եւ Մովսեսը մոտեցավ այն թանձր խավարին, ուր որ Աստված էր»:

Չնայած Մովսեսն ազդեցիկ մարդ էր, օժտված իշխանությամբ եւ հեղինակությամբ, ղեկավարում էր երեք միլիոն անդամ ունեցող համայնք, որտեղ տեղի էին ունենում Հին ուխտի ամենազարմանալի հրաշքներն ու նշանները, նա գիտեր, որ այդ ամենն իր համար շատ քիչ է: Նրա կյանքում այդքան գերբնական հրաշքներից ու նշաններից հետո ուշադրություն դարձրեք նրա աղոթքին.

«Եվ հիմա աղաչում եմ, եթե Քո առաջին շնորհք գտա, խնդրում եմ, ինձ իմացրու Քո ճանապարհները, որ ճանաչեմ Քեզ»... Եվ Մովսեսն ասաց Նրան. «Եթե Քո ներկայությունը մեզ հետ չգնա, մեզ այս տեղից մի՛ հանիր»... Եվ նա ասաց. «Աղաչում եմ, Քո փառքը ցույց տուր ինձ...»»:

Ելից 33.13-18

Մենք լսում ենք Մովսեսի սրտի կանչը. «Տե՛ր, ես չեմ բավարարվի, մինչեւ չտեսնեմ Քո փառքը, որպեսզի կարողանամ ճանաչել Քեզ»: Որպեսզի ճանաչենք Աստծուն, մեզ պետք է ճանաչել Նրա ճանապարհները: Նա Իր ճանապարհները հայտնում է նրանց, ովքեր փնտրում են Իր երեսը եւ ոչ թե Իր զորությունը: Եվ նրանք, ովքեր ճանաչում են Նրա սիրտը, կքայլեն Նրա զորության մեջ. « ...բայց իրենց Աստծուն ճանաչողների ժողովուրդը պիտի զորանա եւ գործի» (Դանիել 11.32):

Երբ ես նոր էի մտել ծառայության մեջ, գրեթե ամեն առավոտ 2-3 ժամ աղոթում էի: Իմ աղոթքներն այսպիսին էին. «Տե՛ր, օգտագործի՛ր ինձ հոգիների փրկության համար, օգտագործի՛ր ինձ տկար-

ներին բժշկելու համար, օգտագործի՛ր ինձ դեւերին քշելու համար... »: Ամեն անգամ ես աղոթում էի միեւնույն բանի համար տարբեր բառերով: Մոռանալով անձս՝ խնդրում էի Աստծուն մեծ ծառայության համար: Բայց մի օր Տերն ինձ ասաց. «Որդի՛ս, քո աղոթքները եսասիրական են»: Նրա խոսքերն ինձ ցնցեցին:

«Ինչպիսի դրդապատճառներով ես պատրաստվում անել այդ ամենը,- շարունակեց նա,- արդեն մի քանի օր շարունակ Ես միայն դա եմ լսում քեզանից՝ օգտագործիր ինձ այստեղ... օգտագործի՛ր ինձ այնտեղ. աղոթքի կենտրոնում դու ես»: Հետո Նա ավելացրեց. «Ես քեզ ստեղծել եմ ոչ միայն դեւ քշելու կամ հիվանդ բժշկելու համար: Ես քեզ ստեղծել եմ, որ շփվես Ինձ հետ»: Հետո Նա ինձ մի բան ցույց տվեց, որը ես երբեք չեմ կարողանա մոռանալ... Հուդան նույնպես դեւ էր քշում, բժշկում էր հիվանդներին: Այո՛, երբ Հիսուսն Իր տասներկու աշակերտներին ուղարկեց, Նա բոլորին ուղարկեց, Հուդային նույնպես, նրան, որը հետո պետք է մատներ Իրեն: Պարզվում է, որ իմ մոտիվները սխալ էին: Տիրոջ մեջ բարձր կոչման նպատակը Հիսուս Քրիստոսին ճանաչելն է (Փիլիպ 3.10):

Մի քանի տարի հետո կինս, պատրաստվելով կոնֆերանսի, շարունակ միեւնույն աղոթքն էր անում: Այդ ժամանակ Տերն ասաց նրան. «Լիզա՛, Ես չեմ օգտագործում մարդկանց, Ես օծում եմ նրանց, Ես բժշկում եմ նրանց, Ես փոխում եմ նրանց, Ես դարձնում եմ նրանց Ինձ պես, բայց Ես չեմ օգտագործում նրանց»: Նա շարունակել էր՝ տալով Լիզային մի հարց. «Դու երբեւէ եղե՞լ ես օգտագործված քո ընկերոջ կողմից»: «Այո՛»,- պատասխանել էր նա: Այդ ժամանակ Տերը հարցրել էր. «Ինչ էիր զգում»: Նա պատասխանել էր. «Ես ինձ դավաճանված եմ զգացել»:

Տերը շարունակել էր. «Շատ ծառայողներ են իրենց աղոթքներում Ինձ խնդրում, որ Ես օգտագործեմ իրենց մարդկանց փրկության եւ բժշկության համար: Եվ Ես անում էի դա այն հույսով, որ կփոխվեն նրանց սրտերը: Բայց ծառայողները դառնում են չափազանց զբաղված իրենց ծառայությամբ: Նրանք նույնիսկ չեն էլ անհանգս-

փանում, որ ճանաչեն Իմ ուղիները, այդ պատճառով էլ կառուցում են իրենց անձնական արքայությունը: Երբ պրոբլեմներ են ունենում, այդ ժամանակ են կանչում Ինձ, բայց նեղանում են Ինձանից, եթե չեմ պատասխանում իրենց աղոթքներին, որովհետեւ նրանք այդպես էլ երբեք չճանաչեցին Ինձ: Նրանք իրենց օգտագործված են զգում եւ սկսում են բարկանալ Ինձ վրա: Նրանք հեռանում են, որովհետեւ չճանաչեցին Ինձ»:

Ի՞նչ եք մտածում այն կնոջ մասին, ով իր ամուսնուց կցանկանար երեխա ունենալ՝ չցանկանալով ճանաչել իր ամուսնուն անձնապես: Նա ինտիմ փոխհարաբերություններ է ուզում ունենալ նրա հետ միայն երեխա ունենալու նպատակով: Դա անհեթեթություն է, բայց եւ այնպես ոչնչով չի տարբերվում այն բանից, որ մենք աղաղակում ենք Աստծուն, որ Նա օգտագործի մեզ մարդկանց փրկության համար, երբ մենք նույնիսկ ինքներս չունենք փոխհարաբերություն Նրա հետ: Երբ մենք մտերիմ փոխհարաբերության մեջ ենք մտնում Աստծո հետ, արդյունքում լույս աշխարհ են գալիս հոգեւոր երեխաներ, ինչպես դա լինում է կնոջ եւ տղամարդու փոխհարաբերությունների դեպքում: Ահա թե ինչու Աստված Դանիելի 11.32-ում ասում է. « ...բայց իրենց Աստծուն ճանաչողների ժողովուրդը պիտի զորանա եւ գործի»:

Այսպիսով՝ ահա Իսրայելի ժողովրդի մեղքի արմատները. նրանք չար բան էին ցանկանում, խոնարհվում էին կուռքերին, անբարոյական սեռական կապերի մեջ էին, փորձում էին Աստծուն եւ դժգոհում Նրանից: Նրանք ճիշտ բաների չէին հետեւում, ավելի շատ փնտրում էին ստեղծվածին, քան Ստեղծողին:

Հեսուն լավ օրինակն է մի մարդու, որի սիրտը փոխվեց անապատում: Երբ Մովսեսը գնաց Սինա լեռ, Հեսուն լեռան ստորոտին մնաց: Նա ուզում էր որքան հնարավոր է մոտ լինել Տիրոջ ներկայությանը: Երբ Մովսեսը խորանում հանդիպեց Աստծուն, Հեսուն նույնպես այնտեղ էր, որպեսզի մոտ լիներ Տիրոջ ներկայությանը: Նույնիսկ երբ Մովսեսը հեռացավ, Հեսուն մնաց. «Տերը խոսում էր

Մովսեսի հետ դեմ առ դեմ, ինչպես մի մարդ իր բարեկամի հետ կխոսի, ու Մովսեսը նորից բանակն էր գնում, բայց նրա ծառան՝ Նավեի որդի Հեսու պատանին, խորանի միջից չէր հեռանում» (Ելից 33.11):

Եկեք մեկ անգամ եւս կարդանք Պողոսի խոսքերը. «Բայց Աստված նրանցից շատերին չհավանեց, որովհետեւ անապատում փռված ընկան» (Ա Կորնթ. 10.5): Ինչո՞ւ էին Իսրայելի որդիները պարտվում: Որովհետեւ նրանք կենտրոնանում էին իրենց վրա եւ ոչ թե Աստծո: Նայելով Հեսուի գիրքը (պատմություն նոր սերնդի մասին, որը մտավ խոստացված երկիր)՝ դուք կտեսնեք, որ այն հինգ մեղքերը, որ ունեին նրանց հայրերը, չդրսեւորվեցին իրենց մեջ այնքան հեշտությամբ, որքան հաջորդ սերնդի մեջ անապատում: Այսպես պատահեց Աքար անունով մի մարդու հետ: Բայց այդ ժամանակ առաջնորդներն ու ողջ ժողովուրդը ամիջապես Աստծուն որոնեցին, որպեսզի Նա տնօրինի իրավիճակը: Երկրորդ սերունդը փոխվեց, քանի որ ականատես եղավ անապատում մի ամբողջ սերնդի մահվան, որը չտեսավ Աստծո խոստման իրականացումը: Սա փոխեց նրանց նպատակը:

ՄԱՍ 3

ՍՐԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

ԳԼՈՒԽ 5

ԱՍՏԾՈ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՂԻՆ

Աստված չի նայում սրբության արտաքին տեսքին, Նա ուզում է սրտի ներքին փոփոխություն:

«Անապատի մեջ կանչողի ձայնը. պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը եւ ուղի՛ղ արեք ամայության մեջ շավիղը մեր Աստծո համար»:

Եսայի 40.3

Անապատը մի վայր է, որտեղով անցնում են Աստծո ճամփաները: Անապատում է պատրաստվում Աստծո ճամփան: Դա ճամփա է դեպի բարձրագույն կամ կատարյալ կյանք՝ Աստծո կյանքի եւ Նրա մտքերի համեմատ:

«Որովհետեւ Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, եւ ձեր ճանապարհները Իմ ճանապարները չեն,- ասում է Տերը,- այլ ինչպես որ բարձր է երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են Իմ ճանապարհները ձեր ճանապարհներից, եւ Իմ խորհուրդները՝ ձեր խորհուրդներից»:

Եսայի 55.8,9

Ոչ բոլորն են գնում այդ ճանապարհով: Բայց այսօր Աստված շատերին է պատրաստում այդ ճանապարհով գնալու համար: Սրա մասին խոսվում է Եսայի մարգարեի 35.6,8-ում.

« ...որովհետեւ անապատում ջրեր են բխելու եւ ամայի տեղում՝ առուներ... Այնտեղ պողոտա եւ ճանապարհ է լինելու, եւ նրան սուրբ ճանապարհ է ասվելու»:

Տիրոջ այդ ճամփան պատրաստվում է անապատում: Այն կոչվում

է սրբություն:

Սրբության սահմանումներից մեկը «մաքրության մակարդակն է»: Հիսուսն ասել է. «Երանելի են սրտով մաքուրները, քանզի նրանք Աստծուն կտեսնեն» (Մաթ. 5.8): Բարձր կյանքի ուղին անցնում է սրբության կամ սրտի մաքրության միջով:

Հիսուսը չի վերադառնա անսուրբ կամ անմաքուր Եկեղեցու եփեւից: Նա կգա անբիծ եւ անարատ Եկեղեցու համար: Մեզանից շատերը ձգտել են հասնել սրբության՝ հնազանդվելով կանոններին եւ կարգադրություններին, բայց անհաջողության են մատնվել:

Ինչպես այն հրեաները, ովքեր փորձում էին ստանալ փրկություն՝ պահելով օրենքը, բայց չկարողացան, այդպես էլ մենք չենք կարողանում քայլել սրբության մեջ՝ պահելով օրենքներն ու կանոնները: Շատերն իրենց սահմանափակել են համընդհանուր կանոններով, որ վերաբերում են նյութականին (այսինքն՝ չշպարվել, հագնվել սահմանված ձեւով, հեռուստացույց չունենալ): Բոլոր այս արտաքին սահմանափակումները փորձեր են ներքուստ մաքրման հասնելու համար: Բայց Աստված չի նայում արտաքին սրբության ձեւին, Նա ուզում է մեր սրտի ներքին փոփոխությունը, որպեսզի մաքուր սրտից բխի մաքուր վարմունք: Հիսուսն ասաց. «...նախ մաքրիր բաժակի եւ սկավառակի մեջը, որ նրանց դուրսն էլ մաքուր լինի» (Մաթ. 23.26):

Եթե ձեր սիրտը մաքուր է, դուք չեք ձգտի գայթակղիչ հագնվել: Կինը կարող է հագնել երկար՝ կոճերից ներքեւ հասնող զգեստ, բայց նույնիսկ դրա մեջ ունենա իր մարմնով ինչ-որ մեկին գայթակղելու ցանկություն, մինչդեռ մեկ ուրիշ կին կարող է հագնել փաբատ, բայց ունենա մաքուր սիրտ:

Տղամարդը կարող է պարծենալ, որ ինքը երբեք բաժանված չի եղել, բայց նրա սրտում կարող է լինել կիրք ուրիշ կանանց հանդեպ: Եվ դուք դա կոչում եք սրբությո՞ւն:

Եթե ձեր սիրտը մաքուր է, ապա չնայած նրան, որ ձեր տանը կա հեռուստացույց, դուք չեք դիտի կամ ցանկանա դիտել բռնության եւ այլասերության մասին տարբեր հաղորդումներ: Ոմանք համարում

են, որ եթե քրիստոնյաների տանը հեռուստացույց կա, ապա նրանք աշխարհիկ են: Ձեր տան կահույքը եւ էլեկտրոնիկան չեն որոշում՝ դուք աշխարհիկ եք, թե ոչ. դա որոշվում է նրանով, թե ինչ կա ձեր սրտում: Միգուցե ձեր տանը չլինի հեռուստացույց, բայց ձեր սրտում լինի կիրք: Եթե դուք մաքուր եք սրտով, դուք կցանկանաք միայն այն, ինչ ցանկանում է Աստված:

Անապատը մեր կյանքի կարեւոր մասն է. այնտեղ Աստված մեզ հետ է, Նա փորձում է մեզ, որպեսզի մաքրի մեր մտքերն ու մտադրությունները: Տերը նախքան Իր Եկեղեցու ետեւից գալը պատրաստում է մեր սրտերը: Այս բաժնի հաջորդ գլխում խոսվում է այն մասին, թե ինչպես Տերը կմաքրի Իր Եկեղեցին Իր երկրորդ գալստից առաջ: Հիմնականում մենք կդիտարկենք Մաղաքիա մարգարեի գիրքը, քանի որ Մաղաքիան վերջին մարգարեն էր Նոր ուխտից առաջ: Նրան էր հանձնարարված մարգարեանալ պատրաստման եւ Տիրոջ՝ Իր տաճար առաջին անգամ գալու մասին:

Չորս հարյուր տարի անց մարգարեությունը կատարվեց Հովհաննես Մկրտչի միջոցով, որը կանչում էր անապատում. «Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը... »:

Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, որը նախորդում է Տիրոջ՝ երկրորդ անգամ Իր տաճար գալուն: Մենք կարող ենք զուգահեռ տեսնել, թե ինչպես էր ժողովուրդը պատրաստվում Տիրոջ առաջին եւ երկրորդ գալստյանը: Երկուսն էլ սկսվել են անապատում Նրա ժողովրդի սրբացմամբ:

ԳԼՈՒԽ 6

ՃՇՄԱՐԻՏ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

Ճշմարիտ մարգարեական օծության նպատակը սրտի փոփոխությունն է:

«Ահա Ես կուղարկեմ ձեզ համար Եղիա մարգարեն Տիրոջ մեծ եւ ահեղ օրը գալուց առաջ»:

Մաղաքիա 4.5

Առաջին գալուստը Տիրոջ մեծ օրն էր, իսկ Հովհաննես Մկրտիչը՝ «Եղիա մարգարեն», որ ուղարկված էր Աստծուց՝ ճանապարհի պատրաստելու համար: «Անապատում կանչողի ձայնը. պատրաստեք Տիրոջ ճանապարհը» (Եսայի 40.3). Հովհաննեսի դերի մասին խոսվել էր հին մարգարեների կողմից:

Հիսուսը նրան հետեւյալ կերպ էր նկարագրում.

«Ի՞նչ տեսնելու դուրս գնացիք. մի մարգարե՞: Այո, ասում եմ ձեզ, մարգարեից էլ ավելին: Որովհետեւ սա է, որի համար գրված է՝ ահա Ես Իմ հրեշտակը ուղարկում եմ քո երեսի առաջ, որ քո ճամփան քո առաջ պատրաստի: Ճշմարիտ ասում եմ ձեզ, կանանց ծնածների մեջ չի վեր կացել Հովհաննես Մկրտչից մի մեծը ...Եվ եթե կամենում եք ընդունել, նա Եղիան է, որ գալու էր»:

Մաթ. 11.9-14

Հովհաննեսը Եղիայի վերամարմնավորումը չէր, որի մասին ասվում է Թագավորաց երրորդ եւ չորրորդ գրքերում: Այս տեքստում Եղիա անունով կոնկրետ մարդու մասին չի խոսվում, այլ բացատրվում է Եղիայի ծառայության իսկական նշանակությունը: Ավելի լավ հասկանալու համար նայենք «Եղիա» բառը: Այն կազմված է եբրա-

յերեն երկու բառից՝ El եւ Yahh. El նշանակում է «ուժ», իսկ Yahh՝ «Եհովա» կամ «Տեր» այսինքն՝ «Եհովայի ուժը»: Այդ պատճառով էլ, իրականում, խոսվում է Հովհաննես Մկրտչի մասին, եւ որ նա Հիսուսից առաջ եկավ «Եհովայի ուժով»:

Գաբրիել հրեշտակապետը այսպես է նկարագրում Հովհաննեսի կանչը.

> ***«Իսրայելի որդիներից շատերին կդարձնի դեպի իրենց Տեր Աստվածը: Եվ ինքը կգա Նրա առաջից Եղիայի հոգով եւ զորությունով, որ հայրերի սրտերը դեպի որդիները դարձնի եւ անհնազանդները՝ արդարների իմաստության մեջ, որ Տիրոջ համար բարեկարգ ժողովուրդ պատրաստի»:***
>
> ***Ղուկ. 1.16,17***

Այսպիսով՝ Հովհաննեսի ծառայության հիմնական նպատակը Իսրայելի սիրտը Աստծուն դարձնելն էր: Նրա ուղերձը հետեւյալն էր. *«Ապաշխարեք, որ մոտեցել է երկնքի թագավորությունը»* (Մաթ. 3.2): Ապաշխարություն նշանակում է սրտի փոփոխություն: Իսրայելի ժողովրդի գործերը շատ կրոնական էին, բայց նրանց սրտերը հեռացած էին Աստծուց: Հարյուրավոր հավատացյալներ, ինչպես որ հարկն էր, միշտ այցելում էին ժողովարաններ՝ չհասկանալով իրենց սրտի իսկական վիճակը: Այդ պատճառով Աստված բարձրացրեց Հովհաննես մարգարեին, որպեսզի ցույց տա նրանց սրտի իսկական վիճակը: Հովհաննեսը շատերին էր հռչակում. « ...իժերի՛ զավակներ, ո՞վ իմացրեց ձեզ փախչել այն գալու բարկությունից: Ուրեմն ապաշխարությանն (սրտի փոփոխությանը) արժանի պտուղներ արեք եւ մի՛ սկսեք ասել ձեր մեջ՝ մենք Աբրահամն ունենք հայր... » (Ղուկ. 3.7,8):

Նա բացահայտեց սուտը, որին հավատում էին նրանք: Նրանք հավատում էին, որ արդարացված են, որովհետեւ իրենք Աբրահամի որդիներն են, անընդհատ այցելում են ժողովարաններ, տասանորդ են տալիս: Հովհաննեսն ուղարկված չէր հեթանոսների համար, այլ Աստծո ժողովրդին՝ Իսրայելի տան «կորած ոչխարներին» արթնացնելու եւ նրանց Հիսուսի գալստյանը պատրաստելու նպատակով:

Մաղաքիան նաեւ մարգարեացել էր, որ «Եղիայի օծությունը» կգա Տիրոջ մեծ (Տիրոջ առաջին գալուստը) եւ երեւելի օրից առաջ: Այդ «մեծ» կամ «երեւելի» օրը Տիրոջ երկրորդ գալուստն է: Ես հավատում եմ, որ մենք հիմա ապրում ենք այդ օրվան պատրաստվելու ժամանակաշրջանում: Հաստատելով Մաղաքիայի մարգարեությունը՝ Հիսուսն ասում է.

*« ...Իրավ, առաջ Եղիան կգա եւ ամեն բան կվերանորոգի: Բայց ասում եմ ձեզ, որ Եղիան արդեն եկել է, եւ նրան չճանաչեցի**ն**... »: Այդ ժամանակ աշակերտները հասկացան, թե Հովհաննես Մկրտչի համար ասաց իրենց» (Մաթ. 17.11-13)*: Հիսուսը սա ասաց, երբ Հովհաննեսը գլխատվել էր: Նկատեք, Նա սահմանազատեց Եղիայի օծության երկու տարբեր ժամանակաշրջանները՝ ապագան (կգա) եւ անցյալը (եկել է):

Նախքան Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը Աստված կրկին կբարձրացնի մարգարեական օծություն: Սակայն այդ ժամանակ օծությունը չի լինի մեկ մարդու վրա, այլ բազում մարգարեների: Գործք առաքելոցում Պետրոսը մեջբերում է Հովելի մարգարեությունից.

> ***« ...եւ ձեր որդիները եւ ձեր աղջիկները կմարգարեանան... Եվ Իմ ծառաների եւ աղախինների վրա էլ այն օրերում Իմ Հոգուց կթափեմ, եւ կմարգարեանան... Տիրոջ մեծ ու երեւելի օրը դեռ չեկած»:***
>
> ***Գործք** 2.17-20*

«Մարգարեանալ» բառի հունարեն նշանակությունը այս խոսքում հետեւյալն է՝ «խոսել աստվածային ոգեշնչման ներքո, կանխատեսել եղելությունը՝ գտնվելով մարգարեական ծառայության մեջ»:

Հովհաննես Մկրտչի պես վերջին օրերի մարգարեները կգնան «կորած» եւ «խաբված ոչխարների» մոտ, ինչպես նաեւ նրանց, ովքեր լքել են եկեղեցին տարբեր վիրավորանքների պատճառով: Եկեղեցի այցելողներից շատերը կարծում են, թե պատրաստ են Հիսուսի գալստին: Չտարբերվելով Հովհաննեսի ժամանակվա կրոնական

առաջնորդներից եւ մարդկանցից՝ նրանք հավատում են, որ իրենց բարեպաշտ գործերով, եկեղեցի հաճախելով, տասանորդ տալով, լավ արարքներով եւ նույնիսկ մեկ անգամ մեղավորի աղոթքը աղոթելով արդեն արդարացած են: Նրանք կարող են հավատալ, որ արդարացված են, բայց ճշմարտությունն այն է, որ իրենք պատրաստ չեն Նրա գալստին: Նրանց սրտերը մոլորված են: Աստված կրկին մարգարեական ուղերձ է ուղարկում Իր ժողովրդին. «Ապաշխարեք (փոխեք ձեր սիրտը), Տիրոջ օրը մոտ է»: Մերկացնելով ամեն մի խաբեություն՝ այս մարգարեները կբերեն ճշմարտությունը:

Ամերիկայում քրիստոնեական ձայներիզների, գրականության, հեռուստածրագրերի, աստվածաշնչյան տարբեր ծրագրերի վրա միլիոնավոր դոլարներ են ծախսվում՝ ավելի շատ, քան մյուս երկրներում: Մեզ մոտ ավելի շատ են աստվածաշնչյան դպրոցները, ուսուցողական կենտրոնները եւ եկեղեցիները, քան մյուս երկրներում: Ընդհանուր առմամբ, մենք ավելի շատ ենք սերտել Սուրբ գիրքը եւ եկեղեցական դոկտրինաները, քան աշխարհի այլ երկրներում: Բայց դրա հետ մեկտեղ ինչպես ազգը, այնպես էլ մեր եկեղեցիները մնում են անջուր եւ զրկված Աստծո իսկական ներկայությունից: Մեր ծառայությունների ժամանակ մեղավորները մնում են առանց ապաշխարելու: Մեր եկեղեցիներում մեղքը գնալով ավելի է շատանում, եւ ավագները հանդուրժում են դա: Ինչո՞ւ: Որովհետեւ մարդկանց չի քարոզվում ճշմարիտ ապաշխարություն: «Metanoia»-ն հունարեն բառ է, որ Մաթեւոսի 3.8-ում թարգմանվում է «ապաշխարություն»: Այն նշանակում է «ոչ միայն մեղքի հետեւանքների, այլեւ մեղքի եւ դրա արտահայտումների հանդեպ մտքի եւ վերաբերմունքի կատարյալ փոփոխություն»: Մեզ սովորեցրել են զղջալ միայն մեղքի հետեւանքների համար, առանց գիտակցելու նրա էությունը: Ցավոք, մեղքից մեր հրաժարվելը կատարվում է ոչ նրա համար, որ մեղքն իր էությամբ վշտացնում է Աստծուն, այլ ավելի շուտ այն պատճառով, որ մենք սկսում ենք ամաչել մեր կյանքում նրա հետեւանքներից, կամ էլ, որ այն կբացահայտվի:

Իսկական մարգարեական օծության նպատակը սրտի փոխվելն է եւ ոչ թե զուտ անձնական մարգարեական խոսք տալը: Մարգարեն նայում է մարդու սրտին եւ տեսնում է Աստծո ծրագրերը: Նա կոչ է անում փոխվելու եւ զգուշացնում է մոտեցող դատի մասին: Նա կարող է գալ եկեղեցի եւ ոչ մի անգամ չօգտագործել հետեւյալ արտահայտությունը՝ « ...այսպես է ասում Տերը... », բայց եւ այնպես մարգարեանալ (խոսել աստվածային ոգեշնչման ներքո) ողջ ծառայության ընթացքում: Դրա արդյունքում եկեղեցում մթնոլորտը փոխվում է, որովհետեւ Աստծո մարգարեն առաջին հերթին բացում է սրտի մոտիվները՝ բերելով ճշմարիտ ապաշխարություն: Նա հռչակում է նոր, ավելի ճշգրիտ ուղղություն: Մի խոսքով՝ ինչ էլ որ նա ասի, ում էլ որ նա դիմի՝ ողջ եկեղեցուն կամ անհատներին, նրա ողջ ուղերձը տանում է մի բանի. «Դարձե՛ք Տիրոջը. Սուրբ Հոգու նոր ալիք է գալիս»:

Մարգարեների ծառայությունը չի սահմանափակվում միայն նրանով, որ աղոթեն քրիստոնյաների համար եւ Աստծուց եկած անձնական մարգարեական խոսքեր բաժանեն նրանց, թեպետ դա էլ կարող է պատահել: Նա կարող է խոսք ունենալ որոշ անհատներին ուղղված, ինչպես Ագաբոս մարգարեն ուներ խոսք Պողոսի համար (Գործք 21.10,11): Բայց սա չէ մարգարեի հիմնական ծառայությունը:

Գործք առաքելոցում գրված է Շիղայի՝ Պողոսի ուղեկցի մասին, որը մարգարե էր (15.32): Նրա մասին չի խոսվում որպես մի մարդու, ով եկեղեցուց եկեղեցի էր գնում եւ «անձնական մարգարեություններ» բաժանում: Նա խրախուսում էր եղբայրներին Տիրոջը ծառայելու համար:

Ոմանք իրենց «մարգարե» են կոչում եւ շրջում են եկեղեցիներով ու հավաքույթներով՝ բաժանելով անձնական մարգարեական խոսքեր, բայց դրա հետ մեկտեղ չունեն Աստծո սիրտը, եւ որոշ դեպքերում իրենք են իրենց նշանակել այդ ծառայության մեջ: Նրանց բառերը դուրս են գալիս իրենց սրտից, իսկ որոշ դեպքում էլ՝ հայտնի ոգի-

ներից: Միգուցե նրանց խոսքերը միանգամայն ճիշտ են հնչում, բայց այդ ինքնավստահ մարգարեներին Աստված չի ուղարկել, եւ ոչ էլ Նա է լցրել նրանց բերանները:

> ***«Ես այդ մարգարեներին չեմ ուղարկել, բայց իրենք վազ են տալիս, եւ Ես նրանց հետ չեմ խոսել, բայց իրենք մարգարեանում են: Եվ եթե կանգնած լինեին Իմ խորհրդում, այն ժամանակ լսել կտային Իմ խոսքերը Իմ ժողովրդին եւ նրանց ետ կդարձնեին իրենց չար ճանապարհներից եւ իրենց չար գործերից»:***
>
> ***Երեմիա 23.21,22***

Աստված նաեւ ասում է նրանց մասին, ովքեր իրենք են իրենց սահմանել այդ ծառայության մեջ. *« ...նրանք ձեզ խաբում են, նրանք իրենց սրտի տեսիլքն են խոսում եւ ոչ թե Տիրոջ բերանից» (Երեմիա 23.16):* Այս նույն գլխում Աստված ասում է, որ այդ խաբեբա մարգարեների պղծությունը տարածվում է ողջ երկրով, եւ նրանց մարգարեություններից Աստծո ժողովուրդը «ամբարիշտ» է դառնում (15,16):

Միշտ նայե՛ք ծառայությունը ղեկավարող դրդապատճառներին. արդյո՞ք դրանք մարդկանց մոտեցնում են Աստծուն, թե՞ նրանց ավելի են կապում «մարգարեի» եւ նրա պարգեւի հետ:

Այդ կեղծ մարգարեական շարժի կողմնակի արդյունքներից մեկն այն է, որ մարդիկ «խոսք» ասելու կամ «խոսք» ստանալու հնարավորություն են փնտրում: Նրանց ուշադրության կենտրոնում իրենց «ես»-ն է: Իրենց չար ուղիները թողնելու, Տիրոջը դառնալու եւ Նրա երեսը փնտրելու փոխարեն նրանք դրսում են պատասխան փնտրում:

Հիսուսն ասում է, թե ինչպես տարբերենք ճշմարիտ մարգարեին կեղծ մարգարեից. *«Պտուղներից կճանաչեք նրանց» (Մաթ. 7.16)*: Բարի պտուղների ապացույցը մարդկանց կյանքում ներքին փոփոխության արտաքին արտահայտումն է: Մենք պետք է մեր մեջ զարգացնենք ճշմարիտ դրդապատճառները կեղծ դրդապատճառներից, ինչպես նաեւ ճշմարիտ մարգարեներին կեղծ մարգարեներից զանա-

զանելու կարողությունը:

Մի՛ մոռացեք մարգարեական ծառայության վերականգնող նպատակը: Դա կօգնի մեզ պատրաստել մեր սրտերը, որպեսզի ընդունենք այդ ծառայությունը եւ ծառայության պարգեւները: Այդ մարգարեները կանչողի ձայնը կլինեն: «Անապատում պատրաստեք սրբության ճանապարհները... »:

ԳԼՈՒԽ 7

ՏԵՐԸ ԳԱԼԻՍ Է ԻՐ ՏԱՃԱՐ

Այժմ մենք կանգնած ենք մի շեմի առջեւ, երբ Աստծո Որդին կբացահայտի մեր սրտերի կեղծավորությունը եւ դրանք կլցնի Իր սրտացավությամբ...

«Ահա Ես ուղարկում եմ Իմ դեսպանը, որ ճանապարհ պատրաստի Իմ առաջ... այն Տերը, որին դուք որոնում եք... որին դուք հավանում եք, ահա Նա գալիս է... »:

Մաղաքիա 3.1

Ինչպես նախորդ գլխում տեսանք, այդ դեսպանը ներկայացնում է մարգարեական այն օծությունը, որը կպատրաստի Տիրոջ ճանապարհը: Մաղաքիան ասում է, որ Տերը, Ում փնտրում եք, հանկարծակի կգա Իր տաճար: Նրա տաճարը Եկեղեցին է: Ուշադրություն դարձրեք՝ նա չի ասում Իր տաճարի ԵՏԵՎԻՑ, այլ ՏԱՃԱՐ: Մինչ Աստված կգա Իր ԵԿԵՂԵՑԻ հափշտակության համար, Նա կգա Իր ԵԿԵՂԵՑԻ... դատաստանի, ուղղելու եւ արթնության համար: Այս մասին խոսվում է Ովսեի գրքում.

«Եկեք ու եկ դառնանք Տիրոջ մոտ, որ Նա պատառեց, եւ Նա էլ կբժշկի մեզ: Նա վիրավորեց, ու Նա պիտի կապի»:

Ովսե 6.1

Հենց այսպիսի խոսք են հռչակում այսօր այն մարգարեները, ովքեր ուղարկված են պատրաստելու Տիրոջ ճանապարհը: Նրանց ուղերձն է՝ «Եկեղեցի՛, դարձի՛ր Տիրոջը»: Ի՞նչ է նշանակում «Նա զարկեց, ու Նա մեզ պիտի բժշկի»: Դա դատն է:

«Որովհետեւ ժամանակն է, որ դատաստանը սկսվի Աստծո

տնից (տաճարից): Բայց եթե առաջ մեզանից սկսվի, ապա ի՞նչ կլինի նրանց վերջը, որ Աստծո Ավետարանին անհնազանդ են: Եվ եթե արդարը հազիվ է ապրում, ապա ամբարիշտը եւ մեղավորը որտե՞ղ կերեւա»:

Ա Պետր. 4.17,18

Նախքան Աստված կսկսի դատել ազգերը, առաջին հերթին Նա կդատի Իր «սուրբ ազգը» (Ա Պետր. 2.9): Նախքան Իսրայելի որդիները կարողացան մտնել խոստացված երկիր եւ դուրս քշել մյուս ազգերին այնտեղից, Աստված դատեց Իր ազգին անապատում: Սա մարգարեական է: Աստված առաջին հերթին կմաքրի Իր եկեղեցին բացահայտ մեղքից, նախքան մենք մատնացույց կանենք այս աշխարհին եւ կասենք՝ «ապաշխարե՛ք եւ դարձի՛ եկեք», նախքան մենք կտեսնենք այս վերջին օրերի մեծ հունձքը: *Եկեղեցին նման է Հովնանին:* Մենք քնած ենք նավի մեջ: Մեր անհնազանդությունը աղետներ է բերում: Աստված օգտագործում է աշխարհը, որպեսզի մեզ ասի՝ «արթնացի՛ր, եկեղեցի՛, դու պղծվել ես մեղքերի մեջ», ինչպես որ օգտագործում էր նավի վրայի հեթանոսներին, որպեսզի արթնացներ Հովնանին: Այսօր Ամերիկայում զանգվածային լրատվամիջոցները, լրագրողները, հարկային ոստիկանությունը եւ մյուսները տեսան որոշ եկեղեցիների ագահությունը, նախանձը, հպարտությունն ու անբարոյականությունը: Եթե ուզում եք իմանալ, թե ինչպես պետք է ապրեն եւ վարվեն քրիստոնյաները, ավելի լավ է՝ հարցնեք մեղավորներին. ցավոք, նրանք հաճախ ավելի լավ են հասկանում դա: Եվ նրանք բարձրաձայն խոսում են մեր կեղծավորության դեմ: Ժամանակն է հասել, որ մենք արթուն լինենք արդարությամբ եւ չմեղանչենք, որովհետեւ մի քանիսն Աստծո մասին փգետ են. այս մեզ ամաչեցնելու համար է ասվում (Ա Կորնթ. 15.34):

Աստված մարգարեին հնազանդություն է սովորեցնում՝ փոխելով նրա սիրտը մեծ ձկան փորում: Հովնանը կանչեց Աստծուն՝ ապաշխարելով: Նա ասաց. *«Ես վռնդված եմ Քո աչքի առաջից, սակայն էլի պիտի նայեմ Քո սուրբ տաճարին» (Հովնան 2.4)*: Միայն այն

ժամանակ, երբ նրա սիրտը փոխվեց, նա լցվեց զորությամբ՝ կատարելու համար այն, ինչի համար կանչել էր իրեն Տերը, եւ կարողացավ ապաշխարություն քարոզել Նինվեի մեղավորներին:

Ամերիկայի եկեղեցին հետեւել է նշաններին: Աստծո Խոսքը մեզ ասում է, որ նշաններն են հետեւում հավատացյալներին: Դա նշանակում է, որ մեզ մոտ ամեն ինչ հակառակն է: Մարդիկ հետեւում են Հոգու պարգեւներին եւ օծությանը՝ Աստծո բնավորությունն ու սիրտը որոնելու փոխարեն: Աստված ասում է. *«Սերին հետեւեք եւ հոգեւոր պարգեւներին նախանձավո՛ր եղեք» (Ա Կորնթ. 14.1)*: Ինչպես ես արդեն վերեւում ասացի, Եկեղեցում ամեն ինչ խառնվել է: Մենք գնում ենք հոգեւոր պարգեւների (կամ նշանների) ետեւից եւ նախանձախնդիր ենք լինում սիրո հարցում: Հազարավոր կիլոմետրեր են գնում մարդիկ, որպեսզի ներկա գտնվեն հրաշքների ծառայություններին, բայց, այնուամենայնիվ, թույլ չեն տալիս Աստծուն իրենց մաքրել բարկությունից, դառնությունից, աններողամտությունից, ապստամբությունից եւ այլն:

Վերջերս, երբ հավաքույթի ժամանակ տեսա ծառայության օծություն ստանալու համար առաջ գնացող մարդկանց, Աստծո Հոգին իմ սրտում խոսեց, որը ցնցեց ինձ: Նա ասաց. *«Չար եւ շնացող ազգը նշան է խնդրում: Եվ նշան չի տրվի նրան, բայց միայն Հովնան մարգարեի նշանը» (Մաթ. 16.4)*: Եկեք դիտարկենք այս երկու վիճակները՝ «չար» եւ «շնացող»:

Չար սերունդն իր շահի համար էր նշան փնտրում եւ ոչ թե Աստծուն մոտենալու համար, Ով ուղարկում է այդ բոլոր նշանները:

Գործք առաքելոցի 8-րդ գլխում խոսվում է Սիմոն անունով մի մարդու մասին, որը փնտրում էր Աստծո զորությունը, բայց սխալ դրդապատճառներով:

> ***«Այն ժամանակ ձեռքերը դրին նրանց վրա, եւ նրանք ընդունում էին Սուրբ Հոգին: Սիմոնը երբ տեսավ, թե առաքյալների ձեռք դնելով Սուրբ Հոգին տրվում է, փող բերեց նրանց եւ ասաց. «Ինձ էլ տվեք այս իշխանությունը, որ ում վրա ձեռք***

դնեմ, Սուրբ Հոգին առնի»: Պետրոսն էլ ասաց նրան. «Քո արծաթը քեզ հետ կորչի, որովհետեւ դու կարծեցիր, թե Աստծո պարգեւը փողով կառնվի: Դու բաժին եւ վիճակ չունես այդ բանում, որովհետեւ քո սիրտը ուղիղ չէ Աստծո առաջ: Ուստի ապաշխարի՛ր քո այդ չարությունից եւ Աստծուն աղաչի՛ր, որ թերեւս թողվի քեզ քո սրտի չար խորհուրդը: Որովհետեւ տեսնում եմ քեզ, որ դառը մաղձի եւ անիրավության կապանքի մեջ ես»»:

Գործք 8.17-23

Սիմոնը ձգտում էր ունենալ Աստծո օծությունը եւ ոչ թե Նրա բնավորությունը: Նրա սիրտը լցված էր դառնությամբ, եւ նա կապած էր անիրավությամբ: Բայց նա ոչ մի ցանկություն չուներ Աստծուն թույլ տալու փոխել իր սիրտը, մաքրել այն մեղքից: Նա շատ հուզված էր այն մտքից, որ կարող էր իր կյանքի համար օծություն ստանալ: Նա այնպես էր ոգեւորվել, որ նույնիսկ ուզում էր ինչ-որ արժեքավոր բան զոհել դրա համար: Չնայած որ քողարկվում էր ծառայությամբ, նրա իսկական դրդապատճառը իրեն բարձրացնելն էր: Մենք չպետք է որոնենք օծությունը: Դա պարգեւ է, որը հնարավոր չէ սովորել կամ վաստակել:

Պարգեւը ձրի է տրվում, այն պարզապես շնորհվում է, այլապես պարգեւ չի լինի: Ոչ էլ կարող ենք կաշառել Աստծուն մեր նվերներով կամ Նրան ծառայելով: Նա տալիս է՝ շարժվելով սրտացավությամբ՝ ի պատասխան կարիքների: Եթե դուք Աստծո օծությունն ունեք, ապա գիտեք, որ օծությունը Աստծուց տրվում է ուրիշներին ծառայելու համար եւ ոչ թե ձեզ:

Շնացողը նա է, ով ունի ուխտի փոխհարաբերություն, բայց փոխհարաբերության մեջ է մտնում մեկ ուրիշի հետ: Եկեղեցին հավատարիմ չէ Տիրոջ հետ իր փոխհարաբերության մեջ: Այն հարաբերություններ է ունենում աշխարհի հետ եւ միաժամանակ շարունակում է պարծենալ, որ իր բոլոր մեղքերը մաքրված են Հիսուսի հետ ունեցած ուխտի արյամբ: Եկեղեցին դարձել է շնացող: «Խնդրում եք

եւ չեք առնում, որովհետեւ չար կերպով եք խնդրում, որ ձեր ցանկություններում վատնեք: Ծնացողնե՛ր, չգիտե՞ք, որ աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ, ուստի ով կարողանա աշխարհի բարեկամ լինել, իր անձը Աստծո թշնամի կանի» (Հակոբ. 4.3,4): Երբ մենք Հիսուսի հետ ուխտի մեջ ենք եւ ընկնում ենք աշխարհիկ կյանքի հաճույքների եւ հարստությունների ետեւից, հոգեւոր շնություն ենք գործում:

Տերը զբաղված է Իր եկեղեցին Հովնանի նման դատաստանի ճգնաժամի մեջ բերելով, որպեսզի նրա սիրտը դարձնի ճշմարիտ ապաշխարության:

> *«Որովհետեւ անարժանությամբ ուտողը եւ խմողը իր անձի համար դատաստան է ուտում եւ խմում, որ չի որոշում Տիրոջ մարմինը: Նրա համար էլ ձեր մեջ շատ հիվանդներ ու ցավագարներ կան, եւ շատերն էլ ննջած են: Որովհետեւ եթե մեր անձերը դատեինք, չէինք դատապարտվի, բայց դատվելով Տիրոջից խրատվում ենք, որ աշխարհի հետ չդատապարտվենք»:*
>
> *Ա Կորնթ. 11.29-32*

Այստեղ ավելին է ասվում, քան եկեղեցում առանց մեղքը խոստովանելու հաց ուտելու եւ խաղողի հյութ խմելու մասին: Հացի եւ խաղողի հյութի մեջ ոչ մի զորություն չկա. զորությունը նրանում է, ինչ խորհրդանշում են հացն ու խաղողի հյութը: Հիսուսն ասաց.

> *«Իմ մարմինն ուտողը եւ Իմ արյունը խմողը մնում է Ինձանում, եւ Ես՝ նրանում: Ինչպես կենդանի Հայրը Ինձ ուղարկեց, եւ Ես կենդանի եմ Հոր համար, այնպես էլ նա, որ Ինձ ուտում է, կենդանի կլինի Ինձ համար»:*
>
> *Հովհ. 6.57,58*

Ինչպես տեսնում ենք, հաց եւ գինի ընդունելը ներքին նվիրվածության արտաքին նշանն է: Մնացե՛ք Քրիստոսի մեջ, սնվե՛ք Նրանից, Նա է մեր կյանքի աղբյուրը: Մի՛ ապրեք այս աշխարհի հաճույքներով, այլ ապրեք Աստծո բերանից դուրս եկած ամեն մի խոսքով: Ճշմարիտ քրիստոնյաների սննդակարգը փարբերվում է այն կե-

րակուրից, որով սնվում է աշխարհը: «Չեք կարող Տիրոջ սեղանից վայելել եւ դեւերի սեղանից» (Ա Կորնթ. 10.21): Հիսուսը պետք է լինի մեր ուրախության եւ կյանքի ճշմարիտ աղբյուրը: Միայն Նա: Այսօր բավական շատ աշխարհիկ սկզբունքներ են մտնում եկեղեցի: Այդ աշխարհիկ նորամուծություններից շատերը այժմ համարվում են «սովորական քրիստոնեություն»: Դրանք բթացնում են զանազանելու մեր կարողությունը: Այդ պատճառով եկեղեցիներում շատ հավատացյալներ գտնվում են ճգնաժամային վիճակում: Նրանք թուլացել են, հիվանդ են, իսկ ոմանք էլ մեռնում են ժամանակից շուտ: Դրա պատճառը կարող է լինել սխալ սննդակարգը, երբ Տիրոջ սեղանի կերակուրը խառնվում է աշխարհիկ կերակուրի հետ: Մի խոհանոցը առավելություն ունի մյուսի հանդեպ այնքան ժամանակ, մինչեւ ամբողջովին միմյանց չոչնչացնեն:

Թույլ տվեք այստեղ մի կարեւոր ավելացում անել: Միայն այն, որ քրիստոնյան թույլ է, հիվանդ կամ երիտասարդ հասակում է մահանում, ամենեւին էլ չի նշանակում, որ նրա կյանքում մեղք կա: Պողոսն ասում էր, որ մեղքը շատերի անկման պատճառն է, բայց ոչ անպայման բոլորի համար: Ուղղակի եկեղեցում հավատացյալներից յուրաքանչյուրը պետք է պատասխանատվություն վերցնի աշխարհիկի հանդեպ վերաբերմունքի հարցում: Մենք չպետք է մատնացույց անենք ուրիշին. դա կերակրում է քննադատության եւ դատապարտության ոգուն: Մենք պետք է մեզ քննենք: Ուշադրություն դարձրեք, որ Աստված ասում է. «Որովհետեւ եթե ինքներդ ձեզ դատեիք (հունարեն՝ diakrino), պիտի չդատապարտվեիք (հունարեն՝ krino)»: «Դատել» նշանակում է «ամբողջությամբ առանձնացնել», որն էլ նշանակում է «ամբողջությամբ քննել քեզ՝ զատելով անարգը պատվականից»: «Դատապարտել» նշանակում է «պատժել կամ մեղադրել»: Հետո Պողոսը շարունակում է. «Իսկ եթե դատվենք (հունարեն՝ krino՝ «պատիժ» կամ «մեղադրել»), Տիրոջից կխրատվենք, որպեսզի աշխարհի հետ չդատապարտվենք»: Դա Աստծո ողորմությունն է: Նա չի ցանկանում դատապարտել մեզ աշխարհի հետ, այդ

պատճառով մեզ առաջինը կդատի, որպեսզի մենք ճշմարտապես ապաշխարենք, ինչպես Հովնանը: Ուշադրություն դարձրեք, նա ասում է, որ պատիժը իրականացվում է Տիրոջ կողմից: Եվ հենց այդ պատճառով Տերը կրկին Իր եկեղեցուն դնում է այնպիսի վիճակի մեջ, որ նա իրեն այնքան ժամանակ լավ չի զգա, մինչեւ չվերադառնա արդարությանը:

Հովնանի համար հարմար չէր մեծ ձկան փորում, բայց Աստված ավելի շատ մտահոգված է մեր հոգեւոր վիճակով, քան մեր հարմարավետությամբ: Հաճախ, եթե ես չեմ կարողանում արթնացնել իմ երեխաներին, ես նրանց նստեցնում եմ, որպեսզի նրանց հարմար չլինի քնել: Միգուցե Աստված այսօր փորձում է արթնացնե՞լ մեզ:

Եկեք եւս մեկ անգամ նայենք Ովսե մարգարեի խոսքերը. «Եկեք ու եւ դառնանք Տիրոջ մոտ, որ Նա պատառեց, եւ Նա էլ կբժշկի մեզ: Նա զարկեց, Նա էլ կպատի մեզ: Նա մեզ կկենդանացնի երկու օր հետո, երրորդ օրը նա մեզ կկանգնեցնի, եւ մենք կապրենք Նրա առաջ» (Ովսե 6.1,2): Ի՞նչ նկատի ուներ Ովսեն՝ ասելով՝ «երկու օրից»: Պետրոսի երկրորդ ուղերձում ասվում է. « ...Տիրոջ մոտ մեկ օրը ինչպես հազար տարի է... »: Այդպիսով նա բառացիորեն ասում է, որ երկու հազար տարի հետո (եկեղեցու տարիքն այսօր) Նա կկենդանացնի մեզ: Սկզբում Նա կդատի եւ կմաքրի, հետո կբժշկի եւ կկենդանացնի:

Երրորդ օրը (կամ հազար տարի) Քրիստոսի հազարամյա թագավորությունն է: Նա կթագավորի հազար տարի այստեղ՝ երկրի վրա: Այսպիսով՝ մենք ապրում ենք այդ մարգարեության կատարման ժամանակաշրջանում: Եկեք շարունակենք կարդալ.

> ***«Եվ կճանաչենք եւ էլ կհետեւենք ճանաչելու Տիրոջը. արշալույսի պես պատրաստ է Նրա ելքը, եւ Նա պիտի գա մեզ համար անձրեւի պես, վերջին անձրեւի պես, որ ոռոգում է երկիրը»:***
>
> ***Ովսե 6.3***

Ինչի՞ն ենք մենք ձգտում. հաջողությա՞ն, ծառայությա՞ն, լավ

ամուսնությա՞ն, Աստծուց օրհնություններ սպանալո՞ւն, բժշկությա՞ն, բարգավաճմա՞ն: Աստված չանի... Մենք պետք է ձգտենք ճանաչել Նրան: Սավուղը թագավորության էր ձգտում, Դավիթը՝ Աստծուն: Երբ դուք ձգտում եք Աստծուն, ոչ թե նրան, ինչ ունի Նա կամ ինչ կարող է անել, այլ որպեսզի իմանաք, թե Ով է Նա, այդ ժամանակ դուք կգտնեք Նրանում թաքնված գանձերը: Այդ ծածուկ վայրում է, որ տրվում են բոլոր պարգեւները անվերադարձ: Սավուղը կորցրեց իր թագավորությունը, որովհետեւ ջանք էր անում պահել այն: Բայց երբ Դավիթը թագավորությունը զիջեց Աբիսողոմին, Աստված այն կրկին վերադարձրեց Դավթին:

Թող մեկընդմիշտ տպավորվի ձեր մտքում սա. նախքան եկեղեցու հափշտակությունը, այն կմաքրվի եւ ի վերջո արթնություն կունենա:

«Նա մեզ կկենդանացնի երկու օրից հետո, երրորդ օրը Նա մեզ կկանգնեցնի, եւ մենք կապրենք Նրա առաջ» (Ովսե 6.2):

Ուշադրություն դարձրեք բառերին: Նրա գալուստը նույնքան անխուսափելի է, որքան արշալույսի պահը: Այլ խոսքերով՝ ինչպես առանց կասկածի արեւը ամեն առավոտ դուրս է գալիս որոշակի ժամի, այնպես էլ հատուկ որոշված է Նրա գալուստը՝ Եկեղեցու դատի, մաքրման եւ արթնության համար: Նա կգա Եկեղեցի անկախ նրանից՝ պատրաստ կլինի այն, թե ոչ: Նա կգա հանկարծակի, ինչպես առաջին եւ վերջին անձրեւը: Առաջին անձրեւը սկսվել էր Հովհաննես Մկրտչի ժամանակ: «Որովհետեւ բոլոր մարգարեները եւ օրենքը մինչեւ Հովհաննեսը մարգարեացան» (Մաթ. 11.13): Հովհաննես Մկրտիչը եկավ՝ զգուշացնելու գալիք դատաստանի մասին, որը կբերի սրբացում եւ արթնություն: Ովքեր չէին լսում Հովհաննեսի զգուշացումը եւ շարունակում էին խաբել Աստծո ժողովրդին՝ գողանալ Աստծո փողերը, դատապարտվեցին: Հիսուսը եկավ տաճար եւ դուրս վռնդեց նրանց տաճարից: Նա շրջեց նրանց սեղանները (որ նրանց համակարգի եւ կառուցվածքի խորհրդապատկերն էր) եւ շաղ տվեց նրանց փողերը: Անզոր կրոնական կազմակերպության դեմ այդ

երեւույթը հիմք հանդիսացավ երկրպագության նոր ձեւի համար: Հիսուսն Իր ողջ ուժով էր ծառայում մարդկանց ու միեւնույն ժամանակ դեմ էր դուրս գալիս կրոնավոր փարիսեցիներին եւ նրանց կեղծավորությանը: Այսօր մենք կանգնած ենք այդպիսի բաժանման առջեւ, երբ Աստծո Որդին բացահայտում է մեր սրտերի կեղծավորությունը եւ մեր մեջ սրտացավություն է դնում մարդկանց հանդեպ:

> ***«Արդ եղբայրներ, երկայնամիտ եղեք մինչեւ Տիրոջ գալուստը: Ահա մշակը երկայնամիտ եղած սպասում է երկրի պատվական պտղին, մինչեւ որ առաջին եւ վերջին անձրեւն առնի»:***
>
> ***Հակոբ. 5.7***

Մենք այդ վերջին անձրեւի շեմին ենք: Աստված կրկին մարգարեներ է բարձրացնում, որպեսզի Իր ժողովրդին զգուշացնի, որ դատաստանը մոտ է: Այդ մաքրումից հետո Նրա Հոգին հզոր ձեւով կթափվի եկեղեցու վրա: Աստծո Հոգու այդ թափվելն ավելի առատ կլինի Գործք առաքելոցում գրվածի համեմատ, քանի որ Աստված ասել է. *«Եվ ո՛վ Սիոնի որդինե՛ր, ցնծացե՛ք եւ ուրախացե՛ք ձեր Տեր Աստծով, որ կտա ձեզ ուսուցիչ արդարության համար եւ ձեզ համար անձրեւ կիջեցնի, առաջին եւ վերջին անձրեւ առաջվա պես» (Հովել 2.23):*

Աստված ասել է, որ առաջին անձրեւը վերջին անձրեւի համեմատությամբ՝ պետք եղածի չափով էր: Ա՛յ քեզ բան: Այլ խոսքերով՝ Գործք առաքելոցի երկրորդ գլխում նշված Հոգու թափվելը պետք եղածի չափով է՝ նրա հետ համեմատ, ինչ մեզ սպասվում է վերջին ժամանակներում: Աստված միշտ էլ լավ գինին պահում է վերջում:

Ժողովողի 7.8-ում ասվում է. «Մի բանի վախճանը լավ է նրա սկզբից»: Աստված Անգե մարգարեի միջոցով ասել է. «Այս վերջին տան փառքը մեծ պետք է լինի առաջվանից... եւ այս տեղում խաղաղություն պիտի տամ... » (Անգե 2.9): Նա խոսում էր տաճարի մասին, որ կանգնեցվել էր Իսրայելի գերությունից հետո, բայց այդ մարգարեությունը նաեւ վերաբերում է այսօրվա եկեղեցուն: Աստծո փառքը Իր վերջին Եկեղեցում ավելի շատ կլինի, քան նախկինում

էր:

Ոմանք ասում են. «Արթնությունն արդեն եկել է»: Դա արթնություն չէ: Մենք ճահճի մեջ ենք: Մենք նման ենք մի ձորի, որ լիքն է չորացած ոսկորներով, որը տեսավ Եզեկիել մարգարեն: Բայց հենց դա է մեր հույսը: Աստված ասաց Եզեկիելին. ««Մարդո՛ւ որդի, մի՞թե կկենդանանան այս ոսկորները»: Եվ ես ասացի. «Տե՛ր Եհովա, Դու գիտես»» (Եզեկիել 37.3): Պատասխանն էր՝ այո՛: Աստված կրկին ասաց Եզեկիելին. *«Մարգարեացի՛ր այս ոսկորների վրա եւ ասա նրանց՝ ո՛վ չորացած ոսկորներ, լսե՛ք Տիրոջ Խոսքը: Այսպես է ասում Տեր Եհովան այս ոսկորներին՝ ահա Ես ձեր մեջ հոգի պիտի դնեմ, եւ դուք պիտի կենդանանաք»: Եվ ես մարգարեացա, ինչպես որ ինձ պատվիրել էր, եւ շունչը նրանց մեջ մտավ, եւ նրանք կենդանացան ու կանգնեցին իրենց ոտքերի վրա, եւ մի խիստ շատ մեծ բանակ էր» (Եզեկիել 37.4,5,10)*: Աստված պատրաստվում է փչել Իր կյանքը եւ Իր Հոգին Եկեղեցու անկենդան մարմնի մեջ: Այո՛: Այդ Եկեղեցին կբարձրանա կրկին, ժողովուրդը ոտքի կկանգնի, դա կլինի փառահեղ ու հաղթող բանակ, մեռած՝ իր համար, բայց զորացած Աստծո կյանքով:

Այսօր Եկեղեցին նման է չորացած ոսկորներով լցված ձորի: Մենք սպասում ենք Նրա մարգարեական խոսքին՝ մեր կենդանացման համար: Երբ կգա արթնությունը, մեզ հարկ չի լինի խոսել այդ մասին: Որեւէ մեկին անհրաժեշտ չի լինի հատուկ ցույց տալ դա: Դա այնքան ակնհայտ կլինի, որ ժողովուրդը կասի. *« ...սա Հովել մարգարեի ձեռով ասվածն է... » (Գործք 2.16):*

Նախքան մի ակնթարթում մեզ հափշտակելը, Տերը կգա Իր տաճար՝ նախ դատելու եւ մաքրելու, ապա մեզ կենդանացնելու համար: Այժմ, երբ մենք հասկացանք, որ Աստված այսօր Իր Եկեղեցուն անապատ է բերում դատաստանի եւ մաքրման համար, եկեք տեսնենք, թե Նա ինչպես է դա անելու:

ԳԼՈՒԽ 8

ՄԱՔՐՈՂ ԿՐԱԿԸ

Ասփված մարդկանց սերունդ է բարձրացնում, որոնք կհայտնեն Իր փառքը, ոչ թե իրենցը:

«Ահա Ես ուղարկում եմ Իմ դեսպանը, որ ճանապարհ պատրաստի Իմ առաջ: Եվ հանկարծակի է գալու Իր տաճարի մոտ այն Տերը, որին դուք որոնում եք, եւ ուխտի հրեշտակը, որին դուք հավանում եք. ահա նա գալիս է, ասում է զորաց Տերը: Եվ ո՞վ է Նրա գալու օրը տանողը: Եվ ո՞վ է Նրա երեւալու ժամանակ կանգնողը, որովհետեւ Նա հալեցնողի կրակի պես է եւ թափիչների օճառի պես: Եվ Նա նստելու է իբրեւ արծաթ հալեցնող եւ մաքրող: Եվ մաքրելու է Ղեւիի որդիներին եւ զտելու է նրանց ոսկու եւ արծաթի պես: Եվ նրանք կլինեն արդարությամբ ընծա մատուցողներ Տիրոջ համար»:

Մաղաքիա 3.1-3

Ասփված մարդկանց սերունդ է բարձրացնում, որոնք կհայտնեն Իր փառքը, ոչ թե իրենցը: Սերունդ, որ ստեղծված է Իր պատկերով, որ արտացոլում է Իր բնավորությունը:

«Մեծ տան մեջ ոչ միայն ոսկե եւ արծաթե անոթներ կան, այլ փայտե եւ հողե էլ: Կան, որ պատվի համար են, եւ կան, որ անարգության համար են: Եթե մեկն իր անձը մաքրի այդպիսիներից. նա պատվական անոթ կլինի՝ սրբված եւ իր Տիրոջն օգտակար՝ ամեն բարի գործերի համար պատրաստված»:

Բ Տիմոթ. 2.20,21

Նկատեք՝ կան երկու ձեւի անոթներ՝ եւ՛ պատվի, եւ՛ անարգանքի համար: «Անփառահեղ» atimia բառը հունարենում նշանակում է

«անպատվելի, կեղծ, անամոթ»: «Պատվելի»՝ հունարենում time բառը, նշանակում է «թանկարժեք»: Աստված ասաց. *« ...եթե հանես պատվականը անարգից, Իմ բերանի պես կլինես... » (Երեմիա 15.19):* Ինչպե՞ս կարելի է զատել «պատվականը» «անարգից»: Սրբացման միջոցով (Բ Տիմոթ. 2.21): «Սրբացում» նշանակում է «ամբողջովին մաքրված» կամ «խառնուրդից մաքրված»:

> ***« ...եւ Նա մաքրելու է Ղեւիի որդիներին եւ զտելու է նրանց ոսկու եւ արծաթի պես: Եվ նրանք կլինեն արդարությամբ ընծա մատուցողներ Տիրոջ համար»:***
>
> ***Մաղաքիա 3.3***

«Ղեւիի որդիները» «թագավորական քահանայության» նախանշան են հանդիսանում, որը եկեղեցին է (Ա Պետր. 2.9): Քանի որ Աստված այդ քահանայության սրբացումը համեմատում է ոսկու եւ արծաթի զտման հետ, կարեւոր է հասկանալ ոսկու եւ արծաթի հատկությունները, ինչպես նաեւ դրանց մաքրման, զտման եղանակները: Մենք կդիտարկենք միայն ոսկին, քանի որ զտման ընթացքը նույնն է նաեւ արծաթի համար:

Ոսկին հիանալի դեղին գույն ունի, որ արձակում է մետաղի հաճելի փայլ: Այն լայն տարածում ունի բնության մեջ, բայց միշտ քիչ քանակությամբ եւ հազվադեպ է պատահում մաքուր վիճակում: Մաքուր վիճակում ոսկին փափուկ է եւ ճկուն, կոռոզիայի եւ այլ ազդեցությունների չի ենթարկվում: Իսկ երբ խառնվում է այլ մետաղների հետ (պղինձ, երկաթ, նիկել եւ այլն), ենթակա է լինում քայքայման, դառնում է ավելի կարծր, նվազում է ճկունությունը: Այդ խառնուրդը կոչվում է համաձուլվածք: Որքան բարձր է պղնձի, երկաթի, նիկելի տոկոսը, այնքան պինդ է դառնում ոսկին: Եվ հակառակը, որքան ցածր է համաձուլվածքի տոկոսը, այնքան ավելի փափուկ եւ ճկուն է այն:

Մենք անմիջապես տեսնում ենք վերը նշվածի զուգահեռը. Աստծո առջեւ մաքուր սիրտը նման է մաքուր ոսկու: Մաքուր սիրտը փափուկ է, նուրբ եւ փխրուն:

«Նրա համար, ինչպես ասում է Սուրբ Հոգին, ԱՅՍՕՐ, եթե Նրա ձայնը լսեք, մի՛ խստացրեք ձեր սրտերը, ինչպես բարկանալու ժամանակում... Այլ իրար հորդորեք ամեն օր, քանի որ ԱՅՍՕՐ է ասվում, որ ձեզանից մեկը չխստանա մեղքի խաբեությունով»:

Եբր. 3.7, 8,13

Մեղքը այն «ավելացված մետաղն» է, որը մեր մաքուր ոսկին դարձնում է համաձուլվածք՝ խստացնելով մեր սրտերը: Փափկության այդ պակասը ստեղծում է զգայունության բացակայություն, որն էլ բթացնում է Աստծո ձայնը լսելու մեր կարողությունը: Ցավոք, եկեղեցում շատերն աստվածապաշտության կերպարանք ունեն, բայց ոչ փխրուն սիրտ: Նրանց սրտերը այլեւս չեն վառվում Հիսուսի համար: Աստծո հանդեպ սպիտակեցնելու աստիճանի հասած զտված սերը փոխարինվել է եսասիրական սառը սիրով, որը միայն հաճույքներ, հարմարավետություն եւ շահ է փնտրում: Լինելով վստահ, որ բարեպաշտությունը անձնական շահին հասնելու միջոց է (Ա Տիմոթ. 6.5)՝ մարդիկ միայն օգուտներ են որոնում Աստծո խոստումներից՝ չցանկանալով կապ ունենալ Նրա հետ, Ով տալիս է խոստումները: ԽԱԲՎԵԼՈՎ, նրանք բավարարվում են աշխարհիկ ուրախություններով՝ միաժամանակ հուսալով նաեւ լինել երկնքում:

«Սուրբ եւ անարատ կրոնասիրությունն Աստծո եւ Հոր առաջ սա է. որբերին եւ այրիներին այցելել (հոգ տանել) նրանց նեղության մեջ եւ իր անձն աշխարհից անարատ պահել»:

Հակոբ. 1.27

Հիսուսը կգա սրբացված Եկեղեցու եփեւից, որը չի ունենա արատ ու խորշոմություն (Եփես. 5.27), որի սիրտը աշխարհիկ համակարգերով պղծված չի լինի:

Ոսկու մյուս հատկանիշը նրա դիմադրողականությունն է ժանգի եւ կոռոզիայի (քայքայման) ենթարկվելու դեմ: Եթե այլ մետաղներ օքսիդացվում են մթնոլորտային երեւույթների փոփոխման արդյուն-

քում, այդպիսի փոփոխությունները չեն ազդում մաքուր ոսկու վրա: Արույրը (պղնձի եւ ցինկի դեղին խառնուրդ) նման է ոսկու, բայց ոսկի չէ: Արույրը հեշտությամբ է օքսիդացվում: Արտաքնապես այն նման է ոսկու, բայց նրա բաղադրությունն այլ է: Ոսկու մեջ խառնուրդների բարձր տոկոսը մեծացնում է նրա զգայունությունը կոռոզիայի եւ քայքայման նկատմամբ:

Մեր օրերում աշխարհիկ համակարգը ներթափանցել է եկեղեցի: Մենք տրվում ենք աշխարհիկ մշակույթի ազդեցությանը, որի արդյունքում էլ քայքայվում ենք: Ամերիկայում եկեղեցական արժեքները պղծված են աշխարհիկով: Շատերն ընդունել են աշխարհիկ արժեքները եւ չեն հասկանում, որ սրբացման կարիք ունեն:

Մաղաքիան 3.3-ում ցույց է տալիս, որ Հիսուսը կմաքրի (կբաժանի անմաքուր խառնուրդներից) Իր Եկեղեցին աշխարհի ազդեցությունից այնպես, ինչպես ոսկերիչը զտում է ոսկին: Այդ զտման ընթացքում ոսկին դարձնում են փոշի եւ խառնում են մի նյութի հետ, որ կոչվում է հալանյութ: Հետո ոսկին եւ հալանյութը դնում են հնոցի մեջ եւ ուժեղ կրակով հալեցնում: Խառնուրդները կամ անմաքուր նյութերը ձգվում են դեպի հալանյութը եւ վեր են բարձրանում, ոսկին (որը ծանր է) մնում է հատակին: Անմաքուր նյութերը կամ մետաղախարամները (ինչպես պղինձը, երկաթը, ցինկը, որ խառնվել են հալանյութի հետ) հեռացվում են: Այժմ նայենք, թե ինչպես է մաքրում Աստված.

> ***«Եվ Ես կդարձնեմ Իմ ձեռքը դեպի քեզ եւ կմաքրեմ (մաքրությամբ) քո կղկղանքը (խառնուրդը) ինչպես թե բորակով եւ կհեռացնեմ քո բոլոր անագը: Եվ ետ կբերեմ քո դատավորներին ինչպես որ առաջ էր, եւ քո խորհրդականներին ինչպես որ սկզբում: Այնուհետեւ քեզ կասեն Արդարության քաղաք, Հավատարիմ ավան (մայրաքաղաք)»:***
>
> ***Եսայի 1.25,26***

Ինչպիսի՞ կրակ է օգտագործում Աստված մեր մաքրման համար: Պատասխանը կարող ենք գտնել հետեւյալ խոսքում.

«Որ նրանով կուրախանաք, թեեւ հիմա, ինչպես որ հարկը պահանջում է, մի քիչ տրտմած եք կերպ-կերպ փորձանքների մեջ, որ ձեր հավատքի փորձառությունն ավելի պատվական գտնվի, քան կորստյան ոսկին, որ կրակով է փորձվում, գովության պատվի եւ փառքի համար Հիսուս Քրիստոսի հայտնությունում»:

Ա Պետր. 1.6,7

Մաքրման համար Աստծո կրակը փորձություններն ու դժվարություններն են: Կրակը վերեւ է հանում մեր բոլոր խառնուրդներն ու մեր մեջ Աստծո բնավորությունն է ձեւավորում:

Ոսկու մաքրման հաջորդ հատկանիշը նրա թափանցիկությունն է (երբ նա այնքան է մաքրված, որ կարելի է նայել նրա միջով, ինչպես ապակու): *« ...եւ քաղաքի հրապարակը մաքուր ոսկի, ինչպես թափանցիկ ապակի» (Հայտն. 21.21)*: Միայն կրակե տանջանքներով մաքրվելով դուք կդառնաք թափանցիկ: Թափանցիկ անոթը փառք է բերում ոչ թե իրեն, այլ փառավորում է այն, ինչով լիքն է: Նա իրենով չի ծածկում ոչ մեկին եւ համարյա աննկատելի է: Միայն այն ժամանակ, երբ դուք մաքրված լինեք, աշխարհը կրկին կտեսնի Հիսուսին:

Եսայի մարգարեի գրքում դա հատուկ կերպով է ընդգծվում. «Ահա Ես քեզ մաքրեցի եւ ոչ թե արծաթի կերպով: Ես քեզ փորձեցի նեղության հալոցում: Իմ պատճառով, Իմ պատճառով պիտի անեմ որովհետեւ ինչպե՞ս է պղծվում Իմ անունը: (Նրա անունն այլեւս անպատվության մեջ չի լինի Իր ժողովրդի մեղքի եւ պղծության պատճառով): Եվ Ես Իմ փառքը ուրիշին չեմ տա (Փառքը կպատկանի միայն Նրան եւ ոչ թե Նրա անոթներին)»:

Եսայի 48.10,11

Կրակը կամ հնոցը տանջանքներն են, ոչ թե այն կրակը, որով մաքրում են արծաթը: Ահա թե ինչու է Նա ասում՝ «ոչ թե արծաթի պես»: Մեր տանջանքները կրակն է, որ առանձնացնում է թանկար-

ժեքը անմաքուրից:

1985թ. դեկտեմբերին Տերն ինձ ցույց տվեց, որ սկսում է մաքրել իմ կյանքը: Այդ խոսքն այնպես հուզեց ինձ, որ ես կնոջս ասացի. «Աստված կհեռացնի իմ ողջ անմաքրությունը»: Եվ հետո ես սկսեցի թվարկել նրան բոլոր անցանկալի բաները, որ Աստված կհեռացներ: Մոտակա երեք ամիսներին ոչինչ չկատարվեց: Իրականում ավելի վատ դարձավ ամեն բան: Ես հարցրի Տիրոջը. «Ինչո՞ւ են իմ վատ սովորույթներն ավելի ամրանում, եւ դեպի լավը ոչ մի փոփոխություն չկա»: Նա պատասխանեց. «Որդի՛ս, Ես ասացի, որ կմաքրեմ քեզ: Դու փորձեցիր դա անել քո ուժերով: Այժմ Ես դա կանեմ Իմ ճանապարհներով»:

Տարիներով մարդիկ փորձում են հասնել սրբության իրենց կարողություններով: Ինքնուրույն մաքրվելու մեր իզուր փորձերի արդյունքում ծնվեցին բազում հարանվանություններ: Բայց ինչ որ մեզ հաջողվեց անել, մեզ սրրկացնելն էր՝ կապելով օրինապաշտության կապերով: Սրբությունն Աստծո շնորհքի գործն է, ոչ թե մեր մարմնի արտաքին սահմանափակումների: Աստված շնորհք է տալիս խոնարհներին եւ ոչ թե հպարտներին: Հպարտ մարդը մտածում է, որ ինքը կարող է հասնել սրբության՝ առանց Աստծո օգնության՝ հետեւելով կարգերին եւ կանոններին: Խոնարհ մարդը գիտի, որ չի կարող եւ վստահում է Տիրոջ շնորհքին ու զորությանը: Այդ պատճառով նա ձգտում է Աստծո հետ փոխհարաբերությունների՝ իմանալով, որ միայն Նրա հետ փոխհարաբերությունների շնորհիվ կստանա իր սրտում գրված օրենքը կատարելու զորություն:

Եկեք նորից նայենք իմ կյանքին՝ որպես օրինակ. հենց որ Աստված ասաց, որ կսկսի մաքրման ընթացքը, իմ կյանքում լուրջ փորձություններ սկսվեցին, այնքան լուրջ, որ երբեւէ չէի զգացել: Այդ դժվար ժամանակ Աստված այնքան հեռու էր թվում (անապատում): Ինձանից սկսեցին դուրս գալ բնավորությանս թաքնված բացասական գծերը: Ես կոպիտ դարձա իմ ամենամտերիմների հանդեպ: Իմ ընտանիքը եւ ընկերները հեռու էին մնում ինձանից:

Ես աղաչում էի Տիրոջը. «Որտեղի՞ց իմ մեջ այսքան բարկություն: Չէ՞ որ դա առաջ չկար»: Տերը պատասխանեց ինձ. «Որդի՛ս, երբ ոսկին մաքրում են, այն դնում են կրակի մեջ, այն սկսում է հալվել ու դառնում է հեղուկ: Այդ ժամանակ բոլոր խառնուրդները ջրի երես են ելնում, եւ դրանք կարելի է տեսնել»: Հետո Նա ինձ հարց տվեց, որը փոխեց իմ կյանքը. «Դու կարո՞ղ ես տեսնել խառնուրդը ոսկու մեջ, եթե այն չդնես կրակի մեջ»: Ես պատասխանեցի՝ ո՛չ: Նա շարունակեց. «Բայց դա չի նշանակում, որ դրանք չկան այնտեղ»: Հետո Տերն ասաց. «Երբ Ես քեզ դրեցի կրակի մեջ, խառնուրդները վեր ելան: Այն, ինչը թաքնված էր քեզ համար, տեսանելի էր Ինձ համար: Այժմ ընտրությունը քոնն է: Քո ռեակցիան բացահայտվածի հանդեպ կորոշի քո ապագան: Դու կարող ես բարկացած մնալ եւ քո վիճակի համար մեղադրել կնոջդ, ընկերներիդ, հովվիդ կամ այն մարդկանց, ովքեր աշխատում են քեզ հետ, կամ էլ կարող ես խոստովանել, որ այն կա քո սրտում, ապաշխարել եւ ներում խնդրել: Այդ ժամանակ Ես կվերցնեմ Իմ շերեփը եւ կհեռացնեմ այդ «խառնուրդը» քո կյանքից»:

Աստված դրանք չի հեռացնի մեր կամքին հակառակ: Այդ պատճառով Տիմոթեոսին ուղղված երկրորդ ուղերձի 2.21-ում Պողոսն ասում է. « ...եթե մեկն իր անձը մաքրի... »: Եթե ուզում եք շարունակել արդարացնել ձեր արարքները եւ վիճակը (այսինքն՝ պատճառներ գտնել, թե ինչու եք այդպես վարվում) եւ անմաքրությունը պահել ձեր ներսում, Աստված բռնի ուժով չի հեռացնի դրանք: Սրբացումը անընդհատ շարունակվող եւ երբեմն ցավոտ ընթացք է, բայց արդեն իմանալով, թե ինչի համար է այն ինձ պետք, ես Աստծուն թույլ տվեցի շարունակել: Հիսուսն ասում է. «Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որ նրանք Աստծուն կտեսնեն» (Մաթ. 5.8): Դավիթը, ում սիրտը որոնում էր Տիրոջը, կանչում էր Նրան դժվար պահերին. «Ո՞վ է իմանում իր սխալմունքները: Ծածուկ սխալմունքներից էլ սուրբ արա ինձ» (Սաղմ. 19.12):

Առակաց 25.3-ում կարդում ենք. «Երկինքը բարձրությունով եւ եր-

կիրը խորությունով եւ թագավորների սիրտը չի քննվի»: Մի՛ մտածեք, որ «թագավորներ» ասելով նկատի ունեն տարբեր երկրների ղեկավարներին: Այստեղ խոսքը գնում է նաեւ քրիստոնյաների մասին: Հայտնության 1.6-ում ասվում է. «Եվ մեզ թագավորներ ու քահանաներ արեց Աստծո եւ Իր Հոր համար... »: Հիսուսը մեզ թագավորներ արեց Աստծո եւ Իր Հոր համար: Աստված Առակացում ասում է նաեւ, որ մեր սրտերն անքննելի են: Բայց նախորդ խոսքը հաստատում է, որ թագավորների փառքն է բանը քննելը: Ինչպե՞ս կարող ենք քննել մեր սրտերը, եթե դրանք անքննելի են: Պատասխան՝ ՄԵՆՔ ՔՆՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՍՐՏԵՐԸ սրբացման միջոցով: Աստված շարունակում է հետեւյալ երկու խոսքերը. «Հանի՛ր կղկղանքը (խառնուրդը) արծաթից, եւ ոսկերիչի համար անոթ դուրս կգա: Դու՛րս արա թագավորի առջեւից ամբարշտին, եւ նրա աթոռը կհաստատվի արդարությամբ» (Առակ. 25.4,5):

Մարդու սիրտն անքննելի է: Այդ պատճառով Աստված օգտագործում է փորձությունների կրակը, որպեսզի թաքնվածը բացահայտվի, ինչպես ոսկու կամ արծաթի մեջ անտեսանելի մետաղախարամներն են, որոնք վեր են ելնում կրակի մեջ հալվելիս: Հիսուսը զգուշացնում է Եկեղեցուն. «Ես խրատ եմ տալիս քեզ, Ինձանից կրակում փորձված ոսկի առ, որ հարստանաս, եւ սպիտակ հանդերձներ, որ հագնես, որ քո մերկության ամոթը չերեւա... » (Հայտն. 3.18):

Թող սա լինի մեր աղաղակը: Եթե մենք խնդրում ենք մաքրել մեր սրտերը, Նա կհեռացնի այդ խառնուրդները, որ թաքնված են մեր աչքերից: Աստված գիտի մեր ծածուկ մտքերն ու մտադրությունները, եւ նույնիսկ նրանք, որոնց մասին մենք չգիտենք:

Տարբերե՛ք այդ հոգեւոր ժամանակները: Երբ կյանքում կգան փորձություններն ու դժվարությունները, մի՛ սկսեք բարկանալ, այլ մտածեք, թե ինչու է դա կատարվում: Քննեք ձեր սիրտը եւ թո՛ւյլ տվեք Աստծուն բաժանել թանկարժեքը անմաքուրից: Հիշե՛ք, սրբացումը լավը ավելի է լավացնում եւ մաքրում կամ հեռացնում է այն, ինչը թուլացնում է կամ պղծում: Կանչե՛ք Նրա սրբացումը ձեր կյանք, որ-

պեսզի կարողանաք դառնալ փառքի անոթ, որը կարող է արտա-հայտել Տիրոջ փառքը:

ԳԼՈՒԽ 9

ՄԱՔՐԵԼ ԿԱՄ ՈՉՆՉԱՑՆԵԼ

Երբ մարդն իր կյանքը, փունը կամ նույնիսկ ծառայությունը կառուցում է Աստծուց առանձին, նրա կառույցը չի դիմանում:

«Եվ ո՞վ է Նրա գալու օրը տանողը, եւ ո՞վ է Նրա երեւալու ժամանակ կանգնողը, որովհետեւ նա հալեցնողի կրակի պես է... »:

Մաղաքիա 3.2

Նա կգա կրակի պես: «Որովհետեւ մեր Աստվածը փչացնող կրակ է» (Եբր. 12.29): Ոչ մի մեղք չի կարող կանգնել Աստծո փառքի ներկայության մեջ, ահա ինչու է Տերը հատուկ ուշադրություն դարձնում Իր տաճարի պատրաստմանը:

Կրակը երկու ֆունկցիա ունի. այն կա՛մ մաքրում է, կա՛մ ոչնչացնում, կա՛մ սրբում է, կա՛մ էլ սպառում: Մաղաքիան հարց է տալիս. «Ո՞վ է Նրա գալու օրը տանողը, եւ ո՞վ է Նրա երեւալու ժամանակ կանգնողը... »: Պողոսն այդ մասին խոսում է Կորնթացիների առաջին ուղերձի 3.9,10-ում. «Որովհետեւ մենք Աստծո գործակիցներ ենք. դուք Աստծո մշակությունը՝ Աստծո շինվածն եք: Աստծո շնորհքի չափով, որ ինձ տրված է, իմաստուն ճարտարապետի պես հիմք դրի, բայց ուրիշը շինում է. միայն թե ամեն մեկը մտիկ տա, թե ինչպես է շինում»:

Մենք պետք է յուրահատուկ ուշադրություն դարձնենք, թե ինչպես ենք կառուցում մեր կյանքը: Գրվածքներում տան կառուցումը խորհրդանշում է մեր կյանքի եւ ծառայությունների կառուցումը: Մենք պատկանում ենք Աստծուն, որովհետեւ Նրա շինությունն ենք:

« ...Քրիստոս Հիսուսին, որ հավատարիմ է Իրեն հաստա-

տողին, ինչպես Մովսեսն էլ (հավատարիմ էր)՝ նրա բոլոր տան մեջ: Որովհետեւ Նա ավելի փառքի արժան եղավ, քան Մովսեսը որքան որ տնիցն ավելի պատիվ ունի նրա շինողը: Որովհետեւ ամեն տուն մեկից է շինվում, բայց Նա, որ ամենն արավ, Աստված է»:

Եբր. 3.1-4

Նկատեք, որ Տերն է տունը շինողը, ոչ թե մենք կամ մեր ձեռքի ուժը: Ինչ որ կառուցում է Աստված, կմնա, իսկ ինչ որ մենք ենք կառուցում, չի մնա: *«Եթե Տերը չշինի տունը, զուր են աշխատում նրա շինողները... » (Սաղմ. 127.1)*: Ինչ էլ մարդը կառուցի, իր կյանքը, տունը կամ նույնիսկ ծառայությունը, եթե Աստծուց անկախ է կառուցում, ապա այն կքանդվի:

Ծննդոց 11.4-ում մենք տեսնում ենք դրա օրինակը. « ...եկեք մեզ համար մի քաղաք շինենք եւ մի աշտարակ, եւ նրա գլուխը մինչեւ երկինքը լինի, եւ մեզ համար անուն ստանանք... »:

Ո՞րն էր նրանց դրդապատճառը: Իրագործել իրենց երազանքը, կառուցել շինություն իրենց փառքի համար: Նրանք ուզում էին լինել Աստծո նման եւ միանգամայն Աստծուց անկախ: Նրանք ձգտում էին իրականացնել իրենց ցանկությունները իրենց կամքով եւ ոչ թե Աստծո: Նրանք Աստծուց անկախ էին կառուցում, թեեւ դա երկնային նպատակ էր: Դա ցույց է տալիս, որ ինչքան էլ մեր մտադրությունները ազնիվ լինեն, դրանք չեն իրականանա առանց Աստծո: Ահա թե ինչու է Խոսքը զգուշացնում մեզ.

« ...Միայն թե ամեն մեկը մտիկ տա, թե ինչպես է շինում... Եթե մեկն այս հիմքի (որը Հիսուս Քրիստոսն է) վրա շինի ոսկի, արծաթ, ազնիվ քարեր, փայտ, խոտ, եղեգ. ամեն մեկի գործը պիտի հայտնվի, որ օրը («Ո՞վ կարող է կանգնել Նրա գալստի օրը») կերեւացնի, որովհետեւ կրակով պիտի հայտնվի, եւ ամեն մեկի գործը թե ինչպես է, կրակը կփորձի»:

Ա Կորնթ. 3.10-13

Ոսկին, արծաթը եւ ազնիվ քարերը ներկայացնում են շինության

Աստծո փարբերակը: Փայտը, խոտը եւ եղեգը ներկայացնում են շինության մեր փարբերակը, որը կրկնօրինակված է աշխարհից: Այս խոսքում միայն երկնայինն դատի մասին է ասվում: Ո՛չ: Սա նկարագրում է, թե երբ է Տերը գալիս Իր փաճար (16,17): Նա կգա ինչպես կրակ: Ի՞նչ է անում կրակը: Ինչպես տեսանք, դա կախված է նրանից, թե ինչին է այն դիպչում. նույն կրակը լափում է փայտը, խոտը եւ եղեգը ու մաքրում ոսկին ու արծաթը: Այդ պատճառով էլ Աստված շարունակում է. *«Եվ եթե մեկի գործն այրվի, վնաս կքաշի, բայց ինքը կապրի, այնպես ինչպես թե կրակով» (15):*

Եթե դուք ձեր կյանքը, բիզնեսը կամ ծառայությունը կառուցում եք ձեր պատրաստած աղյուսներից, որոնք կարող են լինել կամքի ուժը, աշխարհիկ ծրագրերն ու մեթոդները... եթե կառուցում եք՝ մանիպուլյացիայի ենթարկելով ուրիշին եւ հսկելով ու ճնշելով նրանց... եթե դուք կեղծավորություն եք անում ոմանց առջեւ եւ հիմարացնում եք ուրիշներին, որպեսզի հասնեք ավելի բարձր աստիճանի... եթե ձերը կառուցելու համար ձեզ անհրաժեշտ է կործանել ուրիշինը՝ քննադատելով կամ բամբասելով... այդ դեպքում դուք կկորցնեք այդ կերպով ձեռք բերած ամեն ինչ: Նման մեթոդներով ինչ էլ որ դուք կառուցեք, ամենը կայրվի: Շատերը ավելի բարձր դիրքի են հասնում ուրիշի մասին սուտ խոսելով, որպեսզի օգուտ քաղեն: Դա էլ կայրվի. *«Ոչ ոք իր անձը չխաբի. եթե ձեզանից մեկը կարծում է, թե իմաստուն է այս աշխարհում, թող նա հիմար լինի, որ իմաստուն լինի: Որովհետեւ այս աշխարհի իմաստությունը հիմարություն է Աստծո առջեւ...» (18,19):*

Աշխարհիկ իմաստության ուշադրության կենտրոնը «եսասիրությունն» է: «Բայց եթե դառը նախանձ եւ հակառակություն ունեք ձեր սրտերում... այս իմաստությունը վերեւից իջած չէ, այլ երկրավոր, շնչավոր եւ դիվական» (Հակոբ. 3.14,15): Աստծո աչքերում ձեր կյանքի ցանկացած ոլորտ, որտեղ երեւում է ինքնարտահայտման եւ ինքնաբավարարման ձգտումը, փայտի, խոտի եւ եղեգի նման է: Անկախ նրանից, թե որքան շատ ենք օգնում ուրիշներին կամ գործում Հի-

սուս Քրիստոսի անունով, անկախ մեր զոհաբերած ժամանակից... այդ բոլորը կայրվի: Նախանձը ծնում է մրցակցություն եւ կասկած: Այսօր եկեղեցում կասկածն աճում է մեծ արագությամբ, եւ դրանից ծնված վախը բաժանության պատճառ է դառնում: Մենք սկսեցինք ուժեղացնել մեր դիրքերը, որպեսզի մեր փարածքները պահենք ապահովության մեջ: Սակայն կանգնելով այդ դիրքի վրա՝ մենք կարող ենք կորցնել մեր ընկերներին կամ, ամենակարեւորը, մեր փոխհարաբերությունը Աստծո հետ: Հաճախ նույնիսկ ծառայողները հոգ են տանում իրենց դիրքի, կոչման եւ շահույթի համար՝ կորցնելով Աստծո սրտի հաճությունը: Նրանց սերն Աստծո ժողովրդի նկատմամբ սպառվում է, եւ արդյունքում ստացվում է, որ նրանք ծառայում են իրենք իրենց: Արդյունքում՝ այդպիսի ծառայության հիմնական նպատակն է ցուցադրական ելույթի ձեւը, երբ բոլորը ձգտում են ամեն կերպ ցույց տալ, որ իրենք են ամենամեծն ու ամենալավը՝ հույս ունենալով, որ այդ հաջողությունը կլցնի դատարկությունը, որը կարող է լցնել միայն Աստված: Խաբված լինելով՝ նրանք ճշմարտապես հավատում են, որ ծառայում են Աստծո համար:

Սակայն ուրիշները փնտրում են Աստծո սիրտը: Որքան շատ են փնտրում Նրան, այնքան ավելի է թվում, որ նրանք նահանջում են: Հուսահատության մեջ նրանք կանչում են. «Տեր, որքան շատ եմ Քեզ որոնում, այնքան շատ եմ ցած իջնում»: Որին էլ Աստված պատասխանում է. «Ավելի խորը փորիր»:

> ***«Ամեն ով որ Ինձ մոտ է գալիս եւ Իմ խոսքերը լսում եւ նրանք անում, ցույց տա՞մ ձեզ, թե ում նման է: Նման է մի տուն շինող մարդու, որ փորեց եւ խորացրեց եւ հիմը ժայռի վրա դրեց... »:***

Ղուկ. 6.47,48

Երբ ես ապրում էի Դալլասում, հետեւում էի, թե շինարարները ինչպես են կառուցում երկնաքերները: Սկզբում ամեն ինչ շատ դանդաղ էր ընթանում, քանի դեռ շինարարները ամիսներ շարունակ ջարդում էին քարաբեկորները եւ հիմք էին փորում: Որքան մեծ էր

նախագծված շինությունը, այնքան խոր պիտի փորվեր դրա հիմքը: Վերեւից թվում էր, թե նրանք դանդաղ են աշխատում. նրանց առաջընթացը գրեթե աննկատելի էր: Բայց հանկարծ շինությունը սկսեց աճել: Նրա ընթացքը թվում էր, թե շարունակվում էր օրուգիշեր՝ համեմատած նախապատրաստական աշխատանքների հետ: Վերին գործընթացը ոչինչ էր համեմատած ներքին նախապատրաստական աշխատանքների հետ:

Այսօր շատերը Քրիստոսի Մարմնում ներքին նախապատրաստման ընթացք են անցնում: Փառք Աստծուն արթնության սկզբի համար: Նրանք միգուցե կանչված են ծառայելու, բայց այսօր ցածր դիրքում են: Թվում է, թե ամեն բան շատ դանդաղ է ընթանում... Նրանք անապատում են՝ Աստծո նախապատրաստման ընթացքի մեջ. հիմքն արդեն զցվում է, Քրիստոսի բնավորությունը ձեւավորվում է: Սա յուրահատուկ ընթացք է: Նրանց թվում է, որ իրենց շրջապատում բոլորն արագ վեր են բարձրանում եկեղեցում, հաջողությունների են հասնում քաղաքականության եւ ինքնավստահության միջոցով, մինչ նրանք դոփում են տեղում եւ, ընդհանրապես, ոչ մի առաջընթաց չեն տեսնում: Հնարավոր է՝ նրանք նույնիսկ կարող են գայթակղվել ինքնուրույն գնալ այդպիսի ճանապարհով, բայց իմանալով, որ այդտեղ չի փոխվի իրենց բնավորությունը եւ կարող է հարվածի տակ դրվել այն ամենը, ինչին արդեն հասել են այս փոփոխությունների ընթացքում, նրանք որոշում են ռիսկի չդիմել: Սպասելով Տիրոջը՝ նրանք Գլխավոր Շինարարին թույլ են տալիս ամուր հիմք զցել ժայռի վրա:

Ներկա պահին որոշ ծառայողներ անդադար որոնում են Աստծուն, բայց թվում է, որ արդյունքում ոչինչ չի կատարվում: Նրանք հասկանում են, որ ընկել են մի չոր վայր կամ ժամանակաշրջան: Նրանք հետեւում են, թե ինչպես են ուրիշ ծառայողներ հաջողությամբ առաջ տանում իրենց եւ իրենց ծառայությունները տարբեր ծրագրերի եւ աշխարհիկ գովազդների շնորհիվ: Եվ Աստված թույլ չի տալիս նրանց կառուցել այդպիսի մեթոդներով: Ինչո՞ւ: Որովհետեւ

նրանց հիմքը կառուցում է հենց Աստված:

Ոմանց Աստված դեռ չի կանչել լրիվ ծառայության, բայց ցույց է տվել նրանց Իր ծրագիրը: Այսօր նրանք զարմանում եւ մտածում են՝ արդյո՞ք կկատարվի դա երբեւէ: Նրանց թվում է, որ այդ ծրագրի իրականացումը ուղղակի մնում է անկատար: Բայց հենց անապատի այդ չոր ժամանակում Աստված առանձնացնում է Իր երեսը որոնողներին նրանցից, ովքեր կառուցում են իրենց գործիքների եւ տարբեր «ծրագրերի» օգնությամբ: Առաջընթաց կնկատվի նրանց մոտ, ովքեր փնտրում են Աստծո հետ փոխհարաբերություններ եւ սպասում են Նրա տաճար գալուն:

Աստված ասում է. *«Երբ պատշաճ ժամանակ կունենամ, ուղիղ կդատեմ Ես... Որովհետեւ բարձրանալը ոչ արեւելքից է, ոչ արեւմուտքից, ոչ անապատից: Բայց Աստված է դատավոր. սրան խոնարհեցնում է եւ նրան բարձրացնում» (Սաղմ. 75.2-7):*

Կա Իսահակի ծառայություն, եւ կա Իսմայելի ծառայություն: Ո՞րն է դրանց տարբերությունը: Իսմայելի ծառայությունը ծնվում է կարիքից դրդված, բայց դա մարմնից ծնված է. Իսահակի ծառայությունը ծնվում է կոչումով, եւ այդ ծնունդը Հոգուց է: Երկու ծառայություններն էլ Աստծուց տրված խոստմունքից կամ կոչումից են:

Եկեք ավելի մանրամասն դիտարկենք. Աստված խոստացավ Աբրահամին, որ նա որդի կունենա: Այդ որդին պետք է ծնվեր հենց Աբրահամի սերմից: Այս մտադրության մեջ Աստված ոչինչ չասաց անպտուղ կնոջ՝ Սառայի դերի մասին: Տասնմեկ տարի սպասելուց հետո Սառան եկավ Աբրահամի մոտ այս գաղափարով. ***«Վերարտադրության քո համակարգը առայժմ գործում է: Եթե մենք էլի սպասենք, դու կկորցնես վերարտադրության քո ուժը: Ինչ է, չգիտե՞ս... Հավատքն առանց գործերի մեռած է: Ուրեմն մտի՛ր իմ աղախին Հագարի մոտ, որպեսզի նա հղիանա եւ ինձ համար երեխաներ ծնի»*** *(Ծնն. 16)*: Նա լսեց իր կնոջ խոսքերը, եւ Հագարը նրան Իսմայել անունով որդի ծնեց:

Աստված տեսավ այդ ամենը եւ ասաց. «Դե ինչ, նրանք կարծում

են, որ Իմ խոսքումները կարող են կատարել իրենց սեփական ուժերով, իսկ հիմա Ես կսպասեմ եւս մի քանի տարի, մինչեւ Աբրահամի վերարտադրության համակարգն էլ ամբողջովին մեռնի: Այդ ժամանակ Ես կիրագործեմ Իմ խոսքումը»: Ինչո՞ւ: Որովհետեւ Աստված թույլ չի տա մարդուն՝ վերցնել փառքը: Եվ այսպես անցավ եւս տասներեք տարի՝ ընդամենը քսանյոթ տարի այն օրից, երբ Նա Աբրահամին որդի խոստացավ (եւ մենք դեռ վիրավորվում ենք, երբ Աստված երկու շաբաթ չի պատասխանում մեր աղոթքներին): Այդ ժամանակ Տերն ասաց. *«Այժմ, երբ Աբրահամի վերարտադրության համակարգն ամբողջովին մեռած է (Հռոմ. 4.19), Ես կարող եմ կատարել Իմ խոսքումը»:* Աստված երկուսի մոտ էլ կենդանացրեց ծնելու կարողությունը, եւ Սառան հղիացավ ու ծնեց Իսահակին: Իսմայելը մեծացավ Աբրահամի տանը տասներեք տարի՝ մինչեւ Իսահակի ծնունդը, եւ Նրա ծննդից հետո եւս մի քանի տարի վայելում էր Աբրահամի տան բոլոր օգուտները, քանի դեռ Իսահակը փոքր էր: Բայց հասավ ժամանակը, երբ Իսմայելը սկեց հալածել Իսահակին: Տեսեք՝ ինչ կատարվեց.

> ***«Բայց ինչպես որ այն ժամանակ մարմնի կողմից ծնվածը հալածում էր նրան, որ Հոգու կողմից էր, այնպես էլ հիմա: Բայց Գիրքն ի՞նչ է ասում. դուռ՛ս հանիր աղախնին (Հագարին) եւ նրա որդուն (Իսմայելին), որ աղախնի որդին ժառանգություն չպիտի ստանա ազատի որդու հետ»:***
>
> ***Գաղատ. 4.29,30***

Մարմնից կամ կարիքից ծնվածը միշտ կհալածի Հոգուց ծնվածին: Մեր օրերում էլ շատ ծառայություններ կան, որոնք ծնվել են մարմնից կամ կարիքից, չնայած Աստված խոստացել էր ծնել դրանք անձամբ: Բայց նրանք չսպասեցին, մինչեւ Աստված դա աներ, եւ ինքնուրույն կառուցեցին դրանք:

Դա վերաբերում է ոչ միայն ծառայությանը, այլեւ կյանքի բոլոր ուղիներին: Միշտ հիշե՛ք, մարմինը չի կարող կատարել Աստծո խոսքումները: Եթե մի բան մարմնից է ծնված, ապա մարմինն ինքը

պետք է հոգ տանի դրա համար: Սովորաբար դա ստեղծում է մանիպուլյացիայի կամ հսկողության մթնոլորտ: Այսպիսի ծառայության մեջ գտնվողներն անձամբ են իրենց դնում իշխանության դիրքում եւ խաղում են մարդկանց զգացմունքների հետ, որպեսզի հասնեն ցանկացած արդյունքների: Հանկարծ դուք դառնում եք պատասխանատու նրանց հաջողության կամ անհաջողության համար: Այդպիսի դեպքերում շատ ճնշում եւ օրինապաշտություն է ի հայտ գալիս: Չնայած այստեղ մենք ավելի շատ խոսում ենք ծառայության մասին, բայց ինչ որ ես նկարագրում եմ, վերաբերում է ոչ միայն ծառայությանը, այլ մեր կյանքի ցանկացած ոլորտին՝ մարմնից ծնված:

Եվ հակառակը, Հոգուց ծնվածը միշտ գիտի, որ այն ոչ մի կապ չունի իր ձեւավորման եւ ծննդի հետ, այդ պատճառով էլ չի կարող աճել իր ուժերով: Այդ ժամանակ իշխանությունը Աստծուն է տրվում՝ հոգալու այն ամենի համար, ինչ որ Նա ստեղծել կամ կառուցել է:

Իսահակի ծնվելու ժամանակ Իսմայելն արդեն բավականին հաստատուն դիրք էր գրավել ընտանիքում: Եկեղեցու պատմությունը սովորելով՝ ես հայտնաբերեցի, որ սկզբում միշտ հնարավորություն է լինում ծնել Իսմայելի ծառայությունը, նախքան կծնվի Իսահակի՝ խոստմունքի ծառայությունը: Մեզ անհրաժեշտ է դիմադրել գայթակղությանը՝ անելու ինքնուրույն այն, ինչը կարող է անել միայն Աստված: Եվս մեկ անգամ կարդացե՛ք այս խոսքը. «Դու՛րս արա այդ աղախնուն եւ նրա որդուն, որովհետեւ աղախնի որդին ազատ կնոջ որդու հետ ժառանգություն պիտի չառնի»:

Մոտենում է այն օրը, երբ Աստված կգա Իր տաճար եւ կասի. «Դու՛րս արա մարմնի ծառայությունը, որովհետեւ մարմնի ծառայությունը ժառանգություն չի ստանա խոստմունքի ծառայության հետ»: Նույնիսկ եթե դրանք պտուղ են բերում, Աստված կասի. «Թո՛ղ դրանք»: Ինչո՞ւ: Որովհետեւ մարմինը չի փառավորի Նրա ներկայությունը:

Երբ գա Աստծո դատը, կգա բաժանությունը: Եթե ձեր կյանքի կամ ծառայության մի մասը կառուցված է ձեր կարողության եւ տա-

ղանդների վրա, իսկ մյուս մասը՝ Հոգու, կմնա միայն այն մասը, որը կառուցված է Աստծո Հոգով: Եթե ձեզանից մեկը իր կյանքը կամ ծառայությունը կառուցում է միայն ինքնահաստատման վրա, ապա դրանից ոչինչ չի մնա: Դուք կփրկվեք, ինչպես կրակից: Կմնա միայն այն, ինչը սերմանված եւ ծնված է եղել Սուրբ Հոգով:

ԳԼՈՒԽ 10

ԱՄԲԱՐԻՇՏԵՐԻ ԴԱՏԸ

Խաբեբան նա է, ով մոլորեցնում է ուրիշներին շինծու բնավորությամբ կամ կեղծ կեցվածքով:

«Եվ ով է Նրա գալու օրը տանողը, եւ ով է Նրա երեւալու ժամանակ կանգնողը, որովհետեւ Նա հալեցնողի կրակի պես է եւ թափիչների օճառի պես: Եվ Նա նստելու է իբրեւ արծաթ հալեցնող եւ մաքրող եւ մաքրելու է Ղեւիի որդիներին, զտելու է նրանց ոսկու եւ արծաթի պես, եւ նրանք կլինեն արդարությամբ ընծա մատուցողներ Տիրոջ համար: Եվ ընդունելի կլինի Տիրոջը Հուդայի եւ Երուսաղեմի ընծան, ինչպես վաղեմի օրերին եւ նախնի տարիներին: Եվ Ես կմոտենամ ձեզ դատաստանի համար, եւ Ես ժիր վկա կլինեմ կախարդների ու շնացողների եւ սուտ երդում անողների դեմ. նաեւ վարձկանի վարձը, որբեւայրուն եւ որբին զրկողներին եւ օտարականին ճնշողներին, որոնք Ինձանից չեն վախենում, ասում է Զորաց Տերը»:

Մաղաքիա 3.2-5

Մաղաքիան չէր կարող օգտագործել Նոր Կտակարանի տերմինները, այդ պատճառով էլ գործածում էր այսպիսի խոսքեր՝ «Ղեւիի որդիներ», «Հուդա եւ Երուսաղեմ»: Մարգարեանալով մեր օրերի համար՝ նա պետք է օգտագործեր իր օրերի բառապաշարը:

Ուշադրություն դարձրեք, թե ինչ Աստված խոստացավ անել, երբ Իր զավակները մաքրվեն. *«Դատաստանի համար ձեզ պիտի մոտենամ»:* Այստեղ բանալին «ձեզ պիտի մոտենամ» բառերն են: Որպես-

զի պարզենք, թե Տերն ինչ է ասում, մեզ անհրաժեշտ է հասկանալ, որ ամբարիշտ փղամարդիկ եւ կանայք, որոնց դեմ Նա պատրաստվում է արագ վկա լինել դատաստանի ժամանակ, Իր ժողովրդի «միջից են»: Մաղաքիայի գրքում գրվածին զուգահեռ Երեմիայի մարգարեությունում կարդում ենք.

«Որովհետեւ անզգամներ են գտնվում Իմ ժողովրդի մեջ. դարանամուտ են լինում կծկտված թռչնորսների պես, որոգայթներ են լարում՝ մարդիկ որսում... Պարարտացել են՝ փայլում են, չարերի գործերից էլ են գերազանցում. դատը չեն դատում՝ որբի դատը. այսուամենայնիվ հաջողվում են, թեեւ աղքատների իրավունքը չեն դատում: Այս բաների համար Ես այցելություն չանե՞մ ասում է Տերը, կամ սրա նման մի ազգից Իր վրեժը չառնի՞ Իմ Հոգին»:

Երեմիա 5.26,28,29

Եվս երկու հիշատակում կա Նոր կտակարանում.

«Արդ զգույշ կացեք ձեր անձերին եւ բոլոր հոտին, որի մեջ Սուրբ Հոգին ձեզ վերակացուներ դրեց, որ արածեցնեք Աստծո եկեղեցին, որ Իր արյունով ստացավ: Որովհետեւ ես գիտեմ, որ իմ հեռանալուց հետո հափշտակող գայլեր կգան ձեր մեջ, որ հոտին չեն խնայի: Եվ հենց ձեզանից մարդիկ վեր կկենան, որ ծուռ բաներ կխոսեն, որ աշակերտներին իրենց ետեւից քաշեն»:

Գործք 20.28-30

«Եվ ամենը, որ կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսումը, հալածանք պիտի կրեն: Բայց չար եւ խաբեբա մարդիկ առաջ կգնան չարության մեջ, մոլորեցնելով եւ մոլորվելով»:

Բ Տիմոթ. 3.12,13

Աստծո ժողովրդի մեջ եղող ամբարիշտներին անվանում են խաբեբաներ: Բառարանում «խաբեբա» բառն այսպես է սահմանվում.

«Նա, ով մոլորեցնում է ուրիշներին շինծու բնավորությամբ կամ կեղծ կեցվածքով»: Որպեսզի սա հասկանանք, պետք է գիտակցենք, որ. « ...Երկնքի արքայությունը նմանվեց մի մարդու (Հիսուս), որ իր արտում բարի սերմ ցանեց (արքայության որդիներ): Եվ մարդիկ քնելիս (եկեղեցին արթուն չէ եւ չի աղոթում) նրա թշնամին (սատանան) եկավ եւ ցորենի մեջ որոմներ (ամբարիշտ մարդիկ, ովքեր ներկայանում են իբրեւ քրիստոնյա) ցանեց եւ գնաց» (Մաթ. 13.24,25):

Նկատեք, որ որոմները ցանվել էին ցորենի մեջ: Մինչեւ հունձքը որոմը չի տարբերվում ցորենից: Հունձքի ժամանակ տարբերությունը դառնում է ակնհայտ. ցորենը պտուղ ունի, իսկ որոմը չունի:

Ոչ բոլորը, ովքեր պնդում են, թե ճանաչում են Հիսուսին, իրականում ճանաչում են Նրան: Ես ամենեւին էլ չեմ ուզում կասկածներ առաջացնել որեւէ մեկի մեջ, այլ միայն ուզում եմ նշել այն, ինչը պարզ գրված է Աստվածաշնչում: Հիսուսը մեզ զգուշացրեց. «*Զգույշ եղեք սուտ մարգարեներից, որ գալիս են ձեզ մոտ ոչխարների հանդերձներով, բայց ներսից հափշտակող գայլեր են: Իրենց պտուղներից նրանց ճանաչեք... » (Մաթ. 7.15)*: Մենք պետք է մեր մեջ զարգացնենք զանազանելու կարողությունը, որպեսզի տարբերենք «լավ» պտուղը «վատից»:

Հուդայի ուղերձում մանրամասն խոսվում է այդ մասին. «*Որովհետեւ մի քանի մարդիկ ներս պրծան, որոնք սկզբից հաստատված էին սույն այս դատաստանի համար, ամբարիշտներ, որ մեր Աստծո շնորհքն անառակության դարձրին եւ ուրանում են այն միայն Իշխանին (Աստծուն) եւ մեր Տեր Հիսուս Քրիստոսին» (Հուդա 4):*

Դուք հավանաբար համոզված եք, որ ձեր եկեղեցում Տիրոջն ուրացած մարդիկ չկան: Կարեւոր է, որ հասկանաք՝ ինչպես են նրանք ուրանում Տիրոջը: Ուշադրություն դարձրեք, որ Հուդայի ուղերձում ասվում է՝ «գաղտնի մտան»: Նրանք ուրանում են Տիրոջը ոչ թե նրանով, ինչ ասում են, այլ նրանով, ինչ անում են (ինչպես են ապրում): Որպեսզի ավելի հասկանալի լինի, եկեք կարդանք Տիտոս 1.16-ը. «Խոստովանում են, թե Աստծուն գիտեն, բայց իրենց գործե-

րով ուրանում են... »: Այսպիսով՝ նրանց տարբերելու միակ միջոցը նրանց պտուղներն են եւ ոչ թե խոսքերը: Հետո Հուդան շարունակում է. «Իսկ ես կամենում եմ հիշեցնել ձեզ, որ արդեն այս բանը գիտեք, թե Տերը ժողովրդին փրկեց Եգիպտոսի երկրից. եւ հետո չհավատացողներին կորցրեց» (Հուդա 5): Այստեղ Հուդան մեր օրերի կեղծ ոչխարներին համեմատում է նրանց հետ, որոնք անապատում ենթարկվեցին Աստծո դատաստանին: Ոմանց կուլ տվեց բացված երկիրը (Թվոց 16.31,32): Շատերը հարվածով մեռան Տիրոջ առջեւ (Թվոց 14.37,25.9): Ուրիշներն էլ մեռան օձերի խայթոցներից (Թվոց 21.6): Նոր կտակարանում այդ մասին ասվում է.

> ***«Եվ նմանապես էլ սրանք, որ ցնորված լինելով մարմինը պղծում են, տերությունը անարգում են եւ փառքը հայհոյում են... Վա՛յ նրանց, որ Կայենի ճանապարհով գնացին եւ Բաղաամի մոլորությունով վարձքին նվիրվեցին եւ Կորխի հակառակության պես կորան»:***
>
> ***Հուդա 8-11***

Մի ժամանակ Կայենը, Բաղաամը եւ Կորխը շփում էին ունեցել Տիրոջ հետ եւ ծառայել էին Նրան: Կայենը նախանձում էր իր եղբորը, որի զոհը (իր հոտի ամենալավը) ընդունել էր Աստված, իսկ իր զոհը (իր ձեռքերի պտուղը) չէր ընդունել: Կայենը վիրավորված մնաց նույնիսկ այն ժամանակ, երբ Աստված պատվիրեց նրան, որ եթե ուղղի սխալը, կընդունվի: Նրա համար ավելի հեշտ էր բարկանալը եւ իր եղբորից վիրավորված մնալը, քան թույլ տալ Աստծուն մաքրել իր սիրտը անօրինությունից: Այդ վիրավորանքը դարձավ ատելություն, որն էլ վերջիվերջո հանգեցրեց սպանության: *«Ամեն ով որ իր եղբորը ատում է, մարդասպան է, եւ գիտեք, որ ամեն մարդասպան հավիտենական կյանք չունի հաստատված իրենում» (Ա Հովհ. 3.15):*

Բաղաամը ագահություն էր ցուցաբերում ուժի, դիրքի եւ փողերի հանդեպ: Նա հարստանալու հույսով իր օծությունը վաճառեց, նույնիսկ, երբ Աստված հատուկ զգուշացրեց չանել դա: «Իսկ նրանք, որ

կամենում են հարստանալ, փորձության եւ որոգայթի եւ շատ անմիտ վնասակար ցանկությունների մեջ են ընկնում, որ ընկղմում են մարդկանց սատակումի եւ կորուստի մեջ» (Ա Տիմոթ. 6.9): Այդ պատճառով էլ Բաղաամը մեռավ քանանացիների հետ, երբ իսրայելացիները գրավեցին երկիրը:

Կորխը քահանա էր՝ Ղեւիի սերնդից, չնայած դրան՝ նա անապատում ապստամբեց Մովսեսի եւ Ահարոնի դեմ. *«Եվ ժողովվեցին Մովսեսի եւ Ահարոնի վրա եւ ասացին նրանց. Էլ բավական է ձեզ... ինչո՞ւ եք ձեզ բարձրացնում Եհովայի ժողովրդի վրա» (Թվոց 16.3)*: Նրան չէր հուզում, որ Մովսեսը մեծ պատասխանատվություն էր կրում, ուղղակի ինքն էլ էր ուզում ունենալ այնպիսի հեղինակություն, ինչպիսին Մովսեսն ուներ: Նա ծածուկ նպատակ ուներ իրեն բարձրացնել: Չհնազանդվելով Աստծուց դրված ղեկավարին՝ նա մեղադրեց Մովսեսին (ում Աստված էր բարձրացրել) ինքնամեծարման մեջ:

Կորխի ապստամբությունը դատապարտվեց, եւ երկիրը նրան կենդանի կուլ տվեց: Նոր կտակարանում ասվում է. «Ակա՛նջ դրեք ձեր առաջնորդներին եւ հնազանդվեք, որ նրանք հսկում են ձեր հոգիների համար որպես թե հաշիվ պիտի տան, որ ուրախությունով անեն այն եւ ոչ թե հառաչելով, որ դա ձեզ օգուտ չէ» (Եբր. 13.17):

Վերջում նշենք՝ Կայենը, Բաղաամը եւ Կորխը ընդունակ չէին պահել իրենց փոխհարաբերությունը Աստծո հետ, քանի որ նրանց նպատակն էր իրենց «ես»-ին ծառայելը եւ ոչ թե Աստծուն ու Նրա ժողովրդին: Հուդան այդպիսիների մասին ասում է. *«Սրանք գայթակղության ժայռեր են ձեր սիրո խնջույքներում, որ աներկյուղ միասին ուտել խմելիս իրենց անձերն են արածեցնում» (Հուդա 12)*: Սիրո խնջույքները եկեղեցու ծառայություններն են: Հուդան նրանց որպես «արատներ» է ներկայացնում: Հիսուսը վերադառնալու է «Որ Իր առաջ փառավոր կանգնեցնի եկեղեցին, որ չունենա մի արատ կամ խորշոմություն կամ ուրիշ բաներ, որ սուրբ եւ անարատ լինի» (Եփես. 5.27): Դա նշանակում է, որ այդ տղամարդիկ եւ կանայք կհեռացվեն եկեղեցուց, եթե նրանք չապաշխարեն մինչեւ Նրա գա-

լուսը:

Հուդան շարունակում է. *« ...անջուր ամպեր են հովերից քշված...»:* Անջուր ամպեր ասելով՝ նկատի ունի, որ նրանք ունեն աստվածապաշտության կերպարանքը, բայց նրանցում կյանք չկա, եւ նրանք անձրեւ չեն բերում:

Հետո Հուդան ասում է. *« ...**պտղակորույս անպտուղ ծառեր, երկու անգամ մեռած արմա**տախիլ եղած: Ծովի կատաղած ալիքներ, որ իրենց անձերի ամոթն են փրփրեցնում. մոլար աստղեր, որոնց պահվում է հավիտյան խավարի մութը» (Հուդա 12,13):*

Ուշադրություն դարձրեք, որ նա ասում է «երկու անգամ մեռած»: «Երկու անգամ մեռած» նշանակում է, որ դու մի ժամանակ մեռած էիր առանց Քրիստոսի, հետո Աստված քեզ կենդանացրեց, երբ դու ընդունեցիր Նրան, եւ հետո դու կրկին մահացար՝ ընդմիշտ հեռանալով Նրանից: Պետրոսը դա հաստատում է իր երկրորդ գրքի երկրորդ գլխում.

> *« ...աղտ են եւ կեղտ եւ իրենց խաբեբայություններով զվարճանում են, ձեզ հետ միասին ուտել խմելիս: Աչքեր ունեն պոռնկությունով լիքը, որ մեղքից չեն դադարում. խաբում են անհաստատ անձերին, որ ագահությունով բռնված սրտեր ունեն, անեծքի որդիներ: Որ շիտակ ճանապարհը թողած մոլորվեցին... որովհետեւ եթե աշխարհի պղծություններից մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի գիտությունով փախչողները կրկին նրանում շաղախված հաղթվեն, նրանց վերջը չար եղավ, քան թե առաջինը: Որովհետեւ լավ էր նրանց, որ չճանաչեին արդարության ճանապարհը, քան թե ճանաչեցին, եւ ետ քաշվեցին այն սուրբ պատվիրանքից, որ ավանդվեց նրանց»:*

Բ Պետր. 2.13-15, 20,21

Գրքի այս գլխում ես Աստվածաշնչից շատ մեջբերումներ եմ արել: Այս վիճելի հարցի քննարկման համար ես զգացի, որ կարեւոր է օգտագործել Սուրբ գրքի խոսքերն ավելի շատ, քան թե իմ անձնա-

կան կարծիքը եւ դիրքորոշումը: Թո՛յլ տվեք ձեր ուշադրությունը գրավել երեք յուրահատուկ փաստի վրա.

1. Այս խաբեբաները Աստծո ժողովրդի մեջ են:

2. Նրանք այն տղամարդիկ եւ կանայք են, որոնք ինչ-որ ժամանակ ճանաչեցին արդարության ճանապարհը, բայց մոռացել են այն:

3. Նրանք աստվածապաշտության կերպարանք ունեն, բայց նրանց դրդապատճառը միայն իրենց «ես»-ին ծառայելն է:

Նրանց աստվածը իրենց ստամոքսն է, եւ նրանց փառքը իրենց ամոթի մեջ է: Նրանց սրտերը վարժված են ագահության:

Ինչպե՞ս կարող ենք նրանց ճանաչել: Դատելով նրանց պտուղներից:

Եթե մի մարդ պարզապես մեղք է գործում, պարտադիր չէ, որ նա կոչվի խաբեբա: Դավիթ թագավորը շնություն գործեց մի կնոջ հետ եւ սպանեց նրա ամուսնուն: Բայց երբ Նաթան մարգարեն հանդիմանեց Դավթին, նա ընկավ դեմքի վրա եւ ապաշխարեց: Աստվածաշունչն ասում է, որ Դավիթ թագավորը Աստծո սրտի համեմատ մարդ էր: Ակնհայտ է. Աստված տեսավ, որ Դավիթը ապաշխարության արժանի պտուղ բերեց, ու դատեց նրա սիրտը եւ ոչ թե արարքները:

Մյուս կողմից, Սավուղ թագավորը միայն խնայեց որոշ ոչխարների, եզների եւ Ամաղեկի թագավորին: Երբ Սամուել մարգարեն հանդիմանեց Սավուղին, նա ասաց. «Մեղք գործեցի. աղաչում եմ՝ հիմա ժողովրդի ծերերի առաջ ու Իսրայելի առաջ ինձ պատվիր...» (Ա Թագ. 15.30):

Սավուղին թվում էր, որ ինքը մեղք չի գործել Աստծո դեմ, նա ուզում էր վստահ լինել, որ այդ անհաջողությունը չէր փոխելու իր դիրքը ծերերի եւ ժողովրդի աչքերի առջեւ: Նրան բացարձակ չէր մտահոգում իր փոխհարաբերությունը Աստծո հետ: Նա ծառայում էր միայն իր սեփական շահերին:

Եթե մենք այս երկու մարդկանց որակավորենք միայն մեղքերի

տեսանելի դրսեւորումներով, ապա Դավթին կհամարենք անբարոյական մարդ, իսկ Սավուղին կհամարենք այդ պահին սխալվող մարդ: Դատելով միայն արտաքին չափանիշներով՝ մենք կսխալվենք: Աստված մերժեց Սավուղին, բայց հաստատեց Դավթի թագավորությունը: Աստված չի նայում մեր արարքներին (ինչ տեսանելի է մարդուն), Նա նայում է մեր սրտերին:

Պտուղը սրտից է ելնում: Ոչ մի մարդ չի կարող ուրիշի սիրտը իմանալ: Մենք հազիվ թե գիտենք ինքներս մեզ: Բայց մենք կարող ենք տարբերել պտուղը: Արտաքինից մարդը կարող է ձգտել լինել քո ընկերը, բայց ներսում նա կարող է առաջնորդվել ուրիշ դրդապատճառներով՝ ուղղակի օգտագործել քեզ: Այս ամենի բանալին սրտի դրդապատճառն է, որը մենք հայտնաբերում ենք անապատում:

Կրկին ցանկանում եմ ձեզ զգուշացնել. տարբերելը կասկածելը չէ: Վախը դրդում է կասկածանքի (այսինքն՝ ինչ կպատահի, կամ ինչպես դա կազդի ինձ վրա): Վախն Աստծուց չէ, այդ պատճառով էլ այսպիսի «զանազանումը» հաճախ ճիշտ չէ: Ճշմարիտ զանազանումը արդյունք է ուրիշների եւ նրանց բարեկեցության համար հոգ տանելուն: Այն իր մեջ չի ներառում ծածուկ նպատակներ կամ քննադատական հոգի: «Եվ սա աղոթք եմ անում, որ ձեր սերն էլ ավելի հարստանա գիտությունով... » (Փիլիպ. 1.9): Կատարյալ սերը վանում է վախը եւ ստեղծում է մի մթնոլորտ, որտեղ հնարավոր է տարբերել եւ ոչ թե կասկածել:

Հիսուսը տարբերում եւ հանդիմանում էր փարիսեցիների չարությունն ու կեղծավորությունը, մինչդեռ այնքան շատ սիրեց նրանց, որ մեռավ նրանց համար: Այդ պատճառով, եթե դուք ճիշտ եք տարբերում, ավելի շուտ կսկսեք աղոթել, քան բամբասել: Աստված նույնիսկ կարող է առաջնորդել ձեզ այդ մարդու մոտ: Որպեսզի իմանաք՝ արդյոք Աստծուց է այդ առաջնորդությունը, ստուգե՛ք ձեր դրդապատճառները: Դուք ցանկանում եք դա անել, որպեսզի ցույց տաք նրանց, թե որքան հոգեւո՞ր եք դուք: Թե՞ ցանկանում եք, որ նրանք իմանան, թե որքան վրդովված եք դուք... Կամ ցանկանում

եք գնալ նրանց մոտ վերականգնման կամ ուղղմա՞ն համար, որպեսզի դրանով չվիրավորեք ուրիշներին... թե՞ աղոթում եք նրանց իմաստության համար, ովքեր հեղինակություն ունեն, որպեսզի դրանով նրանք կարողանան ճիշտ տարբերել: Պողոսն ասում է. «Այսուհետեւ, եղբայրնե՛ր, աղո՛թք արեք մեզ համար, որ Տիրոջ Խոսքն առաջանա եւ ամեն տեղ փառավորվի, ինչպես որ էլ ձեզ մոտ: Եվ որ փրկվենք անօրեն եւ անզգամ մարդկանցից... » (Բ Թեսաղ. 3.1,2):

Այժմ նայենք Մաղաքիայի գիրքը: Նախ Տերը կուղարկի Իր դեսպանին՝ մարգարեական օծությամբ զգուշացնելու եւ Աստծո ժողովրդին ապաշխարության կոչ անելու համար: Հետո Նա կգա Իր տաճար, որպեսզի սրբացնի նրանց, ովքեր ստացել են մարգարեական խոսք, որպեսզի նրանք կարողանան երկրպագել Իրեն ընդունելի ձեւով: Դրանից հետո Նա կդատի Իր ժողովրդի մեջ եղած ամբարիշտներին, որոնք մերժել են մարգարեական Խոսքի կամ օծության միջոցով Իր զգուշացումը:

Սկզբում Աստված զգուշացնում է, հետո մաքրում է եւ վերջում դատում: Ես հավատում եմ, որ այսօր հնչում է այդ զգուշացումը, եւ սրտերի մաքրման աշխատանք է սկսվում նրանց մոտ, ովքեր ընդունել են այդ զգուշացումը: Կարեւոր է նշել, որ մարգարեները չեն դատում, նրանք ուղղակի զգուշացնում են դատի մասին: Այդ պատճառով էլ մենք չպետք է վախենանք մարգարեությունից, այլ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դրան:

Մենք այս օրինակը պարզ կարող ենք տեսնել Ավետարաններում: Հովհաննես Մկրտիչը եկավ քարոզելու ապաշխարության մկրտություն եւ ժողովրդին զգուշացնելու գալիք դատաստանից:

«Եվ երբ նա տեսավ, որ փարիսեցիներից ու սադուկեցիներից շատերը գալիս էին իր մկրտությանը, ասաց նրանց. «Իժի՛ զավակներ, ո՞վ ցույց տվեց ձեզ փախչել այն գալու բարկությունից: Արդ ապաշխարության արժանի պտուղ արեք: Եվ մի՛ կարծեք ասել ձեր մեջ մենք հայր ունենք Աբրահամին, որովհետեւ ասում եմ ձեզ, թե Աստված կարող է այս քարերից որդիներ հարուցանել Աբրահամի հա-

մար: Արդեն կացինն էլ ծառերի արմատին դրված է, արդ ամեն ծառ, որ բարի պտուղ չի բերում, կկտրվի ու կրակի մեջ կգցվի: Ես ջրով եմ մկրտում ձեզ ապաշխարության համար, բայց իմ ետեւից եկողը ինձանից զորավոր է, որի կոշիկները վեր առնելու ես արժանի չեմ: Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով եւ կրակով, որ հոսելին Նրա ձեռքին է, եւ Նա կսրբի Իր կալը եւ Իր ցորենը կհավաքի շտեմարանը, իսկ հարդը կայրի անանցանելի կրակով» (Մաթ. 3.7-12):

Հովհաննեսը զգուշացրեց, որ դատաստանը գալու է, եթե չլինի ճշմարիտ ապաշխարություն: Նա ասաց, որ ճշմարիտ ապաշխարությունը լավ պտուղ կբերի, իսկ եթե չկա ապաշխարություն, չի լինի նաեւ փոփոխություն: Եթե ապաշխարությունը անկեղծ չէ, կացինը կկտրի արմատը՝ պտղի կյանքի աղբյուրը, որը մեր սիրտն է: Այդ կացինը կկտրի Նրա խաղողի որթը: Հիսուսը զգուշացնում էր. «Ո՛չ, ասում եմ ձեզ, այլ եթե չապաշխարեք, ամենքդ էլ այնպես կկորչեք»: Այս առակն էլ ասաց. «Մի մարդ իր այգու մեջ մի թզենի էր տնկել եւ եկավ նրա վրա պտուղ որոնելու եւ չգտավ: Եվ այգեպանին ասաց. «Ահա երեք տարի է, որ գալիս եմ պտուղ որոնելու այդ թզենու վրա եւ չեմ գտնում, կտրի՛ր դրան, ինչո՞ւ դա երկիրն էլ խափանի»: Նա էլ պատասխանեց եւ ասաց. «Տեր, այս տարի էլ թող դրան մինչեւ որ դրա չորս կողմով փորեմ եւ աղբ ածեմ: Թերեւս պտուղ բերի, ապա թե ոչ, եկող տարի կտրիր դրան»» (Ղուկ. 13.5-9):

Հովհաննես Մկրտիչը նրանցից մեկն էր, որ փորում էր ծառերի շուրջը եւ սնուցում դրանք: Նա փխրեցրեց հողը, փափկեցրեց այն մաքրելու համար: Նա այնպես էր սիրում մարդկանց, որ զգուշացրեց նրանց եւ ասաց ճշմարտությունը: Հովհաննեսը մեծ մարդ էր Աստծո աչքերում (Ղուկ. 1.15): Մի բան է՝ լինել մեծ մարդկանց աչքերում, այլ բան է՝ լինել մեծ Աստծո աչքերում:

Քանի որ Հովհաննեսը ավելի շատ վախենում էր մերժված լինել Աստծուց, քան մարդկանցից, նա կարողանում էր խոսել ճշմարտությունը: Սուտ վկայությունը կեղծում է մարդուն, ճշմարիտ վկայությունը ասում է ճիշտը՝ չվախենալով մերժված լինելուց:

Հետո Հովհաննեսը եւս մի օրինակ է բերում: Նա ասում է, որ հոսելին Հիսուսի ձեռքին է, եւ Նա կմաքրի Իր կալը: Ես ուզում եմ նշել, որ Հիսուսը ուշադրությամբ կմաքրի Իր տաճարը: Ոչինչ չի կարող թաքնվել Նրանից: Ահա թե ինչու Նա կարող էր նայել հրեաներին եւ ասել. «Եթե չապաշխարեք, բոլորդ կդատապարտվեք»:

Օ՜, մարդի՛կ: Փոփոխությունները պետք է գան Եկեղեցի: Շատ հաճախ են մեր դրդապատճառները սխալ լինում: Մենք ասում ենք, որ Տիրոջ համար ինչ-որ բան ենք անում, այնինչ իրականում անում ենք այն, ինչ մեզ է օգուտ: Եկեղեցին հազվադեպ է բարեխոսում հառաչելով եւ ողբալով ներսի անօրինությունների վրա: Մեր զգացմունքները բթացել են, այն դեպքում, երբ թշնամին շարունակում է լափել եւ կուլ տալ: Մենք մտածում ենք, որ հարուստ ենք եւ ոչնչի կարիք չունենք, բայց իրականում կույր ենք եւ չենք տեսնում մեր իսկական վիճակը (Հայտն. 3.15-17): Նույնիսկ այսօր Աստված մեզ Իր զգուշացումն է ուղարկում եւ մաքրման ընթացքն է անցկացնում: Փոփոխությունը պետք է գա Եկեղեցի, եւ դա, իրոք, կգա: Դա պետք է սկսվի Եկեղեցու առաջնորդներից, ոչ միայն եկեղեցու պատերի ներսում, այլեւ նրանց տներում: Փոփոխությունը պետք է կատարվի հայրերի հետ: Պետք է հեղափոխություն կատարվի մեր մտքերում եւ կյանքերում: Մեր եկեղեցու հայրերի եւ առաջնորդների սրտերը պետք է դառնան երեխաներին եւ ժողովրդին:

Աստված Իր ժողովրդի մեջ բացահայտում է չարերին եւ խաբեբաներին: Նա նրանց է դատելու եւ ոչ թե մարգարեներին: Հովհաննես Մկրտիչը զգուշացնում էր դատաստանի մասին: Հիսուսը սրբեց Տաճարը՝ մաքրելով այն, իսկ որոշ ժամանակ անց Աստված դատեց եւ քանդեց այն:

ԳԼՈՒԽ 11

ՄԱՔՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բնավորությունն է, որ մեզ դարձնում է Աստծո մարդ, եւ ոչ թե օձությունը:

«Որ նրանով կուրախանաք, թեեւ հիմա, ինչպես որ հարկը պահանջում է, մի քիչ տրտմած եք կերպ-կերպ փորձանքների մեջ, որ ձեր հավատքի փորձառությունն ավելի պատվական գտնվի, քան կորստյան ոսկին, որ կրակով է փորձվում, գովության պատվի եւ փառքի համար Հիսուս Քրիստոսի հայտնությունում»:

Ա Պետր. 1.6,7

Պետրոսը ցույց է տալիս, թե ինչպես են փորձությունները տանում մաքրման: «Տրտմություն» հունարեն՝ lupeo բառը նշանակում է «վիշտ, տխրություն»: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ տրտմության ժամանակ մեր սրտերը մաքրվում են:

«Սա իմացիր, որ հետի օրերում չար ժամանակներ (տրտմության ժամանակներ) կգան: Որովհետեւ մարդիկ կլինեն ինքնասեր, արծաթասեր, ամբարտավան, հպարտ, հայհոյիչ, ծնողներին անհնազանդ, ապերախտ, անսուրբ, անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժան, անբարեսեր, մատնիչ, հանդուգն, գոռոզ, ավելի ցանկասեր, քան թե աստվածասեր, որ աստվածապաշտության կերպարանք ունեն, բայց Նրա զորությունն ուրացած են... Այլ ինչպես որ Հանեսն ու Համրեսը Մովսեսին հակառակ կանգնեցին, այնպես էլ սրանք են հակառակ կանգնում ճշմարտությանը, մարդիկ՝ մտքով ապականված, անպիտան՝ հավատքի համար: Բայց ավելի չեն առաջանա, որ

սրանց անմտությունն ամենին հայտնի կլինի, ինչպես նրանցն էլ եղավ: Բայց դու հետեւեցիր իմ վարդապետությանը, վարմունքին, դիտավորությանը, հավատքին, երկայնամտությանը, սիրուն, համբերությանը, հալածանքներին, չարչարանքներին, ինչպես որ եղան ինձ Անտիոքում եւ Իկոնիոնում եւ Լիստրայում, ինչպիսի հալածանքների համբերեցի, եւ ամենիցն ինձ ազատեց Տերը: Եվ ամենը, որ կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսումը, հալածանք պիտի կրեն: Բայց չար եւ խաբեբա մարդիկ առաջ կգնան չարության մեջ՝ մոլորեցնելով եւ մոլորվելով» (Բ Տիմոթ. 3.1-5, 8-13):

Արդյո՞ք այս խոսքը արտացոլում է աշխարհի դրությունն այսօր: Իհարկե: Փաստորեն, սա հնչում է որպես օրաթերթերի խորագիր: Ցավոք, սա նաեւ ճշգրիտ կերպով նկարագրում է Եկեղեցու վիճակը: Ուշադրություն դարձրեք, այս խոսքերի սկզբում ասվում է, որ վերջին օրերին «չար ժամանակներ» պիտի գան: Տրտմության այդպիսի ժամանակները մասամբ կգան խաբեբաների պատճառով, որ ունեն աստվածապաշտության կերպարանք եւ ոչ թե պտուղներ:

Կարեւոր է նկատել, որ օծությունը դեռեւս մարդու կյանքի հանդեպ Աստծո հավանության նշանը չէ: Պողոսը հորդորում էր Տիմոթեոսին՝ հետեւել իր կյանքի օրինակին: Նա գիտեր, որ Տիմոթեոսի կյանքում դա պտուղ կբերի, որի արդյունքում էլ նա կունենա եւ՛ օծություն, եւ՛ ծառայություն, որպեսզի կատարի Աստծո տված հանձնարարությունը: Նկատեք, չնայած Աստված Պողոսի ձեռքով հրաշքներ եւ բժշկություններ էր կատարում, առաքյալը կարեւոր չէր համարում, որ Տիմոթեոսն էլ պիտի հետեւի եւ ձգտի դրան: Նա հորդորում էր Տիմոթեոսին հետեւել իր օրինակին՝ բնավորություն ձեւավորելու հարցում, որն էլ կհաստատվեր Հոգու պտուղներով: «Բայց Հոգու պտուղն է սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն... այսպիսիների դեմ օրենք չկա» (Գաղատ. 5.22,23):

Տրտմության աղբյուրներից մեկը կլինեն խաբեբաները, որոնք կվարվեն այնպես, ինչպես գրված է Տիմոթեոսի երկրորդ ուղերձի 3.2-

4-ում: Տրտմության այլ աղբյուրներ կլինեն չար մարդիկ եւ աշխարհիկ համակարգերը: Նրանք (խաբեբաները) աստվածապաշտության կերպարանք կունենան, եւ, ինչպես ասում են՝ «հենց այնպես խոսում են», իսկ ոմանց նույնիսկ կհետեւեն գերբնական նշանները: Բայց նրանց սրտերը Աստծո եւ Նրա ժողովրդի հետ չեն, այլ իրենց եւ իրենց հետաքրքրությունների հետ:

Ուշադրություն դարձրեք, թե Պողոսն ինչ է ասում այս հատվածում. «Եվ բոլորը, որ կուզեն աստվածապաշտությամբ ապրել Հիսուս Քրիստոսով, հալածանք պիտի կրեն»: Հալածանքները մաքրման ընթացքի մասն են կազմում: Որտեղի՞ց կգան հալածանքները: Խաբեբաներից, ովքեր գաղտնի մտել են Աստծո ժողովրդի մեջ: Ահա թե ինչու է Պողոսն ասում Մովսեսի դեմ ապստամբող Հանեսի եւ Համրեսի մասին: Նրանք Աստծո ժողովրդի միջից էին, ոչ թե դրսից:

Պողոսը նկարագրում է իր հալածանքներից եւ վտանգներից մի քանիսը, որ պատահել են իր հետ ծառայության ժամանակ, եւ ասում է մեզ, որ որոշ դժվարություններ եղել են «սուտ եղբայրներից» (Բ Կորնթ. 11.26):

Մաքրման այս ընթացքը կարող է գալ այն մարդկանց կողմից, ովքեր ժամանակին հետեւել են Աստծուն, բայց հետո ուրացել են Տիրոջը: Միգուցե նրանք դեռեւս պահում են աստվածապաշտության կերպարանքը եւ իբր «տեղին են խոսում», բայց նրանց սրտերը տրված չեն Տիրոջն ամբողջովին, այլ պատկանում են հենց իրենց:

Տեսեք, թե ինչն է տխրեցնում Դավթին. «Իմ սիրտը դողաց ինձանում, եւ մահի սարսափը ընկավ ինձ վրա: Վախ ու դող եկավ ինձ վրա, եւ սոսկում ծածկեց ինձ... Որովհետեւ եթե թշնամին ինձ նախատինք տար, կհամբերեի, եւ եթե ատողը պարծենար ինձ վրա, կթաքչեի նրանից: Բայց դու ինձ հավասար մարդ ես՝ իմ սրտակիցը եւ իմ բարեկամը, որ մենք իրար հետ քաղցրությունով խորհուրդ էինք անում եւ Աստծո տունն էինք գնում... Իրիկունն ու առավոտը եւ կեսօրին ողբում եմ եւ հառաչում, եւ Նա կլսի իմ ձայնը» (Սաղմ. 55.4,5,12-14,17):

Աստված ընտրել էր Դավթին՝ լինելու թագավոր: Նա օծվել էր Սամուել մարգարեի կողմից իր ընտանիքի եւ բարեկամների առջեւ: Աստծո բարեհաճությամբ շրջապատված՝ Դավիթը հովվից դարձավ Սավուղ թագավորի օգնականը: Նա Գողիաթին պատերազմի կանչեց, հաղթեց Իսրայելի թշնամիներին եւ ամուսնացավ Սավուղ թագավորի դստեր հետ: Նա իր համար պատվավոր տեղ գտավ թագավորական սեղանի մոտ եւ մի սենյակ՝ պալատում: Հովնաթանը՝ թագավորի տղան, դարձավ նրա մտերիմ ընկերը: Դավիթը ուղեկցում էր Սավուղ թագավորին, երբ նա գնում էր պատերազմի: Նրան թվում էր, թե գահ բարձրանալու մարզման ընթացքը գրեթե ավարտված է: Ինչին նա դիպչում էր, հաջողություն էր ունենում: Դավիթը ամեն բան ճիշտ էր անում, մինչեւ որ... ժողովուրդը սկսեց նրան համեմատել թագավորի հետ՝ տալով գերազանցությունը Դավթին: Քանի որ Աստծո ձեռքը նրա կյանքի վրա էր, կանայք երգում էին. «Սավուղն իր հազարավորներին զարկեց, եւ Դավիթն՝ իր բյուրավորներին... » (Ա Թագ. 18.7): Այդ ժամանակ բացահայտվեց Սավուղ թագավորի իսկական էությունը, որն արտահայտվեց բարկությամբ եւ նախանձով: Նա սիրում էր Դավթին, քանի դեռ նա պետքական էր իր թագավորության համար, բայց այժմ նրա մեջ սպառնալիք էր տեսնում: Իր գահը պահելու համար նա փորձում է սպանել Դավթին: Սավուղը սպառնում է նրան գեղարդով եւ ողջ բանակն ուղարկում է Դավթի եւթեւից, որպեսզի գտնեն եւ սպանեն նրան: Տասնվեց տարի նա հետապնդում էր Դավթին անապատում: Դավիթը երեւի շատ էր մտածել. «Ո՞րն է իմ սխալը»: Ես համոզված եմ, որ նա վիրավորված էր Սավուղի վերաբերմունքից: Նա սիրում էր Սավուղին եւ հիացած էր նրանով, բայց այժմ Աստված Սավուղ թագավորի խենթությունն օգտագործում էր, որպեսզի մաքրեր Դավթին:

Դուք կարող եք ասել. «Սավուղին էլ էր Սամուելը օծել»: Այո՛, նա օծված էր Տիրոջից: Բայց օծությունը դեռեւս Աստծո հավանությունը չէ: Երիտասարդ ժամանակ նա խոնարհ մարդ էր: Բայց ինչպես պատահում է շատ մարդկանց մոտ, ովքեր ամբողջությամբ չեն

մաքրվել եւ խոնարհվել, հաջողություն կամ իշխանություն ստանալու դեպքում բացահայտվում է նրանց սրտերի ճշմարիտ էությունը: Բնավորությունն է, որ մեզ դարձնում է Աստծո մարդ եւ ոչ թե օձությունը: Աստվածաշնչում եւ ողջ պատմության ընթացքում շատերն են պարտվել, որովհետեւ ձգտել են միայն հաջողության հասնել՝ չջանալով դրա հետ մեկտեղ ձեւավորել իրենց մեջ բնավորություն, որն անհրաժեշտ է ստեղծածը պահպանելու համար: Այս բնավորությունը Հոգու պտուղ է, պտուղը ձեւավորվում է, իսկ պարգեւները տրվում են: Որպեսզի պտուղ ստանանք, ժամանակ է հարկավոր: Բայց նախքան մի բան աճեցնելը սերմը պետք է ցանվի հողի մեջ եւ մեռնի ինքն իր համար: Իսկ պարգեւները տրվում են, եւ դրանք աճեցնել պետք չէ: Պարգեւները կարող են տրվել մի ակնթարթում: Ուրեմն մի՛ խաբվեք: Հիսուսն ասել է, որ մենք կճանաչենք Աստծո ճշմարիտ մարդուն իր պտուղներից, ոչ թե պարգեւներից: Աստված հավանություն է տալիս անձնական կյանքին, որն ունի Հոգու պտուղ եւ ոչ թե Հոգու պարգեւներ:

Անապատում մարդը մաքրվում է, եւ նրա մեջ սկսում է զարգանալ Աստծո բնավորությունը: Աստծո մարդը ձեւավորվում է տանջանքների եւ հալածանքների հնոցում: Հռոմեացիների 5.3,4-ում ասվում է. « ...նաեւ նեղությունների մեջ կպարծենանք (կուրախանանք), որովհետեւ գիտենք, թե նեղությունը համբերություն կգործի, եւ համբերությունը՝ փորձառություն, եւ փորձառությունը՝ հույս»: Աստված հավանում էր Դավթի կյանքը, որովհետեւ Դավիթը Աստծո սիրտն էր փնտրում եւ ոչ թե թագավորություն: Սավուղ թագավորը երբեք չանցավ անապատով, որտեղ մաքրվում եւ սրբվում են, հետեւաբար, նա չխոնարհվեց եւ կորցրեց ապահովությունը: Դավիթն անցավ անապատով, եւ Աստված օգտագործեց Սավուղ թագավորին, որպեսզի Դավթին ուղարկի այնտեղ:

Եվս մի գործիք, որն Աստված օգտագործում է Իր ծառաներին մաքրելու համար. դա մարմնական կամ անհասուն ընկեր քրիստոնյաներն են կամ ընտանիքի անդամները: Դրա դասական օրինակ

կարող են լինել Հովսեփի փոխհարաբերությունները իր եղբայրների հետ. «Եվ Իսրայելն (Հակոբը) իր բոլոր որդիներից ավելի սիրում էր Հովսեփին, որովհետեւ նա իր ծերության որդին էր, եւ թեւքերով պատմուճան շինեց նրա համար: Եվ նրա եղբայրները տեսան, որ իրենց հայրը սիրում էր նրան իր բոլոր եղբայրներից ավելի, ատեցին նրան եւ խաղաղությամբ չէին կարողանում խոսել նրա հետ: Եվ Հովսեփը մի երազ տեսավ եւ իր եղբայրներին պատմեց, եւ նրանք ավելի ատեցին նրան» (Ծնն. 37.3-5):

Հովսեփի եղբայրները, որոնք (Հովսեփի հետ միասին) Իսրայելի տասներկու նախահայրերն էին, նախանձեցին իրենց եղբորը: Երազում Հովսեփը տեսավ, որ իր հայրը, մայրը եւ տասնմեկ եղբայրները խոնարհվեցին իրեն: Դրա մասին նա պատմեց իր եղբայրներին, եւ դա ավելի բորբոքեց նրանց ատելությունը:

Նրա եղբայրները գնացին դաշտ՝ հոտերն արածեցնելու: Որոշ ժամանակ անց Հակոբը ուղարկեց Հովսեփին՝ տեսնելու, թե ինչ են անում եղբայրները. «Եվ երբ նրան հեռվից տեսան, դեռ ինքը նրանց չմոտեցած՝ դավաճանություն արին՝ նրան սպանելու, եւ իրար ասացին. ահա այն երազ տեսնողը գալիս է, եւ հիմա եկեք սպանենք նրան եւ գուբերի մեկի մեջ գցենք ու ասենք, թե մի չար գազան կերել է նրան, եւ տեսնենք՝ նրա երազները ինչ կլինեն» (Ծնն. 37.18-20): Նրանք նախանձում էին Հովսեփին եւ փորձում էին եւ պահել նրան Աստծո կոչումն իր կյանքում իրականացնելուց՝ չհասկանալով, որ Աստծո գործիք են հանդիսանում մարգարեության իրականացման համար:

Մեկ անգամ Աստված ինձ ասաց. «Որդի՛ս, ոչ մարդը, ոչ սատանան երբեք չեն կարող քեզ պահել Իմ կամքը կատարելուց, քանի դեռ դու հնազանդ ես ինձ: Միայն դու ինքդ կարող ես դուրս գալ Իմ կամքից»: Այն, ինչ չարացած եղբայրներն արեցին Հովսեփին սպանելու համար, Աստված օգտագործեց նրա երազներն իրականացնելու համար: Երբ նրանք իրենց հարազատ եղբորը նետեցին խոր գուբի մեջ եւ նստեցին հաց ուտելու, մի խումբ իսմայելացինե-

րի տեսան, որ գնում էին Եգիպտոս:

«Եվ Հուդան ասաց իր եղբայրներին. «Ի՞նչ օգուտ, եթե մեր եղբորը սպանենք եւ նրա արյունը ծածկենք: Եկեք իսմայելացիներին ծախենք նրան, եւ մեր ձեռքը նրան չդիպչի, որովհետեւ նա մեր եղբայրը՝ մեր մարմինն է, եւ նրա եղբայրները լսեցին»: Եվ մադիանացի վաճառականները անցնում էին եւ Հովսեփին գուբից քաշեցին ու դուրս հանեցին եւ իսմայելացիներին ծախեցին Հովսեփին քսան արծաթի: Նրանք էլ Հովսեփին տարան Եգիպտոս» (Ծնն. 37.26-28):

Հովսեփին տարան Եգիպտոս եւ վաճառեցին Պետափրեսին՝ փարավոնի զորապետին: Հիմա նա սրրուկ էր օտար տան մեջ: Աստված Հովսեփի հետ էր, եւ պատանին հաճելի երեւաց տիրոջ աչքին: Հենց Հովսեփի դիրքը Պետափրեսի տանը ամրացավ, Պետափրեսի կինը սկսեց սիրահետող հայացք նետել նրան եւ ցանկացավ քնել նրա հետ: Բայց Հովսեփը մերժեց. «Ինչպե՞ս կարող եմ այդ մեծ չարությունն անել եւ մեղք գործել Աստծո առջեւ»: Սակայն մի օր, տանը նրա հետ մենակ մնալով, Պետափրեսի կինը բռնեց Հովսեփի հանդերձից եւ պահանջեց, որ պառկի իր հետ: Հովսեփը փախավ տնից՝ թողնելով իր հագուստը: Բարկանալով կինն ասաց իր ամուսնուն, որ Հովսեփը փորձել է բռնաբարել իրեն: Այդ ժամանակ Պետափրեսը Հովսեփին գցեց փարավոնի բանտը: Հովսեփը հսկում էր Պետափրեսի տունը: Նրա տանը նա հավատարիմ կառավարիչ էր՝ բարգավաճում բերելով ամեն ինչում: Թվում էր, որքան շատ էր Հովսեփը հետեւում Աստծուն, այնքան վատթարանում էր նրա վիճակը: Ինչ-որ տեղ դա իր եղբայրների մեղքն էր. նրանք իրեն վաճառեցին Եգիպտոս՝ ստրկության: Սա էլ հենց Հովսեփի անապատն էր: Աստծո երազը եւ Հակոբի հաճությունը այժմ հեռու էին թվում: Հովսեփի չարանալու համար դա հիանալի հնարավորություն էր: Նա կարող էր իր տարիներն անցկացնել Եգիպտոսում՝ մտածելով ինչպես վրեժ լուծի եղբայրներից: Այդ ժամանակահատվածը գրեթե 15-17 տարի տեւեց: Նա այլեւս ոչ մի հույս չուներ: Ինչպե՞ս կարող էր իրականանալ իր երազը: Բայց Հովսեփը մարզման ընթացքի մեջ էր, որ-

պեսզի դառնար Տիրոջ անոթը: Ուրիշները նույնիսկ ոչ այսքան դժվար դրության մեջ կասեին. «Ես այս անջուր վայրում եմ իմ հովվի, ընտանիքի կամ ընկերների պատճառով: Նրանք են մեղավոր, որ ես չեմ կատարում Աստծո կանչն իմ կյանքում»: Բայց ինչպե՞ս է Աստված գնահատում Հովսեփի իրավիճակը. «Նրանց առաջից մարդ ուղարկեց. Հովսեփը ծառայության մեջ ծախվեց: Չարչարեցին նրա ոտքերը կապանքի մեջ. նրա անձը երկաթի մեջ մտավ, մինչեւ այն ժամանակ, որ Նրա խոսքը եկավ. Տիրոջ խոսքը փորձեց նրան» (Սաղմ. 105.17-19):

Տերն ասաց, որ Ինքն անձամբ Հովսեփին ուղարկեց եղբայրների մոտ: Աստված նրա եղբայրների բարկությունը օգտագործեց Հովսեփին մաքրելու համար, որպեսզի նա կարողանար իրականացնել երազը եւ դառնար այն ղեկավարը, որն օգնեց Եգիպտոսի ժողովրդին եւ իր ընտանիքին՝ չկորչել սովի տարիներին: Հենց այն ժամանակ, երբ Հովսեփը բանտում էր եւ տանջվում էր, Աստծո խոսքն այցելեց նրան:

Այստեղ անհրաժեշտ է ձեր ուշադրությունը սեւեռել մի շատ կարեւոր փաստի վրա. պետք չէ, որ ինքներդ անապատ որոնեք. Աստված Ինքը ձեզ այնտեղ կտանի: Հենց անապատում է Աստված փորձում (մաքրում) ձեզ: Ուշադրություն դարձրեք, թե ինչ է ասվում սաղմոսում. «Մինչեւ այն ժամանակ, երբ Նրա խոսքը եկավ. Տիրոջ խոսքը փորձեց (մաքրեց) նրան»:

Միգուցե Աստված երազներում կամ տեսիլքներում ձեզ հայտնել է ձեր կոչումը: Միգուցե Նա ձեզ ասել է, թե ինչ ծրագրեր ունի ձեր կյանքի համար: Սակայն թվում է, թե որքան շատ եք որոնում Տիրոջը եւ հնազանդ եք Նրա խոսքին, այնքան ավելի եք հեռանում այն երազանքից, որ Նա է դրել ձեր սրտում: Միգուցե դուք հետեւել եք, թե ինչպես են ուրիշներն առաջ գնում իրենց ծառայության մեջ (կամ կյանքի ցանկացած այլ ոլորտում) այն դեպքում, երբ, ինչպես ձեզ է թվում, դուք գնում եք հակառակ ուղղությամբ այն երազանքից, որն Աստված է տվել ձեզ: Միգուցե ողջ ուժով փորձում եք

ամեն բան ճիշտ անել: Մյուսները ձեր կողքին կարող են մնալ մարմնի իշխանության տակ եւ չորոնել Տիրոջը, բայց նրանք ամեն ինչում բարգավաճում են եւ առաջ են գնում: Նրանք ֆինանսական եւ նյութական «օրհնություններ» են ստանում: Միգուցե ձեր շուրջը կան մարդիկ, ովքեր բարձր դիրք են գրավում կեղծավորության կամ մանիպուլյացիայի շնորհիվ: Նրանք կարող են անարդարացի վարվել, սուտ խոսել, եւ քեզ թվում է, թե նրանք «օրհնված» են, իսկ դուք փարավոնի բանտում եք՝ կապանքներով շղթայված: Ի՞նչ եք մտադիր անել: Կբողոքե՞ք: Տեսեք, թե ինչ է ասում Աստված այս մասին. «Ձեր խոսքերը ծանր են Ինձ դեմ, - ասում է Տերը, բայց դուք ասում եք՝ մենք ինչ ենք խոսում դեմ: Դուք ասում եք՝ դատարկ է Աստծուն ծառայելը, եւ ինչ օգուտ, որ մենք Նրա պահպանությունները պահել ենք եւ սուգով վարվեցինք զորաց Տիրոջ առաջ: Եվ հիմա մենք երանում ենք գոռոզներին եւ բարեշեն էլ են անօրինություն անողները, մինչեւ անգամ Աստծուն էլ փորձում են եւ պրծնում» (Մաղաքիա 3.13-15):

Ի՞նչ են ասում այստեղ դժգոհողները: Նրանք ասում են. «Ի՞նչ օգուտ կա Աստծուն հնազանդ լինելուց, եթե մենք ոչինչ չենք շահում: Ամբարիշտներն են բարգավաճում, ոչ թե մենք» (սա իմ ձեւակերպումն է): Աստված սա բամբասանք է անվանում եւ համարում է Իր դեմ ուղղված ելույթ: Միանգամայն պարզ է, որ սա տրտունջ է եւ դժգոհություն: Աստված տեսնում է, թե ովքեր են ձգտում փոխհարաբերություններ ունենալ Իր հետ, եւ ովքեր են ուղղակի իրենց շահը որոնում: Այն, ինչ ոմանք օրհնություն են կոչում, եւ այն, ինչ իրականում օրհնություն է, միանգամայն երկու տարբեր բաներ են: Եթե ձեր սրտի դիրքը սխալ է, ապա օրհնությունները երկար չեն տեւի: Տեսեք, թե ինչպես է Տերը վարվում հպարտների (եւ նրանց օրհնությունների) հետ. «Եվ արդ ձեզ համար է այս պատվերը, ո՛վ քահանաներ: Եթե չլսեք եւ ուշադրություն չանեք, որ Իմ անվանը պատիվ տաք, - ասում է Զորաց Տերը, այն ժամանակ Ես ձեր մեջ կուղարկեմ անեծքը եւ կա-

նիծեմ ձեր օրհնությունները: Այո՛, Ես արդեն անիծել եմ նրանց, որ դուք ուշ չեք դարձնում» (Մաղաքիա 2.1,2):

Մեր ժառանգությունը ինչ-որ բան կամ ինչ-որ դիրք չէ: Մեր ժառանգությունը Տերն է: Եզեկիել 44.28-ում ասվում է. «Սա նրանց համար (մարգարեներին, ովքեր հավատարիմ են ծառայում Աստծուն) ժառանգություն լինի. Ես եմ նրանց ժառանգությունը, ու Իսրայելի մեջ նրանց կալվածք մի՛ տվեք. Ես եմ նրանց կալվածքը»: Եկեղեցում շատ հավատացյալներ հեռացրել են իրենց հայացքը ճշմարիտ ժառանգությունից, եւ փոխարենը իրենց աչքերը հառել են այլ բաների եւ դիրքի: Հնարավոր է, որ դրանք Աստված է տվել: Բայց այսպիսի հարաբերությունները նման են այն հոր եւ որդու հարաբերություններին, երբ որդին ավելի շատ հետաքրքրված է, թե հայրն ինչ կարող է տալ իրեն, քան նրա հետ փոխհարաբերություններ ունենալու մասին: Ես չորս որդի ունեմ, եւ ինձ դուր է գալիս նրանց նվերներ անել: Բայց իմ սիրտը կոտրված կլինի, եթե իմանամ, որ նրանք ուշադիր են իմ հանդեպ միայն նրա համար, որ ցանկանում են իրենց ուզածը ստանալ ինձանից: Տեսեք՝ ինչ է ասում Մաղաքիան. «Այն ժամանակ խոսեցին Տիրոջից վախեցողները իրար հետ, եւ Տերը ականջ դրեց ու լսեց, եւ հիշատակի գիրք գրվեց Նրա առաջ Տիրոջից վախեցողների համար եւ Նրա անունը պատվական համարողների համար» (Մաղաքիա 3.16):

Սա ասվում է նրանց մասին, ովքեր չեն որոնում դիրք, պատիվ կամ *«այլ բաներ»:* Նրանք փնտրում են Աստծո սիրտը: Նրանց մեջ վառվում է «Նրան անձամբ ճանաչելու» ցանկությունը: Դուք կարող եք նրանց հետ խոսել տարբեր բաներից, բայց նրանց սրտերը կվառվեն միայն այն ժամանակ, երբ խոսեք Տիրոջ մասին, եւ թե ինչ է Նա ասում: Նրանց մասին Ղուկասն ասում է. «Եվ իրար ասացին. «Չէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբ ճանապարհին մեզ հետ խոսում էր (Հիսուսը) եւ ինչպես Գրքերը բացում էր մեզ համար» (24.32): Նրանք ծարավ են Հոգու բաները հասկանալուն: Նրանք ասում են. «Ես ուղղակի ուզում եմ ճանաչել Աստծուն, ես

ուզում եմ, որ Նա գոհ մնա ինձանից, ես ծարավ եմ եւ ուզում եմ սնվել Տիրոջ Խոսքով: Ես ուզում եմ ուրախացնել Նրան, որովհետեւ Նա է իմ ուրախության աղբյուրը»: Սա է այն ամենը, ինչը նշանակություն ունի նրանց համար: Նրանց առաջին սերը Հիսուսն է, եւ ոչ թե ծառայությունը, անկախ նրանից, որտեղ են իրենք գտնվում՝ անապատում, թե քարոզում են միլիոնավորներին:

Այժմ մեզ հեշտ է տեսնել Սավուղ թագավորի եւ Դավիթ թագավորի տարբերությունը: Սավուղը ցանկանում էր գահը, Դավիթը՝ Տիրոջը: Երկուսն էլ փորձվեցին: Փորձության ժամանակ բացահայտվեցին նրանց սրտի իսկական դրդապատճառները: Երբ Դավթի որդին՝ Աբիսողոմը, դավադրություն կազմակերպեց հոր գահը վերցնելու մտադրությամբ, Դավիթն ի պատասխան ասաց. «Եթե Աստված ինձ թողել է, ապա թող Աբիսողոմը վերցնի գահը, բայց եթե ես Տիրոջ աչքերում ողորմություն գտնեմ, ապա Նա Ինքը կվերականգնի ինձ» (Բ Թագ. 15): Այժմ համեմատենք Սավուղի վարքը նման իրադրություններում: Երբ Սավուղը կասկածեց, որ Դավիթը հնարավորություն ունի գահը տիրելու, նա ավելի քան տասը տարի վատնեց՝ փորձելով պահպանել իր դիրքը՝ երեքհազարանոց բանակով հետապնդելով այդ երիտասարդին:

Ես օգտագործում եմ «վատնել» բառը, որովհետեւ մեր փորձերը ապարդյուն կլինեն, եթե փորձենք փախչել անխուսափելիից, այլ կերպ ասած՝ մեր կյանքում Աստծո ծրագրից: Սավուղը դիրք էր փնտրում եւ ոչ թե Աստծո սիրտը: Նա իր կյանքն ապրեց՝ պաշտպանելով իր «օրհնությունները»: Այս պատմության մեջ ամենատխուրն այն է, որ հենց Աստված էր դրել Սավուղին այդ գահին, բայց հետագայում Սավուղը ավելի շատ սիրեց այն, ինչ տրվել էր իրեն, քան Նրան, Ով տվել էր իրեն այդ ամենը:

Եկեք մեկ անգամ եւս տեսնենք, թե ինչ է ասում Մաղաքիան դրա մասին. «Եվ Իր առջեւ հիշատակի գիրք գրվեց Տիրոջից վախեցողների համար»: Տերը փնտրում է նրանց, ում սրտերը հավատարիմ են Իրեն նույնիսկ չոր ժամանակներում: Երբ գտնում է, նրանց

անունները եւ սրտերի աղաղակը գրում է Իր հիշատակի գրքում: Եվ նրանց տալիս է իրենց սրտի ուզածը: Սակայն, ինչպես նախկինում եմ ասել, մարմինը կամ կեղծիքը միշտ գալիս են սկզբում եւ հալածում ճշմարտությանը: Բայց մինչ անապատով անցնողին թվում է, թե Աստծո խոստումները չեն կատարվում, Աստված հավատարիմներին գրում է հիշատակի գրքում, քանի որ նրանց համար պատրաստված է աստվածային հանդիպում Իր հետ: Դա կլինի այն ՕՐԸ, երբ Նա կգա Իր տաճար՝ այն փառավորելու համար: Եսայի 60.7-ում ասվում է. « ...եւ Ես կփառավորեմ Իմ փառքի տունը»:

Ուշադրություն դարձրեք, որ դրա մասին խոսվում է նաեւ Մաղաքիա մարգարեի գրքում. «Որովհետեւ ահա գալիս է այն օրը, որ վառված է թոնրի պես, եւ բոլոր գոռոզներն ու չարագործները հարդի պես են լինելու, եւ նրանց պետք է այրի այն եկող օրը,- ասում է Զորաց Տերը, որ նրանց համար արմատ եւ ոստ պիտի չթողնի *(Հովհաննեսը եկեղեցուն էր զգուշացնում այն մասին, որ կացինը դրված է այն ծառերի արմատների մոտ, որոնք պտուղ չեն բերում):* Բայց ձեզ համար, որ Իմ անունից վախենում եք (սրանք այն մարդիկ էին, ովքեր հաճախ խոսում էին մեկը մյուսի հետ չորության ժամանակ) արդարության արեգակը պիտի ծագի (Հիշեք, Ովսեն ասաց. «Եկեք եւ դառնանք Տիրոջ մոտ, որ Նա պատառեց, ու Նա մեզ պիտի բժշկի: Նա զարկեց, ու Նա էլ կպատի մեզ») եւ բժշկություն պիտի լինի Նրա թեւերի վրա, եւ դուք դուրս պիտի գաք ու ոստնեք գոմի պարարտ որթերի պես եւ պիտի կոխ տաք ամբարիշտներին, որովհետեւ նրանք մոխիր պիտի դառնան ձեր ոտքերի թաթերի տակ այն օրը, որ Ես կանեմ, - ասում է Զորաց Տերը» (Մաղաքիա 4.1-3):

Եվս մեկ անգամ ուշադիր նայենք խոսքի վերջին հատվածը: Աստված ասում է, որ Տիրոջից վախեցողները կբարձրանան, կզորանան եւ կկոխկռտեն ամբարիշտներին, որովհետեւ նրանք (ամբարիշտները) մոխիր կլինեն արդարի ոտքերի տակ: Այս խոսքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել երկու կարեւոր պահի, որոնք կօգնեն

մեզ հասկանալ պատկերն ամբողջությամբ:

Առաջին՝ արդարության արեգակը պիտի ծագի նրանց վրա, ովքեր թույլ են տվել Աստծուն մաքրել իրենց: «Արդարության արեգակը» խորհրդանշում է հենց Աստծուն, Որը «մաշող կրակն» է: Եսայի 60.1-ում ասվում է. «Վե՛ր կաց, լուսավորվի՛ր, (Երուսաղեմ), որովհետեւ լույսդ եկել է, եւ Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա»: Տիրոջ փառքը մաշող կրակ է, որը կոչնչացնի ցանկացած հպարտություն կամ պղծություն Նրա ներկայության մեջ: Նկատեք, այստեղ ասվում է, որ «Տիրոջ փառքը *կծագի* քեզ վրա»: Ինչո՞ւ *կծագի*: Կորնթացիների երկրորդ ուղերձի 4.6,7-ում մենք գտնում ենք պատասխանը. «Որովհետեւ Աստված, որ ասաց, թե խավարից լույս ծագի, Ինքը մեր սրտերի մեջ ծագեցրեց Աստծո փառքի գիտության լուսավորությունը տալու համար Հիսուս Քրիստոսի դեմքում: Բայց մենք այս գանձն ունենք հողե անոթներում, որ զորության գերազանցությունը Աստծունը լինի եւ ոչ թե մեզանից»: Աստծո փառքը՝ հողե անոթներում: Ինչո՞ւ Աստծո փառքը չարտահայտվեց: Պատասխանը սա է. անոթները դեռեւս մաքրված չեն: Ինչպես նախորդ գլխից իմացանք, որտեղ խոսվում էր մաքրման մասին, Աստծուց մաքրված ոսկե անոթները թափանցիկ են: Մաղաքիան երկրորդ գլխում ասում է, որ Տերը կգա Իր տաճար ԿՐԱԿԻ պես եւ կմաքրի Իրենից վախեցողներին: Երբ նրանք դառնան մաքուր, այդ ժամանակ նրանցում կփայլի ԿՐԱԿԸ, քանի որ հիմա նրանք արդեն թափանցիկ անոթներ են: Այդ կրակը կուլ կտա նրաց շուրջ եղող հպարտությունն ու պղծությունը:

Երկրորդ՝ մենք պետք է գիտակցենք, որ մեր պայքարը մարմնի եւ արյան դեմ չէ, այլ դիվային ոգիների դեմ: Շատերը կտեսնեն իրենց կյանքում հպարտություն, պղծություն եւ կապաշխարեն: Բայց կլինեն նաեւ այնպիսիները, որ չեն ցանկանա ապաշխարել իրենց հպարտությունից եւ ամբարշտությունից: Քանի որ նրանք ավելի շատ սիրում են իրենց մեղքը, եւ երբ մեղքը դատապարտվի, նրանք կդատապարտվեն դրա հետ միասին: Նրանք ընտրել են իրենց եւ

ոչ թե Աստծո ճանապարհը: «Կա Ճանապարհ, որ ուղիղ է մարդու առաջ, բայց նրա վերջը մահվան ճանապարհներն են» (Առակ. 14.12): Ահա թե ինչու է Տերը դատաստանի համար Իր գալուց առաջ ուղարկում մարգարեներին, որպեսզի « ...ճանապարհը պատրաստեն... »: Նա ասաց, որ ամբարիշտները մոխիր կլինեն արդարների ոտքերի տակ: Մոխիրն այն է, ինչ մնում է ԿՐԱԿԻՑ հետո:

Այժմ նայենք, թե ինչ է ասում Եսայի մարգարեն. «Եվ այնպես պիտի լինի, որ Սիոնի մնացածը եւ Երուսաղեմի մնացորդը սուրբ պիտի կոչվեն. ամենքը, որ գրված են կյանքի համար Երուսաղեմում, երբ Տերը լվացած կլինի Սիոնի աղջիկների աղտը եւ Երուսաղեմի արյունները նրա միջից մաքրած կլինի իրավունքի հոգով եւ այրող հոգով: Եվ Տերը կշինի Սիոն սարի ամեն տեղերի վրա եւ նրա ժողովքների վրա ցերեկով ամպ եւ մեգ, իսկ գիշերը փայլուն կրակի բոց, որովհետեւ ամեն փառքի վրա հովանի պիտի լինի: Եվ նա վրան կդառնա ցերեկը հովանի տալու համար տաքության դեմ եւ ապաստարան ու ծածկոց՝ մրրիկի եւ անձրեւի դեմ» (Եսայի 4.3-6):

Սա ամփոփում է ամենը: Նախքան Տիրոջ փառքը կհայտնվի Եկեղեցում, Տերը դատաստանի եւ կրակի հոգով կմաքրի Իր Եկեղեցին աղտից: Այդ ժամանակ Եկեղեցին կդառնա ապաստարան աշխարհի չար մրրիկներից:

Մենք դա տեսնում ենք Հովսեփի օրինակով: Եկեք մեկ անգամ եւս կարդանք Սաղմոս 105.19-ը. «Մինչեւ այն ժամանակ, որ Նրա Խոսքը եկավ. Տիրոջ Խոսքը փորձեց (*մաքրեց)* նրան»: Հովսեփը մաքրվեց, որ կարողանա անոթ լինել՝ կատարելու այն, ինչ ամենասկզբից ասել էր Աստված նրան երազում: Տերը կրակի հոգով հեռացրեց նրա սրտից ամեն անմաքրություն: Հովսեփն ազատվեց փարավոնի բանտից, որովհետեւ մեկնաբանեց փարավոնի երազը Տիրոջ Հոգով: Նա փարավոնին զգուշացրեց չորության յոթ տարիների մասին, որոնք գալու էին երկրի վրա առատության յոթ տարիներից հետո: Նույն օրը փարավոնը նրան դարձրեց «իրենից հետո երկրորդ մարդը» Եգիպտոսում: Երբ սկսվեցին չորության յոթ տարիները,

Եգիպտոսի ամբարներում բավական ցորեն կար, որովհետեւ Աստծո իմաստությունը հայտնվել էր Հովսեփի միջոցով: Երբ Հակոբն իմացավ, որ Եգիպտոսում ցորեն կա, նա իր որդիներին, ովքեր Հովսեփին գցել էին գուբը եւ վաճառել ստրկության, ուղարկեց այնտեղից կերակուր հայթայթելու: Եթե Հովսեփը ամբարիշտ, դաժան լիներ եւ ներողամիտ չգտնվեր, նա կսպաներ իր եղբայրներին այն բանի համար, որ արել էին իր դեմ: Բայց դրա փոխարեն նա իր ընտանիքի համար ապաստարան դարձավ: Տեսեք, թե ինչ է նա ասում իր եղբայրներին՝ ինձ մոտ եկեք. «Եվ Հովսեփն ասաց իր եղբայրներին. ինձ մոտ եկեք, նրանք էլ մոտ եկան եւ ասաց. «Ես ձեր եղբայր Հովսեփն եմ, որ ինձ ծախեցիք Եգիպտոս: Եվ հիմա մի՛ վշտացեք եւ մի՛ նեղվեք, որ ինձ ծախեցիք այստեղ, որովհետեւ Աստված ուղարկեց ինձ ձեր առաջ կյանք պահելու համար: Որովհետեւ երկրիս վրա սովի երկրորդ տարին է այս, եւ տակավին հինգ տարի կա, որ վարուցան եւ հունձք չի լինի: Եվ Աստված ինձ ձեր առաջ ուղարկեց, որ երկրի վրա ձեզ համար սերունդ պահի եւ ձեզ ապրեցնի մեծ ազատությունով: Եվ արդ ոչ թե դուք ուղարկեցիք ինձ այս տեղը, այլ Աստված եւ ինձ փարավոնին հայր եւ նրա բոլոր տանը տեր եւ Եգիպտոսի բոլոր երկրին իշխան դրեց»: (Ծնն. 45.4-8):

Իրեն ստրկության վաճառող եղբայրներից վրեժ առնելու փոխարեն Հովսեփը օրհնեց նրանց, ապահովեց սննդով եւ ապաստարանով: Նա չարությանը հաղթեց բարությամբ: Նրա եղբայրների կյանքը փոխվեց: Նախանձը եւ ամբարշտությունը ոչնչացվեցին Աստծո բնավորությամբ, որն Աստված էր ձեւավորել Հովսեփի մեջ:

Դավիթ թագավորի օրինակում վերջաբանն այլ էր. Սավուղը դատապարտվեց: Նա այդպես էլ չապաշխարեց, ընդհակառակը, քանի գնում, ավելի էր մոլորվում: Բայց ուշադրություն դարձրեք, թե ինչպես արձագանքեց Դավիթը՝ իմանալով Սավուղի մահվան մասին. «Այն ժամանակ Դավիթն իր հանդերձները բռնեց եւ պատառեց նրանց, նույնպես էլ նրա հետ եղող բոլոր մարդիկ: Եվ նրանք Սա-

վուղի համար եւ նրա որդի Հովնաթանի համար եւ Տիրոջ ժողովրդի համար եւ Իսրայելի տան համար սուգ բռնեցին եւ լաց եղան եւ մինչեւ իրիկուն ծոմ պահեցին, որ նրանք սրով ընկել էին» (Բ Թագ. 1.11,12):

Հետո Դավիթը Իսրայելի ժողովրդին սովորեցրեց «երկրպագության երգեր» երգել: Նա չէր ուրախանում այն մարդու մահով, ով երբեւէ ծառայել էր Աստծուն, ընդհակառակը, նա սգում էր նրա մահը, ով երկար տարիներ հետապնդում էր իրեն սպանելու համար: Ինչո՞ւ Դավիթը կարողացավ այդպես անել: Որովհետեւ նա կոտրված մարդ էր, փորձվել էր տրտմությունների հնոցում եւ դուրս էր եկել մաքրված:

Հնարավոր է, որ այսօր դուք կրակի միջով եք անցնում: Եվ թվում է, որ նրանք, ումից սեր եւ փոխըմբռնում էիք սպասում, բոլորից շատ են ձեզ վիրավորում: Ինչպե՞ս կարձագանքեք: Դուք կպաշտպանվե՞ք, վրե՞ժ կլուծեք, թե՞ թույլ կտաք Աստծուն վրեժ լուծել ձեզ համար: Կմնա՞ք Աստծո սիրո մեջ: Կնմանվե՞ք Դավթին, որ ասում էր. «Սուտ վկաներ են վեր կենում, իմ չիմացած բանը հարցնում են ինձնից: Չար են հատուցում ինձ բարու տեղ՝ իմ անձն անժառանգ անելով: Բայց ես քուրձ էի հագնում նրանք հիվանդանալիս, իմ անձը ծոմով չարչարում էի, բայց իմ աղոթքը իմ ծոցն է դառնում: Ես նրանց հետ վարվում էի ինչպես իմ բարեկամի եւ իմ եղբոր հետ եւ տրտմությամբ ցածանում էի իր մոր համար սուգ անողի նման» (Սաղմ. 35.11-14):

Միշտ հիշեք. «Ձեզ հալածողներին օրհենցե՛ք, օրհնեցե՛ք եւ մի՛ անիծեք... Մեկին չարի տեղ չար մի՛ հատուցեք... Ձեր անձերի համար վրեժխնդրություն մի արեք, սիրելինե՛ր, այլ բարկության տեղ տվեք, որովհետեւ գրված է՝ վրեժխնդրությունն Իմն է, Ես հատուցումը կտամ,- ասում է Տերը: Արդ, եթե քո թշնամին սոված է, հաց տուր նրան, եւ եթե ծարավ է, ջուր տուր նրան, որովհետեւ այս անելով կրակի կայծեր կժողովես նրա գլխի վրա: Մի՛ հաղթվիր չարից, այլ բարիով հաղթիր չարին» (Հռոմ. 12.14,17,19-21): Վրեժխնդրու-

թյունն Աստծունն է եւ ոչ թե մերը: Մենք Հովսեփի նման պետք է չարին հաղթենք բարիով:

ՁԵԶ ՀԱՄԱՐ ՎՐԵԺԽՆԴԻՐ ՄԻ՛ ԵՂԵՔ՝ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ ՉԱՐՈՒԹՅԱՄԲ, ՉՆԵՐԵԼՈՎ, ԲԱՄԲԱՍԱՆՔՈՎ, ՉԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ՎԵՃԵՐՈՎ: ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ՀԱԳԵՔ ԱՍՏԾՈ ՍԵՐԸ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՍԵՐԸ ԾԱԾԿՈՒՄ Է ՄԵՂՔԵՐԻ ԲԱՁՄՈՒԹՅՈՒՆԸ:

ՄԱՍ 4

ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

ԳԼՈՒԽ 12

ՊԱՏՐԱՍՏԵՔ ՏԻՐՈՋ ՃԱՆԱՊԱՐՀԸ

...Վայրը, որտեղ դուք հիմա գտնվում եք, ձեր կյանքի անհրաժեշտ մասերից մեկն է, որով դուք անցնում եք:

«Անապատի մեջ կանչողի ձայնը... պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը եւ ուղիղ արեք ամայության մեջ շավիղը մեր Աստծո համար: Ամեն ձոր բարձրանա, եւ ամեն սար ու բլուր ցածրանա, եւ ծուռը ուղիղ դառնա, խորդուբորդ տեղերը՝ հարթահատակ: Եվ պիտի հայտնվի Տիրոջ փառքը, եւ ամեն մարմին միասին պիտի տեսնեն, որովհետեւ ՏԻՐՈՋ բերանն է խոսել»: Մեկ ձայն ասում է. «Կանչի՛ր»: Եվ նա ասաց. «Ի՞նչ կանչեմ»: Այս՝ թե ամեն մարմին խոտ է, եւ նրա բոլոր վայելչությունը՝ դաշտի ծաղկի պես: Խոտը չորանում է, ծաղիկը թառամում, որովհետեւ ՏԻՐՈՋ Հոգին փչեց նրա վրա. իրավ, ժողովուրդը խոտ է: Խոտը կչորանա, ծաղիկը կթառամի, բայց մեր Աստծո Խոսքը կմնա հավիտյան»:

Եսայի 40.3-8

Անապատն այն վայրն է, որտեղ պատրաստվում է Տիրոջ ճանապարհը, որտեղ ամեն լեռ պիտի ցածրանա, եւ ամեն ձոր պիտի բարձրանա: Սուրբ գրքում լեռները խորհրդանշում են մարդու ուժը: Աստվածաշունչն ասում է. « ...որպեսզի ոչ մի մարմին չպարծենա Նրա առաջ» (Ա Կորնթ. 1.29): Մարդն իր ուժերով չի կարող իրականացնել Աստծո խոսքումները: Չնայած լավ մտադրություններին՝ առանց Աստծո օգնության մարդն ի վիճակի չէ ինքնուրույն որեւէ մնայուն բան անել, նույնիսկ Հիսուսի անունով: Հիսուսն

ասաց. « ...Որդին իրենից չի կարող ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս, որովհետեւ ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում» (Հովհ. 5.19): Ինչպիսի հայտարարություն... Հիսուսն ասաց, որ *Ինքը* ՈՉԻՆՉ չի կարող ինքնուրույն անել:

Հիսուսը սիրում էր Ղազարոսին եւ նրա քույրերին՝ Մարթային ու Մարիամին, որ ապրում էին Բեթանիայում: Ղազարոսը սաստիկ հիվանդացավ: Հովհաննեսի 11.3-6-ում պատմվում է. «Եվ նրա քույրերն ուղարկեցին Նրա մոտ ու ասացին. «Տե՛ր, ահա նա, որ Դու սիրում ես, հիվանդացել է»: Հիսուսն էլ երբ լսեց, ասաց. «Այս հիվանդությունը մեռնելու համար չէ, ապա Աստծո փառքի համար, որ Աստծո Որդին նրանով փառավորվի»: Հիսուսը սիրում էր Մարթային եւ նրա քրոջն ու Ղազարոսին: Երբ լսեց, թե նա հիվանդ է, այն ժամանակ երկու օր մնաց այնտեղ»: Հիսուսը սիրում էր Ղազարոսին եւ Իր ընկերն էր համարում: Սակայն տեսնում ենք, որ Հիսուսը երկու օր ոչինչ չարեց: Ինչո՞ւ Նա միանգամից չգնաց Բեթանիա: Պատճառն այն էր, որ Աստված Նրան չէր առաջնորդել անմիջապես գնալ: Հիսուսը սպասեց, մինչեւ Աստծո Հոգին շարժվեց, այնուհետեւ Ինքն էլ շարժվեց: Տերն ինձ ցույց տվեց, որ եթե այդպիսի բան պատահեր իմ ընկերներից մեկի հետ, ում ես սիրում եմ, միանգամից կգնայի նրա տուն եւ ձեռքերս կդնեի նրա վրա՝ նույնիսկ չմտածելով ուշադրություն դարձնել Աստծո Հոգու առաջնորդությանը: Մեզ մոտ՝ Աստծո Եկեղեցում, այսպիսի մտածելակերպ է ձեւավորվել. «Ուր էլ որ ես գնամ, Աստված կհետեւի ինձ եւ ամեն բան կանի, ինչ էլ որ ասեմ»: Սա շեղված մտածելակերպ է: *Աստված* Ինքն է որոշում ուր գնալ: Եթե մենք գնում ենք Նրա ետեւից, Նա մեզ կասի ինչ անել: Մեզ սովորեցրել են, որ երբ ձեռքերդ դնում ես հիվանդների վրա նույնիսկ առանց Սուրբ Հոգու առաջնորդության, Աստված պարտավոր է բժշկել նրանցից յուրաքանչյուրին հենց նույն պահին: Եթե դա իրականում այդպես լիներ, ապա մենք պետք է գնայինք բոլոր հիվանդանոցները, բժշկեինք բոլոր հիվանդներին, եւ հիվանդանոցները կդատարկվեին: Աստվածաշնչի շատ տեղերում ասվում է. «Նա բժշ-

կեց բոլորին»: Բայց դա ամեն անգամ չէր ստացվում: Օրինակ՝ ինչո՞ւ Հիսուսը չբժշկեց Բեթհեզդա ավազանի բոլոր հիվանդներին, կույրերին, կաղերին եւ անդամալույծներին եւ բժշկեց երեսունութ տարվա անդամալույծ մարդուն, որը գտնվում էր այդտեղ (Հովհ. 5): Ինչո՞ւ Նա միայն մեկին բժշկեց:

Ի ծնե կաղ մի մարդ կար, որին ամեն օր տանում էին տաճարի դարպասների մոտ: Իհարկե, Հիսուսն ամեն անգամ անցնում էր այդտեղով, երբ մտնում էր տաճար: Ինչո՞ւ չբժշկեց նրան: Որովհետեւ Հայրը չէր պատվիրել Իրեն դա անել: Հետագայում տաճար գնալիս Պետրոսն ու Հովհաննեսը (Հոգով առաջնորդված) բժշկեցին այդ մարդուն, եւ դրանից հետո մեծ արթնություն սկսվեց ժողովրդի մեջ (Գործք 3):

Երբ Հիսուսը ծառայում էր մարդկանց, Նա բժշկության ոչ մի որոշակի բանաձեւ չուներ. մեկի վրա Նա թքեց, մյուսին ձեռնադրեց, ոմանց ուղղակի խոսք ասաց: Մի մարդու համար Նա ցեխից գնդեր պատրաստեց եւ դրեց աչքերին, մինչդեռ ուրիշներին ուղարկեց քահանաների մոտ: Այս ցուցակը կարելի է երկար թվարկել: Ինչո՞ւ այսքան շատ տարբերակներ կային: Որովհետեւ Նա անում էր միայն այն, ինչ տեսնում էր Հորն անելիս: Աստված ավելի լավ գիտեր երբ եւ ինչպես անել, որպեսզի յուրաքանչյուրն անձամբ ընդունի բժշկությունը:

Աստված Իր ծառաներից սպասում է, որ նրանք չեն անի այն, ինչ իրենք են ուզում, այլ միայն այն, ինչ կտեսնեն Իրեն անելիս: Հովհաննեսի 20.21-ում Հիսուսն ասաց. « ...Ինչպես Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում»: Ինչպես որ Հիսուսը ոչինչ չէր անում, մինչեւ չտեսներ, թե Հայրն ինչ է անում, այդպես էլ մենք պիտի անենք այն, ինչ Տերն է անում: Մենք պետք է այնպես վարվենք, ինչպես Հիսուսը, առաջնորդվելով միայն Աստծո Հոգով՝ գնանք միայն այն ժամանակ, երբ Նա կտանի մեզ: Դրա համար անհրաժեշտ է, որ մեր անձը հնազանդվի Աստծո Հոգուն: Անապատն այն վայրն է, որտեղ մենք մարզվում ենք, որպեսզի առաջնորդվենք Սուրբ

Հոգով: Ինչպես արդեն նշել ենք, անապատը Տիրոջ ճանապարհը պատրաստելու վայրն է:

Այս վերջին օրերում Քրիստոսի Մարմնում շատերն, իրոք, կանչված են իրենց ամբողջ ժամանակով ծառայելու Աստծուն, բայց նախքան նրանց գործի անցնելը Աստված յուրաքանչյուրին կտանի անապատով՝ պատրաստման շրջան անցնելու համար: Անապատում եսը խաչվում է, եւ պատրաստվում է Տիրոջ ճանապարհը: Նայեք Մովսեսի կյանքին. «Եվ երբ նրա քառասուն տարեկան ժամանակը լրացավ, նրա սրտի մեջ ընկավ, որ իր եղբայրներին՝ Իսրայելի որդիներին այցելություն անի: Եվ երբ տեսավ, որ նրանցից մեկը զրկված էր, պաշտպանեց եւ զրկվածի վրեժն առավ՝ եգիպտացուն սպանելով: Կարծում էր, թե նրա եղբայրները կիմանան, որ Աստված Նրա ձեռքով փրկություն պիտի տա նրանց, բայց նրանք չիմացան» (Գործք 7.23-25):

Քառասուն տարեկանում Մովսեսը գիտեր, որ կանչված է ազատելու Իսրայելը եգիպտական ստրկությունից: Նա մեծանում էր արքայազնի պես՝ սովորելով Եգիպտոսի իմաստությունն ու գիտությունը: Այն ժամանակ Եգիպտոսը ամենահզոր երկիրն էր: Ոչ մի ուրիշ երկիր այդքան հաջողություն չուներ: Եվ եթե կար մեկը, որ պատրաստվում էր ղեկավարել ոչ միայն Իսրայելը, այլեւ Եգիպտոսը, ապա դա Մովսեսն էր:

Մովսեսը, փորձելով ցուցադրել առաջնորդի իր կարողությունն ու հավատարմությունը Իսրայելին, սպանեց եգիպտացուն, որ հալածում էր Աստծո ժողովրդին: Այսպիսի ինքնահաստատման փորձը ձախողվեց, եւ հանկարծ մենք տեսնում ենք Աստծո «զորավոր ազատագրողին» իր կյանքը փրկելու համար Մադիան փախչելիս: Այնտեղ նա զբաղվում է ուրիշների ոչխարները անապատում պահելով: Ոչ թե կարճ ժամանակով, այլ քառասուն տարով: Ինչո՞ւ է Աստծո կանչված մարդը անապատում «իզուր վատնում» քառասուն տարի: Աստված նրա մեջ աշխատանք էր տանում, որպեսզի մարմնի լեռը ցածրանա, ծուռ ճամփան ուղղվի, եւ խորդուբորդ տեղերը հարթվեն: *Տի-*

ոոջ ճանապարհը պատրաստված էր:

Անապատում խոնարհման եւ մաքրման քառասուն տարի անցկացնելուց հետո Աստված հայտնվեց Մովսեսին. ««Ուստի ե՛կ հիմա քեզ փարավոնի մոտ ուղարկեմ եւ հանեմ Իմ ժողովրդին՝ Իսրայելի որդիներին, Եգիպտոսից»»: Եվ Մովսեսն ասաց Աստծուն. «Ես ո՞վ եմ, որ փարավոնի մոտ գնամ եւ Իսրայելի որդիներին Եգիպտոսից հանեմ» (Ելից 3.10,11):

Մի՞թե սա այն նույն Մովսեսն էր, որ քառասուն տարի առաջ առանց Աստծո հրամանի փորձեց ազատել Իսրայելը: Այժմ նա կանգնած է Աստծո ներկայության մեջ եւ լիազորված է գնալու, բայց վախենում է: Մովսեսն այնքան էր խոնարհվել, որ հասկանում էր՝ եթե Աստված իր հետ չլինի, կրկին կպարտվի: Մեկ անգամ արդեն մերժված լինելով որպես ազատագրող՝ այժմ նա ուզում էր, որ Աստված իրեն դնի առաջնորդի դիրքում: Առաջին անգամ նա փորձեց ամեն բան իր ուժերով անել: Դա Աստծո կանչին արձագանքելու իր ձեւն էր: Եգիպտոսի մեծ իմաստությունը չկարողացավ Մովսեսին պատրաստել (Եգիպտոսը աշխարհիկ համակարգի եւ մարդկային իմաստության խորհրդապատկերն է, որը երբեք չի կարողանա մեզ պատրաստել Աստծո կոչումն իրականացնելու համար): Անպտուղ անապատը Մովսեսին պատրաստեց Աստծո ծրագրի իրականացմանը: Այժմ նա պատրաստվում էր ազատել Իսրայելին աստվածային ճանապարհով:

Ուշադրություն դարձրեք Տիրոջ խոսքերին՝ «Ես քեզ կուղարկեմ»: Քառասուն տարի առաջ Մովսեսն ինքն էր «ուղարկել» իրեն, բայց հիմա Աստված էր ուղարկում նրան:

1979թ. ես վերստին ծնվեցի: Չորս ամիս անց մկրտվեցի Սուրբ Հոգով: Աստված սկսեց աշխատել իմ սրտի հետ, որպեսզի ծառայեմ Իրեն: Այդ ժամանակ ես լսել անգամ չէի ուզում ծառայության մասին: Իմ կարծիքով, բոլոր ծառայողները կյանքից եւ մնացած մարդիկ էին: Ես կարծում էի, որ նրանք տգետ են, ունեն տարօրինակ երեխաներ եւ կեղտոտ ու հին տներ (Ես այդ ժամանակ երբեք չէի

հանդիպել լավ ծառայողների): Ծառայության մասին իմ պատկերացումը բավականին աղավաղված էր: Ես կարծում էի, որ եթե ծառայող դառնամ, ապա կնմանվեմ նրանց կամ կյանքս կավարտեմ աֆրիկյան մի խրճիթում:

Իմ ծրագրերն էին ավարտել համալսարանի մեխանիկաինժեներական ֆակուլտետը, իսկ հետո շարունակել կրթությունս Հարվարդի համալսարանում եւ մագիստրոսի կոչում ստանալ: Այդ պատճառով ես ամեն կերպ փախչում էի Աստծուն ծառայելու կանչից: Բայց չորս ամիս անց, երբ կիրակնօրյա ծառայության ժամանակ նստած էի եկեղեցում, Աստծո Հոգին ինձ վրա իջավ եւ շատ խիստ ասաց. «Ես քեզ կանչում եմ քարոզելու: Ի՞նչ ես որոշել»: Ես պատասխանեցի. «Տե՛ր, նույնիսկ եթե ես կյանքս վերջացնեմ աֆրիկյան մի խրճիթում, ոտաբոբիկ, ես կքարոզեմ: Ես Քեզ կհնազանդվեմ». (Աստված Իր ձեւն ունի մեր ուշադրությունը գրավելու համար): Հենց որ ես պատասխանեցի «այո» ծառայելու կանչին, Տերը սկսեց պատրաստել ինձ: Իմ սրտում սկսեց կրակ վառվել: Ես սկսեցի վկայել իմ հարազատներին եւ ընկերներին Հիսուսի մասին, եւ շատերը փրկություն ստացան: Մեկուկես տարի հետո ես իմ հոգեւոր եղբայրների հետ միասին սկսեցի ուսումնասիրել Աստվածաշունչը: Ամեն շաբաթ նոր մարդիկ էին գալիս եւ փրկություն էին ստանում, լցվում էին Հոգով ու բժշկվում: Այդ ժամանակ իմ քարոզելու ցանկությունն ավելի էր ուժեղանում, եւ ես որոշեցի թողնել համալսարանը ու գնալ սովորելու աստվածաշնչյան դպրոցում: Ո՞րն էր նպատակը: Ինչո՞ւ սովորել թերմոդինամիկա, երբ ես կանչված եմ քարոզելու, իսկ մարդիկ մեռնում եւ գնում են դժոխք: Հիսուսը հնարավոր է շուտով գա, եւ ես պետք է որքան հնարավոր է շուտ գնամ դաշտերը բերքահավաքի: Մի գիշեր, երբ ես կատարում էի ինձ համար ձանձրալի տնային առաջադրանքը, հայացքս մեխանիկայի գրքից ընկավ դարակի վրա դրված Աստածաշնչին: Այդ պահին ես դեն նետեցի դասագիրքս եւ հաստատ որոշում կայացրի՝ վերջապես թողնել համալսարանը եւ գնալ սովորելու աստվածաշնչյան դպրոցում: Հաջորդ առավոտյան ես

զանգեցի իմ համալսարանի գլխավոր խորհրդատուին, որ նաեւ իմ հոգեւոր ուսուցիչն էր, եւ ասացի նրան. «Դոն, ես հեռանում եմ համալսարանից եւ գնում եմ սովորելու աստվածաշնչյան դպրոցում»: Նա իմաստուն ձեւով ասաց. «Ինչո՞ւ այսօր երեկոյան չաղոթենք դրա համար»: Մենք այդպես էլ արեցինք: Աղոթքի ժամանակ Աստված ինձ ասաց. «Իմ նշանակած ժամանակ»: Հետո Տերն ինձ հարցրեց. «Ո՞վ է քեզ կանչել ծառայության՝ դու ի՞նքդ, թե՞ Ես»: Ես չուշացրի պատասխանը. «Դո՛ւ, Տե՛ր»: Նա ասաց. «Չե՞ս կարծում, որ Ես ավելի եմ շահագրգռված, որ այդ ծառայությունը շարժվի առաջ»:

Եվ այսպես՝ ես ավարտեցի համալսարանը եւ տեղափոխվեցի Դալլաս (Տեխաս): Այնտեղ դարձա յոթհազարանոց եկեղեցու անդամ: Ես սկսեցի ծառայել եկեղեցում եւ օգնում էի ցանկացած ոլորտում, որտեղ դրա կարիքը կար: Միեւնույն ժամանակ ես սկսեցի այցելել երեկոյան աստվածաշնչյան դպրոց: Երկու տարի անց ես եկեղեցում ընդունվեցի աշխատանքի: Ես նրանց ասացի, որ կարող եմ աշխատել ընդամենը մեկ տարի, որովհետեւ կանչված եմ քարոզելու: Իմ պարտականությունների մեջ մտնում էր մեքենաներ լվանալն ու դրանք գազով լիցքավորելը, հովվի կոշիկները մաքրելը, վազվզել այնտեղ, ուր անհրաժեշտ էր, հովվի երեխաներին դպրոցից տուն բերելը, երկու նախադպրոցականների լողի դասերի տանելը եւ շատ այլ նման հանձնարարություններ: Ես այնտեղ մնացի ոչ թե մեկ տարի, այլ չորսուկես:

Ութ տարի անցավ այն օրից, երբ ես ասել էի «այո» Աստծո կանչին: Երբ ես աստվածաշնչյան դպրոցում էի եւ տեսնում էի, թե որքան շատ ուսանողներ էին փրկվում, բժշկվում եւ ազատագրվում, ես մտածում էի, որ մի քանի օրից կմտնեմ լրիվ ծառայության մեջ: Ես պատկերացում չունեի մարզման այն ընթացքի մասին, որի միջով Աստված պետք է տաներ ինձ: Բայց այս անապատը շարունակվեց մի քանի տարի:

Այդ ընթացքում ես երեք անգամ անհաջող փորձեր արեցի մտնել լրիվ ծառայության մեջ: Երբ Ասիայից վերադարձա Դալլաս՝ իմ եր-

որդ անհաջող փորձից հետո սկսելու քարոզչի ծառայությունն այնտեղ, որտեղ Աստված ուզում էր ինձ տեսնել, Հովհաննեսի Ավետարանը կարդալիս հասա առաջին գլխի վեցերորդ խոսքին, որտեղ ասվում էր. «Աստծուց ուղարկված մի մարդ կար, որի անունը Հովհաննես էր»: «Աստծուց ուղարկված» բառերը ասես էջից դուրս եկան, եւ Աստված ինձ ասաց. «Դու ուզում ես ուղարկված լինել Ջոն Բիվերի՞ կողմից, թե՞ Աստծո»: Ես պատասխանեցի. «Իհարկե՛, ես ուզում եմ ուղարկված լինել Աստծո կողմից»: Տերն ասաց. «Լա՛վ, որովհետեւ եթե դու ուղղարկված լինես Ջոնի կողմից, դու կգնաս Ջոնի զորությամբ, բայց եթե ուղարկված լինես Աստծո կողմից, ապա կգնաս Իմ զորությամբ»: Դրանից հետո ես հանգստացա եւ բավականություն էի ստանում այն տեղից, որտեղ Աստված ինձ դրել էր: Մի առավոտ, երբ ես դրսում աղոթում էի, ասացի. «Տե՛ր, եթե Դու վերադառնաս, իսկ ես այդ ժամանակ առաջվա նման այս միկրոավտոբուսը քշելիս եւ իմ հովվի ու նրա կնոջ տարբեր հանձնարարությունները կատարելիս լինեմ, ապա գիտեմ, որ կկարողանամ նայել Քեզ եւ ասել՝ ես Քեզ հնազանդ եմ եղել»: Վեց ամիս անց ես դարձա Ֆլորիդայի մեծ եկեղեցու երիտասարդական հովիվ:

Մի՞թե Աստված ինձ այս ութ տարիների ընթացքում դրել էր մի դարակի մեջ, մինչեւ ինչ- որ նպատակի համար ինձ դուրս բերեր այդտեղից: Ո՛չ: Հազար անգամ ո՛չ: Ես անապատում էի, որպեսզի իմ մեջ Աստծո բնավորությունը ձեւավորվեր... որպեսզի *Նրա ճանապարհը* պատրաստված լիներ: Իմ բնավորությունը պետք է զարգանար այն աստիճան, որ ես կարողանայի նման ծառայության դիրքում լինել: Ընթացքն ավարտվեց ծառայության այդ մակարդակի համար: Այնուամենայնիվ, հոգեւոր մի մակարդակից մյուս մակարդակ անցնելու համար նախ անհրաժեշտ է հատուկ նախապատրաստում:

Անապատում քառասուն տարի Մովսեսին մարզելուց հետո Աստված ասաց. ««Ուստի ե՛կ հիմա քեզ փարավոնի մոտ ուղարկեմ եւ հանի՛ր Իմ ժողովրդին՝ Իսրայելի որդիներին Եգիպտոսից»: Եվ Մով-

սեսն ասաց Աստծուն. «Ես ո՞վ եմ, որ փարավոնի մոտ գնամ եւ Իսրայելի որդիներին Եգիպտոսից հանեմ»: Աստված ասաց. «Ես քեզ հետ կլինեմ... »» (Ելից 3.10-12):

Տեսեք, թե Աստված ինչ է ասում այն քարոզիչների մասին, ովքեր իրենք են իրենց ուղարկողը. «Ես այդ մարգարեներին չեմ ուղարկել, բայց իրանք վազում են, եւ Ես նրանց հետ չեմ խոսել, բայց իրենք մարգարեանում են... Ահա Ես այն սուտ երազներ մարգարեացողների դեմ եմ, որ պատմում են նրանց եւ մոլորեցնում Իմ ժողովրդին իրենց ստություններով ու իրենց սնապարծությունով, եւ Ես նրանց չեմ ուղարկել եւ նրանց չեմ պատվիրել եւ մի շահ ու օգուտ չունեն այս ժողովրդի համար», - ասում է Տերը» (Երեմիա 23.21,32):

Մովսեսն ի վիճակի չէր քառասուն տարեկանում օգնել կամ *օգտակար* լինել Իսրայելի որդիներին, երբ փորձում էր ազատել նրանց: Այն ժամանակ Աստված դեռ չէր ուղարկել նրան: Մովսեսը նույնիսկ ողջ եգիպտական իմաստությամբ, առանց Աստծո իմաստության եւ ժամանակի չկարողացավ իրականացնել Աստծո կոչումը: Դա Աստծո նշանակված ժամանակը չէր: Նա պարզապես իզուր փորձեց անել մի բան, որի արդյունքում սպանեց եգիպտացի վերակացուին: Բայց Աստծո նշանակած ժամանակ, երբ Մովսեսը ուղարկվեց Աստծուց, փարավոնի ողջ բանակը հայտնվեց ծովի հատակին: Ահա ինչպիսի տարբերություն կա մեր ուժի եւ Աստծո զորության միջեւ:

Հովհաննես Մկրտիչը երեսուն տարի պատրաստվեց վեցամսյա ծառայության համար, մինչդեռ Հիսուսն ասում էր, որ նա կնոջից ծնվածների մեջ մեծագույն մարգարեն էր: Աստված վեց ամսվա ընթացքում կարող է շատ բան անել Իր կողմից ուղարկված տղամարդկանց եւ կանանց միջոցով, քան որեւէ մեկը *իր ուժերով* կկարողանա իրականացնել այն ութսուն տարի ջանասիրաբար աշխատելով:

Քառասուն տարեկանում Մովսեսը գիտեր, որ Աստծուց է ուղարկված: Չնայած որ մտադրությունները ազնիվ էին, նրա առաջին փորձն ավելի շատ վնաս բերեց, քան օգուտ: Անապատում քառա-

սուն տարի մարզվելուց հետո հայտնվում է նոր Մովսես, որն անում է միայն այն, ինչ Աստված է ասում իրեն: Ծանո՞թ է սա: Սա այն էր, ինչ Հիսուսն ասում էր. « ... Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, թե Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս, որովհետեւ ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում» (Հովհ. 5.19):

Եկեք նորից նայենք Եսայի մարգարեի խոսքերը. «Անապատի մեջ կանչողի ձայնը, պատրաստեք Տիրոջ ճանապարհը եւ ուղիղ արեք ամայության մեջ շավիղը մեր Աստծո համար: Ամեն ձոր բարձրանա, ամեն սար ու բլուր ցածրանա, եւ ծուռը ուղիղ դառնա եւ խորդուբորդ տեղերը՝ հարթահատակ: Եվ պիտի հայտնվի Տիրոջ փառքը, եւ ամեն մարմին միասին պիտի տեսնեն, որովհետեւ ՏԻՐՈՋ բերանն է խոսել»: Մեկ ձայն ասում է. «Կանչի՛ր»: Եվ նա ասաց. «Ի՞նչ կանչեմ»: Այս՝ թե ամեն մարմին խոտ է, եւ նրա բոլոր վայելչությունը՝ դաշտի ծաղկի պես: Խոտը չորանում է, ծաղիկը թառամում, որովհետեւ ՏԻՐՈՋ Հոգին փչեց նրա վրա. իրոք ժողովուրդը խոտ է: Խոտը կչորանա, ծաղիկը կթառամի, բայց մեր Աստծո Խոսքը կմնա հավիտյան» (Եսայի 40.3-8):

Աստված ասում է, որ անապատը այն տեղն է, որտեղ պատրաստվում է Տիրոջ ճանապարհը: Տիրոջ ճանապարհը չի պատրաստվում մարդու զորությամբ: Նա ասում է, որ մարմնական հպարտությունը կցածրանա, խոնարհները (ովքեր սպասում են Տիրոջը) կբարձրանան, ծուռ տեղերը կուղղվեն, եւ բոլոր խորդուբորդ տեղերը կհարթվեն: Լինելով քոլեջի ուսանող՝ ես օգտագործում էի օծությունը, բայց ինձ դեռ անհրաժեշտ էր անցնել մի ընթացք, որպեսզի իմ ներսի լեռները ցածրանային եւ ծուռ ու խորդուբորդ տեղերը ուղղվեին ու հարթվեին: Աստված սկսել էր անապատում իմ հոգեւոր աճման ընթացքը: Մեր անապատի ընթացքում կարեւոր է թույլ տալ Աստծուն՝ անել մեր կյանքում ամեն բան այնպես, ինչպես Ինքն է ուզում: Երբ ես իմ հովվին էի ծառայում Դալլասում, մի օր Տերը խոսեց ինձ հետ եւ ասաց. «Ջո՛ն, բաց մի՛ թող այն, ինչ Ես ուզում

եմ անել քո մեջ այսօր՝ մտածելով միայն վաղվա քարոզչի ծառայության մասին»: Ես այնքան ուժեղ էի ցանկանում քարոզել, որ իմ կյանքի այդ պահերը համարում էի ժամանակի կորուստ: Մի՛ ընկեք այս թակարդը: Հասկացե՛ք, որ Աստված *ժամանակն իզուր չի վատնում:* Աստված Նա է, Ով *լցնում է ժամանակը:* Հասկացե՛ք, որ այնտեղ, որտեղ դուք հիմա գտնվում եք, անբաժանելի մասն է այն ճանապարհի, ուր դուք գնում եք: Դա մեր մարզման հրապարակն է: Թո՛ւյլ տվեք Նրան հոգ տանել դրա մասին... Շարժվեք Նրա զորությամբ: Նա է Աստվածը, Հեղինակը եւ Կատարողը: Մենք պետք է ուղղակի վստահենք Նրան եւ հնազանդությամբ կատարենք այն, ինչ Նա ցույց է տալիս մեզ ԱՅՍՕՐ: Ամեն անգամ, երբ ես մտածում էի, թե Աստված ինչպես ինձ կտանի քարոզչի ծառայության, Նա ինձ ասում էր. «Ջո՛ն, դու կրկին հաշվարկեցիր, թե դա ինչպես կլինի»: Դա ճիշտ էր: Թե ինչպես Նա արեց դա, բացարձակապես անսպասելի էր ինձ համար: Ես վստահ եմ, Հովսեփը երբեք չէր մտածում, որ իր երազը կկատարվի այնպես, ինչպես դա իրականում կատարվեց նրա կյանքում:

Աստված մեզ բերում է այնպիսի մի տեղ, որում մենք գոհ ենք (ոչ ինքնագոհ) տվյալ պահին: Դա մի ժամանակահատված է, երբ մեզ թվում է, որ մեր երազանքը (տեսիլքը) մահացել է: Բայց երբ ձեր երազանքներն իրականացնելու ծրագրերը մահանում են ձեր ուղեղում, կամքի եւ զգացմունքների մեջ, Աստված պատրաստ է այդ ամենը հարություն տալ *Իր ճանապարհներով:* Ես շփոթված եւ հիասթափված էի նրանից, ինչ Աստված արեց ինձ հետ: Ես հարցրի. «Տե՛ր, ինչո՞ւ Դու սկզբում իմ ներսում արթնացրիր ծառայության ահռելի մեծ ձգտումը, եթե ես ութ տարի հետո պետք է իմ երազանքը դնեմ զոհասեղանին, ինչպես Իսահակը դրվեց... »: Տերը պատասխանեց. «Որդի՛ս, Ես դա անում եմ, որպեսզի քեզ ցույց տամ, թե դու ինչին ես ուզում ծառայել՝ քո երազանքի՞ն, թե՞ Ինձ»:

Դա այն էր, ինչ Աստված արեց Աբրահամի հետ: Աբրահամը ուրախացավ, երբ Աստված իրեն ասաց, որ ինքը շատ ազգերի հայր

կդառնա, եւ միայն քսանհինգ տարի հետո այդ խոստումը սկսեց իրականանալ: Եվս տասներեք տարի անց, երբ Աբրահամը ուրախանում էր իր՝ խոստմունքի որդի Իսահակով, Աստված փորձեց նրան՝ զոհասեղանին դիր քո երազանքը: Աստված ուզում էր, որ Աբրահամի երազանքը մեռնի նրա մտքում, կամքի եւ զգացմունքների մեջ: Այդ ժամանակ Նա կարողացավ տեսնել՝ արդյո՞ք Աբրահամը երազանքն ավելի էր սիրում, քան երազանքը Տվողին:

Երբ Աստված տալիս է Իր հեղինակությունն ու զորությունը մարդուն, ապա որքան շատ են հեղինակությունն ու զորությունը, այդքան լուրջ է Աստծո դատը Տիրոջ Հոգուն չհնազանդվելու դեպքում: Աստված Մովսեսին քառասուն տարեկանում չդատեց, երբ նա քայլում էր իր ճանապարհներով, որովհետեւ Աստծո հեղինակությունն ու զորությունը դեռեւս տրված չէին նրան: Բայց հետո Աստված արդեն ուրիշ կերպ դատեց Մովսեսին: Սին անապատում ժողովուրդը վիճեց Մովսեսի հետ եւ դժգոհում էր, որ Մովսեսն իրենց բերել է անջուր վայր: Նրանք ծարավ էին, ջուր էին ուզում: Այսպիսով՝ Աստված ասաց Մովսեսին, թե ինչ պետք է անել. «Եվ Եհովան խոսեց Մովսեսի հետ՝ ասելով. «Ա՛ռ գավազանը եւ ժողովքը ժողովի՛ր, դու եւ քո եղբայր Ահարոնը եւ խոսեք ապառաժին նրանց աչքերի առաջ, եւ նա կտա իր ջուրը...» (Թվոց 20.7,8):

Աստված Մովսեսին պատվիրեց ԱՍԵԼ ապառաժին, եւ այն ջուր կտա: Բայց եկեք կարդանք, թե ինչ արեց Մովսեսը. «Եվ Մովսեսն իր ձեռքը բարձրացրեց, եւ գավազանով երկու անգամ ապառաժին զարկեց. եւ շատ ջուր դուրս ելավ, եւ ժողովքը եւ նրանց անասունները խմեցին: Եվ Եհովան խոսեց Մովսեսի եւ Ահարոնի հետ. Որովհետեւ Ինձ չհավատացիք՝ Ինձ Իսրայելի որդիների աչքերի առաջ փառավորելու, նրա համար դուք այս ժողովուրդը չեք տանի այն երկիրը, որ նրանց տվի» (Թվոց 20.11,12):

Նկատեք, որ Աստված տվեց ջուրը, չնայած որ Մովսեսը չհնազանդվեց Նրա առաջնորդությանը եւ չասաց, այլ խփեց ապառաժին: Ջուրը ժողովրդի համար էր, դա նրանց կարիքի պատասխանն էր:

Ուստի Աստված ժողովրդից չպահեց ջուրը, որպեսզի այդ կերպով Մովսեսին պատժեր: Բայց քանի որ Մովսեսը չփառավորեց Աստծուն ժողովրդի աչքերի առջեւ, ապա Տերն ասաց, որ որպես դրա պատիժ՝ Մովսեսը չի տանի այդ ժողովրդին խոստմունքի երկիր (Ժայռին ասելու փոխարեն հարվածելով, Մովսեսը մարդկանց ուշադրությունը գրավեց իր վրա): Սա հրաշալի օրինակ է, որ Աստված գերբնական օծություն է տալիս մարդկանց կարիքներին պատասխանելու եւ ոչ թե ծառայողի կարողությունները փառավորելու կամ փող ստանալու համար: Պարգեւները, օծությունը եւ Գրվածքները չարաշահելու հետ կապված՝ մեր օրերում շատերը համարում են, որ պարգեւները, խոստումները եւ զորությունը չեն գործում: Դա ճիշտ չէ: Աստված այսօր առաջնորդների նոր սերունդ է ձեւավորում, որ կսովորեցնեն Իր մասին ժողովրդին: Հնարավոր է նաեւ, որ ծառայողները պարգեւներ եւ օծություն ունենան մարդկանց կարիքներին պատասխանելու համար, բայց միաժամանակ գտնվեն անհնազանդության մեջ:

Միգուցե Մովսեսը նեղված էր ժողովրդից եւ մի քիչ հիասթափված էր Աստծուց, որովհետեւ ջուրը միանգամից չհոսեց: Մովսեսը խփեց ժայռին, ինչպես դա արել էր նախորդ անգամ Սին անապատում (Ելից 17.1-7): Կամ, միգուցե, Մովսեսն այնքան էր սովորել իր առաջնորդելու կարողությանը, որ նրան թվում էր, թե Աստված այդպես էլ կկատարի այն, ինչ ինքը հարմար կգտնի տվյալ դեպքում: Նա կրկին իր ձեւով վարվեց, բայց այս անգամ հետեւանքները բավականին լուրջ էին: Մովսեսը գործում էր Աստծո ուժով եւ զորությամբ, նա մեծ ուժ եւ հեղինակություն ուներ Աստծուց կախում ունենալու շնորհիվ: Այժմ երբ Մովսեսը ողջ ժողովրդի առջեւ արեց իր ուզած ձեւով՝ չհնազանդվելով Աստծուն, հետեւեցին դատը եւ պատիժը:

Ահա ինչու է Հակոբոսի ուղերձի 3.1-ում ասվում. «Շատ վարդապետներ մի՛ եղեք, եղբայրներս. գիտենալով, որ մեծ դատաստան պիտի ընդունեք»: Որքան մեծ է փառքը, այնքան լուրջ է դատաս-

տանը:

Երբ Սավուղ թագավորը խնայեց Ամաղեկի թագավորին եւ լավ ոչխարները, նա ավելի շատ մտածեց ժողովրդի ուզածի մասին, քան Աստծո պատվիրածի: Այդ անհնազանդությունը նրանից պահանջեց թագավորությունը: Դավիթ թագավորը չափեց իր ուժը՝ մարդահամար անցկացնելով Իսրայելի ժողովրդի մեջ, եւ ողջ ժողովուրդը պատիժ կրեց նրա անհնազանդությունից:

Անապատը պատրաստում է մեզ, որ մենք կարողանանք շարժվել Տիրոջ զորությամբ եւ փառքով՝ առանց մեղքի, որպեսզի անհնազանդության պատճառով մեզ չհասնի Աստծո պատիժը: Մարզման այս ընթացքում մեր հպարտությունը պետք է ցածրանա, իսկ խոնարհությունը մեծանա: Ճշմարիտ խոնարհ մարդը Հիսուսի նման է վարվում. «Ես ոչինչ չեմ անի, մինչեւ չտեսնեմ Տիրոջ Հոգուն անելիս: Ես ոչինչ չեմ կարող անել իմ ուժերով եւ կարողություններով»: Աստված պահում է Իր փառքի եւ զորության արտահայտումը Եկեղեցուց, որպեսզի մեզ պահպանի մեծ դատաստանից: Անապատում Նա բաժանում է մարմինը հոգուց՝ դրդելով մեզ գալ դեպի Իրեն եւ ենթարկվել Իր կամքին, որպեսզի երբ հայտնի Իր փառքը, մենք կարողանանք արտահայտել Իր անվան սրբությունը՝ ամեն բան անելով ԻՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ:

Քարոզիչնե՛ր, ոչինչ մի՛ արեք ուղղակի նրա համար, որ ինչ-որ մեկն այդպես է արել, եւ դա նրան հաջողվել է: Մի՛ կրկնօրինակեք ուրիշի ծառայությունները: Ոչինչ մի՛ արեք ըստ ավանդության: Ոչինչ մի՛ արեք ուղղակի, քանի որ այն ընդունված է այսօր բոլորի կողմից ծառայության մեջ: Լսե՛ք Հոգու ձայնը: Թո՛ւյլ տվեք Նրան՝ ցույց տալ ձեզ, թե ինչպես է ուզում տանել ծառայությունը: Տեսե՛ք եւ լսե՛ք, թե Տերն ինչ է անում եւ ասում:

«Իմ պահպանության տեղը կանգնեմ եւ կենամ պարսպի վրա եւ մտիկ տամ տեսնեմ, թե ինչ է խոսելու ինձ հետ, եւ ինչ պիտի պատասխանեմ իմ հանդիմանության մասին: Եվ Տերը ինձ պատասխան տվեց եւ ասաց. «Գրի՛ր տեսիլքը եւ որոշ նշանակիր տախտակների

վրա, որպեսզի վազի նրան կարդացողը: Որովհետեւ տեսլիքը տակավին որոշված ժամանակի համար է եւ շտապում է վախճանին եւ չի ստի. եթե ուշանա էլ, սպասիր նրան, որովհետեւ անպատճառ պիտի գա եւ ետ չի մնա: Ահա նա գոռոզացել է, նրա հոգին ուղիղ չէ իրենում, բայց արդարը իր հավատքով պիտի ապրի» (Ամբակում 2.1-4):

Մարգարեն ասում է. «Ես կհետեւեմ՝ Աստված ինչ է ասելու ինձ... »: Աստծո հետ խոսելու ճանապարհներից մեկը տեսիլքն է: Հիսուսն ասաց, որ Ինքն անում է այն, ինչ տեսնում է Հորն անելիս: Ամբակումն ասաց, որ ինքը կգրի այն, ինչ կտեսնի եւ կկատարի այն միայն Աստծո որոշած ժամանակ: Նա շարունակում է, որ հպարտ հոգին չի կանգնի (դա Տիրոջից խոսք չսպասող մարդն է, որը չի գնում Տիրոջ տեսիլքի ետեւից, այլ անում է այն, ինչ ինքն անհրաժեշտ է համարում): Բայց արդարը իր հավատքով կապրի եւ ոչ թե ուրիշների հավատքով: Հավատքը գալիս է լսելուց ինչ ասում է Աստված: Ահա ինչու Աստված բերեց Իսրայելի ժողովրդին անապատ. « ...որ քեզ իմացնի, թե ոչ միայն հացով կապրի մարդ, այլ Եհովայի բերանից դուրս եկած ամեն բանով» (Երկր. օր. 8.3): Նկատեք, որ Նա ասում է՝ «ելնող» եւ ոչ թե «ելած»: Դա խոսք է, որը Նա ասում է եւ ոչ թե միայն ասել է:

Եբրայեցիների 12.25-ում մեզ զգուշացվում է. «Զգուշացեք, չլինի որ մերժեք նրան, որ խոսեց, որովհետեւ եթե չկարողացան նրանք՝ երկրիս վրա պատգամ տվողին մերժողները, որքան ավելի մենք, եթե երկնքից Խոսողին մերժենք»: Բայց մի՛ մոռացեք, որ այն, ինչ Նա խոսում է այսօր, միշտ համապատասխանում է Աստծո Խոսքին: Սակայն եթե մենք քննենք Աստծո Խոսքը մեր ուզածն անելու հաստատման համար, ապա դա չի լինի Աստծո ճանապարհը: Հիսուսը կարող էր Իր համար ասել. «Ես օծված եմ հիվանդներին բժշկելու համար, ուրեմն կգնամ եւ միանգամից կձեռնադրեմ Ղազարոսին, ինչպես միշտ արել եմ»: Դրա փոխարեն Նա սպասեց, մինչեւ սկսեց շարժվել Սուրբ Հոգին, եւ միայն դրանից հետո շարժվեց նաեւ Ին-

քը: Եկեք հետեւենք Նրա օրինակին, շարժվենք Սուրբ Հոգով՝ անելով այն, ինչ Աստծո ճանապարհով է, ոչ թե մեր:

Աստված մեզ անապատ է բերում սովորեցնելու այն, որ ցանկացած փորձ, ինչ անում ենք առանց Նրա առաջնորդության, բաժանում է մեզ Իր առաջնորդությունից եւ կարողությունից, որն էլ իզուր ջանք է: Երբ մենք իրականում հասկանանք, որ մարմինը չի կարող անել հավիտենականությանը արժանի ոչինչ, այդ ժամանակ պատրաստ կլինենք այն ծառայությանը, որի համար Նա կանչել է մեզ: Անապատը պատրաստում է հետագա ծառայության համար:

ԳԼՈՒԽ 13

ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ

...Ճանաչել Նրան, ինչպես Նա է մեզ ճանաչում: Մինչեւ չհասնենք այդ նպատակին, չպիտի բավարարվենք...

«Առաջինները մի՛ հիշեք եւ հին բաները մի՛ մտաբերեք: Ահա Ես նոր բան եմ անում. հիմա կհայտնվի. մի՞թե չեք իմանա: Նաեւ մի ճանապարհ եմ շինելու անապատում, ամայի տեղերում էլ՝ գետեր»:

Եսայի 43.18,19

Անապատը մի վայր է, որտեղ Աստված նորոգում է Իր Հոգու շարժը: Իհարկե, դա մի նոր բան է մեզ համար, բայց ոչ Աստծո: Այնուամենայնիվ, մեզ անհրաժեշտ է, որ ճանաչենք Նրան այնպես, ինչպես Նա է ճանաչում մեզ: Փոխհարաբերությունների այսպիսի ձեւը նկարագրված է Կորնթացիների երկրորդ ուղերձի 3.18-ում. «Բայց մենք ամենքս, բաց երեսով Տիրոջ փառքը ինչպես հայելու մեջ տեսնելով, նույն պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դեպի փառք, ինչպես թե Տիրոջ Հոգուց»: Որպեսզի ճանաչենք Նրան, մենք ինքներս պետք է փոխվենք: Փոփոխությունները, որ մեզ ավելի են մոտեցնում Նրան, հաճախ հեշտ չեն, բայց մեր օգտին են: Մենք հաճախ ենք հակառակվում փոփոխություններին, որովհետեւ դրանք խախտում են մեր հարմարավետությունը: Մարդիկ արագ են հարմարվում սովորություններին: Մեզ համար դժվար է փոխել այն սովորությունները, որոնք արդեն հաստատվել են մեր կյանքում: Դա հատկապես պատահում է կրոնական ոլորտում: Կրոնական ամրոցներն ու ավանդույթները վաղ են

ձեւավորվում եւ խոր արմատներ են գցում: Ոչ բոլոր ավանդույթներն են սխալ, բայց երբ մարդը վարվում է իր կյանքում միայն դրանցով եւ ոչ թե իր սրտով, այդ ժամանակ նրա վարքն անկենդան է: Կրոնական այսպիսի հոգով մարդը արտաքինից բարեպաշտ տեսք ունի. նա կառչում է միայն նրանից, ինչ Աստված ԱՐԵԼ է՝ միաժամանակ հակառակվելով նրան, ինչ Աստված անում է այսօր:

Մենք այսպիսի վարք ենք տեսնում Հիսուսի օրերի փարիսեցիների եւ կրոնական այլ առաջնորդների մոտ: Նրանք հպարտանում էին, որ իրենք Աբրահամի եւ Ուխտի որդիներ են: Նրանք պնդում էին, որ Մովսեսի հետեւորդներն են հանդիսանում: Հաստատ իմանալով՝ ինչ է ԱՐԵԼ Աստված՝ նրանք մերժեցին Աստծո Որդուն, որ գտնվում էր իրենց մեջ: Նրանք նախանձավոր էին իրենց ավանդույթներին եւ երկրպագության ձեւերին: Բայց երբ եկավ Հիսուսը, մարտահրավեր նետեց բոլոր հաստատված եւ հարմարավետ ավանդույթներին: Նա հասկացրեց, որ Աստված չի պատրաստվում տեղավորվել նրանց սահմանափակ «տուփի» մեջ: Նրանք իրենք պետք է հարմարվեն Աստծուն: Փարիսեցիները հակառակվեցին այդ փոփոխություններին՝ ամուր բռնվելով իրենց ավանդույթներից: Այսպիսի կրոնական ոգին ծնում է ընտրովի վերաբերմունք (Աստված կգործի միայն մեր միջոցով եւ մեր սահմաններում), որի արդյունքում կարող են առաջանալ տարբեր ենթադրություններ եւ նույնիսկ նախանձ ու մատնություն, եթե այդ ոգուն չսաստենք: Հենց դա կատարվեց Հիսուսի օրերում եւ կատարվում է եկեղեցու ողջ պատմության ընթացքում:

Փոխվելու եւ փառքից փառք գնալու համար մեզ անհրաժեշտ է թողնել մեր հարմարավետ շրջապատը եւ հետեւել այն ճանապարհին, որով Տիրոջ Հոգին է տանում մեզ: Այդ ճանապարհը կանցնի անապատով, որտեղ Աստված է հանդիսանում նոր կյանքի աղբյուրը:

Դա կատարվեց Հովհաննես Մկրտչի կյանքում: Նրա հայրը քահանա էր, ինչ-որ ժամանակ էլ՝ քահանայապետ: Ըստ ժառանգու-

թյան՝ Հովհաննեսը պետք է դառնար քահանա, ինչպես իր հայրը: Երուսաղեմում նա գնում էր դպրոց եւ սովորում էր Գամաղիելի մոտ՝ ինչպես դառնալ փարիսեցի: Բայց մի օր Տիրոջ Հոգին Հովհաննեսին սկսեց կանչել անապատ: Որքան շատ էր նա աղոթում, այնքան շատ էր լսում ներքին ձայնը, որն իրեն անապատ էր կանչում: Նրա մեջ հասունանում էր տարաձայնությունը, մինչ նա խորհում էր. «Իմ բոլոր ընկերները գնում են աստվածաշնչյան դպրոց: Ավարտելով կստանան դիպլոմ եւ առաջնորդ կկոչվեն: Նրանք կձեռնադրվեն եւ կկարողանան քարոզել երկրի բոլոր ժողովարաններում: Ի՞նչ կմտածեն իմ մասին: Ինչպե՞ս ես կկարողանամ իրականացնել իմ կյանքի կանչը, եթե չգնամ աստվածաշնչյան դպրոց: Ես գիտեմ, որ Աստծուց ծառայելու կանչ ունեմ: Հայրս պատմում էր, որ հրեշտակն է հայտնել իմ ծնունդը եւ նրան ասել, որ ես ծառայող կլինեմ, բայց եթե ես գնամ անապատ, ոչ ոք չի իմանա՝ ով եմ ես: Ինձ երբեք չեն հրավիրի քարոզելու»: Անապատ գնալու համար նրա ներքին ձայնը հաղթանակ տարավ նրա մտքի վրա, որ ռմբակոծում էր հարցերով, եւ նա որոշում կայացրեց՝ Աստծո Հոգու ելքեւից գնալ անապատ: Ղուկասը գրում է. «Եվ երեխան աճում եւ զորանում էր հոգով եւ անապատներում էր, մինչեւ այն օրը, որ Նա երեւաց Իսրայելին» (Ղուկ. 1.80):

Ղուկասը շարունակում է. « ...Աստծո Խոսքը եղավ Զաքարիայի որդի Հովհաննեսին անապատում: Եվ Նա եկավ Հորդանանի ամեն կողմերը՝ ապաշխարության մկրտությունը քարոզելով մեղքերի թողության համար» (Ղուկ. 3.2,3): Աստված Հովհաննեսին պատրաստել էր անապատում եւ ոչ թե այդ ժամանակների ընդունված աստվածաշնչյան դպրոցներում: Հուդայի ողջ երկիրը եւ մարդիկ Երուսաղեմից գալիս էին նրա մոտ՝ լսելու Տիրոջ Խոսքը: Սկսվեց Հոգու նոր շարժ, բայց դա կատարվում էր *անապատում* եւ ոչ թե *կրոնական վայրերում:* Նրանք, ովքեր մինչեւ կոկորդը կուշտ էին կրոնական կեղծավորությունից եւ ավանդույթներից, գալիս էին Հովհաննեսի մոտ փոխվելու ցանկությամբ, որպեսզի պատրաստ լինեն Աստծո Որդու

հայտնվելուն:

Դրանից հետո Հիսուսը եկավ մկրտվելու Հորդանանի մեջ Հովհաննեսից: Նույնիսկ երբ Հովհաննեսը առարկեց, Հիսուսը պնդեց, որ նա դա անի: Հիսուսի ծառայության համար հարկավոր էր հնազանդվել նրան, ինչը այդ ժամանակ երկրի վրա անում էր Սուրբ Հոգին: Դրանից հետո Հիսուսի վրա իջավ Հոգին, եւ Նա անմիջապես փարվեց անապատ: Աստվածաշունչը շատ հստակ ասում է այն մասին, որ երբ Հիսուսը փարվեց անապատ, Նա լցված էր Հոգով եւ փորձության քառասուն օրից հետո վերադարձավ անապատից Հոգու զորությամբ: Այժմ Նա պատրաստ էր այն ծառայության համար, որի համար եկել էր: Հովհաննես Մկրտչի ծառայությունից վեց ամիս հետո անապատում ծնվեց նոր՝ Հիսուս Քրիստոսի ծառայությունը:

Հիսուսի ծառայության սկզբում Հովհաննես Մկրտչի աշակերտները եկան Հիսուսի մոտ եւ ասացին Նրան. «Ինչո՞ւ Հովհաննեսի աշակերտները շատ հաճախ ծոմ են պահում եւ աղոթքներ են անում, նույնպես էլ փարիսեցիները, իսկ Քո աշակերտները ուտում են ու խմում» (Ղուկ. 5.33): Այս մարդիկ մի քիչ սրտնեղած էին, որովհետեւ իրենք հաճախ էին ծոմ պահում, իսկ Հիսուսի աշակերտները ընդհանրապես ծոմ չէին պահում: Նրանք կատարում էին բոլոր զոհաբերությունները, այնինչ Հիսուսի աշակերտներն էին գրավում համընդհանուր ուշադրությունը: Այսպիսով՝ կարող ենք տեսնել, որ Աստծո Հոգու շարժի ձեւերից մեկը Հովհաննեսի օրերում հաճախակի ծոմերն էին: Այնուամենայնիվ, նրանք Հովհաննեսի ծառայությունից չփոխվեցին եւ չփոխադրվեցին Աստծո Հոգու ներկա շարժի մեջ: Նրանք հավատում էին, որ միայն իրենց ծառայության եւ երկրպագության մեթոդներն են պտուղ բերում: Նրանք մեծ գին վճարեցին, որպեսզի հետեւեն Հովհաննես Մկրտչին: Նրանք իրենց կյանքում շատ բան էին զոհել, եւ այժմ իրենց առաջնորդը բանտում էր... իսկ այստեղ էլ եկել է այս նոր Մարդը, Ում աշակերտները իրենց կանոններով չեն շարժվում: Այս մարդիկ վիրավորված էին, նրանց սպառնում էր ավանդական կրոնական ոգու ազդեցության վտանգը:

Հիշե՛ք, ավանդություններին հետեւող կրոնական մարդիկ միշտ ամուր կառչում են նրանից, ինչ ԱՐԵԼ է Աստված, միաժամանակ նրանք հակառակվում են նրան, ինչ Նա ԱՆՈՒՄ է այսօր: Ինչո՞ւ: Միգուցե ինչ-որ մի ժամանակ նրանք սկսեցին ավելի շատ մտահոգվել նրանով, թե ում հետ էին ծառայում, եւ ինչպես էին նրանք իրենց պահում, քան նրանով, թե ինչ է ասում կամ անում Աստված հիմա: Նրանց համար այլեւս կարեւոր չէր, թե ինչ կար Աստծո սրտում: Այժմ նրանց նպատակն էր հնազանդվել *մեթոդներին,* եւ դա մի ժամանակ իրենց մոտեցրել էր Տիրոջ սրտին: Նրանց սրտերում սկսեցին տիրել հպարտությունը եւ վիրավորանքը: Նրանք ներդրել էին ժամանակ եւ, միգուցե, գումարներ այդ ծառայության մեջ, իսկ այժմ ինչ որ նրանք արել էին, ինչի համար կանգնած էին, ինչ որ ձեռք էին բերել, վտանգված էր: Այդ պատճառով էլ սկսեցին հետեւել մեթոդներին եւ դիմադրել փոփոխություններին, չնայած նույն Հովհաննեսը՝ նրանց առաջնորդը, ասաց. «Նրան պետք է աճել, եւ ինձ՝ փոքրանալ» (Հովհ. 3.30):

Տեսեք, թե Հիսուսն ինչ է պատասխանում նրանց. «Մի՞թե կարող եք հարսանիքի տղաներին, քանի որ փեսան նրանց հետ է, ծոմ պահել տալ» (Ղուկ. 5.34): Նա բացահայտում է նրանց կրոնական իսկական շարժառիթները. «Ինչո՞ւ ծոմ պահեն, եթե Աստծո Որդին նրանց հետ է: Եթե Աստծուց որեւէ բանի կարիք ունեն, նրանք միշտ կարող են գալ Ինձ մոտ»: Կրոնական մտածելակերպը բերեց նրան, որ մարդիկ սկսեցին հավատալ, որ իրենց հարկավոր է արժանանալ Աստծո հաճությանը ծոմով: Նրանք սկսեցին ծոմին նայել որպես Աստծուն մոտենալու ձեւ, որը նրանց բարձր էր դասում նրանցից, ովքեր ծոմ չէին պահում (կամ չէին կատարում այն ավանդույթները, որոնց իրենք էին հավատարիմ): Այս հիմքի վրա նրանցում սկսեց ձեւավորվել հպարտությունը: Այսպիսով՝ մեթոդը նրանց համար ավելի կարեւոր դարձավ, քան իսկական պտուղները: Եվ չնայած ծոմը շատ օգտակար է, դա չի նշանակում, որ կերակուրից մեզ պահելով՝ կարող ենք խաբել Աստծուն: Հակառակը, ծոմը բերում է նրան, որ

մենք կարող եք հստակ լսել, թե ինչ է Աստված ասում կամ անում: Ահա թե ինչու աշակերտները չպետք է ծոմ պահեին Աստծո ձայնը լսելու համար. չէ՞ որ Նա նրանց կողքին էր:

Եկեք եւս մեկ անգամ կարդանք այս հատվածը. «Մի՞թե կարող եք հարսանիքի տղաներին, քանի որ փեսան նրանց հետ է, ծոմ պահել տալ: Բայց օրեր կգան, երբ փեսան վեր կառնվի նրանցից. ապա այն օրերում ծոմ կպահեն» (Ղուկ. 5.34,35): Հիսուսը չի ասում, որ միգուցե նրանք ծոմ կպահեն այն օրերին: Նա ասում է նրանք ծոմ կպահեն այն օրերին: Հիսուսին հարցնող մարդիկ խոսում էին միայն կերակուրից հրաժարվելու մասին, բայց Հիսուսը նրանց ասում էր ուրիշ ծոմի մասին նույնպես: Նկատեք, որ այդ ծոմը կլինի այն օրերին, երբ «փեսան իրենցից կվերցվի»: Նա խոսում է ոչ միայն ուտելիքից հրաժարվելու, այլ Աստծո ներկայության բացակայության մասին: Մենք այդ գիտենք, որովհետեւ Հիսուսը դա բացատրում է առակով, որը Նա պատմում է հաջորդ մի քանի խոսքերում: Անապատը այն ժամանակն է, երբ մենք բացահայտ կերպով չենք զգում Նրա ներկայությունը: Հիշե՛ք, անապատի սահմանումներից մեկը Աստծո շոշափելի ներկայության բացակայությունն է:

Այժմ նայենք առակը, որը պատմում է Հիսուսը, որպեսզի բացատրի Իր խոսքերը. « ...Ոչ ոք մի նոր հանդերձի կարկատան հին հանդերձի վրա չի գցի, ապա թե ոչ, այն նորն էլ կպատառի, եւ հնի հետ չի միաբանվի այն կտորը, որ նորից է: Եվ ոչ ոք նոր գինի հին տիկերի մեջ չի լցնի, ապա թե ոչ, նոր գինին տիկերը կպատառի, ինքն էլ կթափվի, տիկերն էլ կկորչեն: Այլ նոր գինին նոր տիկերի մեջ պետք է լցվի, եւ երկուսն էլ կպահվեն» (Ղուկ. 5.36-38):

Աստվածաշնչում նոր գինին Աստծո ներկայության խորհրդապատկերն է: Եփեսացիների 5.18-ում Պողոսը ասում է. «Եվ մի՛ արբեք գինիով, որ նրանում անառակություն կա, այլ լցվեք Հոգով»: Մեզ անհրաժեշտ է լցվել նոր գինով:

Հիշե՛ք՝ ինչ հիանալի էր, երբ առաջին անգամ լցվեցիք Հոգով:

Աստծո ներկայությունը քաղցր էր եւ ուժեղ: Ամեն անգամ, երբ աղոթում էիք, դուք անմիջապես զգում էիք Նրա ներկայությունը, եւ ամբողջ օրվա ընթացքում այդ ներկայությունը պահպանվում էր: Երբեմն եկեղեցում կարող էիք պարզապես նստել եւ արտասվել Նրա ներկայության մեջ: Բայց մի օր՝ ավելի ուշ, դուք նկատեցիք, որ այլեւս չեք զգում դա այնքան հեշտությամբ, որքան առաջ էր: Դուք շարունակում էիք աղոթել, բայց մտածում էիք. «Ո՞ւր է Աստված»: Դուք մտել եք անապատ: Կա պատճառ անապատի կամ Աստծո ներկայության բացակայության համար: Նա նոր տիկեր է պատրաստում նոր գինու համար: Դուք չեք կարող լցնել նոր գինին, այսինքն՝ Աստծո Հոգու նոր շարժը հին տիկերի մեջ:

Որպեսզի ավելի լավ հասկանանք, մենք պետք է նայենք, թե ինչպիսի տիկեր էին օգտագործում գինու համար Հիսուսի օրերում: Այդ ամանները պատրաստում էին ոչխարի կաշվից: Երբ առաջին անգամ դրանց մեջ գինի էին լցնում, կաշին փափուկ եւ ճկուն էր լինում: Դրանք հեշտությամբ ձգվում էին: Բայց ժամանակի ընթացքում մթնոլորտային ճնշումից կաշին գինուց կլանում էր ողջ խոնավությունը՝ դառնալով կոշտ եւ պինդ: Եթե դրանցից դատարկում էին գինին եւ փորձում էին լցնել նորը, կաշին կարող էր չդիմանալ նոր գինու կշռին եւ մակարդմանը, որովհետեւ այն արդեն կոպիտ եւ կոտրվող էր եւ կարող էր հեշտությամբ պատռվել: Հին կաշին նորոգելու համար մի քանի օր այն թողնում էին ջրի մեջ, հետո ձիթապտղի յուղ էին քսում: Դա կաշին նորից դարձնում էր ճկուն եւ փափուկ: Այս ընթացքը նրա խորհրդապատկերն է, ինչը կատարվում է մեզ հետ, որովհետեւ մենք ենք հոգեւոր նոր գինու անոթները: Եփեսացիների 5.26-ում ասվում է. «Որ նրան սրբացնի՝ մաքրելով ջրի ավազանով՝ Խոսքով»: Մենք պետք է թրջվենք Աստծո Խոսքի մեջ: Հոբն իր փորձությունների ժամանակ ասաց, որ ինքը գնահատում է Տիրոջ Խոսքն ավելի, քան իրեն պետքական կերակուրը (Հոբ 23.12): Ձիթապտղի յուղով քսելը կատարվում է այն ժամանակ, երբ մենք աղոթքի մեջ փնտրում ենք Աստծուն: Բայց, որպես կանոն, հին գինու տիկերը նո-

րացնելու համար, ձեզ առաջին հերթին անհրաժեշտ է թափել հին գինին: Դա նշանակում է, որ անոթում գինի չկա, չկա Աստծո շոշափելի ներկայությունը: Դա նշանակում է Աստծո ներկայության բացակայություն կամ, ինչպես շարունակ ասում ենք՝ չոր ժամանակ:

Ինչո՞ւ է Աստված հեռացնում Իր շոշափելի ներկայությունը ձեր կյանքից: Որպեսզի ձեզ հիասթափեցնի՞: Ո՛չ (նույնիսկ եթե դա պատահի): Որովհետեւ Նա ցանկանում է ձեզ դնել դարակի մեջ այնքան ժամանակ, մինչեւ դուք Իրեն պե՞տք լինեք: Ո՛չ:

Աստված հեռացնում է Իր ներկայությունը, որպեսզի դրդի մեզ՝ որոնել Իր երեսը: Որոնումները մեզ կրկին փափուկ եւ հնազանդ են դարձնում: Աստծուն չորոնող մարդիկ դառնում են կոպիտ եւ անսասան: Նրանք ծառայության եւ աղոթքի համար իրենց մեթոդներն ու դոկտրինաներն են սահմանում: Նրանք ուղղակի իրենց սովորություններն են պահպանում եւ ապրում են իրենց հին փորձառություններով:

Հենց այդպիսին էր Հովհաննեսի աշակերտների դրությունը: Նրանք հետեւում էին Հովհաննեսին, որովհետեւ տեսնում էին, թե Տերն ինչպես է զորավոր կերպով գործում նրա միջոցով: Սակայն, քանի որ դժվարությունները հաղթահարելով չսկսեցին առաջ գնալ դեպի Աստծուն՝ ճանաչելու իրենց բարձր կոչումը, նրանք դադարեցին լինել ճկուն Տիրոջը ծառայելու մեջ եւ սահմանափակվեցին իրենց հավատալիքներով եւ մեթոդներով: Աստծո Հոգու յուրաքանչյուր նոր շարժով գալիս է թարմ ուսմունք: Ուսմունքներն ու դոկտրինաները մեզ պետք է մոտեցնեն Աստծո սրտին: Եթե կենտրոնացած ենք միայն դոկտրինաներ սովորելու վրա, ուշ թե շուտ մենք կապված կլինենք կրոնական կապանքներով, կամ այն մեզ կհանգեցնի օրինապաշտության, կամ էլ սխալների (կամ էլ երեքը միասին): Դուք չեք կարող Աստծուն ճանաչել ըստ բանաձեւի: Շատ քրիստոնյաներ փորձում են գտնել բանաձեւեր: Նրանք ունեն յոթ քայլ դեպի բժշկությունը, չորս քայլ մեկին փրկության տանելու համար, ունեն աստվածաշնչյան տասը տեղ բարգավաճման մասին եւ

այլն: Եվ, ի վերջո, երբ արդեն ունեն «ճիշտ քրիստոնեության մոդելների» գիտությունը, նրանք դադարում են *որոնել* Աստծուն եւ շարունակում են ապրել իրենց սահմանած ավանդույթներով: Բայց եւ այնպես, նրանք զգում են դատարկությունը, նույնիսկ եթե ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ դա է «ամբողջ Ավետարանը»:

Երեմիա 29.12,13-ում ասվում է. «Եվ դուք կկանչեք Ինձ եւ կգնաք ու աղոթք կանեք դեպի Ինձ, եւ Ես կլսեմ ձեզ: Եվ դուք Ինձ կորոնեք եւ կգտնեք, որովհետեւ Ինձ կխնդրեք ձեր բոլոր սրտով»: Նրան գտնելու համար բավական չէ աղոթել: Շատերը կապված լինելով կրոնական բանաձեւերով, հավատարմորեն աղոթում են: Բայց Աստված Իր Խոսքում ասում է, որ մեր աղոթքում մենք պետք է փնտրենք ԻՐԵՆ: Այս Գրվածքներում Նա հստակ բացատրում է, որ մենք պետք է Իրեն որոնենք ողջ սրտով: Որոնումների մեջ քարացած կարգ չկա: Որոնումները ջանք են պահանջում: Ահա թե ինչու Եբրայեցիների 11.6-ում ասվում է. «Որպեսզի Աստծուն եկողը հավատա, որ Նա կա եւ Իրեն որոնողներին վարձահատույց է լինում»:

Իսկ հիմա եկեք եւս մեկ անգամ նայենք, թե ինչ ասաց Հիսուսը Ղուկասի 5.37-39-ում. «Եվ ոչ ոք հին տկերի մեջ նոր գինի չի լցնի. ապա թե ոչ նոր գինին տիկերը կպատռի. ինքն էլ կթափվի, տիկերն էլ կկորչեն: Այլ նոր գինին նոր տիկերի մեջ պետք է լցվի, եւ երկուսն էլ կպահվեն: Եվ ոչ ոք չկա, որ հինը խմի, շուտով նորը կամենա, որովհետեւ ասում է, թե հինն ավելի քաղցր է»: Նա, ով սովորել է հին գինուն, չի ցանկանա անմիջապես ստանալ նոր գինին: Այստեղ բանալի բառը «անմիջապես»-ն է, որովհետեւ մենք մարդիկ ենք, որ ունենք վատ սովորույթներ եւ կապվածություններ: Աստված պետք է կործանի հարմարավետության մեր այդ վիճակը՝ թափելով *հին գինին* եւ թույլ տալով *առանց գինու* անցնել նախապատրաստման չոր ժամանակներով, որպեսզի մենք սովորենք փափագել նոր գինին: Մաթեւոսի 5.6-ում Հիսուսն ասաց. «Երանի նրանց, որ սոված եւ ծարավ են արդարության, որ նրանք կկշտանան»: Երբ որոշ ժամանակ ընդհանրապես խմելու ոչինչ չունեք, եւ

ձեզ ծարավն է խեղդում, դուք չեք սկսի քմահաճություն անել. «Ես այս գինին չեմ ուզում, ուզում եմ հինը»: Նույնն էլ կատարվում է, երբ դուք փնտրում եք Աստծո ներկայությունն ու զորությունը, այդ ժամանակ ձեր կյանքում բաց կլինեք Աստծո Հոգու թարմ շարժի եւ ծառայության համար: Դուք Դավթի նման կլինեք, որ անապատով անցնելիս ասում էր. «Ո՛վ Աստված, Դու ես իմ Աստվածը, առավոտանց Քեզ եմ ման գալիս, հոգիս ծարավ է Քեզ համար. մարմինս Քեզ է ցանկանում ցամաք եւ ծարավ երկրում, ուր որ ջուր չկա: Այնպես սրբության տեղում նայեցի Քեզ, որ Քո զորությունն ու փառքը տեսնեմ» (Սաղմ. 63.1,2): Դավիթը ծարավ էր Աստծո ներկայությանը եւ զորությանը: Եվ արդյունքում, երբ դրվեց ծառայության մեջ, որի համար կանչված էր, նա ճկուն էր Աստծո ցանկությունների համար՝ ի տարբերություն Սավուղ թագավորի, որ ամեն բան անում էր իր ճանապարհով եւ ոչ թե Աստծո:

Ես առաջին անգամ քարոզչի իմ ծառայությունը սկսեցի որպես երիտասարդների հովիվ Ֆլորիդայում: Մենք երիտասարդական հզոր խումբ ունեինք: Մեր ծառայությունները ամեն կիրակի հեռարձակվում էին երկու հեռուստալիքով ԱՄՆ-ի երկու նահանգներում, որտեղ մեզ կարող էր դիտել ավելի քան չորս միլիոն մարդ: Ֆլորիդայի կենտրոնական շրջանի երկրորդ լավագույն աշխարհիկ ռադիոալիքով մեզ եթերաժամ տրամադրեցին ավետարանական ծառայության համար: Ամեն ինչ ուղղակի հրաշալի էր: Եվ մի օր աղոթքներից մեկի ժամանակ Աստծո Հոգին ասաց, որ փոփոխություններ են գալու: Նա ինձ ասաց. «Դու կթողնես երիտասարդական հովվի ծառայությունը, եւ Ես քեզ կուղարկեմ եկեղեցիներ եւ քաղաքներ ԱՄՆ-ի արեւելյան ափից մինչեւ արեւմտյանը, Կանադայի սահմաններից մինչեւ Մեքսիկայի սահմանները, Ալյասկա եւ Հավայան կղզիներ... »: Նա շարունակում էր ցույց տալ ինձ, թե ինչ պետք է ես անեմ Իր Հոգու հաջորդ շարժի մեջ իմ կյանքում: Ես ասացի այդ նորությունը կնոջս, եւ մենք երկուսով մտորում էինք դրա շուրջ մեր սրտերում՝ չասելով այդ մասին ոչ ոքի: Աստված ինձ ասաց, որ դա կանի, եւ ես հաս-

փաստ գիտեի, եթե դա իրոք Ինքն է, կարիք չկա, որ ես «օգնեմ Աստծուն»:

Բայց փասնութ ամսվա ընթացքում ոչինչ չկատարվեց: Այդ սպասողական ժամանակահատվածում ինձ համար ավելի ու ավելի դժվար էր մտնել Աստծո ներկայության մեջ, մինչեւ որ այն կարծես անհնարին դարձավ: Ես աղոթքի մեջ անցկացնում էի ավելի շատ ժամանակ, քան առաջ, բայց թվում էր, որ դա ինձ ավելի է տանում փակուղի: Եվ ոչ միայն դա. Աստծուց տրված երիտասարդական ծառայության մասին այն տեսիլքը ավելի էր մարում (հին գինին թափվում էր): Որքան շատ էի աղոթում, տեսիլքն այնքան շատ էր մարում: Արտաքինից ոչինչ չէր փոխվում, բայց ներսում այդ ցանկությունը հանգչում էր: Ես սկսեցի խոստովանել բոլոր մեղքերը, որ կարող էի հիշել, բայց դա իմ չորության վիճակը չէր թեթեւացնում: Մի երեկո, երբ հերթական անգամ փորձում էի պարզել, թե ինչ մեղք եմ գործել, Տերն ինձ ասաց. «Դու անապատ ես անցնում ոչ թե նրա համար, որ մեղք ես գործել, այլ Ես քեզ պատրաստում եմ եկող փոփոխությունների համար»: Երիտասարդական ծառայությունից առաջ ես ժամերով կանգնում էի աղոթքի եւ նույնիսկ մի քանի անգամ Աստծուն աղաչեցի ուրիշին նշանակել՝ այդ ծառայությունը վարելու համար: Բայց հետո գնում էի ծառայության, եւ Աստծո ներկայությունը գալիս էր ինձ վրա, ինչպես ծածկոց, երիտասարդներին ծառայելու ընթացքում: Բայց հենց ծառայությունը վերջանում էր, տուն գնալիս Աստծո ներկայությունը հեռանում էր մինչեւ հաջորդ շաբաթ: Այդ ժամանակ մենք անցանք ներքին եւ արտաքին փորձությունների միջով, որոնք մինչ այդ երբեք չէինք վերապրել:

Այն բանից հետո, երբ ես մեկ տարուց ավել անցկացրի անապատում, Տերն իմ սրտում դրեց, որ ուտելիքի ծոմ պահեմ: Մի քանի օրվա ծոմից հետո ինձնից մի աղոթք դուրս եկավ, որն անսպասելի էր իմ ականջների համար: Դա իմ սրտի աղաղակն էր, որը վեր էր իմ մտքից: Ես ասացի. «Տե՛ր, որտեղ էլ որ գտնվեմ՝ անապատում, ուր ոչ ոք չկա, կամ էլ քարոզեմ միլիոնավոր մարդկանց, ես միեւ-

նույն բանը կանեմ երկու վայրերում էլ: Ես կհեփեւեմ Քո սրտին»: Հանկարծ ես տեսա, թե ինչ է անում Աստված: Ես ասացի. «Տե՛ր, սա հենց այն է, ինչ Դու անում ես իմ մեջ: Դու ինձ մի տեղ ես բերել, որտեղ տեսնում եմ, որ միայն Դու ես իմ ժառանգությունը եւ իմ առաջին սերը եւ ոչ թե իմ ծառայությունը կամ որեւէ այլ բան: Եվ երբ փոփոխությունը կգա, ես դրանից կուռք չեմ սարքի: Ես չեմ ցանկանում թողնել Քեզ՝ իմ առաջին սիրուն, եւ սիրել ծառայությունը Քո փոխարեն: Իմ սիրտը ուղիղ կլինի»: Այդ ժամանակ ես հիշեցի՝ ինչ էր Աստված ասել Դավթի մասին. «Հետո նրան փոխեց, Դավթին տվեց նրանց թագավոր, որի համար վկայություն արեց. « ...Հեսսեի որդի Դավթին գտա Իմ սրտի պես մարդ, որ նա Իմ բոլոր կամքը կանի» (Գործք 13.22): Սավուղն այնքան էր սիրում իր ծառայությունը, որ սպանում էր միայն այն պահպանելու համար: Դավիթը չէր վազում գահի կամ դիրքի ետեւից: Նա Աստծո սրտի համեմատ մարդ էր: Անապատում Դավթին երկու անգամ հնարավորություն ընձեռնվեց սպանել Սավուղին եւ տիրանալ գահին: Նրան շրջապատող մարդիկ խրախուսում էին նրան անել դա: Եթե Դավիթն ունենար այնպիսի շարժառիթ, ինչպիսին Սավուղն ուներ, ապա կսպաներ նրան, որպեսզի տիրեր Սամուել մարգարեի միջոցով Աստծուց իրեն խոստացված թագավորությանը:

Որոշ տղամարդիկ եւ կանայք այսօր պատրաստ են չարախոսել, բամբասել եւ ստել՝ վերցնելու համար այն, ինչ Աստված խոստացել է իրենց: Նրանք Սավուղի նման են: Այդ մարդիկ սպանում են, որպեսզի ստանան կամ պահեն իրենց ծառայությունը: Աստված «Դավիթներ» է որոնում, ովքեր փնտրում են Աստծո սիրտը եւ ոչ թե դիրք: Հին տիկերի նախապատրաստումը Աստծո բնավորությունն է: Միայն Աստծո բնավորությունը կարող է պահել Հոգու նոր գինու ճնշումը (Նրա օծությունը եւ ներկայությունը): Բնավորությունը ձեւավորվում է, երբ փնտրում ենք Նրան, Ում փափագում ենք նմանվել:

Ապագա փոփոխությունների մասին Տիրոջից խոսք ստանալուց մի

քանի ամիս անց իմ հովիվը եկավ հավաքույթի եւ ասաց, որ Տերը ցույց է տվել իրեն, որ իր հովիվներից մեկը (հաստիքով նրանք տասն էին) շուտով կշրջագայի նահանգներով՝ քարոզելու: Այդ պատճառով նա այլեւս իր եկեղեցում չի ծառայի: Հետո նա ինձ ասաց. «Ջոն Բիվեր, այդ մարդը դու ես»: Մի քանի ամիս անց՝ երեք շաբաթվա ընթացքում, ես եկեղեցիներում քարոզելու յոթ հրավեր ստացա՝ մեկը՝ Կալիֆոռնիայից, մեկը՝ Մեքսիկայի եւ Տեխասի սահմաններից, մեկը՝ արեւելյան ափից, իսկ մեկ ուրիշն էլ՝ Կանադայից, ինչպես նաեւ երեք այլ վայրերից: Ես եկա իմ հովվի մոտ՝ գրասենյակ, հարցրի, թե ինչ անեմ: Նա ասաց. «Ջոն, ես քեզ ասացի, որ Տերը ինձ ցույց է տվել: Քո ժամանակը հասել է»: Կարճ ժամանակ անց նա ձեռնադրեց կնոջս եւ ինձ, եւ այդ օրվանից մենք ամբողջ ժամանակ շրջագայում ենք:

Անապատի տասնութ ամիսները պատրաստեցին մեզ մեր կյանքում եւ ծառայության մեջ Աստծո փոփոխությունների համար: Այդ ժամանակահատվածում Նա իմ մեջ բնավորություն էր ձեւավորում, որը պետք էր ինձ ծառայության այդ փուլում Իր կանչն իրականացնելու համար: Եվս մեկ անգամ կարդանք Եսայի 43.18,19 խոսքերը. «Առաջինները մի՛ հիշեք եւ հին բաները մի՛ մտաբերեք: Ահա Ես նոր բան եմ անում. հիմա կհայտնվի. մի՞թե չեք իմանա: Նաեւ մի ճանապարհ եմ շինելու անապատում, ամայի տեղերում էլ՝ գետեր»:

Տերն այդ ծառայությունը ծնեց ԱՄՆ-ում՝ անապատում, որտեղ թվում էր՝ ճանապարհ չկա, եւ իրավիճակն ավելի ու ավելի էր վատանում:

Աստված անում է ամեն ինչ, որ հին գինին չորանա, որպեսզի երբ գա նոր գինին՝ իր հետ բերելով նոր փորձություններ, դուք չցանկանաք վերադառնալ հնին: Նա օգտագործում է անապատը, որպեսզի մեզ նախապատրաստի փոփոխություններին:

ԳԼՈՒԽ 14

ՀԱԿԱՌԱԿՎԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ

...Ճանաչել Նրան այնպես, ինչպես Նա է մեզ ճանաչում: Մենք չենք կարող բավարարված լինել, մինչեւ այդ նպատակին չհասնենք...

«Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա. ետեւի բաները մոռանալով՝ դեպի առաջի լինողներն եմ նկրտում: Հետեւում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում»:

Փիլիպ. 3.13,14

Մեր կյանքում Աստծո բարձր կոչման նպատակին հասնելու համար, նախ եւ առաջ մեզ անհրաժեշտ է մեր սրտում խոստովանել, որ դեռ դրան չենք հասել: Մենք կատարյալ չենք, մեզ անհրաժեշտ է փոխվել եւ աճել:

Պողոսը գրեց Նոր կտակարանի մեկ երրորդ մասը եւ շատ եկեղեցիներ հիմնեց հեթանոսների մեջ: Նրա ծառայությունը տարածվեց ողջ աշխարհով մեկ: Բայց իր կյանքի վերջում նա ասաց. «Ես չեմ համարում, թե հասել եմ (ամեն ինչ գիտեմ)»: Նա բավարարված չէր: Նա բավարարված չէր այնքան ժամանակ, մինչեւ հասավ Աստծո բարձր կոչման նպատակին:

Մենք նույն բանը տեսնում ենք Մովսեսի կյանքում: Նա մեծ ծառայություն ուներ, երեք միլիոնանոց համայնք, նրան ուղեկցում էին մեծ հրաշքներ եւ նշաններ, որ չի ունեցել Հին կտակարանում ուրիշ ոչ ոք: Սակայն Աստված Մովսեսի մասին ասում է, որ նա ամենախոնարհն էր (ավելի հակված դեպի ուսմունքը) երկրի վրա եղած

մարդկանցից: Նա իրեն չէր համարում հասած, այլ շարունակում էր շարժվել դեպի Աստծո բարձր կոչումը: Որպեսզի աճենք եւ փոխվենք, մենք պետք է կարողանանք սովորել:

Երկրորդ հերթին՝ Աստծո բարձր կոչման նպատակին հասնելու համար մեզ անհրաժեշտ է մոռանալ անցյալը (հաղթանակները եւ պարտությունները, որոնք եղեւում են): Եվս մեկ անգամ ուշադրություն դարձնենք, թե Աստված ինչ է ասում Եսայի մարգարեի գրքում (43.18,19). «Առաջվանները մի՛ հիշեք ու հին բաները մի՛ մտաբերեք: Ահա Ես նոր բան եմ անում, հիմա կհայտնվի: Մի՞թե չեք իմանա: Նաեւ մի ճանապարհ եմ շինելու անապատում, ամայի տեղերում էլ՝ գետեր»:

Կասկած չկա, որ եթե մենք շարունակենք ապրել՝ չմոռանալով անցած անհաջողությունները, մերժվածությունը կամ մեղքը, դա կխանգարի մեզ քայլել առաջ Քրիստոսի մեջ: Բայց մեր անցյալում եղած հանդիսավոր *հաղթանակների* մասին մտքերը նույնպես կարող են մեզ եւ պահել առաջ գնալուց: Երբ մենք մեզ ինքնավստահ ենք զգում եւ ավելի շատ սկսում ենք հենվել մեր անցած ձեռքբերումների, փորձի եւ արժանիքների վրա, բաց ենք թողնում այն, ինչ Աստված պատրաստում է մեզ համար այսօր: Հենց դրա մասին է Աստված զգուշացնում Եսայի մարգարեի միջոցով: Տերը մեզ հետ էր եւ հրաշքներ էր անում անցյալում: Բայց բարձր կոչման նպատակին հասնելու համար մենք պետք է պատրաստ լինենք մոռանալ այն, թե ինչպես էր Աստված շարժվում մեր մեջ եւ մեր միջոցով անցյալում: Պողոսն ասել է. «Երբ երեխա էի, երեխայի պես էի խոսում, երեխայի պես էի մտածում, երեխայի պես էի համարում. բայց երբ մարդ եղա, այն երեխայության բաները խափանեցի: Որովհետեւ հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանակ՝ դեմառդեմ. հիմա փոքրիշատե եմ տեղյակ, բայց այն ժամանակն այնպես կգիտենամ, ինչպես գիտեցված եմ» (Ա Կորնթ. 13.11,12):

Երեխա լինելը վատ չէ, պարզապես երեխան հասուն չէ: Երբ ես հինգ տարեկան էի, ինձ թվում էր, որ ողջ աշխարհը կազմված է լե-

գոյի խաղալիք բեռնատար մեքենաներից եւ փուփերից: Ինձ համար մեծ ձեռքբերում էր անգիր սովորել այբուբենը: Ես աշխարհը տեսնում էի մուգ ապակու միջով: Այն ժամանակ դեռ չէի կարող պարզ տեսնել ամեն բան, որովհետեւ բավականին մեծ չէի:

Երբ լրացավ իմ տասնութ տարին, խաղալիք բեռնատարները մնացին անցյալում: Տարիներ հետո կյանքը սկսեցի տեսնել ապակու միջով, որն այնքան էլ մուգ չէր, թեպետ ամբողջությամբ պարզ էլ չէր: Հասկանալու իմ մակարդակը եւ կարողությունները աճել էին: Ձեզ հայտնի է, որ երբ տասնութ տարեկան երիտասարդը իրեն պահում է հինգ տարեկան երեխայի նման, դա նորմալ երեւույթ չէ: Մեծանալով մենք մի կողմ ենք դնում կամ մոռանում ենք մանկական անցած ճանապարհներն ու հասկացությունները: Դրանք այլեւս մեզ պետք չեն եւ չեն զվարճացնում, ինչպես առաջ:

Նույնն է կատարվում, երբ մեծանում ենք Աստծո ճանապարհներում: Կյանքի մի մակարդակից դեպի մյուսն անցնելով՝ մեզ անհրաժեշտ է անցյալում թողնել ոչ հասուն բաները եւ չհիշել դրանք: Պողոսն ասում է, որ հիմա մենք Աստծո ուղիները եւ Նրա փառքը տեսնում ենք կարծես ապակու միջով, բայց վերին կոչման նպատակին հասնելիս մենք ավելի պարզ կտեսնենք, մինչեւ Աստծո առջեւ կկանգնենք երես առ երես: Այլ խոսքով՝ մենք կճանաչենք Նրան այնպես, ինչպես Նա է ճանաչում մեզ:

Այսպիսով՝ ո՞րն է վերին կոչման նպատակը: Պողոսը դրան պատասխանում է Փիլիպեցիների 3.10-ում. «Որ ճանաչեմ Նրան եւ Նրա հարության զորությունը եւ Նրա չարչարանքի մասնակից լինելը՝ Նրա մահվանը կերպարանակից լինելով»:

Աստծո վերին կոչման նպատակը Նրա Որդի Հիսուս Քրիստոսի կերպարանքին նմանվելն է: Դա նշանակում է ճանաչել Նրան այնպես, ինչպես Նա է ճանաչում մեզ: Մենք չպետք է հանգստանանք, մինչեւ չհասնենք այդ նպատակին: Այդ պատճառով մենք երբեք չպետք է դադարենք որոնել Աստծո սիրտը:

Եվ այսպես՝ առաջին հերթին մեզ անհրաժեշտ է գիտակցել, որ

մենք դեռեւս պետք է հասնենք վերին կոչման նպատակին:

Երկրորդ հերթին՝ հարկավոր է մոռանալ եղեւի բաները:

Երրորդ հերթին՝ որպեսզի մեր կյանքում հասնենք Աստծո վերին կոչման նպատակին, մեզ հարկավոր է ջանք գործադրել: Եթե մեզ անհրաժեշտ է ջանք գործադրել, նշանակում է՝ անխուսափելի են հակառակությունը կամ ճնշումը: Կա մեկը, որ միշտ հակառակվում է, որպեսզի մենք չճանաչենք Տիրոջը: Հիսուս Քրիստոսով կերպարանափոխված մարդը սատանայի համար մեծ վտանգ է ներկայացնում: Խավարի ուժերը փորձում են դիմադրել դրան իրենց ողջ ուժով: Երբ մարդը կերպարանափոխված է Հիսուս Քրիստոսով, նա այլեւս չի ապրում իր համար, այլ Նրա, Ով ապրում է իր մեջ: Այսպիսով՝ նա մտնում է վերին կյանքի մեջ, որպեսզի քայլի Աստծո ուղիներով:

Ահա թե ինչու Պողոսն ասաց, որ Նրան ճանաչելու համար մենք պետք է մասնակից լինենք Նրա չարչարանքներին: Մարմնի չարչարանքները մահ են բերում «ես»-ին, որն էլ բերում է հարության կյանք:

Պետրոսի առաջին ուղերձի 4.1,2-ում ասվում է. «Արդ Քրիստոս, որ մարմնով մեզ համար չարչարվեց, դուք էլ նույն մտքով զինվորվեցեք, որ մարմնով չարչարվողը մեղքից դադարեց: Որ այլեւս ոչ թե մարդկանց ցանկությունների պես, այլ Աստծո կամքի պես ապրեք մարմնում մնացած ժամանակ»:

Մարմնով չարչարվողները դադարում են մեղք գործել: Հենց այսպիսի մարդկանց մեջ է զարգանում Քրիստոսի բնավորությունը: Սա այն նպատակն է, որին պետք է ձգտենք: Ի՞նչ է նշանակում Քրիստոսի չարչարանքները: Շատերը սխալ են հասկացել սա: Կրոնն այնպես է աղավաղել Խոսքը, որ շատերը խուսափում են դրանից: Չարչարանքները մահացու հիվանդությունները կամ փողի պակասությունը *չեն:* Դա շաբաթներով սոված մնալը չէ, որպեսզի Աստված ընդունի ձեր զոհը: Չարչարանքները զոհ չեն, այլ հնազանդություն: Ապա Պետրոսը պատասխանում է չարչարանքների մասին հարցին. « ... որպեսզի այլեւս չանցկացնի իր երկրային կյանքի մնացած մա-

սը մարդկային ցանկությունների հետ ներդաշնակության մեջ, այլ Աստծո կամքին հնազանդվելով» (Ա Պետր. 4.2) (ըստ Չարլզ Ուիլյամսի թարգմանության):

Քրիստոսի չարչարանքներ կրելը նշանակում է կատարել Աստծո կամքը, երբ մեր միտքը, զգացմունքները կամ զգայարանները մեզ կոչ են անում հանգստության կամ հաճույքների: Դա նաեւ բախումների առաջացում է, որովհետեւ Աստված ասում է մեզ գնալ մի ճանապարհով, իսկ մեր ընկերները, ընտանիքը, համագործակիցները եւ այլոք քաշում են այլ կողմ: Հաճախ մենք ստիպված ենք լինում բախվել հենց ամենամտերիմ մարդկանց հետ:

Դրա դասական օրինակն է, երբ Պետրոսը չհամաձայնեց Հիսուսի հետ Նրա մահվան եւ թաղման հարցում: «Այնուհետեւ Հիսուսը սկսեց աշակերտներին հայտնել, թե պետք է Իրեն Երուսաղեմ գնալ եւ ծերերից, քահանայապետներից ու դպիրներից շատ չարչարանքով չարչարվել, սպանվել եւ երրորդ օրը հարություն առնել: Եվ Պետրոսը Նրան մի կողմ տանելով սկսեց Նրան հանդիմանել եւ ասել. «Քա՛վ լիցի Քեզ, Տե՛ր, այդ չլինի Քեզ»: Եվ Նա դառավ, ասաց Պետրոսին. «Ետիս գնա, սատանա՛, դու գայթակղություն ես Ինձ, որովհետեւ դու միտք չես անում Աստծո, այլ մարդկանց բաները»» (Մաթ. 16.21-23):

Հիսուսն Իր աշակերտներին հայտարարեց, որ պետք է գնա Երուսաղեմ, չարչարվի, սպանվի եւ երրորդ օրը հարություն առնի: Ակնհայտ է, որ Պետրոսը չէր լսել, երբ Հիսուսը խոսել էր Իր հարության մասին, այլապես նա այդպես չէր անհանգստանա Հիսուսի՝ Իրեն սպասվող մահվան հայտարարության համար:

Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ մտքեր ուներ Պետրոսը. «Սպասի՛ր մեկ րոպե, Դու ես Մեսիան *(դա նրան հայտնի էր)*, եւ Դու պետք է թագավորություն հիմնես ու վերականգնես Իսրայելը: Ես թողեցի իմ բիզնեսը, կնոջս եւ ընտանիքս, որպեսզի հետեւեմ Քեզ: Որպեսզի լինեմ Քեզ հետ, ես կորցրի բոլոր ընկերներիս: Ես շատ ժամանակ եմ վատնել դրա վրա: Ես հեղինակություն եմ ձեռք բերել: Ժողովարան-

ների առաջնորդները մտածում են, թե Դու խենթ ես, թերթերն անընդհատ հոդվածներ են գրում՝ վիճելով, թե Ով ես Դու: Ծատ հարգված աստվածաբաններ Քեզ նայում են որպես հերետիկոսի: Եվ հենց այդ ժամանակ Դու խոսում ես մահվան մասին: Ի՞նչ կլինի ինձ հետ: Ես այնքան թանկ ժամանակ եմ ծախսել, որ հետեւեմ Քեզ, եւ հիմա ինձ ոչինչ չի մնում, բացի վատ հեղինակությունից»: Եվ այդ ժամանակ նա ասաց. «Ո՛չ, Տեր, Դու դա չես անի»:

Հիսուսը անմիջապես կանգնեցրեց Պետրոսին եւ ցույց տվեց, որ նրա մտքերը այնպիսին էին, ինչպիսին աշխարհիկ մարդկանց մտքերը: Աշխարհը սատանայից (այս աշխարհի աստծուց (Բ Կորնթ. 4.4)) սովորել է առաջին հերթին որոնել սեփական շահերը: Երկնային արքայությունը միանգամայն հակառակն է: Այդ պատճառով Աստծո կամքը կատարելու համար մենք պետք է հակառակ գնանք մարդկանց հոսքին, նույնիսկ եթե դա նշանակում է դեմ դուրս գալ «եղբորը, որ Քրիստոսի մեջ է», ում միտքը նորոգված չէ Աստծո կամքի համեմատ: Պետրոսը չար մարդ չէր, բայց այս հարցի շուրջ նրա մտքերը Քրիստոսինը չէին, այլ աշխարհինը:

Եվս մեկ օրինակ, երբ Իսրայելի ժողովուրդը կանգնած էր Քանանի երկրի մոտ: Ահա մեկ տարուց ավելի է՝ նրանք թափառում էին անապատում: Վերջիվերջո, Աստված ասաց Մովսեսին՝ լրտեսներ ուղարկել «խոստմունքի երկիր», որը Նա տալու էր իրենց: Մովսեսը ընտրեց տասներկու լրտեսներին՝ ամեն սերնդից՝ մեկ հոգու: Նրանցից երկուսը Հեսուն եւ Քաղեբն էին:

Երբ լրտեսները երկիրն ուսումնասիրելուց հետո վերադարձան, նրանք միմյանց հակասող պատասխաններ տվեցին իրենց տեսածի վերաբերյալ: Նրանցից տասը ասացին. « ...այն երկրի մեջ բնակվող ժողովուրդը զորավոր է, քաղաքները պարսպավոր եւ խիստ մեծ են, նաեւ այնտեղ Ենակի որդիներին տեսանք: Ամաղեկացիները այն երկրի հարավային կողմում, եւ քետացիները եւ հեբուսացիները ու ամորհացիները բնակվում են սարերում... մենք չենք կարող այն ժողովրդի վրա ելնել, որովհետեւ նրանք մեզանից զորավոր են»: Եվ

իրենց լրտեսած երկրի վատ լուրը բերին... » (Թվոց 13.28-32):

Քաղեբը եւ Հեսուն այլ լուր բերեցին. «Եվ Քաղեբը ժողովրդին Մովսեսի առջեւ լռեցրեց եւ ասաց. «Լավ, ելնենք եւ ժառանգենք այն, որովհետեւ մենք անպատճառ կարող ենք նրան տիրել... Եթե Եհովան մեզ վրա հաճի, Նա մեզ այն երկիրը կտանի եւ այն մեզ կտա, որ կաթ ու մեղր բխող երկիր է: Միայն թե Եհովայի դեմ մի՛ ապստամբեք եւ այն երկրի ժողովրդից մի՛ վախեցեք, որովհետեւ նրանք մեր կերակուրն են, նրանց պաշտպանությունը գնացել է իրենց վրայից, ու Եհովան մեզ հետ է. նրանցից մի՛ վախեցեք» (Թվոց 13.31, 14.8,9):

Բոլոր տասներկուսը միասին էին գնացել եւ նույն բանն էին տեսել: Բոլորը տեսել էին նույն երկիրը, քաղաքները եւ մարդկանց: Ինչո՞ւ տասը եկան՝ մի բան տեսած, իսկ երկուսը՝ այլ բան:

Աստված Քաղեբի եւ Հեսուի մասին ասում է, որ նրանք ուրիշ հոգի ունեին, եւ այդ պատճառով նրանք հնազանդվեցին Իրեն ամբողջությամբ (Թվոց 14.24): Այլ խոսքով՝ նրանք չհետեւեցին մարդկային ցանկություններին, այլ Աստծո կամքին: Սա այն բանալին է, թե ինչու տասը լրտեսները չտեսան այն, ինչ տեսան Հեսուն եւ Քաղեբը: Տասը ավելի շատ մտահոգված էին իրենց հարմարավետության, ապահովության եւ ընտանիքների, քան Աստծո ծրագրերի իրականացման: Նրանք ապրում էին մարդկային ցանկություններով, ոչ թե Աստծո կամքով: Նրանք կյանքում առաջնորդվում էին ոչ թե Աստծո արքայությամբ, այլ նրանով, թե ինչ էր իրենց սպասվում: Ժողովուրդն էլ կողմնակից էր այն տասին. «... Երանի թե Եգիպտոսի երկրում մեռած լինեինք կամ երանի թե այս անապատի մեջ մեռած լինեինք: Եվ ինչո՞ւ Եհովան մեզ այս երկիրը բերեց, որ սրով ընկնենք, եւ մեր կանայք ու մեր որդիները հափշտակվեն. լավ չէ՞ մեզ համար, որ Եգիպտոս դառնանք» (Թվոց 14.2,3): Նրանք ավելի մտահոգված էին նրանով, թե ինչը լավ կլիներ իրենց, քան նրանով, թե ինչ է Աստված ուզում:

Արդյունքում նրանք այդպես էլ չտեսան խոստմունքի երկիրը:

Նրանք երբեք չհասան Աստծո վերին կոչմանը իրենց կյանքում, մինչդեռ Հեսուն եւ Քաղեբը, չնայած դժվարություններին, առաջ էին գնում: Նրանք ստիպված էին դիմադրել «եղբայրների» կողմից եկող հակառակությանը: Տեսեք, թե ինչ էին ուզում անել նրանց հետ «եղբայրները»: «Եվ բոլոր ժողովքը ասացին, թե քարերով քարկոծեն նրանց» (Թվոց 14.10): Հեսուն եւ Քաղեբը ստիպված եղան չարչարվել իրենց եղբայրների կողմից, որոնք հակառակվեցին իրենց խոսքերին եւ գործերին, քանի որ նրանց միտքը նորոգված չէր, եւ նրանք սովոր էին հետեւել ավանդույթներին եւ այս աշխարհի ցանկություններին:

Պողոսն ասում է, որ իրեն հարկավոր էր հինը մոռանալով, *ջանքով* առաջ գնալ դեպի Աստծո վերին կոչման նպատակը: Եվս մեկ անգամ կարդացե՛ք Եսայի մարգարեի խոսքերը. «Առաջինները մի՛ հիշեք եւ հին բաները մի՛ մտաբերեք: Ահա Ես նոր բան եմ անում. հիմա կհայտնվի. մի՞թե չեք իմանա: Նաեւ մի ճանապարհ եմ շինելու անապատում, ամայի տեղերում էլ՝ գետեր» (Եսայի 43.18,19):

Իսրայելի ժողովուրդը սկսեց հիշել անցյալը, ինչ որ եղել էր Եգիպտոսում, երբ նրանց ստամոքսները լիքն էին, եւ ամեն բան կայուն էր թվում: Նույնիսկ չնայած նրան, որ իրենք ստրուկ էին Եգիպտոսում, այն, ինչի հետ հիմա նրանք բախվեցին, ավելի դժվար էր, քան ստրկության շղթաները:

Տխուր է խոստովանել, բայց դա այդպես է նաեւ մեր օրերում: Շատերի համար լավ է մնալ կաշկանդված, քան ջանալ ճանաչել Աստծո կամքը: Նրանք ավելի շատ վախենում են առջեւում սպասվող փոփոխություններից, քան ծանոթ կեղեքող իրադրություններից, որոնց մեջ իրենք ապրում են: Ուրիշները բավարարված են նրանով, ինչ առաջ Աստված տվել է իրենց, եւ նոր փոփոխություններ չեն ուզում, որպեսզի չբախվեն նոր դժվարությունների հետ: Աստծո կամքն այն է, որ մեզ կյանք եւ ազատություն բերի: Միայն այս կերպ է հնարավոր հասնել իսկական լիարժեքության: Բայց մեզ ուղղակի անասելի դժվար եւ անհնարին է թվում վերին նպատակին հասնե-

լը, երբ դրան նայում ենք բնական տեսանկյունից: Ասված ասաց, որ Ինքը նոր բան է արարում, բայց դա կծնվի անապատում: Այլ խոսքով՝ եթե մենք հետեւում ենք Աստծո Հոգու առաջնորդությանը, որպեսզի կատարենք Նրա ցանկությունները, ապա Նա մեզ այնպիսի տեղ կբերի, որը անտանելի անապատ կթվա: Բայց ինչը մարդուն անհնար է, հնարավոր է Աստծուն:

Օ՛, քրիստոնյա՛, կանգ մի՛ առ Աստծուն հետեւելիս, երբ գալիս է դիմադրությունը: Նա քեզ հեշտ տեղեր չի տանի: Նա քեզ դժվար տեղեր կտանի, որովհետեւ որքան մեծ է պայքարը, այնքան մեծ է հաղթանակը: Եթե դու սիրում ես քո կյանքը, դժվար տեղերում դու կհանձնվես: Դու կդադարես ձգտել Աստծուն ճանաչել եւ ապաստան կգտնես անպտուղ կյանքի մեջ: Առջեւում սպասվելիք դժվարություններին դիմադրելու միակ ձեւը քո կյանքը *կորցնելն է:* Հայտնության 12.11-ում ասվում է. «Եվ նրանք հաղթեցին նրան Գառի արյունով եւ իրենց վկայության խոսքով եւ չսիրեցին իրենց հոգին մինչ ի մահ»: Ովքեր ավելի շատ հոգ են տանում իրենց մասին, քան Աստծո կամքի, ավելի շատ սիրում են իրենց կյանքը: Իսկ Հիսուսն ասաց. «Որովհետեւ ով իր անձը ուզի ապրեցնել, կկորցնի նրան, եւ ով իր անձը կորցնի Ինձ համար, կգտնի նրան» (Մաթ. 16.25):

ՄԱՍ 5

ՀԱՂԹԱՆԱԿ ԱՆԱՊԱՏՈՒՄ

ԳԼՈՒԽ 15

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

Փոխվելու կամ կերպարանափոխվելու համար մեզ հարկավոր է պատրաստ լինել թողնել հարմարավետությունը, ապահովությունը եւ բոլոր սովորական դարձած բաները...

«Ինձ լսեցեք, ով արդարության հետեւողներ, ով Տիրոջը խնդրողներ, նայեք այն վեմին, որից դուք կտրված եք, եւ այն հորի գուբին, որից դուք փորված եք. նայեցեք ձեր հայր Աբրահամին եւ ձեզ ծնող Սարրային, որովհետեւ մեկ հատ էր նա, որ ես կանչեցի, բայց ես նրան օրհնեցի եւ նրան բազմացրի: Որովհետեւ Տերը պիտի մխիթարի Սիոնին, պիտի մխիթարի նրա բոլոր ավերակները, եւ նրա անապատը դրախտի նման պիտի շինի, եւ նրա ամայի տեղը՝ Տիրոջ պարտեզի պես. ցնծություն եւ բերկրություն պիտի գտնվի նրանում, գովասանություն եւ օրհներգության ձայն»:

Եսայի 51.1-3

Աբրահամը կոչվում է բոլոր հավատացյալների հայր (Հռոմ. 4.11-16): Նկատեք, Աստված ասում է, որ Ինքը կանչեց միայն նրան: Նախորդ գլխում մենք խոսում էինք, որ եթե ուզում ենք փոխվել կամ կերպարանափոխվել, մեզ հարկավոր է պատրաստ լինել թողնել հարմարավետությունը, ապահովությունը եւ բոլոր սովորական դարձած բաները, որպեսզի Սուրբ Հոգով փարվենք անապատ: Կերպարանափոխվող մարդը պետք է պատրաստ լինի թողնել իր բնական, սոցիալական կամ կրոնական ժառանգությունը, որպեսզի շարժվի Աստծո Հոգու հետ միասին: Աբրահամին հարկա-

վոր էր թողնել իր ընտանիքը, ընկերներին եւ ժառանգությունը՝ Աստծո կանչը իրականացնելու համար: Որպեսզի Աստծուն ճանաչեր, նա պետք է առանձնանար իր հարազատներից եւ հետեւեր Աստծուն դեպի անծանոթ երկիր, որը Նա ցույց կտար իրեն:

Աբրամի հնազանդության շնորհիվ (Աբրահամի անունը նախքան Աստծո փոխելը) Աստված օրհնեց նրան եւ բազմացրեց նրա հարստությունը: Բայց եւ այնպես, երբ նա թողեց իր հարմարավետ շրջապատը եւ գնաց այն երկիր, ուր Աստված տարավ նրան, այնտեղ սաստիկ սով էր: Այժմ եկեք կանգ առնենք եւ մտածենք դրա մասին: Աստված խոստացավ օրհնել Աբրամին, նրանից մեծ ազգ ստեղծել եւ նրա անունը մեծացնել: Աբրամը թողեց ամեն բան, որպեսզի հետեւի Տիրոջը: Բայց երբ նա եկավ այդ երկիր, ստիպված էր գնալ ապրել Եգիպտոսում, քանի որ այդ ժամանակ այդ երկրում ահավոր սով էր (Ծնն. 12.1-10): Մեզանից շատերն այդ դրության մեջ կմտածեին, որ Աստծուց չեն լսել, եւ կվերադառնային այն վայրը, որտեղից նոր են դուրս եկել: Ի տարբերություն մեզ՝ Աբրամը թույլ չտվեց, որ հանգամանքներն ազդեն Աստծո հանդեպ ունեցած իր հավատքի վրա: Նա գիտեր, որ Աստված կարող է բազմացնել սովի ժամանակ: Սա դաս է մեզ համար:

Աստված մեզ ցույց է տալիս մեծ բաներ, որ Նա մտադիր է անել մեր միջոցով ապագայում, իսկ հետո մեզ տանում է անապատ, որպեսզի պատրաստի դրա համար: Սամուելը մարգարեացավ, որ Դավիթը կլինի հաջորդ թագավորը... եւ կարճ ժամանակ անց Դավիթը սկսեց ապրել ժայռերում ու շրջում էր անապատում՝ պատրաստվելով բարձրանալ գահին:

Հովսեփը երազ տեսավ մեծ ապագայի մասին: Աստված պատրաստվում էր դարձնել նրան մեծ առաջնորդ: Նույնիսկ նրա հայրը, մայրը եւ եղբայրները պետք է խոնարհվեին նրա առջեւ... Հետագա տասնյոթ տարին նա անցկացրեց գուբի, ապա ստրկության մեջ եւ բանտում:

Քառասուն տարեկանում Մովսեսն իմացավ, որ ինքը կլինի եգիպ-

տական ստրկությունից իր եղբայրներին ազատողը (Գործք 7.23-25): Սակայն հետագա քառասուն տարին նա անցկացրեց անապատում, որտեղ արածեցնում էր ուրիշի ոչխարներին:

Հովհաննես Մկրտիչը կանչված էր դառնալ ամենամեծ մարգարեներից մեկը: Նրա հայրը պատմել էր իրեն այդ կոչման մասին: Մինչ Հովհաննեսը կմտներ իր կոչման մեջ, շատ տարիներ անցկացրեց Հուդայի անապատներում:

Հայրը Հիսուսին Աստծո Որդի հռչակեց Հորդանան գետի մոտ հավաքված մեծ բազմության առջեւ: Աստծո Հոգին իջավ Նրա վրա մարմնապես: Դրանից հետո Հոգին անմիջապես Նրան տարավ անապատ:

Ինչպես տեսնում ենք, անապատը մի տեղ է, որտեղ Աստված մեզ փորձում է, խոնարհեցնում, մաքրում եւ ձեւավորում մեր մեջ Իր բնավորությունը: Սա նախապատրաստական հող է ապագա ծառայության համար:

Առավել հետաքրքիր է այն, որ անապատը հանդիսանում է այն վայրը, որտեղ Աստված Իրեն նորովի է բացահայտում: Եվս մեկ անգամ ուշադրություն դարձրեք, թե ինչ է ասում մարգարեն. « ...նրա անապատը դրախտի նման պիտի շինի, եւ նրա ամայի տեղը՝ ՏԻՐՈՋ պարտեզի պես. ցնծություն եւ բերկրություն պիտի գտնվի նրանում, գովասանություն եւ օրհներգության ձայն» (Եսայի 51.3):

Եդեմի այգին մի վայր էր, որտեղ Աստված Իրեն հայտնում էր Ադամին: Դա այն տեղն էր, որտեղ Ադամը եւ Աստված մտերիմ փոխհարաբերություններ ունեին:

Որտե՞ղ էր Մովսեսը, երբ Աստված հայտնվեց նրան այրվող մորենու միջից:

> ***«Եվ Մովսեսը Մադիամի քուրմի՝ իր աներոջ՝ Հոթորի հոտը արածեցնում էր, եւ հոտը անապատի ետեւը քշելով՝ Աստծո Քորեբ սարը եկավ: Եվ Եհովայի հրեշտակը կրակի բոցով երեւաց նրան մորենու միջից, եւ նա տեսավ, որ այդ մորենին կրակով վառվում էր, բայց չէր սպառվում: Եվ Մովսեսն ասաց.***

«Մեկ դառնամ ու տեսնեմ այս մեծ տեսարանը, թե ինչու մորենին չի այրվում»: Եվ Եհովան տեսավ, որ նա դարձավ տեսնելու, եւ մորենու միջից կանչեց նրան ու ասաց. «Մովսե՛ս, Մովսե՛ս»: Եվ նա ասաց. «Ահա՛ ես»»:

Ելից 31-4

Մովսեսը այս անապատում քառասուն տարի անցկացրեց: Եվ մի օր հանկարծ Աստված հայտնվեց նրան այրվող թփի միջից. «Ես եմ, ՈՐ ԵՄ»: Մովսեսն ասաց. «Մեկ դառնամ ու տեսնեմ այս մեծ տեսարանը... »:

Անապատում ձեզ պատում է ծարավը եւ քաղցը Աստծո նկատմամբ: Այդ պատճառով, երբ անապատում Աստված հայտնվում է ձեզ, դուք պատրաստ եք միանգամից թողնել կյանքին վերաբերող բաները եւ շրջվել դեպի Նա:

Հենց անապատում եւ ոչ թե աստվածաշնչյան դպրոցում Տերը հայտնվեց Հովհաննես Մկրտչին. « ...Աստծո Խոսքը եղավ Զաքարիայի որդի Հովհաննեսին անապատում: Եվ նա եկավ Հորդանանի ամեն կողմերը՝ ապաշխարության մկրտությունը քարոզելով մեղքերի թողության համար» (Ղուկ. 3.2,3):

Հենց Արաբական անապատում Աստված Պողոս առաքյալին հայտնեց Նոր կտակարանի խորհուրդը: Նա Գաղատացիների 1.16,17-ում ասում է. «Որ Իր Որդին ինձանով հայտնի, որ Նրան հեթանոսների մեջ ավետարանեմ. այն ժամանակ իսկույն մարմնի եւ արյունի հետ խորհուրդ չարի եւ ոչ էլ Երուսաղեմ գնացի՝ նրանց մոտ, որ ինձնից առաջ առաքյալներ էին, այլ գնացի Արաբիա եւ կրկին դարձա Դամասկոս»:

Որտե՞ղ էր Հովհաննես առաքյալը, երբ ստացավ «Հիսուս Քրիստոսի Հայտնությունը»: Նա ասում է. ***«Ես՝ Հովհաննեսս՝ ձեր եղբայր եւ հավասար ընկեր նեղության եւ արքայության եւ Հիսուս Քրիստոսի համբերության, Պատմոս ասված կղզում էի՝ Աստծո Խոսքի համար ու Հիսուս Քրիստոսի վկայության համար»*** *(Հայտն. 1.9)*: Պատմոս կղզում էր, որ Հովհաննեսը ստացավ «Հիսուս Քրիստոսի Հայտ-

նությունը»:

Աստված Հովսեփին հայտնվեց փարավոնի բանտում: Հովսեփը սկսեց մեկնաբանել հացթուխի, մատռվակի եւ, վերջապես, հենց փարավոնի երազները:

Աստված Դավթին հայտնվեց անապատում որպես Հովիվ, Ջորություն, Ապավեն, Ամրություն եւ այլ տարբեր հատկանիշներով:

Հենց անապատում է Տերը մեզ հայտնում Իրեն նորովի: Եսայի մարգարեի գրքում ասվում է. «Հիրավի Դու ծածկապատված Աստված ես, ո՛վ Իսրայելի Փրկիչ Աստված» (Եսայի 45.15): Տերն Իրեն ծածկում է նրանցից, ովքեր չեն փափագում փոխհարաբերություններ ունենալ Իր հետ: Բաց Աստված հայտնում է Իրեն նրանց, ովքեր որոնում են Իրեն ողջ սրտով: Հիշե՛ք, Աստված ասաց, որ Նա Իսրայելի ժողովրդին բերեց անապատ, որ խոնարհեցնի նրանց, որպեսզի նրանց մեջ քաղց առաջացնի: Բայց Աստծուն Հեսուի պես փափագելու փոխարեն նրանք ուզեցին այն, ինչ Տերը վերցրեց նրանցից: Այդ պատճառով, երբ Աստված եկավ, որ Իրեն հայտնի նրանց, ինչպես Մովսեսին, նրանք մերժեցին Իրեն:

> *«Եվ եղավ երբ լսեցիք այն ձայնը խավարի միջիցը, սարը կրակով վառված ժամանակ Ինձ մոտ եկաք դուք՝ այսինքն՝ ձեր ցեղերի բոլոր գլխավորները եւ ձեր ծերերը, եւ ասացիք. «Ահա մեր Եհովա Աստվածը մեզ ցույց է տալիս Իր փառքն ու մեծությունը, եւ Նրա ձայնը լսում ենք կրակի միջից. այս օրը տեսանք, որ Աստված մարդու հետ խոսեց, եւ մարդը ողջ մնաց: Եվ հիմա ինչո՞ւ մեռնենք (որովհետեւ այս մեծ կրակը սպառելու է), եթե մենք մեր Եհովա Աստծո ձայնը կրկին լսելու լինենք, կմեռնենք: Որովհետեւ ամեն մարմնից ո՞վ է նա, որ կրակի միջից խոսող կենդանի Աստծո ձայնը մեզ պես լսեց եւ ողջ մնաց: Դու մոտ գնա եւ լսիր ամենը, ինչ որ մեր Եհովա Աստվածն ասում է, եւ դու ասա՛ մեզ, ինչ որ մեր Եհովա Աստվածը քեզ հետ խոսի. մենք կլսենք եւ կկատարենք»:*
>
> *Երկր. օր. 5.23-27*

Աստված ուզում էր հայտնվել նրանց անապատում, ինչպես Մովսեսին, բայց նրանք շրջվեցին եւ ասացին Մովսեսին. «Դու գնա եւ խոսի՛ր Տիրոջ հետ եւ ե՛կ ու խոսի՛ր ամեն բան, ինչ Նա կասի, իսկ մենք կկատարենք»: Նրանք երբեք *չեն ճանաչել* Աստծուն, նրանք միայն *գիտեին Նրա մասին:* Հետեւաբար, երբեք չէին կարող կատարել այն, ինչ Աստված պատվիրեց իրենց: Նրանք այդպես էլ չտեսան Իսրայելի երկիրը, քանի որ չճանաչեցին Նրան եւ մեռան անապատի մեջ: Աստված մեզ անապատ է բերում, որպեսզի փորձի եւ ցույց տա մեզ՝ ծարա՞վ ենք Իրեն, ինչպես Հովհաննեսը, Մովսեսը, Դավիթը, Հովսեփը, Պողոսը եւ այլն, թե՞ ծարավ ենք հարմարավետության եւ հաճույքների:

Հակոբոսի ուղերձում ասվում է. *«Խնդրում եք եւ չեք առնում, որովհետեւ չար կերպով եք խնդրում, որ ձեր ցանկություններում վատնեք: Շնացողնե՛ր, չգիտե՞ք, որ աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ. արդ ով որ կարողանա աշխարհի բարեկամ լինել, իր անձն Աստծո թշնամի կանի: Կամ թե կարծում եք՝ Սուրբ գիրքը պարապ տե՞ղն է ասում. «Նախանձով փափագում է հոգին, որ բնակված է մեր մեջ: Բայց ավելի շնորհք է տալիս»: Նրա համար ասում է. «Աստված ամբարտավաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս»: Արդ հնազանդվե՛ք Աստծուն, հակառա՛կ կանգնեք սատանային, եւ նա կփախչի ձեզանից: Մոտեցե՛ք Աստծուն, եւ Նա կմոտենա ձեզ: Սրբե՛ք ձեր ձեռքերը, ո՛վ մեղավորներ, եւ ձեր սրտերը մաքրեք, ո՛վ երկմիտներ» (Հակոբ. 4.3-8):*

Երբ մենք մոտենում ենք Աստծուն եւ որոնում ենք Նրան ամբողջ սրտով, Նա մոտենում է մեզ: Իսրայելի ժողովուրդն ավելի մտահոգվում էր իր երազանքների իրականացման համար, ոչ թե Աստծո: Նրանք շնացողներ էին, որոնք պաշտպանություն եւ հանգստություն էին որոնում աշխարհի համակարգում: Նրանք շուտով մոռացան, որ այդ ամբողջ հարստությունը եւ ապահովությունը չկարողացան փրկել եգիպտացիներին կամ նրանց զորքերին: Աստված ասում է, որ Իրեն մոտենալու համար հարկավոր է երկու բան անել:

Առաջինը՝ պետք է մաքրենք մեր ձեռքերը: Կորնթացիների երկրորդ ուղերձի 7.1-ում Պողոսը գրում է. «Արդ այսպիսի խոստումներ ունենալով, սիրելինե՛ր, մեր անձերը սրբենք հոգու եւ մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով»: Մեղքը հեռացնում է մեզ Աստծուց: Դրա մասին է ասում նաեւ Եսայի մարգարեն. «Այլ ձեր անօրինություններն են բաժանում ձեր եւ ձեր Աստծո մեջտեղը, եւ ձեր մեղքերը ծածկեցին Նրա երեսը ձեզանից, որ չլսի» (Եսայի 59.2):

Երկրորդը՝ պետք է մաքրենք մեր սրտերը: Այս կանչի բանալին են հանդիսանում Հակոբոսի խոսքերը. « ...մաքրեք սրտներդ, երկմիտնե՛ր... »: Երկմիտ մարդը նա է, ով այսուայն կողմ է նետվում, հոգուց՝ մարմին: Նա անհաստատ է մտքում: Նա վերինների մասին չի մտածում. «Արդ եթե Քրիստոսի հետ հարություն առաք, ապա խնդրե՛ք վերինները, որտեղ Քրիստոսն է նստում Աստծո աջ կողմը: Վերինները մտածեք, ոչ թե երկրի վրայինները» (Կողոս. 3.1,2):

Դուք անընդհատ մտածում եք նրա մասին, ինչին ձգտում եք ողջ ուժով: Երբ կինը մազերի քիմիական գանգրացում է կատարում, նրա սանրվածքը փոխվում է: Մազերն այլեւս չեն կարող ուղիղ լինել, դրանք գանգուր են: Մազերի ձեւն արդեն փոխված է: Կարելի է ուղղել մազերը, եթե դրանք ուժեղ ձգենք, բայց հենց որ բաց թողնենք, նախկին տեսքը կընդունեն: Մարդը կարող է գնալ եկեղեցի, երգել երգչախմբում, մասնակցել քրիստոնեական կյանքին, բայց որտե՞ղ են նրա մտքերը, երբ նա զբաղված չէ «քրիստոնեական» որեւէ բանով: Դրանք կլինեն այնտեղ, որտեղ նրա երազանքներն են ու սիրտը: Երբ հեռանում է եկեղեցուց կամ քրիստոնեական միջավայրից, նրա մտադրությունները կրկին վերադառնում են այնտեղ, որտեղ եղել են, ինչպես գանգուր մազը. երբ ձգում ենք եւ բաց թողնում, այն ընդունում է իր նախկին տեսքը: Երկրով մեկ շրջելով՝ տարբեր եկեղեցիներում տեսել եմ քրիստոնյաների, ովքեր երգում են ծառայությունների ժամանակ, քարոզի ժամանակ գլխով են անում՝ համաձայնելով քարոզչի հետ, եւ իրենց ժամանակի մեծ մասը ծախսում են եկեղե-

ցում աշխատելով: Բայց ծառայությունների ընդմիջումներին նրանք խոսում են միայն փողերի, նոր հագուստների, խանութների, գնումների, պրոֆեսիոնալ սպորտաձեւերի, հակառակ սեռի եւ աշխարհիկ այլ բաների մասին: Նրանց աչքերը փայլում են այսպիսի թեմաների շուրջ խոսելիս: Բայց եկեղեցի հաճախելը, Աստվածաշունչ կարդալը, աղոթքը նրանց համար ձանձրալի եւ պարտադիր բաներ են: Դուք կարող եք յուրահատուկ հուզմունք զգալ նրանց ձայնում, երբ խոսում են իրենց հոբիների մասին, բայց երբ խոսքը գնում է Աստծո ծրագրերի մասին, նրանց ձայնը միալար է դառնում: Ո՞ւր է ուղղված նրանց միտքը: Ո՞ւր է ուղղված ձե՛ր միտքը...

Երբ տղամարդը սիրահարված է լինում կնոջը եւ պատրաստվում է ամուսնանալ, ամբողջ օրը մտածում եւ խոսում է նրա մասին: Այդ կինը անընդհատ նրա մտքում է: Նա խոսում է այդ կնոջ մասին բոլոր նրանց հետ, ովքեր իրեն կլսեն: Նրա ձայնը թրթռում է, երբ խոսում է նրա մասին: Նա երկմիտ չէ: Նա մեկ ուրիշ կնոջ մասին չի մտածում: Նա սիրում է:

Դավիթը դիմում է Տիրոջը. «Պահի՛ր ինձ ինչպես աչքի բիբ եւ Քո թեւերի շուքի տակ ծածկի՛ր ինձ» (Սաղմ. 17.8): Նա երկմիտ չէ: Նրա սիրտը մաքուր է: Նրա սրտում չկա մի բան, որը նա այնպես սիրի, ինչպես Տիրոջն է սիրում: Այն ամենը, ինչ մենք սիրում ենք, ինչը մեզ դուր է գալիս, ինչին մենք վստահում ենք ավելի, քան Հիսուսին, կոչվում են կուռքեր:

Ահա սաղմոսերգուի խոսքերը. *«Ո՞վ վեր կգնա Տիրոջ սարը, եւ ո՞վ կկանգնի Նրա սրբության տեղում: Նա, որ Սուրբ է ձեռքով եւ անարատ՝ սրտով, որ իր անձը անիրավության չի տալիս եւ երդում չի անում նենգությունով» (Սաղմ. 24.3,4)*: Այն մարդը, որը չի սիրում, չի վստահում, եւ որին դուր չի գալիս ոչ մեկը կամ ոչինչ Հիսուսից առավել, նա մաքուր սրտով մարդ է: Կա միայն մեկ սեր նրա սրտում, եւ դա Տերն է: Հիսուսը Մաթեւոսի 10.37-ում ասում է. «Նա, ով հորը կամ մորը Ինձնից ավելի կսիրի, Ինձ արժանի չէ, եւ նա, ով տղային կամ աղջկան Ինձնից ավելի կսիրի, Ինձ արժանի չէ»:

Եկեք անապատի ժամանակ Աստծուն մոտենանք մաքուր ձեռքերով եւ մաքուր սրտերով, ինչպես Դավիթը, Մովսեսը, Պողոսը եւ Աստծո ուրիշ մեծ տղամարդիկ եւ կանայք: Եկեք չլինենք Իսրայելի որդիների նման, որոնք սիրում էին միայն իրենց կյանքը եւ կուռքերին, եւ որոնք բաց թողեցին Աստծուն ճանաչելու իրենց հնարավորությունը:

Եսային ասում է. *«Անապատն ու չոր երկիրը կուրախանան, եւ կցնծա ամային ու կծաղկի շուշանի պես: Կբացվի, կծաղկի եւ կցնծա ցնծալով եւ բարձրաձայն երգելով. Լիբանանի փառքը նրան կտրվի՝ Կարմեղոսի ու Սարոնի վայելչությունը. նրանք կտեսնեն Տիրոջ փառքը, մեր Աստծո վայելչությունը» (Եսայի 35.1,2)*: Անապատում է հայտնվում Տիրոջ փառքը:

ԳԼՈՒԽ 16

ՁՐՀՈՐԴԵՐԻՑ ՔԱՇԵԼ

Շատերն են հանձնվում չոր ժամանակներում, բայց Աստված մեզ ասում է, որ մենք կանգ չառնենք եւ շարունակենք շարժվել առաջ՝ չնայելով հակառակությանը:

« ...Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա եւ խմի: Ինձ հավատացողը, ինչպես Գիրքն է ասում, Նրա փորից կենդանի ջրերի գետեր կբխեն: Սա ասեց այն Հոգու համար... »:

Հովհ. 7.37-39

Անապատը չոր եւ անջուր վայր է (Սաղմ. 63.1): Այստեղ անձրեւ հազվադեպ է գալիս: Հեշտ չէ ջուր գտնել այդպիսի վայրում: Անապատում ջուրը հանում են երկրի ընդերքից բացված ջրհորներից կամ աղբյուրներից: Հիսուսն ասաց, որ կենդանի ջրերի աղբյուրներ կամ գետեր կբխեն նրանց սրտերից, ովքեր գալիս են Իր մոտ եւ Իրենից խմում: Անապատում չենք վերապրում Աստծո Հոգու անձրեւը: Այդ ժամանակ հարկավոր է ջուր քաշել սրտի ջրհորներից: Այդ չոր վայրում կարեւոր է, որ մենք դուրս քաշենք թարմացնող ջուր Աստծո աղբյուրից կամ ջրհորից: Սամարիայում Հիսուսն ասաց ջրհորի մոտ կանգնած կնոջը. ***«Ամեն այդ ջրից (բնական ջուր) խմողը դարձյալ կծարավի, բայց ով որ խմի այն ջրից, որ Ես կտամ նրան, նա հավիտյան չի ծարավի»*** *(Հովհ. 4.13,14)*: Նկատեք, Հովհաննեսի 7.39-րդ խոսքը հստակ ցույց է տալիս, որ Հիսուսը խոսում է Տիրոջ Հոգու աղբյուր լինելու մասին, եւ ոչ թե գետ, այլ գետերը կբխեն հավատացյալի սրտից:

Տիրոջ Հոգին Իրեն տարբեր ճանապարհներով է հայտնում: Եսա-

յի մարգարեի գրքում ասվում է Նրա հատկանիշների մասին. *«Եվ Նրա վրա կհանգչի Տիրոջ Հոգին, իմաստության եւ հանճարի Հոգին, խորհրդի եւ զորության Հոգին, գիտության եւ Տիրոջ երկյուղի Հոգին» (Եսայի 11.2)*:

Նա կոչվում է Իմաստության Հոգի, Հանճարի Հոգի, Խորհրդի Հոգի, Զորության Հոգի, Գիտության Հոգի եւ Տիրոջ երկյուղի Հոգի:

Հիսուսը Տիրոջ Հոգու մասին ասում է, որ այն Իրեն կդրսեւորի որպես կենդանի ջրերի գետեր: Այնպես որ, կլինի Իմաստության գետ, Հանճարի գետ, Խորհրդի գետ, Զորության գետ եւ Տիրոջ երկյուղի գետ:

«Խոր ջրեր են մարդու բերանի խոսքերը, բխող գետ է իմաստության աղբյուրը» (Առակ. 18.4): Իմաստությունը գետերից մեկն է:

«Կենաց աղբյուր է խոհեմությունը՝ իր ունեցողի համար, բայց հիմարների խրատը հիմարություն է» (Առակաց 16.22): Խոհեմությունը (հանճարը) մյուս գետն է:

«Խորը ջրեր է մարդու սրտի խորհուրդը, բայց խելոք մարդը նրան կհանի» (Առակ. 20.5): Խորհուրդը եւս մի գետ է:

Այս աղբյուրները միշտ կան Հոգով լցված հավատացյալի սրտում, որովհետեւ այնտեղ է բնակվում Հոգին: Սակայն միայն Տիրոջ ճանապարհները իմացողը կարող է ջուր դուրս քաշել այդ աղբյուրից: Վերոհիշյալ խոսքերում բանալի են հանդիսանում ԴՈՒՐՍ ՔԱՇԵԼ բառերը: Անապատում թարմացնող ջրերը չեն գալիս Հոգու անձրեւից, դրանք հարկավոր է դուրս քաշել սրտից:

«Կյանքի աղբյուր է արդարի բերանը... » (Առակ. 10.11):

«Եվ դուք ուրախությամբ ջուր կքաշեք փրկության աղբյուրներից» (Եսայի 12.3):

Ես շատ դեպքեր կարող եմ հիշել իմ կյանքից, երբ աղոթում էի չոր ժամանակ, եւ դա շատ դժվար էր: Այդպիսի մի օր ես որոշեցի վրան կանգնեցնել մեր տնից ոչ հեռու գտնվող այգում, որպեսզի ողջ գիշեր եւ հաջորդ առավոտյան աղոթեմ ու որոնեմ Տիրոջը: Այդ երեկո ես աղոթեցի, ապա կարդացի Խոսքը, որից հետո սկսեցի փա-

ռաբանության երգեր երգել: Ես շարունակեցի դա գրեթե երեք ժամ, բայց ինձ թվում էր, որ ոչ մի տեղ չէի հասել եւ առաջվա պես մնում էի կենդանի ջրին ծարավ: Ես շատ տխրեցի եւ պառկեցի քնելու: Այդ գիշեր ինձ թվում էր, թե դեւերը ծիծաղում են ինձ վրա: Հաջորդ առավոտյան արթնացա հոգնած եւ թուլացած: Ես սկսեցի քայլել այգում՝ աղոթելով Հոգով եւ առաջվա պես զգալով բացարձակ դատարկություն: Այդպես անցավ եւս ժամուկես: Վերջիվերջո, աչքերս բարձրացրի երկինք եւ ասացի. «Տե՛ր, ես կարծում եմ, որ անապատում եմ»: Այդ ժամանակ մտածեցի. «Լավ կլինի՝ գնամ տուն եւ դադարեմ Նրան որոնել: Աստված ինձ բերել է այս չոր վայրը, եւ ոչինչ չի փոխվի, մինչեւ Ինքն ինձ այստեղից դուրս չհանի»: Դրանք կործանիչ մտքեր էին: Աստված մեզ չի բերում անապատ միայն նրա համար, որ մենք վերջնականապես հիասթափվենք ու հանձնվենք: Անապատը նրա համար չէ, որ մենք հանձնվենք եւ պարտվենք: Դա հաղթության վայր է: Հանկարծ լսեցի, թե ինչպես իմ ներսում մի ցածր ձայն ասաց. «Պայքարի՛ր»: Այդ ցածր ձայնի հետ եկավ կրակի եւ կյանքի բոց:

Ես այդ պահին սկսեցի խոսել. «Աստծո՛ պարգեւներ, արթնացե՛ք ինձանում, կենդանի ջրերի՛ աղբյուրներ, լցրե՛ք իմ հոգու ջրհորը, Աստծո՛ գետեր, լցվեք եւ բխեք ինձանից»: Տեսեք, թե ինչ կատարվեց Իսրայելի հետ անապատում. «Եվ այնտեղից եկան Ջրհորը: Սա այն ջրհորն է, որի համար Եհովան ասել էր Մովսեսին. «Ժողովրդին ժողովի՛ր, եւ Ես նրանց ջուր կտամ»: Այն ժամանակ Իսրայելն այս երգը երգեց. «Հո՛ր, բխի՛ր. երգե՛ք նրա համար» (Թվոց 21.16,17):

Որքան կրկնում էի այս խոսքերը, աղոթքն ավելի ու ավելի ուժգին էր դառնում, մինչեւ չբացահայտեցի, որ քայլում եմ վերեւ-ներքեւ այդ ճանապարհով, աղոթում եւ ասում եմ Տիրոջ խոսքը մեծ ուժով եւ խանդավառությամբ: Ամեն ինչ թարմացավ, եւ ես ինձ այլ մարդ զգացի: Նրա ներկայությունը դրսեւորվեց հզոր ձեւով: Մի քանի րոպե առաջ ես ինձ ճնշված եւ թույլ էի զգում, բայց հիմա Աստծո Խոսքով զինված՝ ես պատրաստ էի երես առ երես հանդիպել

ցանկացած թշնամու հետ: Դա շարունակվեց գրեթե երկու րոպե, բայց ժամանակն անցավ հինգ րոպեի պես: Ես լիովին թարմացած էի եւ պատրաստ էի առաջ գնալ:

Առակաց 15.23-ում ասվում է. «Ուրախություն է մարդու համար իր բերանի հարմար պատասխանը...»: Եթե ես այն ժամանակ հեռանայի վրանից՝ ասելով ինքս ինձ. «Եթե ես անապատում եմ գտնվում՝ այս չոր վայրում, նշանակում է՝ ոչինչ էլ չի կատարվի, մինչեւ Աստված Ինքը չհանի ինձ այս վայրից: Ավելի լավ է իզուր ժամանակ չկորցնել եւ գնալ տուն: Ինչո՞ւ փնտրել Նրան, եթե Նա, միեւնույնն է, չի պատասխանում», ապա կշարունակեի մնալ այն ճնշված վիճակում, որի դեմ պայքարում էի: Բայց քանի որ չնահանջեցի եւ սկսեցի ասել այն բառերը, որոնք Աստված դրեց իմ սրտում, դա ինձ ուրախություն բերեց, որի կարիքը ես այնքան ունեի, որպեսզի սկսեի ինձ համար աղբյուրներից կենդանի ջուր քաշել: Ես սկսեցի թարմ ջուր քաշել փրկության աղբյուրից: Դա նման էր անապատում սառը ջուր խմելուն:

Շատերն են հանձնվում այս չոր ժամանակ, բայց Աստված ասում է. «Մի՛ հանձնվիր: Շարունակի՛ր շարժվել առաջ: Կանգ մի՛ առ»: Մեզ հարկավոր է լինել համառ եւ դիմադրող, որպեսզի կանգ չառնել այնքան ժամանակ, մինչեւ կատարվի Նրա կամքը: Շատերն են դադարում աղոթել, երբ չորություն են զգում: Նրանք կանգ են առնում ջրի բացակայության պատճառով, որը գալիս է աղբյուրներից, եւ թվում է, թե շատ դժվար է գտնել այդ ջուրը: Նրանք թուլացել են, բայց Աստված ուզում է վերականգնել նրանց ուժը պայքարի համար, որը սպասվում է նրանց ապագայում: Երբ չեք զգում Աստծո ներկայությունը աղոթքի մեջ, մի՛ մտածեք, որ Նա հրաժարվել է ձեզանից: Նա ձեզ Իրեն է մոտեցնում:

ՉՓԱԿԵԼ ՋՐՀՈՐԵՐԸ

Ծննդոց 26-րդ գլխում մենք տեսնում ենք Իսահակին չոր վայրում: «*Եվ երկրի մեջ սով եղավ, բացի այն առաջի սովից, որ Աբրահա-*

մի օրերում եղել էր... Եհովան երեւաց նրան (Իսահակին) եւ ասաց. «Եգիպտոս մի՛ իջիր, բնակվի՛ր այն երկրում, որ քեզ կասեմ: Պանդո՛ւխտ եղիր այս երկրի մեջ, եւ Ես քեզ հետ կլինեմ եւ քեզ կօրհնեմ... » (Ծնն. 26.1-18):

Աստված Իսահակին ասաց՝ չգնալ Եգիպտոս, որտեղ նրան հարմարավետություն էր սպասվում, եւ պատվիրեց մնալ այն երկրում, ուր Ինքն էր տանում նրան: Երբ երկար ժամանակ անապատում ենք լինում, առաջին միտքը, որ գալիս է, սա է. «Ես այստեղից դուրս եմ գալու»: Եթե դա չորություն է անձնական աղոթքում, մենք սկսում ենք հորինել տարբեր զբաղմունքներ, որպեսզի զբաղված լինենք եւ ժամանակ չգտնենք անձնական աղոթքի համար: Եթե չորություն ենք զգում այն եկեղեցում, ուր հաճախում ենք, մտքեր են գալիս. «Ես կգնամ այնտեղ, որտեղ կա Աստծո շարժը»: Եթե դա չորություն է շփման եւ բիզնեսի մեջ, մտքեր են առաջանում՝ փոխել միջավայրը, թողնել այդ վայրը եւ գնալ տնտեսապես բարգավաճող քաղաք: Մենք մտածում ենք, որ եթե մնանք այդ վայրում, ապա լիովին կչորանանք եւ երբեք չենք տեսնի Աստծո ծրագրի իրականացումը մեր կյանքում: Ամերիկայում շատ քրիստոնյաներ հենց այդպես էլ վարվում են: Նրանք մի զբաղմունքից մյուսն են վազում, եկեղեցուց եկեղեցի, քաղաքից քաղաք՝ փորձելով գտնել մի քաղաք կամ եկեղեցի, որտեղ չկա «չորություն»: Փոխանակ ջրհորներ փորելու եւ թույլ տալու Աստծուն, որ օգտագործի դրանք չոր վայրերում թարմություն բերելու համար, նրանք տեղ են որոնում այնտեղ, որտեղ իրենց հեշտ կլինի եւ չեն հասկանում, որ հենց այդ «չոր տեղերում» է Աստված ուզում իրականացնել այն տեսիլքը, որը Նա տվել է իրենց: Ես չեմ ուզում ասել, որ դա վերաբերում է բոլոր իրադրություններին: Բայց մեր կյանքում ժամանակաշրջաններ են լինում, երբ Աստված մեզ նոր տեղերի համար է պատրաստում եւ թույլ է տալիս հնին չորանալ: Առաջնորդվե՛ք Աստծո Հոգով: Եթե Նա ձեզ ոչինչ չի ասում, ապա կանգնե՛ք ու պայքարե՛ք:

Տեսեք, թե ինչ կատարվեց Իսրայելի հետ Աստծուն հնազանդվե-

լու եւ սովի երկրում մնալու արդյունքում.

«Իսահակն այն երկրի մեջ ցանեց եւ այն տարին հարյուրի չափ արդյունք գտավ եւ Եհովան օրհնեց նրան: Եվ մարդը բարձրացավ ու քանի գնաց մեծացավ, մինչեւ որ շատ մեծացավ: Եվ ոչխարներ, եւ արջառներ, եւ շատ ծառաներ ունեցավ, եւ փղշտացիները նախանձեցին նրան: Եվ իր հոր՝ Աբարահամի օրերում իր հոր ծառաների փորած բոլոր ջրհորները փղշտացիները գոցեցին եւ հողով լցրին նրանց... Եվ Իսահակը դարձյալ այն ջրհորները փորեց, որ իր հոր օրերում փորել էին, եւ որ փղշտացիները գոցել էին Աբրահամի մեռնելուց հետո, եւ նրանց այնպիսի անուններ դրեց»:

Ծնն. 26.12-15,18

Նա բերքի աճման համար անհրաժեշտ ջուրը հայթայթեց՝ վերականգնելով այն ջրհորները, որոնք փորել էր իր հայրը: Այդ ջրհորները փակել էին փղշտացիները: Տարբեր ժամանակահատվածներում թշնամին փակել էր ջրհորները: Ինչպես Իսահակի դեպքում, մեր սրտերում Աստծո անապական սերմի աճման համար մենք կարիք ունենք կենդանի ջրի, որը մենք կարող ենք քաշել փակած ջրհորներից:

Եկեղեցում (Քրիստոսի մարմնում) աշխարհիկ հայացքները փակել են շատ ջրհորներ: Երբեւէ լինելով շատ պտղաբեր՝ այսօր եկեղեցին դարձել է չոր, որովհետեւ թույլ է տվել թշնամուն գայթակղել իրեն: Աստված այսօր վերականգնում է մեզ: Դա վերաբերում է ինչպես մեզ անձնապես, այնպես էլ Ամերիկայի ողջ եկեղեցուն: Ահա ինչպես է դա նկարագրված Եսայի մարգարեի գրքում.

«Եվ Տերը քեզ միշտ կառաջնորդի եւ կշատացնի քո անձը երաշտներում եւ ոսկորներդ կզորացնի, եւ ջրարբի պարտեզի նման կլինես եւ ջրի ակնի պես, որի ջուրը չի պակասի: Եվ քոնոնք պիտի շինեն մշտակա ավերակներ եւ դու կկանգնեցնես դարերից ի վեր ավերակ հիմերը, եւ քեզ կկոչեն Խրամակարկատ եւ շեն ճանապարհները վերանորոգող: Եթե... Նրան

(Տիրոջը) պատվես՝ քո ճամապարհները չկատարելով եւ քո բաղձանքը չլրացնելով եւ դատարկաբանություն չանելով... »:

Եսայի 58.11-13

Ինչպես Իսահակը չէր որոնում իր ուղիները կամ հաճույքները հեշտ երկրում, այնպես էլ մենք (եթե չգնանք մեր ուղիներով կամ չորոնենք հաճույքներ, եթե չխոսենք մեր խոսքերը, այլ պատվենք Աստծուն) նման կլինենք այգու եւ կենդանի ջրի աղբյուրի, որի ջրերը չեն դադարում: Աստված Իր կենդանի ջուրը կբերի չոր եւ ծարավ վայրեր Իր ժողովրդի միջոցով:

Աստված ուզում է, որ մենք նորից փորենք այն ջրհորները, որ փակվել են աշխարհիկ համակարգերով: Ուզում եմ կրկին նշել, որ դա մեզանից համառություն կպահանջի: Միգուցե ավելի շատ ժամանակ կպահանջվի, քան մեկ ժամը, որպեսզի կրկին փորվի ջրհորը. միգուցե երկու ժամից ավելի կտեւի, միգուցե կպահանջվի մեկ օրից կամ շաբաթից ավելի: Դուք կասեք. «Բայց եւ այնպես, որքա՞ն ժամանակ կպահանջվի դրա համար»: «Դա չպետք է անհանգստացնի ձեզ, ուղղակի փորեք այնքան ժամանակ, մինչեւ հասնեք»: Իրականում դա մի աղոթքի արդյունք չէ, եւ դուք ստիպված կլինեք աղոթել վաղն էլ, հաջորդ օրն էլ: Երբ ես ապրում էի Դալլասում (Տեխաս), ամեն առավոտ իմ լավ ընկերներից մեկի հետ աղոթում էինք: Նա եկեղեցու հովիվներից էր, իսկ ես ավագ հովվի եւ նրա կնոջ օգնականն էի: Մենք աղոթքի սենյակ էինք գալիս առավոտյան ժամը յոթին: Աղոթում էիք Հոգով եւ հաճախ էինք առաջընթաց զգում, բայց օրեր էին լինում, որ աղոթում էինք մինչեւ 8-ն անց կես եւ ստիպված ընդհատում, որովհետեւ աշխատանքի գնալու ժամանակն էր: Մենք հաճախ հիասթափվում էինք, որովհետեւ չկար ոչ մի ճեղքում... ոչ մի թարմ ջուր: Հաջորդ առավոտ գալիս եւ սկսում էինք այն տեղից, որտեղ կանգ էինք առել: Երբեմն այդպես շարունակվում էր երկու օր, իսկ երբեմն էլ՝ երեք օր, իսկ մի անգամ՝ նույնիսկ մի շաբաթ: Սակայն վերջապես գալիս էր ճեղքումը: Ի՜նչ զորություն եւ թարմություն:

Ես շատ եմ շրջում Ամերիկայի եկեղեցիներով եւ տեսնում շատ քրիստոնյաների, ովքեր թույլ են տվել, որ փակվեն իրենց ջրհորները, եւ հարմարվել են այդ վիճակին: Տագնապալի փաստն այն է, որ ոչ թե քրիստոնյաների փոքրամասնությունը, այլ մեծամասնությունն է գտնվում այդ վիճակում: Ինչ կկատարվեր, եթե այդ բոլոր մարդիկ իրենց մեջ արթնացնեին Աստծուց տրված պարգեւները եւ թույլ տային, որ դրանք արտահայտվեին: Որքա՞ն ընտանիքներ կփոխվեին, որքա՞ն եկեղեցիներ կփոխվեին, կփոխվեր ողջ Ամերիկան: Այսօր Աստծո պարգեւը չի գործում մեր ընտանիքներում, մեր եկեղեցիներում, մեր ազգի մեջ: Ջրհորները փակված են, այնինչ քրիստոնյաները պարծենում են, որ իրենք լցված են Աստծո Հոգով:

Արթնությունը չի գա եկեղեցի, մինչեւ մեզանից յուրաքանչյուրը չարթնանա: Եկեղեցին կազմակերպություն չէ, այն Աստծո ժողովուրդն է, եւ եկեղեցու վիճակը Աստծո ժողովրդի վիճակն է:

ԳԼՈՒԽ 17

ՀԱՂԹԱՆԱԿ ԱՆԱՊԱՏՈՒՄ

...Տեսնել այնպես, ինչպես Աստված է տեսնում. սա է մարգարեական տեսլիքը...

«Առանց մարգարեության (մարգարեական տեսիլիքի) ժողովուրդը կվայրենանա... »:

Առակ. 29.18

Տեսնել այնպես, ինչպես Աստված է տեսնում. սա է մարգարեական տեսիլքը... Դա նշանակում է՝ կարողանալ տարբերել երկնային նպատակները, դրանց ժամանակաշրջանը մեր կյանքում, ինչպես նաեւ հասկանալ Աստծո նախասահմանությունը, երբ այն դեռ չի դրսեւորվել ֆիզիկական կյանքում, եւ նույնիսկ թվում է, թե դա երբեք չի կատարվի:

Մեզ հարկավոր է կենտրոնանալ Աստծո նպատակի եւ ոչ թե տեսանելի հակառակության վրա, որը մեզ փորձում է եւ պահել հասնելու այդ նպատակին: Մեզ անհրաժեշտ է ճիշտ տեսիլք ունենալ, որպեսզի հասնենք ճիշտ նպատակակետին: Որքան ահավոր կլիներ վազել եւ հասնել սխալ վերջնագծին: Կարող է վատ բան պատահի, եթե սխալ նպատակ դնենք եւ հասնենք դրան:

Փարիսեցիները շատ նախանձավոր եւ ջանասեր էին, բայց նրանց նպատակն էր բավարարել իրենց. նրանք չունեին մարգարեական տեսիլք, եւ արդյունքում բաց էին թողնում նպատակը:

Ո՞րն է Աստծո նախասահմանությունը եւ նպատակը մեզ համար՝ որպես Եկեղեցի եւ որպես Աստծո եկեղեցու՝ Նրա մարմնի անդամներ: Եփեսացիների 1.11-ում ասվում է, որ մենք ***«ժառանգություն***

առանք, որ որոշված էր նրա նախասահմանությամբ, որ ամեն բան Իր կամքի խորհրդով է գործադրվում»: «Նախասահմանումը» մի բառ է, որի պատճառով շատերն են գլորվել: Դրա իմաստը հասկանալու համար մեզ անհրաժեշտ է այն տրոհել մասերի: «Նախա» նախածանցը նշանակում է «առաջ» կամ «սկզբից առաջ»: «Սահմանում» նշանակում է «ինչ-որ տեղ վերջացնել» կամ «վերջնագիծ»: Այս երկու բառերն իրար միացնելով՝ այն կնշանակի «հասնել վերջնագծին նախքան սկիզբը»: Հետեւաբար, Եփեսացիների ուղերձը ցույց է տալիս, որ Աստված նախքան մեզ ստեղծելը մարդկությանը տվել է նախասահմանություն, որի միջոցով կիրականանա Նրա նպատակը:

> ***«Բայց գիտենք, որ Աստծուն սիրողներին ամեն բաները գործակից են լինում դեպի բարին, նրանց, որ նախասահմանելով կանչված են: Որովհետեւ նրանց, որ առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց Իր Որդու պատկերին կերպարանակից լինելու, որ Նա անդրանիկ լինի շատ եղբայրների մեջ»:***
>
> ***Հռոմ. 8.28,29***

Մեր նախասահմանումը, որը Աստված ծրագրել էր սկզբից, Իրեն սիրողների համար Հիսուս Քրիստոսին կերպարանակից լինելն է: Կյանքում կամ ծառայության մեջ կատարվող ամեն ինչ պետք է ուղղված լինի այդ նպատակին: Աստված մեզ չստեղծեց միայն նրա համար, որ քշենք դեւերին, բժշկենք հիվանդներին կամ կորած հոգիներ գտնենք Հիսուսի համար: Շատերը, չնայած դրան, այդպես էլ չհասան վերջնագծին: Պատճառն այն է, որ նրանք իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին ծառայության վրա եւ ոչ թե նրա եփեւում գտնվող հիմնական՝ որոշիչ նպատակին:

Այժմ պետք է պատասխանել այս հարցին. ***«Ինչո՞ւ է Աստված սահմանել մեզ համար Հիսուս Քրիստոսին կերպարանակից լինելը»:*** *Պատասխանը պարզ է. որովհետեւ Նա սիրեց մեզ եւ ցանկացավ փոխհարաբերություն ունենալ մեզ հետ. «Որ նոր եկող դարերում հավիտյան ցույց տա Իր շնորհքի գերազանց մեծությունը Քրիստոս Հիսուսի մեզ վրա ցույց տված քաղցրությունով» (Եփես. 2.7)*:

Այդպիսին էր Նրա նպատակը ամենասկզբից: Երբ Տերը ստեղծեց մարդուն եւ դրեց նրան Եդեմի պարտեզում, Նա շրջում էր Ադամի հետ եւ մտերիմ փոխհարաբերություններ ուներ նրա հետ, որովհետեւ սիրում էր նրան: Ադամի հետնորդներից մեկը հասավ Աստծո նպատակին, եւ նրա մասին գրված է. *«Եվ Ենովքն Աստծո հետ վարվեց եւ չէր գտնվում, որովհետեւ Աստված առավ նրան» (Ծնն. 5.24)*: Եբրայեցիների ուղերձում հեղինակը ասում է Ենովքի մասին, որ «վկայվեց, թե Աստծուն հաճելի էր» (Եբր. 11.5): Ինչո՞վ Ենովքը հաճեցրեց Աստծուն: Մի՞թե նրանով, որ նա ուներ մեծ մարգարեական ծառայություն: Կամ գուցե նա մեծ ավետարանի՞չ էր: Ո՛չ եւ կրկին անգամ ո՛չ: Նրանով, որ ՆԱ ՔԱՅԼԵՑ ԱՍՏԾՈ ՀԵՏ: Նա մտերիմ փոխհարաբերություններ ուներ Աստծո հետ:

Ինչ որ Աստված անում էր անցյալում եկեղեցու հետ կապված, ինչ որ անում է հիմա եւ կանի ապագայում, ուղղված է այդ նպատակին: Այսպիսով՝ անապատի նպատակը մեզ ուղղելն է դեպի ճշմարիտ նպատակը՝ լինել կերպարանակից Հիսուս Քրիստոսի պատկերին:

Երբ մեր կյանքում կորցնում ենք Աստծո նպատակը, մենք խոտորվում եւ հեռանում ենք Նրանից: Եթե որպես եկեղեցի կորցնում ենք Աստծուց տրված հիմնական նպատակը, մենք անկառավարելի ենք դառնում եւ սկսում ենք չորանալ: Այդ ժամանակ մեզ համար առավել կարեւոր է դառնում որոշ արդյունքների հասնելը եւ եկեղեցու անդամների քանակի աճը, ոչ թե Հիսուս Քրիստոսի կերպարանքով աշակերտներ պատրաստելը (Մաթ. 28.19):

Եկեք եւս մեկ անգամ կարդանք Առակաց 29.18-ը. *«Առանց մարգարեության ժողովուրդը կվայրենանա... »* (անգլերենում՝ անսանձ կդառնա): Ի՞նչ սանձի մասին է Աստված այստեղ խոսում: Սա այն սանձն է, որը մեզ ետ է պահում քչով բավարարվելուց, այսինքն՝ ամեն ինչից, որ խանգարում է մեզ կերպարանափոխվել Նրա պատկերի եւ նմանության պես: Սա այն սանձն է, որն օգնում է մեզ չհանգստանալ, մինչեւ չհանդիպենք Նրան երես առ երես եւ չտես-

նենք Նրա փառքի հայտնությունը: Սա այն սանձն է, որը պահում է մեզ ամեն ինչից, բացի Նրա կատարյալ կամքից: Այդ սանձը կպահի մեզ հեշտ ճանապարհներ որոնելուց եւ աշխարհի նման վարվելուց: Այդ սանձը կպահի մեզ մարմնապես վարվելուց:

Հիսուսը ասաց տեսիլքի մասին. *«Մարմնի ճրագը աչքն է, արդ թե որ քո աչքը պարզ լինի, քո բոլոր մարմինը լուսավոր կլինի: Բայց թե որ քո աչքը չար լինի, քո բոլոր մարմինը խավար կլինի...» (Մաթ. 6.22,23)*: Որպեսզի հասկանանք՝ ինչի մասին էր խոսում այստեղ Հիսուսը, մեզ հարկավոր է պարզել, որ Նա չէր խոսում ֆիզիկական աչքերի մասին: Նա ասում էր մեր սրտերի աչքերի կամ մեր ընկալումների մասին:

Որովհետեւ ինչպես ընկալում եք, այնպես էլ վարվում եք. *«Որովհետեւ նա ինչպես որ իր սրտում հաշիվներ անող է՝ այնպես է. քեզ կասի՝ կեր եւ խմի, բայց սիրտը քեզ հետ չի» (Առակ. 23.7)*:

Կախված նրանից, թե ինչպես եք դուք ընկալում ձեր շուրջ եղած տարբեր իրադրությունները կամ իրավիճակները, այնպես էլ ակնհայտ կլինի, թե ինչպես կանցնեք դրանց միջով:

Իսրայելի ժողովրդի տասներկու ներկայացուցիչները գնացին լրտեսելու խոստմունքի երկիրը, եւ նրանք բոլորն էլ տեսան միեւնույն տեսարանը: Նրանք բոլորն էլ տեսան միեւնույն ամուր քաղաքները, միեւնույն հսկաներին եւ քանանացիների միեւնույն բանակը: Սակայն նրանցից երկուսը տեսան բոլորովին այլ կերպ, ոչ այնպես, ինչպես մնացած տասը: Երկուսը իրադրությունը ընկալեցին Աստծո աչքերով, իսկ տասը ընկալեցին իրենց փորձի տեսանկյունից կամ սեփական հնարավորությունների աչքերով: Տասը լրտեսների ընկալումը սխալ էր եւ, բնականաբար, նրանց վարքն էր այդպիսին: Նրանք իրենց շուրթերով ասացին եւ հետո նույնպիսի վարքով հաստատեցին իրենց հակառակությունը Աստծո կամքին: Աստված նրանց պատասխանը համարեց «չար» կամ «վատ»: Թվոց գրքում գրված է, թե ինչ պատահեց նրանց սխալ ընկալման արդյունքում: Աստված ասաց.

«Ասա՛ նրանց. «Ես կենդանի եմ,- ասում է Եհովան,- որ ինչ-

պես դուք Իմ ականջների առաջ խոսեցիք, այնպես էլ կանեմ ձեզ: Այս անապատի մեջ կընկնեն ձեր դիակները եւ ձեր բոլոր հաշվի համեմատ՝ ձեզանից ամեն համարվածները, քսան տարեկանից վեր եղողները, որ դուք Ինձ դեմ տրտնջացիք, բնավ պիտի չմտնեք այն երկիր, որի համար երդում արի ձեզ նրանում բնակեցնելու, բացի Հեփոնեի որդի Քաղեբից եւ Նավեի որդի Հեսուից»:

Թվոց 14.28-30

Ինչո՞ւ այս մարդիկ ասացին խոսքեր, որոնք իրենց մահվան դատապարտեցին անապատում եւ թույլ չտվեցին տեսնել այն, որ Աստված երդվելով խոստացավ իրենց: Դա պայմանավորված էր նրանով, թե ինչպես նրանք ընկալեցին իրենց տեսածը: Նրանք չունեին մարգարեական տեսիլք, նրանք ունեին իրենց տեսիլքը եւ պարզապես պատմեցին՝ ինչ տեսան ֆիզիկական աչքերով: Նրանք իրադրությանը չնայեցին Աստծո աչքերով, այլ հենվեցին իրենց ֆիզիկական սահմանափակ կարողությունների վրա:

Անապատից հաղթող դուրս գալու համար մեզ հարկավոր է սովորել տեսնել այնպես, ինչպես Աստված է տեսնում: Նախքան Աստված կուղարկեր լրտեսներին խոստմունքի երկիր, Իսրայելի ժողովուրդը մեկ տարուց ավելի տրտնջում էր: Նրանց տեսիլքն արդեն սխալ էր եւ բոլորն անսանձ էին: Այդ պատճառով, երբ Աստված թույլ տվեց նրանց տեսնել երկիրը, որտեղ կաթ ու մեղր էր բխում, նրանք այն մերժեցին:

Նրանք, ովքեր տեսնում են միայն անապատը (եւ դրա հետ կապված դժվարությունները), կմեռնեն իրենց անապատում: Իսկ ովքեր իրենց հայացքն ուղղում են Խոստացողին եւ այն տեսիլքին, որ Նա դրել է իրենց առջեւ, դուրս կգան անապատից որպես սրբված զինվորներ՝ պատրաստ գրավելու խոստմունքի երկիրը Աստծո փառքի համար:

«Նրա համար չենք թուլանում (չենք դառնում անսանձ)... Որովհետեւ մեր այժմյան թեթեւ նեղությունը ամենագերազանց հավիտենական փառքի մեծություն է գործում մեզ համար, որ

այս երեւող բաներին չենք մտիկ անում, այլ աներեւոյթներին (ամեն ինչ ընկալում ենք Աստծո աչքերով), որովհետեւ երեւողները ժամանակավոր են, իսկ չերեւողները՝ հավիտենական»:

Բ Կորնթ. 4.16-18

Անապատում վերապրած տանջանքները կարելի է թեթեւ համարել՝ համեմատած նրա հետ, ինչ մենք ձեռք ենք բերում վերջում: Անապատում անցկացնելու ժամանակը մի ակնթարթ է՝ համեմատած այն ամենի հետ, ինչ մենք ձեռք ենք բերում: Բայց երբ դուք գտնվում եք անապատում, դժվար է հավատալ դրան, մինչեւ չունենաք տեսիլք, թե ինչ կա դրանից այն կողմ: Երբ ես անապատում էի, այդ ժամանակը ինձ համար մի ակնթարթ չէր թվում: Երբեմն ես մտածում էի. «Սա երբեւէ կվերջանա՞, թե՞ ոչ: Ե՞րբ կգա այն, ինչ Աստված խոստացել է»: Բայց այդ ժամանակ ես նույն պահին քշում էի այդ մտքերը եւ քաջալերվում Տիրոջով: Ես հիշում էի մարգարեությունները, որ տրվել էին ինձ, եւ դրանցով պատերազմում բարի պատերազմը (Ա Տիմոթ. 1.18): Մարգարեությունները Աստծուց տեսիլքներ էին իմ կյանքի համար, որոնք Սուրբ Հոգին հայտնել էր ինձ Խոսքի միջոցով:

Պետրոսի առաջին ուղերձի 2.11-ում ասվում է. *«Սիրելինե՛ր, աղաչում եմ ձեզ ինչպես պանդուխտներ եւ օտարականներ, հեռո՛ւ մնացեք մարմնավոր ցանկություններից, որ կռվում են հոգու* դեմ... »:* Շունչը անապատում պատերազմի դաշտն է: Շունչը բաղկացած է մտքից, զգացմունքներից եւ կամքից: Կամքը շնչի այն մասն է, որը որոշում է՝ դուք կգնաք Աստծո ճանապարհով, թե՞ մարմնի: Դա կախված է նրանից, թե ինչպես կընկալեք իրադրությունը. կնայեք իրադրություններին Աստծո աչքերո՞վ, թե՞ կտրվեք ձեր զգացողություններին:

Այս ամենը բերում է մեկ հարցի. «Ո՞Վ Է ՁԵՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ»: Դո՞ւք, թե՞ Տերը: Մարմնի ցանկությունները պատերազմ են մղում ձեր ուղեղում կամ զգացմունքներում, որպեսզի

*Բնագրում հոգի բառի փոխարեն գրված է շունչ՝ որպես կյանք:

կենտրոնացնեն ձեր ուշադրությունը ձեր սեփական հետաքրքրությունների վրա: Դա կհեռացնի ձեզ «մարգարեական տեսիլքից», քանի որ Աստծո ճանապարհը «ես»-ի ճանապարհ չէ, այլ «ես»-ը *մերժելու* ճանապարհ:

Ավետարանը, որ վերջին օրերում քարոզվել եւ ընդունվել է շատերի կողմից, եղել է «հեշտ ճանապարհների ավետարան»: Դրա կենտրոնը եղել է՝ «Ի՞նչ կարող է Աստված անել ինձ համար» եւ ոչ թե «Ի՞նչ է Նա ուզում ինձանից»: «Հեշտ ճանապարհների ավետարանը» չի խոսում չարչարանքների մասին, որ ուղեկցում են Քրիստոսի հետեւորդներին:

Դրա փոխարեն այդպիսի ավետարանը բավարարում է մարմնի ցանկությունները: Այն շատերին է դրդել ինքնագոհ կյանք վարել: Այդպիսի ավետարանը հավատացյալներին չի զինել դառնալու այն զինվորները, որոնց Աստված կանչել է: Պողոսը Տիմոթեոսին ուղղված իր նամակում ասում է. ***« ...Իսկ դու նեղությունները կրիր ինչպես Հիսուս Քրիստոսի բարի զինվոր: Ոչ մի զինվորություն անող այս աշխարհի գործերով չի զբաղվում, որպեսզի զորապետին հաճո լինի»*** *(Բ Տիմոթ. 2.3,4)*: Այսպիսի ավետարանի պատճառով, երբ մեր կյանքում գալիս են դժվարություններ կամ հակառակություններ, մենք փորձում ենք գտնել դրանցից փախչելու միջոցներ՝ նեղությունը հաղթահարելու փոխարեն: Այդպիսի ուսմունքից ծնված տեսիլքը չի հանդիսանում երկնային կամ մարգարեական տեսիլք, այլ ավելի շատ նման է եսասիրական տեսիլքի:

Պողոսն իր մասին ասում է.

> ***«Ուստի, ո՛վ Ագրիպաս արքա, ես անհնազանդ չեղա այն երկնային տեսիլքին: Այլ առաջ նրանց, որ Դամասկոսում ու Երուսաղեմում էին ու բոլոր Հրեաստանի երկրում ու հեթանոսներին պատմեցի ապաշխարել եւ դառնալ դեպի Աստծուն՝ ապաշխարության արժանի գործեր գործելով: Սրա համար հրեաներն ինձ տաճարում բռնելով ուզում էին սպանել»:***
>
> ***Գործք 26.19-21***

Աշխարհում գոյություն ունեն տարբեր տեսիլքներ, բայց միայն մեկն է երկնային: Երկինքը ունի միայն մեկ տեսիլք, եւ դա Հոր կամքն է:

Նկատեք, որ Պողոսն ասում է. «Այս պատճառով հրեաներն ինձ տաճարի մեջ բռնեցին եւ ուզում էին սպանել»: Նա հետեւում էր «երկնային տեսիլքին», եւ դրա հետ կապված՝ նա ստիպված էր անցնել մեծ հակառակության միջով: Եթե նա հավատար «հեշտ ճանապարհների ավետարանին», ինչպես շատերն են քարոզում եւ հավատում այսօր դրան, նա երբեք չէր տեսնի իր տեսիլքի իրականացումը: Նա երեւի չէր էլ հանդիպի Ագրիպաս թագավորի հետ, որովհետեւ ավելի շուտ կփորձեր փախչելու միջոց գտնել այն հակառակությունից, որը նա վերապրեց Աստծուց տրված տեսիլքի ետեւից գնալու ճանապարհին:

Երեմիան երկնային տեսիլքը կատարող մարդ էր, դրա հետ մեկտեղ իր հնազանդության արդյունքում նա ունեցավ տարբեր տեսակի հալածանքներ: Նա շատ էր հոգնել դրանցից եւ մի օր սկսեց դժգոհել Աստծուն. *« ...**Ինչո՞ւ հաջող է ամբարիշտների ճանապարհը, հանգիստ են բոլոր նենգություն գործողները»** (Երեմիա 12.1)*: Աստված նրան ցավակցական պատասխան չտվեց: Ցավակցումը թշնամի է, որն ամեն բան անում է, որպեսզի ձեր ամբողջ ուշադրությունը գրավի ձեզ վրա: Աստված ասաց նրան. «Եթե դու հետեւակների հետ վազեցիր, ու նրանք քեզ հոգնեցրին, ապա ինչպե՞ս պիտի մրցեիր ձիերի հետ....» (Երեմիա 12.5): Այլ խոսքերով՝ Աստված ասում էր. «Երեմիա՛, եթե դու հոգնել ես սատանայի հետեւակ զինվորներից, ի՞նչ կանես, երբ հանդիպես սատանայի ձիավորներին»: Ավելի պարզ ասած. ***«Եթե դու հոգնել ես ու մտածում ես՝ հիմա վատ է, ուրեմն դեռ ոչինչ չես տեսել: Պատրաստվի՛ր, որովհետեւ հակառակությունը, որի հետ դու կհանդիպես, ավելի է ուժեղանալու»:***

Մենք պետք է հիշենք, որ չկան մեծ հաղթանակներ առանց մեծ պայքարների: Երեմիայի համար գնալով ամեն ինչ դժվարանում էր: Սկզբում նրան վիրավորում էին, հետո բանտ նետեցին, իսկ հետո

խոր գուբը գցեցին, որպեսզի նա մեռներ: Սակայն Աստված ազատեց նրան բոլոր տանջանքներից ու հալածանքներից:

Քրիստոսի մարմնում շատերն այսօր վերապրում են մտքի հարձակումներ, ոչ թե այնպիսի ֆիզիկական հալածանք, ինչպիսին Պողոսը վերապրեց: Ի՞նչ կանենք մենք, երբ հակառակությունն ուժեղանա: Եթե այսօր հաղթահարենք տանջանքները, դա մեզ կզորացնի եւ կպատրաստի ապագայի մեծ պայքարներին:

Անապատը զինվորական ճամբար է եւ նախապատրաստական հող ապագա պայքարի համար: Ինչպես զինվորներին ուղարկում են ռազմական ճամբար, որպեսզի նրանց պատրաստեն պատերազմի համար, այնպես էլ Աստված ուղարկում է Իր զինվորներին անապատ, որպեսզի պատրաստի նրանց այն ծառայությանը, որի համար կանչել է նրանց: Ամենամեծ արգելքը, որն անհրաժեշտ է հաղթահարել զինվորներին այդ ճամբարում, հենց իրենք են հանդիսանում: Այսպիսով՝ ամենամեծ պայքարը անապատում շնչի ոլորտում է կատարվում:

Անապատում տեղի ունեցող պատերազմը մարդու շնչում ընթացող պատերազմն է: Թշնամու հիմնական նպատակը մեր ուշադրությունը մեզ վրա կեդրոնացնելն է: Հենց դա էր նա փորձում անել Հիսուսի հետ անապատում: Սատանան մոտեցավ Հիսուսին այն ժամանակ, երբ Նա սոված էր, քանի որ քառասուն օր ոչինչ չէր կերել, եւ ասաց Նրան. *« ...**Եթե Աստծո Որդի ես, ասա՛, որ այս քարերը հաց լինեն**... » (Մաթ. 4.1-11)*: Գայթակղությունն այն էր, որ Աստծո զորությունն օգտագործվեր ոչ թե Նրա կամքով, այլ մարմնի կարիքները հոգալու համար: Մենք միշտ պետք է հիշենք, որ երբ Աստված պարգեւ է տալիս, դրա հետ մեկտեղ գալիս է մեծ պատասխանատվություն՝ չչարաշահելու այն, այլ գործածելու Նրա ցանկությամբ: Աստված հոգալու էր Հիսուսի կարիքները, բայց Իր ճանապարհով: Երբ սատանան հեռացավ, եկան հրեշտակները եւ ծառայեցին Հիսուսին:

Եկեք եւս մեկ անգամ նայենք, թե ինչ ասաց Հիսուսն Իր ծառա-

յության վերաբերյալ. « ...***Որդին Իրենից կարող չի ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս, որովհետեւ ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում»*** *(Հովհ. 5.19):* Ուշադրություն դարձրեք «տեսնել» բառը: Նա ոչինչ չէր անում մարգարեական տեսիլքից դուրս:

Չոր ժամանակներում ամենամեծ գայթակղությունը Աստծո ճանապարհներին սպասելու փոխարեն մեր ձեւով վարվելն է: Դա կարող է հանգեցնել նրան, որ ժամանակից շուտ ինչ-որ բան ստանալու համար օգտագործենք Աստծո զորությունը: Կարո՞ղ եք պատկերացնել կռվի դաշտում մի զինվորի, որ կռիվն իր ձեւով է վարում եւ ոչ թե զորավարի հրամանների համաձայն: Դա կարող է լուրջ վնաս բերել ինչպես իրեն, այնպես էլ նրան շրջապատողներին: Զինվորական ճամբարում զինվորներին սովորեցնում են հնազանդություն ավագ սպային, որպեսզի պայքարի դժվար իրավիճակներում նա ռիսկի չդիմի եւ վտանգի իր եւ իրեն շրջապատող ընկերների կյանքը: Նա պետք է հնազանդ լինի հրամանատարի հրամաններին:

Նույնպես շատ կարեւոր է, որ մենք չկորցնենք Տիրոջից մեզ տրված տեսիլքը: Որովհետեւ կլինեն ժամանակներ, երբ մենք կմտածենք. «Ինձ պատասխանը ՀԻՄԱ է պետք», կամ՝ «Ես ինքս կշարժվեմ, որովհետեւ եթե ես ոչինչ չանեմ, ամեն բան կկործանվի»: Եթե Աստված ոչինչ չի ասում, դա նշանակում է, որ Նա ասում է. «Քեզ հիմա ոչինչ պետք չէ անել»: Այդպիսի իրավիճակներում մեզ անհրաժեշտ է սպասել Տիրոջը: Ուժ մի՛ գործադրիր: ***«Սպասի՛ր Տիրոջը, թող սիրտդ պինդ եւ զորավոր լինի, եւ սպասիր Տիրոջը»*** *(Սաղմ. 27.14)*:

Երբ մենք կենտրոնանում ենք ոչ թե Նրա վրա, այլ մեր կարիքների, հիասթափություն ենք ապրում, եւ մեզ վրա մեծ ծանրություն է ընկնում: Հարկավոր է կենտրոնանալ ոչ թե թեթեւ նեղությունների վրա, այլ մեր աչքերը պահել «ամենագերազանց փառքի մեծության վրա, որ գործում է մեզ համար մեր նեղության մեջ»: Մեզ անհրաժեշտ է նայել մեզ սպասվող ուրախությանը:

ՄԵՋ ՍՊԱՍՎՈՂ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ

«Բոլորովին ուրախություն համարեք, եղբայրներ, երբ կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք՝ գիտենալով, որ ձեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում: Իսկ համբերությունը թող կատարյալ գործ ունենա, որ կատարյալ ու ամբողջ լինեք ու ոչ մի բանի պակասություն չունենաք»:

Հակոբ. 1.2-4

Նկատեք, որ Աստված ասաց. «Բոլորովին ուրախության արժանի բան համարեք»: Ուշադրություն դարձրեք, Նա չասաց. «Դրա մի մասը ուրախություն համարեք, իսկ մյուս մասը՝ տխրություն»: Մեր սրտում չպետք է լինի տխրության անգամ մի մասնիկ: Իհարկե, հեշտ է «այդ ամենը ուրախություն համարել, երբ կյանքում ամեն բան հիասքանչ է»: Բայց Նա դա չի ասում: Հարկավոր է «ուրախություն համարել» հենց փորձությունների ժամանակ: Ինչո՞ւ է Աստված այդպես ասում: Որովհետեւ Նա գիտի, որ *«...**Տիրոջ ուրախությունը իմ զորությունն է»** (Նեեմիա 8.10)*: Ուրախությունը հոգեւոր ուժ է, որ մեզ զորություն է տալիս դիմանալ նեղություններին եւ փորձություններին:

Ո՞րն է Տիրոջ ուրախությունը: Երկար տարիներ ես համարում էի, որ Տիրոջ ուրախությունը այն ուրախությունն է, որ Տերն ունի: Ինձ համար դա դժվար էր հասկանալ: Սակայն հետո հասկացա, որ Նա դա նկատի չունի: Երբեւէ լսե՞լ եք, որ մեկն ասի՝ «կերակուր պատրաստելու ուրախություն»: Կերակուրը պատրաստելն իրենից ուրախություն չի ներկայացնում: Բայց ոմանք ասում են, որ ուրախություն են զգում կերակուր պատրաստելիս: Տիրոջ ուրախությունն այն ուրախությունն է, երբ մենք դա զգում ենք Նրա հետ մտերիմ փոխհարաբերությունների ժամանակ: ՆԱ ՄԵՋ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ:

Կինս եւ երեք որդիներս ինձ ուրախություն են պատճառում: Լինում են ժամանակներ, երբ տանը չեմ լինում, բայց նրանց լուսանկարները նայելով՝ սիրտս լցվում է ուրախությամբ: Դա ինձ ուժ է

փալիս: Հենց դա էր ասում մարդկանց Նեեմիան: Մարդիկ դժվար ժամանակների միջով էին անցնում: Նրանց դեմ մեծ հակառակություն կար, այդ պատճառով Նեեմիան կոչ էր անում. «Մի՛ տխրեք այդ փորձություններից, վե՛ր բարձրացրեք ձեր աչքերը եւ նայե՛ք Տիրոջը: Որովհետեւ, երբ դուք նայում եք Տիրոջը, ուրախությունով են լցվում ձեր սրտերը, եւ դա կամրապնդի ձեզ»:

Փառաբանությունը ձեր ուշադրությունը կենտրոնացնում է Տիրոջ վրա: Փորձությունների ժամանակ շատ հեշտ է կորցնել տեսիլքը եւ հեռացնել հայացքը Աստծո հնարավորություններից, քանի որ դուք բախվում եք ուժեղ հակառակությունների հետ: սաղմոսների մեծ մասը Դավիթն է գրել, եւ դրանցից շատերը գրվել են փորձությունների ժամանակ: Աստծուն փառաբանելով՝ նա կարողացավ հաստատ կանգնել փորձությունների ժամանակ:

Եսայի մարգարեի գրքում Աստված ասում է, որ մեզ տվել է. « ***...ուրախության յուղ՝ սգի տեղ, գովության պատմուճան՝ հանգած սրտի տեղ...*** » *(Եսայի 61.3)*:

Մի անգամ, երբ իմ կյանքում չոր ժամանակ էր, եւ ես տանը մենակ էի, հանկարծ ծանրություն զգացի: Ես փորձեցի Աստվածաշունչ կարդալ, բայց դա ինձ դժվարությամբ հաջողվեց: Սկսեցի աղոթել, բայց ավելի վատ եղավ: Ներսում զգացի՝ ինչպես է Աստծո Հոգին ինձ ասում. «Փառաբանության ձայներիզներից մեկը միացրու»: Ես գնացի երկրորդ հարկ, որտեղ երաժշտական կենտրոնն էր, միացրի փառաբանության ձայներիզը եւ սկսեցի ձայնակցել: Երբ երգերը վերջացան, զգացի, որ նորից պետք է միացնեմ: Հաջորդ անգամ, երգի ժամանակ, ես սկսեցի ուշադիր լսել բառերը, որ երգում էի: Հանկարծ իմ ներսում ուրախություն ծագեց, եւ ես սկսեցի պարել ու երգել՝ պտտվելով ամբողջ հարկով: Ես նկատեցի, որ աչքերս կտրվեցին իմ հոգսերից, եւ հայացքս ուղղեցի Հիսուսին: Հաջորդ երեսուն րոպեները ես երգում ու պարում էի: Ծանրությունն ամբողջովին անցավ, ու ես լցվեցի կյանքով եւ ուժով, ինչը չկար երեսուն րոպե առաջ:

«Եվ դուք ուրախության ջուր կքաշեք փրկության աղբյուրներից» (Եսայի 12.3): Երբ փառաբանում էի Տիրոջը, իմ ամբողջ ուշադրությունը հառեցի Նրան: Ուրախանալով Տիրոջով՝ ես սկսեցի «ուժ հանել» փրկության ջրհորներից:

Գոհությունը օգնում է շրջապատող հանգամանքների փոխարեն մեր հայացքը հառել մեզ սպասվող ուրախության վրա:

> ***«Ուստի մենք էլ, որ վկաների այսքան բազմություն ունենք մեզ շրջապատած, դեն գցենք ամեն ծանրություն եւ մեզ հեշտությամբ պաշարող մեղքը եւ համբերությամբ վազենք մեր առաջին դրած ասպարեզի ընթացքը: Մտիկ տանք հավատքի զորագլխին եւ կատարողին՝ Հիսուսին, որ Իր առաջին դրված ուրախության փոխարեն խաչը հանձն առավ եւ ամոթն արհամարհելով՝ Աստծո աթոռի աջ կողմը նստեց: Ուրեմն մտածեք նրա վրա, որ Իրան դեմ եղած այսպիսի հակառակություն քաշեց մեղավորներից, որ դուք ձեր անձերով չհոգնեք թուլացած: Տակավին մինչեւ արյուն թափելու չափ պատերազմելով հակառակ չեք կանգնած մեղքին»:***

Եբր.12.1-4

Հիսուսը կարողացավ հաղթահարել ամենամեծ փորձությունները, որոնք ոչ ոք երբեք չէր կարողանա տանել, որովհետեւ Նրա հայացքը ուղղված էր Իրեն սպասվող ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆԸ: Նրան սպասվող ուրախությունը հարությունն էր, որը հետեւեց խաչելությանը: Չարչարանքների մեջ հնազանդ լինելուն հետեւում է փառքը: Դա շատ որդիների եւ դուստրերի կբերի Նրա արքայություն:

Մեզ՝ Նրան հետեւողների համար նույն ճանապարհն է պատրաստված: Մեր անձը ուրանալով եւ մեր մարմինը խաչելով՝ մեզ սպասվում է ՀԱՐՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԸ: Մարմնապես չարչարվելուն հետեւում է Աստծո փառքը: ***«Որովհետեւ այնպես եմ դատում, որ այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդատվելու այն գալու փառքի հետ, որ մեզանում պիտի հայտնվի»*** *(Հռոմ. 8.18)*:

Աստծո փառքը կհայտնվի եկեղեցում նախքան Նրա վերադարձը:

Նրա մեծությունն այնպիսին կլինի, որ քաղաքները եւ ազգերը կընդունեն Նրա փրկությունը: Մինչ այդ երբեք երկիրը չի տեսել Նրա զորության այդպիսի արտահայտում, որը կհայտնվի նրանց մեջ, ովքեր թույլ են տվել Աստծուն՝ մաքրել իրենց: Այդպիսի արթնությունը մեծ հունձք կբերի: Դրա համար պետք չի լինի մարդկային աջակցություն: Դա կլինի Նրա զորությունով եւ փառքով:

> ***«Սիրելինե՛ր, օտար բան մի համարեք այն բորբոքված նեղությունը, որ ձեզ փորձելու համար է լինում, իբր թե մի օտար բան է պատահում ձեզ: Այլ ուրա՛խ եղեք իբրեւ թե Քրիստոսի չարչարանքին մասնակից եղածներ, որ Նրա փառքի հայտնության ժամանակ էլ ցնծալով ուրախանաք»:***
>
> ***Ա Պետր. 4.12,13***

Այդ ի՞նչ ուրախություն է մեր առջեւ: Դա Նրա փառքի հայտնվելն է մեզանում, ովքեր չարչարանք են կրել Քրիստոսին հնազանդվելիս: Նկատեք, որ ձեր չարչարանքների աստիճանը որոշում է ձեր ուրախության աստիճանը՝ իմանալով, որ որքան մեծ է հակառակությունը, այնքան մեծ է փառքը: Ձեր հայացքը հառեք ձեզ սպասվող ուրախությանը, որը Նրա փառքն է, որ կհայտնվի մեզանում: Դա ձեզ ուժ կտա դիմակայել այն փորձություններին, որոնց կհանդիպեք:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ես ուզում եմ ձեզ քաջալերել, որ դուք կանգ չառնեք այնքան ժամանակ, ***«մինչեւ մեզ վրա Հոգի թափվի վերեւից ու անապատը պտղաբեր արտ դառնա, եւ պտղաբեր արտը անտառ համարվի»*** *(Եսայի 32.15)*:

Անապատը վայր չէ, որտեղ պետք է ցած դնել պատերազմի զենքերը եւ հանձնվել: Այդտեղ ենք մենք ուժեղ դառնում, ավելի համարձակ, որոշիչ եւ խիզախ՝ Աստծո կամքն իրականացնելու համար: Այստեղ մեզ հարկավոր է հնազանդվել Տիրոջը եւ հակառակվել սատանային: Բայց մի՛ մոռացեք, որ մեզ անհրաժեշտ է տարբերել, թե որն է սատանայից, եւ որն է մարմնից: Դուք մարմնին չեք կարող

«քշել», դուք պետք է նրա հարցերը լուծեք ապաշխարության միջոցով: Ասված բերել է ձեզ այստեղ, որ *դուք ինքներդ* իմանաք, թե ինչ կա ձեր սրտում: Այն, ինչ ես սկզբում համարում էի սատանայից հարձակումներ, իրականում իմ կյանքի չփոխված ոլորտներն էին, որոնք կարիք ունեին Քրիստոսին ենթարկվելու, բայց ես դրանք չէի տեսնում:

Հետեւելով Քրիստոսում Աստծո բարձր կոչմանը՝ հիշեք խրախուսանքի խոսքերը. ***«Բայց շնորհակալություն Աստծուն, որ ամեն ժամանակ մեզ հաղթող է անում Քրիստոսում, եւ Իր գիտության հոտը մեզանով հայտնվում է ամեն տեղ»*** *(Բ Կորնթ. 2.14):*

Հռոմեացիների 8.35,37-ում ասվում է. ***«Ապա ով կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նք, թե՞ նեղություն, թե՞ հալածանք, թե՞ սով, թե՞ մերկություն, թե՞ վտանգ, թե՞ սուր... Բայց այս ամեն բաներում առավել եւս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց»:***

Կորնթացիների առաջին ուղերձի 15.57-ում ասվում է. ***«Շնորհակալություն Աստծուն, որ մեզ տվեց հաղթություն մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով»:***

Մի՛ դադարիր ձգտել դեպի Նա: Մի՛ հանձնվիր: Անկախ իրավիճակներից՝ աչքերիդ առջեւ պահիր տեսիլքը:

Հովսեփի համար կարծես հույս չկար, երբ նա գտնվում էր գուբում, բայց երբ նրան բանտ գցեցին, թվում էր, եկել է վերջը: Այսօր, միգուցե, ձեզ թվում է, որ Աստծուց տրված տեսլիքը երբեք արդեն չի կատարվի: Հիշեք. *« ...* ***մարդկանց կողմից անկարելի է, այլ ոչ թե Աստծո կողմից»*** *(Մարկ. 10.27)*:

Նույնպես էլ ձեր դեպքում, որքան էլ դժվար լինի, միշտ հիշեք, որ *« ...****ամեն բան կարելի է հավատացողին»*** *(Մարկ. 9.2)*: Շարունակե՛ք փնտրել Աստծուն ողջ սրտով եւ հավատացե՛ք, որ Նա ձեզ հետ խոսում է Իր Հոգու եւ Իր Խոսքի միջոցով. դուք կարող եք ունենալ ՀԱՂԹԱՆԱԿ ԱՆԱՊԱՏՈՒՄ:

Թող Աստծո վերին կոչումը դառնա ձերը Քրիստոս Հիսուսում:

Հաղթանակ անապատում

Ասփված, որտե՞ղ ես:

Արդյո՞ք սա քո սրտի կանչն է: Քո հոգևոր ընթացքը կանգնե՞լ է կամ գուցե ե՞տ է գնում: Քեզ հետաքրքրում է արդյո՞ք այն հարցը, թե արդյո՞ք դու չես շեղվել Աստծուց կամ որևէ կերպ չես գոհացրել Նրան: Գուցե դա չէ՞ պատճառը: Այնուամենայնիվ, դու հայտնվել ես անապատում: Թող քեզ անհասկանալի չթվա դրա նպատակը: Դա Աստծո մերժումը չէ, այլ քեզ նախապատրաստելու Նրա ժամանակը: Սա մարգարեների և նախահայրերի անցած ուղին է, ճանապարհի հարթում՝ Աստծո թարմ շարժի համար: Աստծո մտադրությունն է, որ դու ունենաս «Հաղթանակ անապատում»:

Այս գիրքը անդրադառնում է հետևյալ հարցերին.

- Ինչպես է Աստված մաքրում
- Արդյո՞ք անապատն անհրաժեշտ է
- Ինչն է ընկած ճշմարիտ մարգարեության հիմքում
- Ինչ է պահանջվում Աստծո մարդ դառնալու համար
- Քո նպատակակետին հասնելու համար որքանո՞վ է կարևոր այն, ինչի միջով անցնում ես
- Ճեղքելով անցնել չոր ժամանակների միջով

Ջոն Բիվերը մի քանի գրքերի հեղինակ է, ներառյալ հանրության ուշադրությանն արժանացած, ամենագնայուն գրքերից՝ «Սատանայի խայծը», «Տիրոջ երկյուղը», «Բոցավառված սիրտ»-ը: Ջոնի ցանկությունն է, որ հավատացյալները զարգացնեն մտերիմ և ջերմ փոխհարաբերություններ Աստծո հետ:

Ջոնը և իր կինը՝ Լիզան, որը նույնպես հանրաճանաչ գրքերի հեղինակ և քարոզիչ է, 1990 թ.-ին հիմնադրել են Ջոն Բիվերի ծառայությունը: Այդ ժամանակներից սկսած այն աճել է և դարձել բազմակողմանի միջազգային ծառայություն, որը ներառում է նրանց ամենշաբաթյա հեռուստահաղորդումը՝ «The Messenger»: